

Արտաստպած է՝ Օնորե դր Բալզակ, Մարդկային կատակերգություն, հատոր 2, Ե., Հայպետհրատ, 1956:

## ՕՆՈՐԵ ԴՐ ԲԱԼԶԱԿ

### ԷԺԵՆԻ ԳՐԱՆԴԵ

#### ՄԱՐԻԱՅԻՆ

Դուք, որի պատկերը ամենագեղեցիկ զարդն է այս երկի, թո՛ղ ձեր անունը, որպես օրինված տոսախի ճրու՝ պոկված որևէ ծառից, բայց անշուշտ կրոնավ սրբագործված և բարեպաշտ ձեռքերով միշտ նորոգված, միշտ դալար, լինի այստեղ՝ ընտանելան հարկը հովանավորելու համար:

Դը Բալզակ

Պրովենցիայի որոշ քաղաքներում կան տներ, որոնց տեսքը մեզ ներշնչում է այնպիսի տրտմություն, որը հավասար է ամենից մոայլ մենաստանների, ամենից անքերրի հողերի, ամենից տիսուր ավերակների պատճառած թախծին: Թերևս այս տները միաժամանակ ունեն և՝ վանքերի լուսությունը, և՝ տափաստանների երաշտը, և՝ ավերակների կմախքատիպ կույտերը:

Կյանքն ու շարժումն այնտեղ այնքան հանդարտ են, որ մի օտարական պիտի կարծեր, թե դրանք անբնակ են, եթե հանկարծ չհանդիպեր անշարժ մի անձնավորության գունատ ու պաղ նայվածքին, եթե անձանոթ ոտնաձայնի վրա, լուսամուտի ելուստին շմոտենար բնակչի կիսավանական կերպարանքը: Մելամաղձության այս գծերով է դրոշմված տեսքը Սովորության տներից մեկի, որը գտնվում է քաղաքի բարձունքին, դեպի դրյակ տանող զարդվերի վերջավորության վրա: Հիմա քիչ բանուկ, ամառ շոգ, ձմեռ ցուրտ որոշ կետերում մութ այդ փողոցը նշանավոր է իր միշտ մաքուր և չոր մանրախճուտ քարահատակի դղրդոցով, իր մանվածապատ անցքերի նեղությամբ, իսկադարձությամբ իր տների, որոնք պատկանում են իին քաղաքին և իշխում պարհսպներին: Երեք դար կյանք ունեցող շինություններ, որոնք թեև փայտաշեն, բայց տակավին դիմացկուն են, և որոնք իրենց բազմազան արտաքինով նպաստում են Սովորությանը, մի մաս, որը հնագետների և արվեստագետների ուշադրությունն է գրավում: Դժվար է այս տների առաջող անցնել, առանց հիանալու հսկա գերաններով, որոնց ծայրերին տարօրինակ պատկերներ են փորագրված և որ սևացած խորաքանդակներով պսակում են այդ բնակարանների ումանց ներքին հարկերը: Այստեղ հերձաքարերով ծածկված խաչաձև հեծանները կապույտ շերտեր են գծագրում խարիստ պատերի վրա, որոնք պահում են տարիների բերան տակ կրած գերանաշար տանիքը, որի փոխական բարակ տախտակները կորացած են արևի ու անձրևի փոփոխակի ներգործություններից: Այնտեղ երևում են լուսամուտների մաշված և սևացած գոգեր՝ հազիվ նշմարելի նուրբ քանդակներով, որոնք շատ խախուտ են թվում՝ կրելու համար կավել թխագույն թաղարները, որոնց միջից բարձրանում են որևէ առջատ բանվորություն վարդն ու մեխակը: Ավելի հեռուն դրներ՝ զարդարված հսկա գամերով, որոնցով մեր նախահայրերի հանճարը գծագրել է ընտանեկան պատկերագրեր և որոնց իմաստը այլևս չի իմացվի: Գուցե որևէ բողոքական իր հավատքն է ստորագրել այդտեղ կամ որևէ լիգական՝ անեծք է կարդացել Հենրիխ IV-ին: Ոմն բուրժուա այդտեղ փորագրել է իր «Զանգակի ազնվականության» պատվանշանը, քաղաքագլխի տեղակալի վաղուց մոռացված իր փառքը: Ֆրանսիայի պատմությունն ահա ամբողջովին այդտեղ է: Կոպորեն շարված մասնորմերով խարիստ տան կողքին, որտեղ արիեստավորը անմահացրել է իր ռանդան, բարձրանում է մի ազնվականի ապարանքը, որի քարակերտ դռան կիսաբոլոր կամարի

կենտրոնում տակավին երևում են հետքերը նրա զինանշանի, որը փշրված է 1789 թվականից ի վեր երկիրը ալեկոծող զանազան ռևոլյուցիաներից: Այս փողոցում, առևտի հատկացված ներքին հարկերը ոչ խանութ են և ոչ պահեստ, միջնադարի բարեկամները այստեղ կարող էին գտնել մեր հայրերի արհեստանոցը իր ամբողջ միամիտ պարզությամբ: Ցածր առաստաղով, խորունկ և մուլք այս սրահները, որ չունեն ո՞չ ցուցափեղիկ, ո՞չ ապրանքացույց արկղներ և ոչ էլ ապակեղուտ, զուրկ են արտաքին թե ներքին ամեն տեսակի զարդարանքից: Կոպտորեն երկարապատված մուտքի կրկնակի դուռը բացվում է երկու մասով՝ վերինը ծալվում է դեպի ներս, իսկ զապանակավոր զանգակ ունեցող ներքին մասը անընդհատ բացվում ու խփվում է: Խոնավ քարայրերի նմանող այս վայրերի մեջ լույսն ու օդը թափանցում են դռան վերևի բացվածքից կամ թե այն դատարկ տարածությունից, որ գտնվում է կամարի, տախտակամածի և ցածիկ պատի միջև, ուր ամրացված են ամուր փեղկեր, որոնք առավոտյան հանվում են, իսկ երեկոյան գետեղվում և ամրացվում երկաթե նիգերով: Այս պատի վրա են ցուցադրվում վաճառականի ապրանքները: Այստեղ արդեն ոչ մի խարեբայություն չկա: Ըստ առևտուրի բնույթի, նմուշները բաղկացած են աղով կամ բրածուկով լի երկու երեք կիսատակառներից, առագաստի կտավի ծրարներից, արույրից և առաստաղի հեծաններից կախված պարաներից, պատերի շուրջը տակառների օղակապեր կամ դարակների վրա՝ մահուղի կտորներ: Նե՛ր ստեք: Երիտասարդությամբ բեղուն, ձերմակ վզնոցով, կարմրած բազուկներով մաքուր հագնված մի աղջիկ մի կողմ է դնում իր ձեռագործը ու կանչում հորը կամ մորը: Սրանցից մեկը կամ մյուսը զալիս է ձեր ցանկությանն ընդառաջելու և համաձայն իր բնավորությանը, դանդաղ, հաճոյալց կամ հպարտ տեսքով ձեզ վաճառում ձեր ուզածը, լինի դա երկու սու, թե քան հազար ֆրանկ արժեցող ապրանք: Դուք կտեսնեք տակառի տախտակներ ծախող մի վաճառական, որ նստած իր դռան շեմքին, բրամատերն իրար շուրջ դարձնելով՝ զրուցում է որևէ դրացու հետ. թվում է, թե նա ունի միայն տակառի մի քանի անպետք տախտակներ և կամ երկու կապ կավար՝ մինչդեռ նավամատուցում գտնվող նրա պահեստը մատակարարում է Անուի բոլոր տակառագործներին: Նա զիտե, զրեթե մինչև վերջին տախտակը, թե քանի տակառի պահանջ կլինի, եթե խաղողի բերքը լավ լինի: Արեի մի լավ շրջան կհարստացնի նրան, անձրևային եղանակը՝ կնործանի: նույն առավոտյան գինու տակառները կարմենան տասնմեկ ֆրանկ կամ կիշնեն մինչև վեց լիվրի: Այս երկրում, ինչպես և Տուրենում, եղանակի փոփոխականությունը իշխում է առևտրական կյանքի վրա: Խաղողագործ, հողատեր, տախտակավաճառ, տակառագործ, պանդոկապետ, գետի նավավար, բոլորն էլ անխտիր փնտրում են արևի մի ճառագայթ. երեկոյան պառկելու ժամին դոդում են, որ չինի թե հանկարծ գիշերը սառնամանիք լինի. նրանք վախենում են անձրևից, քամուց, երաշտից, և ըստ իրենց քմայրի, փափազում են խոնավություն, ջերմություն, ամպամածություն: Տևական մի մենամարտ կա երկնքի և երկրային շահերի միջև: Ծանրաշափր փոխնիփիս տիխեցնում, պայծառացնում, զվարթացնում է դեմքերը: Սումյուրի նախկին մեծ փողոցը հանդիսացող այդ փողոցի մի ծայրից մյուսը, «ի՞նչ ոսկի եղանակ» բառերն են անցնում դրնեդուու: Եվ ամեն որ պատասխանում է իր հարևանին. «լրիդոր»՝ թափվում երկնքից», քաջ իմանալով, թե ինչ է բերում իրեն արևի մի ճառագայթը կամ ժամանակին վրա հասած անձրևը: Շաբաթ օրը կեսօրին, տաք եղանակին, դուք չեք կարող ոչ մի սուի ապրանք գնել այդ պատվական արդյունաբերողներից: Ամեն որ ունի իր խաղողի այգին, իր փոքրիկ ազարակը և գնում է երկու օր անցկացնելու բնության ծոցում: Քանի որ այդտեղ ամեն ինչ նախատեսված է՝ գնում, վաճառում, շահ, ապա առևտրական այս մարդկանց տասներկու ժամից տաքը հատկացվում է զվարճությունների, գննումի, մեկնաբանությունների և անընդհատ միմյանց լրտեսելուն: Տանտիկինը չի կարող գնել մի կաքավ, որպեսզի, մյուս օրը հարևանները նրա ամուսնուն չհարցնեն՝ արդյոք հաջո՞ղ է իր այն տապակված: Աղջիկը չի կարող գրուխը լրտամուտից դրւու հանել, առանց պարապ մարդկանց խմբերից նկատվելու: Չէ՞ որ այստեղ ամեն մեկի խիդճը տեսանելի է ամենքին, ճիշտ այնպես, ինչպես այս

\* Ոսկե դրամ 20 ֆրանկանոց:

անթափանց, մոայլ և լուռ տներում չկա ոչ մի գաղտնիք: Կյանքը գրեթե ամբողջովին բացօթյա է: Ամեն ընտանիք նստում է իր դռան առջև և այնտեղ նախաճաշում, ճաշում, կրվում: Ոչ ոք չի կարող անցնել փողոցով՝ առանց ուսումնասիրության առարկա դատնալու: Մի ժամանակ, եթե որևէ օտարական էր երևում պրովինցիայի որևէ քաղաքում, դրնեղութ ծաղրութանակի էր ենթարկվում: Այստեղից են զալիս այն բարեմիտ, զվարձալի պատմությունները և «Ճնշ լեզու» մակդիրը, որ տրված էր Անժերի բնակիչներին, որոնք առանձնապես աչքի էին ընկնում քաղքենի ծաղրանքների մեջ: Հին քաղաքի հնադարյան առանձնատները գտնվում էին այս փողոցի վերին մասում, որտեղ անցյալում ազնվականներն էին ապրում:

Մելամաղձությամբ լի այն տունը, ուր տեղի էն ունեցել այս պատմության դեպքերը, մեկն էր ահա այն հին բնակարաններից՝ նվիրական մնացորդներից այն դարի, եթե մարդիկ և իրերն ունեին պարզության այն հատկությունը, որը օրբստորէ կորչում է ֆրանսիական բարքերից: Ճետնելով այս գեղանկար ոլորտողուն, որի ամեն մեկ փոքրիկ անհարթությունը արթնացնում է հիշատակներ, և որի անմիջական տպավորությունը մեզ տանում է դեպի մի տեսակ ակամա երազանքի, դուք նկատում եք բավականին մուր մի խորշ, որի կենտրոնում թաքնված է պարոն Գրանդէի տան դուռը: Անկարելի է հասկանալ այս պրովինցիալ արտահայտության նշանակությունը, առանց իմանալու պ. Գրանդէի կենսագրությունը:

Պ. Գրանդէն Սոմյուրի մեջ վայելում էր այնպիսի մի համբավ, որի պատճառներն ու հետևանքներն ամբողջովին հասկանալի չեն լինի նրանց, որոնք քիչ թէ շատ չեն ապրել պրովինցիայում: Պարոն Գրանդէն, որ տակավին հայր Գրանդէ էր անվանվում որոշ մարդկանց կողմից, բայց այդ ծերունիների թիվը պակասում էր զգալիորեն, 1789 թվին շատ բարեկեցիկ տակառագործ վարպետ էր և զիտեր կարդալ, գրել ու հաշվել: Երբ Ֆրանսիական Ռեսպուբլիկան Սոմյուրի շրջանում վաճառքի հանեց հոգեռականության կալվածքները, տակառագործը այդ ժամանակ քառասուն տարեկան էր և նոր էր ամուսնացած՝ տախտակի մի հարուստ վաճառականի աղջկա հետ:

Գրանդէն ուներ երկու հազար ոսկի, որ կազմված

էր նրա պատրաստի գումարից և նրա կնոջ բերած դրամօժիտից: Այդ գումարը վերցրած նա մեկնեց շրջան, ուր շնորհիվ երկու հարյուր կրկնակի լուիդորների, որ նրա աները մատուցել էր ազգային կալվածների վաճառքին հսկող կատաղի ռեսպուբլիկականին, նա կարողացավ շատ չնշին գումարով, ըստ օրենքի, եթե ոչ օրինականորեն, ձեռք բերել շրջանի ամենալավ խաղողի այգիները, վաղեմի վանքի մի շենք և մի քանի կալված: Սոմյուրի բնակիչները լինելով նվազ ռեսուրսներ, հայր Գրանդէին համարեցին մի խիզախ մարդ, ռեսպուբլիկական, հայրենասեր, նոր գաղափարներով տողորված մի միտք, մինչեւ տակառագործը իրականում պարզապես տողորված էր խաղողի այգիներով: Նա Սոմյուրի վարչության անդամ նշանակվեց, և նրա խաղաղասիրական ազդեցությունն զգացվեց այնտեղ թէ՝ քաղաքականապես և թէ առևտրական տեսակետից: Քաղաքական գծով նա պաշտպանեց նախկին ազնվականներին և իր բոլոր կարելի միջոցներով արգելեց վտարանդիների կալվածների վաճառումը: Առևտրական գծով՝ նա մեկ կամ երկու հազար տակառ սպիտակ գինի մատակարարեց ռեսպուբլիկական բանակներին և փոխարենը ստացավ շատ գեղեցիկ մի մարզագետին, որ պատկանում էր կանանց մի համայնքի և թողնված էր վերջին հերթին վաճառելու: Կոնսուլության շրջանում Գրանդէն դարձավ քաղաքի մեր և խելացիորեն կառավարեց, բայց ավելի շուտ այգեկությով գրադվեց: Կայսրության շրջանում նա կոչվեց պարոն Գրանդէ: Նապոլեոնը, որը չէր սիրում ռեսպուբլիկականներին, պաշտոնանկ արեց պարոն Գրանդէին, որ կարմիր գրակ դնողի անուն ուներ, և տեղը նշանակեց մի խոշոր կալվածատիրոջ, ազնվական դք ածանց ունեցող մի մարդու՝ կայսրության ապագա բարոնի: Պարոն Գրանդէն առանց ափսոսանքի թողեց մունիցիպալ պատիվները:

Հօգուտ քաղաքի նա շինել էր տվել հիանալի ձանապարհներ, որոնք տանում էին իր կալվածները: Նրա տունը և կալվածները, շատ նպաստավոր ձևով սահմանազգված և արձանազրված պետության մատյաններում, վճարում էին չափավոր հարկեր: Նրա զանազան այգիների կալվածագրումց ի վեր, նրա խաղողի այգիները, շնորհիվ հարատև խնամքի, նկատված էին «երկրի գլուխ», տեխնիկական մի արտահայտություն՝ որով նշվում էին այն այգիները, որոնք լավագույն զինին էին տալիս: Նա կարող էր խնդրել, որ Պատվո Լեզիոնի խաչ տրվի իրեն: Եվ դա տեղի ունեցավ 1806 թվականին: Պ. Գրանդէն այդ ժամանակ հիսունյոթ տարեկան էր, իսկ կինը՝ մոտ երեսունվեց: Միակ աղջիկը՝ նրանց օրինավոր սիրո պտուղը, տար տարեկան էր: Պարոն Գրանդէն, որին նախախնամությունը անպայման ուզեց միշտարել վարչական շնորհազրկումից, հաջորդաբար ժառանգություն ստացավ նույն տարվա ընթացքում նախ տիկին դը լա Գորինիերից՝ ծննդյամբ դը լա Բերթելիեռ, տիկին Գրանդէի մորից, ապա ծերունի պ. դը լա Բերթելիեռից, հանգույցայի հորից, նաև տիկին Ժանտիեից, որ տատն էր մոր կողմից, երեք ժառանգություն, որոնց ծավալը ոչ ոք չիմացավ: Այս երեք ծերերի ժլատությունը այնքան բուտն էր, որ նրանք վաղուց դիզում էին իրենց փողը՝ գաղտնորեն հազենալով միայն դրանք դիտելով: Ծերացած պ. դը լա Բերթելիեռը որևէ դրամական ներդրում համարում էր շրայլություն և ուսկու տեսքի մեջ գտնում էր ավելի մեծ շահ, քան թե վաշխառության մեջ: Հետևաբար Սոմյուրի բնակիչները այդ խնայողությունների արժեքը արևի տակ երևացած կալվածների եկամուտներով միայն զնահատեցին: Այնժամ պարոն Գրանդէն ձեռք բերեց ազնվականի մի նոր տիխորոս, որ հավասարության մեր մանիան երբեք չի կարողանալու ջնջել. նա դարձավ շրջանի ամենամեծ հարկատուն: Նա մշակում էր հարյուր արպան խաղողի այգի, որ պտղառատ տարիներին նրան տալիս էր յոթից ութ հարյուր տակառ զինի: Նա ուներ տաճաներեք ազարակ, վաղեմի մի մենաստան, որի լրացամուտները, կամաք անկյունները, ապակիները որմափակել տվեց խնայողություն անելու համար և դրանով մենաստանն ավելի լավ պահպանեց քայլայումից: Ուներ և հարյուրքանյոթ արպան մի մարզագետին, ուր աճում և մեծանում էին երեք հազար բարդի, տնկված 1793 թվականին: Եվ վերջապես նրա բնակած տունը իր սեփականությունն էր: Այդպես էին զնահատում նրա հարստությունը:

Ինչ վերաբերում էր նրա կապիտալներին, երկու անձ միայն կարող էին մոտավորապես ենթադրել. մեկը նոտարն էր, պարոն Կրյուշոն, որ պարոն Գրանդէի վաշխառուական ներդրումներին էր հսկում, իսկ մյուսը՝ պարոն դը Գրասենը, Սոմյուրի ամենահարուստ բանկիրը, որի շահույթներին խաղողագործք գաղտնաբար մասնակցում էր իր տրամադրելի նյութական միջոցների չափով: Թեև ծերունի Կրյուշոն և պարոն դը Գրասենը ունեին այն խոր գաղտնապահությունը, որը վստահության և հարստության ծնունդ է տալիս պրովինցիայում, բայց պարոն Գրանդէի հանդեպ հրապարակով ցույց էին տալիս այնպիսի մեծ հարգանք, որ այդ բանը դիտողները կարող էին նախկին մերի հարստությունը չափել ըստ նրա հանդեպ ցույց տրված բացառիկ ակնածությանը: Սոմյուրում չկար մեկը, որ համոզված չիներ, թե պարոն Գրանդէն սեփական մի գանձ ունի, ուսկով լի մի բարստոց. և զիշերները նա անձնատուր էր լինում այն անբացատրելի վայելքին, որ պատճառում է ուսկու մեծ զանգվածի տեսքը: Ժլատ մարդիկ դիտելով պ. Գրանդէի աշքերը, որոնց դեղին մետաղը իր գույնն էր կարծես տվել, գրեթե վստահ էին այդ բանին: Այն մարդու հայացքը, որ վարժվել է իր դրամագլխից հսկա շահեր ապահովել, անխուսափելիորեն ձեռք է բերում, ինչպես վավաշտի, խաղամոլի կամ պալատականի նայվածքը, որոշ անբացատրելի ստվորություններ, խուսափուկ, անհագ և խորհրդավոր շարժումներ, որոնք երբեք չեն վրիպում իր հավատակիցներից: Այս ծածուկ լեզուն կազմում է կրքերի մի տեսակ ֆրան-մատոնություն: Հետևաբար պարոն Գրանդէն ներշնչում էր հարգալից այն համարումը, որին իրավունք ուներ մի մարդ, որ ոչ որի ոչինչ պարտք չէր և լինելով նախկին տակառագործ, նախկին խաղողագործ, գուշակում էր աստղագետի ճշտությամբ, թե իր այգեկութիւն համար շինելու էր հազար և կամ միայն հինգ հարյուր տակառ, որ ձեռքից բաց չէր

թողնում ոչ մի սպեկուլյացիա և միշտ էլ ունենում էր ծախու տակառներ, այն ժամանակ, երբ դրանք ավելի թանկ արժեին, քան թե հավաքվելիք քերքը: Նա կարող էր այգեկութը պահել իր շտեմարաններում և սպասել հարմար մոմենտի՝ իր տակառը երկու հարյուր ֆրանկով ծախել կարողանալու համար, երբ փոքր հողատերերը ծախում էին իրենց տակառը հինգ լրիդորով: 1811 թվականի նրա նշանավոր քերքը, որ խելացիորեն պահված և դանդաղ էլ վաճառված էր, նրան քերել էր ավելի քան երկու հարյուր քառասուն հազար լիվր: Ֆինանսական իմաստով պարոն Գրանդէն միաժամանակ ուներ վագրի և բռայի խառնվածք. նա զիտեր պառկել, կծկվել, երկարորեն զննել իր զոհին և հարձակվել նրա վրա. հետո նա բաց էր անում իր քառկի երախը և նրա մեջ սահեցնում մի բուռ դրամ և հանգիստ քնում, նման մի օձի, որ մարտում է անտարբերությամբ, պաղարյունությամբ և կանոնավոր: Ոչ ոք չէր դիտում նրա անցնելը՝ առանց սարսափով և հարգանքով խառն հիացմունք զգալու: Միթե Սումյուրում ամեն ոք չէր զգացել նրա պողպատյա ճիրանների քաղաքավարի ճանկուտուքը: Նոտար Կրյուշոն մեկին հայթայթել էր անհրաժեշտ գումարը մի կալվածք գնելու համար, բայց տասնմեկ տոկոսով մի ուրիշին պարոն դե Գրասենը զեղչել էր մուրիկակները, բայց շահաբաժնի մի ահավոր տոկոսահանումով: Քիչ էին այնպիսի օրերը, որ պարոն Գրանդէի անունը չլսվեր շուկայում կամ երեկութեներում՝ քաղաքի խոսակցությունների ընթացքում: Մի քանի անձերի համար ծեր խաղողագործի հարստությունը հայրենասիրական հպարտանքի պատճառ էր: Հետևաբար շատ վաճառականներ և պանդոկապետներ որոշ գոհունակությամբ ասում էին օտարներին.

— Պարոն, մենք այստեղ ունենք երկու կամ երեք միլիոնատեր, իսկ ինչ վերաբերում է պարոն Գրանդէին, նա ինքն էլ չգիտե իր հարստության քանակը:

1816 թվականին Սումյուրի ամենահմուտ հաշվակալները ծերունու հողային կալվածները գնահատում էին շուրջ չորս միլիոն, բայց քանի որ, միջին հաշվով, 1793-ից մինչև 1817-ը նա ամեն տարի հարյուր հազար ֆրանկ հանած կլիներ իր կալվածներից, ուստի հետեցնում էին, որ նրա պատրաստի փողը գրեթե հավասար կլիներ իր անշարժ կալվածների արժեքին: Այնպես որ, երբ թղթախարից կամ այգիների վրա խոսելուց հետո մարդիկ սկսում էին պարոն Գրանդէի մասին խոսել, բանիմաց անհատներն ասում էին. «Հայր Գրանդէ՞ն... հայր Գրանդէն կունենա հինգից վեց միլիոն»:

— Դուք ինձնից ավելի հմուտ եք, ես երբեք չեմ կարողացել հանրագումարն իմանալ, — պատասխանում էին պարոն Կրյուշոն կամ պարոն դե Գրասենը, երբ լսում էին նման խոսակցություններ:

Երբ մի փարիզեցի խոսում էր Ռոտշիլդներից կամ Լաֆիտից, Սումյուրի բնակիչները հարցնում էին, թե դրանք ել պարոն Գրանդէի չափ հարո՞ւստ են: Եթե պատահեր, որ փարիզեցին ժպտալով հաստատական արհամարհու մի պատասխան տար, նրանք իրար նայելով՝ թերահավատությամբ իրենց զլուկներն էին շարժում: Այդպիսի մի մեծ հարստության ոսկե վերարկուով ծածկված էր այդ մարդու բոլոր գործողությունները: Եթե սկզբում նրա ապրելակերպի ինքնատիպությունները տեղի էին տալիս ծաղրուծանակի, ապա ծաղրուծանակը ջնջվել էին ժամանակի ընթացքում: Ամենափոքր գործերի մեջ իսկ պարոն Գրանդէն դնում էր վերջնական կշռադատության հեղինակություն: Նրա խոսքը, նրա հազուսար, շարժուծները, աչքերի քթումը օրենքի ուժ ունեին քաղաքում, ուր ամեն ոք, կենդանիների բնազդն ուսումնասիրող բնագետի նման, ձանաշում էր նրա ամենաաննշան շարժումների խորունկ և լուս իմաստությունը:

— Զմեռը սաստիկ կլինի, — ասում էին, — հայր Գրանդեն իր մուշտակե ձեռնոցներն է գործածում: — Անհրաժեշտ է այգեկութ անել: — Հայր Գրանդեն գնում է տակառի մեծաքանակ տախտակներ. այս տարի առատ զինի կունենանք:

Պարոն Գրանդեն երբեք միս կամ հաց չէր գնում: Նրա ազարակապանները բերում էին մի ամբողջ շաբաթվա համար բավականաշափ որձատ աքաղաղներ, հավեր, ձու, կարագ և հողավարձի ցորեն: Նա տերն էր մի ջրադաշի, որի վարձակալը, բացի պայմանագրի վճարից, պարտավոր էր նրանից վերցնել որոշ քանակությամբ ցորեն և փոխարենը բերել այսուր

ու թեփ: Բարձրահասակ Նանոն՝ նրա միակ սպասուիին, թեև արդէն գրեթե պառաված՝ ամեն շաբաթ օր անձամբ թիտում էր տան հացը: Պարոն Գրանդեն համաձայնել էր իր վարձկալ բանջարաբույծների հետ և նրանցից էր ստանում բանջարեղենը: Իսկ ինչ վերաբերում էր պտուղներին, ապա նա ստանում էր այնպիսի մեծաքանակ բերք, որի մեծ մասը վաճառել էր տալիս շուկայում: Վառելափայտը ստանում էր իր փշաթուփ ցանկապատերն էտելուց և կամ իր այգիների եզերները գտնվող արդեն փտած կոճղերից, որ նրա ազարակապանները սայլերով քաղաք էին բերում արդեն կտրտված, նրա փայտանոցներում շարում հաճոյակատարությամբ և այդ բոլորի համար ստանում նրա շնորհակալությունը: Հայտնի կերպով նա փող ծախսում էր միայն նշխարքի, իր կնոջ և իր աղջկա հագուստների և եկեղեցում նրանց աթոռների համար, նաև լուսավորության, բարձրահասակ Նանոնի ռոճիկի, իր կարսանները կլայեկելու, հարկերը վճարելու, շենքերը վերանորոգելու և իր ձեռնարկությունների ծախսերի համար: Նա ուներ նոր գնված վեց հարյուր արպան տարածությամբ անտառ, որ հսկել էր տալիս իր հարևանի պահապանի միջոցով, և որին միայն խոստանում էր վարձատրություն: Այդ անտառը գնելուց հետո միայն նա սկսեց որսի միս ուտել:

Այս մարդու վարվեցողությունը խիստ պարզ էր: Նա սակավախոս էր, իր մտքերն ընդհանրապես արտահայտում էր մեղմ ձայնով ասված վճռական կարձ նախադասություններով: Ուսույուցիայից հետո, մի շրջան, երբ նա ուշադրություն գրավեց, նա սկսեց կակագել հոգնեցուցիչ ձևով, երբ ուզում էր երկարորեն ճառել կամ վիճաբանության մասնակցել: Այս շատ ու շփոթ խոսվածքը, խոսքերի անկապությունը, բառերի գեղումը, որի մեջ նա խեղրում էր իր միտքը, տրամաբանության առերևույթ բացակայությունը, որոնք վերագրում էին կրթության պակասին, իրականում կեղծ էին և այս պատմության մի քանի դեպքերով բավականաշափ լուսաբանվելու են: Ասենք, որ նրա հանրահաշվական ֆորմուլների պես ճշգրիտ չորս նախադասություն նրան օգնում էին ընդգրկելու և լուծելու կյանքի և վաճառականության դժվարությունները. «Չփառեմ: Չեմ կարող: Չեմ ուզում: Չետո կտեսնենք»: Նա երբեք չէր ասում այս կամ ոչ, և երբեք չէր գրում: Երբ նրա հետ խոսում էին, նա լսում էր սառնությամբ, աջ ձեռքով ծնոտը բռնած, աջ արմունկը ձախ ձեռքի ափին դրած, և ամեն հարցի վերաբերյալ կայացնում էր կարծիքներ, որոնցից բնավ չէր հրաժարվում: Ամենափոքր գործարքի վրա նա երկար մտածում էր: Երբ մշակված խոսակցությունից հետո նրա հակառակորդը, նրան հաղթած կարծելով, բացահայտում էր իր հավակնությունների գաղտնիքը, նա պատասխանում էր.

— Ես ոչ մի եզրակացության չեմ կարող հանգել, առանց կնոջս հետ խորհրդակցելու:

Նրա կինը, որին նա մեկուսացրել էր ամբողջությամբ, իր գործառնությունների համար ամենահարմար վարագույրն էր: Գրանդեն ոչ ոքի մոտ չէր գնում, ոչ ոքի չէր ընդունում և ոչ էլ ձաշի էր հրավիրում: Նա երբեք չէր աղմկում և կարծես խնայում էր ամեն ինչ, անզամ շարժումը: Ոչ ոքի ոչ մի բանով չէր խանգարում, որովհետև կայուն հարգանք ուներ սեփականության հանդեպ: Բայց և այնպես, հակառակ իր ձայնի մեղմության, հակառակ իր ուշադիր կեցվածքի, հաճախ պոռթկում

Էին տակառագործի լեզուն և սովորությունները, մանավանդ տանը, ուր նա իրեն ավելի քիչ էր զապում, քան որևէ ուրիշ վայրում: Ֆիզիկապես Գրանդեն հինգ ոտնաշափ բարձրություն ուներ, ամրակազմ էր և մարմնեղ. նրա սրնքածկները տասներկու մատնաշափ շրջազիծ ունեին, ծնկոսկրերը կոշտ և ուսերը լայն էին, դեմքը կլոր, քերթած, ծաղկատար, կզակը, շրթունքները առանց որևէ ծալքի և ատամները ձերմակ. նրա հայացքն ուներ այն հանդարտ և գիշատիչ արտահայտությունը, որ ժողովուրդը արքայիկ օձերին է վերագրում: Նրա ընդլայնական կնճիռներով ծածկված ճակատն ուներ նշանակալից ելուստներ. դենավուն ու ձերմակող մազերը՝ ուսկի և արծաթ են, ասում էին մի քանի երիտասարդներ, որոնք չին իմանում պարոն Գրանդեի հանդեպ կատարված հեգնանքի ծանրակշիռ հանգամանքը: Նրա ծայրը կլոր քիչ վրա կար մի երակավոր ուր, որի մասին ռամիկը ոչ առանց հիմքի ասում էր, թե ի՞ն է չարամտությամբ: Այս դեմքը վտանգավոր մի խորամանկություն ուներ, պարկեշտություն՝ առանց շերմության, առանձնասիրությունը մի մարդու, որ վարժվել է իր զգացումները կենտրոնացնել ազահության վայելքի և միայն մի էակի վրա, որ նրա համար իսկապես որևէ քան էր, իր աղջիկը՝ Էժենին, նրա միակ ժառանգուիին: Ամեն ինչ՝ կեցվածք, շարժուձներ, քայլվածք, վկայում էին այն հավատքը, որ նա ուներ ինքն իր նկատմամբ և որ առաջանում է սեփական ձեռնարկումներում մշտապես հաջողելու սովորությունից: Այդ պատճառով էլ պարոն Գրանդեն արտաքուստ թեն մեղմ բնավորության տեր էր, քայլ իրականում երկարի կամք ուներ: Միշտ նույն ձևով էր հագնված, նրան այսօր տեսնողը տեսնում էր այնպես, ինչպես էր 1791 թվականից ի վեր: Նրա կոշտ կոշիկները կապված էին կաշե կապերով. նա միշտ հագնում էր հաստ թելից հյուսված բրդե գուլպաներ, հաստ շագանակագույն կտորից շինված կարճ մի շալվար արծաթե ճարմանդներով, իրար հաջորդող կարմրավուն և սրճագույն շերտերով բավիշե բամկոն, քառաձն կոճկված շագանակագույն լայն քղանցքներով բամկոն, սև փողկապ և կվակերյան գլխարկ: Նրա ձեռնոցները՝ ժանդարմների ձեռնոցների չափ ամուր, դիմանում էին քսան ամիս, և մաքուր պահելու մտադրությամբ, սերտված մի շարժումով, նա դնում էր իր գլխարկի եզրին՝ միշտ նույն տեղում: Սովորը այլևս ոչինչ չգիտեր այս անձնավորության մասին:

Վեց բնակիչ միայն իրավունք ունեին նրա տունը գնալու: Առաջին երեքից ամենանշանակալին պարոն Կրյուշոյի եղբօր որդին էր: Սովորի նախադատ ատյանի նախազահ նշանակվելուց հետո, այս երիտասարդը Կրյուշո ազգանվանը միացրել էր Բոնֆոնը և ջանք էր թափում, որպեսզի Բոնֆոնը գերադասվի Կրյուշոյից: Նա ստորագրում էր արդեն Կ. դը Բոնֆոն: Shaws խնդրատուն նրան անվանելով «պարոն Կրյուշո», շուտով նիստի ժամանակ նկատում էր իր անմտությունը: Դատավորը պաշտպանում էր նրանց, ովքեր իրեն անվանում էին «պարոն նախազահ», քայլ իր ամենաշնորհագեղ ժպիտներով քաջալերում էր շողոքորթներին, որոնք իրեն անվանում էին պարոն դը Բոնֆոն: Պարոն նախազահը երեսուներեք տարեկան էր և սեփականատեր՝ Բոնֆոնի կալվածին, որ նրան ապահովում էր յոթը հազար լիվրի եկամուտ: Բացի դրանից, նա սպասում էր իր նոտար հորեղբօր, նաև իր մյուս հորեղբօր՝ Սեն Մարտեն դը Տուրի վանաժողովի անդամ աբբա Կրյուշոյի ժառանգություններին: Այս երկուսն էլ համարվում էին բավական հարուստ: Այս երեք Կրյուշոները, որ վայելում էին բավական բազմաթիվ զարմիկների աջակցությունը և կապեր ունեին քաղաքի քսան ընտանիքների հետ, կազմում էին մի պարտիա, ինչպես երեսմն Սեղիշիները Ֆլորենցիայում, և Սեղիշիների նման, Կրյուշոներն իրենց Պացցին ունեին: Տիկին դը Գրասենը՝ քսաներեքամյա երիտասարդի մայրը, հարատևորեն զալիս էր տիկին Գրանդեի մոտ, որպես թղթախաղի ընկեր՝ հուսալով իր սիրելի Արոլֆին ամուսնացնել օրիորդ Էժենիի հետ: Բանկիր պարոն դը Գրասենը խիստ քաշալերում էր իր կնոջ խորամանկությունը՝ մշտապես ծածուկ ծառայություններ մատուցելով ծեր ազահին, և ճիշտ ժամանակին էր հասնում ռազմադաշտը: Այս երեք Գրասեններն ունեին իրենց կողմանակիցները, իրենց զարմիկները, հավատարիմ դաշնակիցները: Կրյուշոներից արքան՝ գերդաստանի Տալեյրանը<sup>1</sup>, ունենալով իր նոտար եղբօր մեծ աջակցությունը՝ կատադ

մրցակցության մեջ էր ֆինանսիստի կնոջ՝ տիկին Գրասենի հետ և շանում էր հարուստ ժառանգությունը վերապահել իր նախազահ զարմիկի համար: Կրյուշոների և դր Գրասենների միջն մղված այս թաքուն պայքարը, որի վարձատրությունը Էժենի Գրանդեի ձեռքն էր լինելու, սաստիկ զրադեշնում էր Սոմյուրի գանազան շրջանակները: Օրիորդ Գրանդեն արդյոք ամուսնալու է պարոն նախազահ<sup>7</sup>, թե պարոն դը Գրասենի հետ: Այս հարցին ոմանք պատասխանում էին, թե պարոն Գրանդեն իր աղջիկը կնության չի տա ո՛չ մեկին և ո՛չ մյուսին: Փառասիրությունից մաշվող նախկին տակառագործը փնտրում էր իբրև փեսացու, ասում էին նրանք, Ֆրանսիայի որևէ պեր, որին օրիորդի երեք հարյուր հազար լիվր

Եկամուտը սիրահոժար ընդունել պիտի տար Գրանդեների անցյալի, ներկայի և ապագայի բոլոր տակառները: Ուրիշներն ել առարկում էին, որ տեր և տիկին դը Գրասենները ազնվական էին և հզրապես հարուստ, որ Ադոլֆը խիստ հաճելի կավալեր էր և Հռոմի պապի զարմիկի վատահությամբ օժտված լինելուց բացի, նման հարմար խնամություն գրիացնելու էր ոչնչից առաջ եկած մարդկանց և այն մարդուն, որին ողջ Սոմյուրը տեսել էր տաշոցը ձեռքին, ավելին՝ կարմիր զիսարկը զլխին: Ավելի խոհեմները նկատի էին առնում, որ պարոն Կրյուշոն դը Բոնֆոնը ուզած ժամին այցելում էր Գրանդեներին, մինչդեռ նրա ախոյանը միայն կիրակի օրերն էր ընդունվում: Մյուսները պնդում էին, որ տիկին դը Գրասենը ավելի կապված լինելով Գրանդեի տան կանանց հետ, քան թե Կրյուշոները, կարող էր նրանց ներարկել որոշ մտքեր, որոնք վաղ թե ուշ նրա հաջողությունը կապահովեին: Ոմանք ել առարկում էին՝ ասելով, որ աբբա Կրյուշոն աշխարհի ամենից մեղմթափանց մարդն էր և որ երբ կոերականն է պայքարում կնոջ դեմ՝ մրցակից կողմերը հավասար են:

— Իրար արժեն,— ասում էր Սոմյուրի սրամիտ մի քաղաքացի:

Շրջանի տարիքություն բնակիչները, որ ավելի տեղյակ էին, հավակնում էին, թե Գրանդեներն այնքան խոհեմ էին, որ թույլ չէին տա իրենց ընտանիքի հարստությունը դուրս գնա և Սոմյուրի օրիորդ Էժենի Գրանդեն կամուսնանա Փարիզի պարոն Գրանդեի՝ զինու հարուստ վաճառականի որդու հետ: Այս ենթադրությանը կրյուշոյականները և գրասենյանները պատասխանում էին.

— Նախ՝ երեսուն տարուց ի վեր երկու եղբայրները չեն տեսել իրար նույնիսկ երկու անգամ: Հետո՝ վարիզաքնակ Գրանդեն մեծ հավակնություններ ունի իր որդու համար: Նա Փարիզի մի քաղաքամասի մեր է, դեպուտատ, ազգային զվարդիայի զնդապետ և առևտրական ատյանի դատավոր: Նա չի ճանաչում Սոմյուրի Գրանդեներին և հավակնում է ազգակցական կապ ստեղծել Նապոլեոնի շնորհով դրսության հասած մի գերդաստանի հետ:

Ինչե՛ք չին պատմում մարդիկ մեր ժառանգուիու մասին, որը խոսակցության նյութ էր դարձել քան մղոն շրջագիծ ունեցող մի շրջանում, մինչև իսկ Անժերից Բլուա երթևեկող հանրակառքերում, ինչպէս նաև այդ երկու քաղաքներում:

1811 թվականի սկզբին, կրյուշոյականները կարևոր հաղթանակ տարան գրասենյանների վրա: Ֆրաուֆոնի կալվածը, որ նշանավոր էր իր պուրակով, իր սքանչելի դոյակով, ազարակներով, գետակներով, լճակներով, անտառներով, երեք միլիոն արժողությամբ, վաճառքի հանվեց երիտասարդ մարկիզ դը Ֆրուաֆոնի կողմից, որ ստիպված էր իրացնել իր կապիտալները: Նոտար Կրյուշոն, նախազահ Կրյուշոն, աբբա Կրյուշոն, իրենց կողմնակիցների օգնությամբ, կարողացան այդ կալվածի մաս-մաս վաճառումն արգելել: Նոտարը խիստ շահավետ որոշումի հանգեց երիտասարդի հետ, որին համոզեց՝ թե ամեն մի բաժնի փոխարժեքը առանձին ստանալու համար անհրաժեշտ կլիներ աճուրդով գնողների դեմ երկար հայցեր հարուցել դատարաններում, ավելի լավ էր ամբողջ կալվածքը վաճառել պարոն Գրանդեին, որ ունեոր էր և ի վիճակի՝ անմիջապես և

կանխիկ վճարելու համար: Այսպիսով պարոն Գրանդէն կու տվեց Ֆրուաֆոնի գեղեցիկ մարկիզությունը. նա վճարեց կանխիկ, անշուշտ բոլոր ձևականությունները և տոկոսային գեղջր կատարելուց հետո, մեծ զարմանք պատճառելով ամբողջ Սոմյուրին: Այս վաճառքը ուժեղ արձագանք ունեցավ Նանտում և Օոլեանում: Պարոն Գրանդէն օգտվելով մի պատահական սայլից, որ վերադառնալու էր այստեղ, գնաց տեսնելու իր դրյակը: Սեփականատիրոց աչքերով իր կալվածքը դիտելուց հետո վերադառնավ Սոմյուր՝ վստահ, որ հինգ տոկոսով շահավետ ներդրում էր արել և Ֆրուաֆոնի մարկիզությունը կլորացնելու գեղեցիկ մտքով տարված՝ որոշեց դրան կցել իր բոլոր կալվածքները: Ապա որպեսզի իր գրեթե դատարկված զանձարանը նորից կարողանա լցնել, նա որոշեց արմատից կտրել տալ իր պուրակները, անտառները և շահագործել իր մարզագետինների բարդինները:

Այժմ հեշտ է հասկանալ «Գրանդէի տուն» խոսքի ամբողջ արժեքը, մոայ, լուս, սառն այն տունը, որ քաղաքի բարձունքի վրա է կառուցված և պատսպարված է պարիսպների ավերակներով: Զույգ սյուները և կամարը, որ կազմում էին դրան բացվածքը, շինված էին ավազաքարից, Լուարի ափերին հատուկ ձերմակ և այնքան կակուդ մի քարից, որի միջին տևողությունը հազիվ թե երկու հարյուր տարի լինի: Շատ և անհավասար ծակերը, որ եղանակի փոփոխականությունները տարօրինակ ձևերով բացել էին դրանց վրա, կամարին և դրան խորշի պուներին տվել էին ֆրանսիական ձարտարապետության որդինակեր քարերի տեսքը և զնդանի մուտքի որոշ նմանություն: Կամարի վերևում իշխում էր փորագրված մի կարծր քարի երկար խորաքանդակը, որ ներկայացնում էր չորս եղանակները՝ արդեն մաշված և ամբողջությամբ սևացած մի խմբաքանդակ: Այդ խորաքանդակի վրա գցված էր մի ելուստ, որտեղ պատսահական կերպով բուսել էին զանազան բույսեր, դեռին բաղեղներ, պատուտակներ, դալարաբույսեր, բաղեղներ, արդեն բավականին բարձր մի փոքր կեռասենի: Հաստ կաղնափայտից, սևացած, չորացած և ամեն կողմից ձարձրած, արտաքուստ դյուրաքեկ դրուր պինդ ամրացված էր խոշոր զամերի մի ցանցով, որոնք համաշափ նկարներ էին գծագրում: Քառակուսի մի վանդակադրու, փոքր, բայց խիստ, կարծրածանգ երկարե ձողերով, գրավում էր դրան կենտրոնը և այսպէս ասած, ծառայում էր իբրև շարժարիթ՝ մի հսկա զամի ծամածոված զլիխն խփող, օղակից կախված մի մուրճի գոյության: Այս երկայնաձև մուրճը, որը մեր նախնիները անվանում էին ժակրմար, նմանում էր հաստ բացականչական նշանի. հնագետը ուշադրությամբ քննելով այն, կզտներ կապես ծաղրական մի նկար, որ երկար գործածությունից ջնջված էր: Փոքր վանդակադրնից, որը քաղաքացիական կրիվների ժամանակ բարեկամներին ճանաչելու համար էր, հետաքրքրասերները կարող էին խավար ու կանաչավուն կամարի տակից նկատել մի քանի խարխուլ աստիճաններ, որոնցով բարձրանում էին պարտեզ, որը եզրված էր ջրի կաթիլներ ծորող և վտիտ թփերի սաղարթով ծածկված նկարչագեղ, հաստ, խոնավ պատերով: Այս պատերը պատնեշի պատերն էին, որոնց վրա հարևան մի քանի տների պարտեզներն էին բարձրացած: Տան ստորին հարկի ամենից ավելի աչքի ընկնող սենյակը սրահն էր, որի մուտքը գտնվում էր դարբասի կամարի ներքևում: Քիչ մարդիկ միայն զիտեն սրահի կարևորությունը Անժուի, Տուրենի և Բեռոի փոքր քաղաքներում: Սրահը միաժամանակ նախասենյակ է, հյուրասենյակ, կարինետ, զարդասենյակ և ճաշասրահ, նա ընտանեկան կյանքի թատերաբեմն է և ընդհանուր օջախը, այդտեղ էր գալիս թաղի վարսավիրը պարոն Գրանդէի մազերը տարին երկու անգամ խուզելու համար, այդտեղ էին մտնում ազարակապանները, ավագերեցը, զավառապետը, ջրաղացանի ծառան: Այդ սրահը, որի երկու լուսամուտները փողոցի վրա էին նայում, տախտակն հատակ ուներ. գորշ ու հին ծեփաքանդակով՝ երեսիկներ վերից վար ծածկում էին պատերը, առաստաղը կազմված էր երևացող, նույնապէս գորշ ներկված գերաններից, որոնց միջակա տարածությունները լեցված էին խծուծախառն, դեղնած ծեփով: Խեցենման դրվագված արաբեսկներ ունեցող հին մի ժամացուց զարդարում էր ձերմակ քարերից շինված բուխարու վատ քանդակված վերևի ելուստը, որի վրա կար մի կանաչավուն հայելի՝ շեղակտուր տաշված եզրերով՝ նրա

հաստությունը ստուգելու համար և որը ցոլացնում էր լուսի մի ճառագայթ՝ ոսկի և արծաթով բանված պողպատե գոթական միջնորմի երկայնքին: Ոսկեզօծ պղնձե երկու աշտանակ, որոնք զարդարում էին բուհարու զույգ անկյունները, ծառայում էին երկու նպատակի. եթե վերցնեին մումապնակի տակի տեղ ծառայող վարդերը, որոնց գլխավոր ճյուղը ագուցված էր հին պղնձով հարդարված կապտավուն մարմարի պատվանդանին, ապա այդ պատվանդանը հասարակ օրերում ծառայում էր որպես մումակալ: Հնագույն ոճով բազմոցները ծածկված էին Լաֆոնտենի առակները պատկերող պատտառներով, բայց անհրաժեշտ էր նրանց արդեն ծանոթ լինել՝ գուշակելու համար դրանց այումները, որովհետև բոլորովին գունաթափվել էին և վերանորոգումներով ծածկված պատկերները դժվարությամբ էին երևում: Այդ սրահի չորս անկյուններում կային անկյունավոր պահարաններ՝ ճարպոտված դարակներով մի տեսակ բուփետներ: Երկու լուսամուտների միջև զետեղված էր գույնզգույն մանր կտորներից շինված թղթախաղի մի վաղեմի սեղան, որի երեսը շախմատի տախտակ էր ներկայացնում: Այդ սեղանի վրա կար մի ձվաձև ծանրաշափ, որի սև եզերքները գեղագարդված էին ոսկեզօծ փայտն ոլորքներով, բայց դրանց վրա ճանձերը այնքան զվարձացել էին, որ նրանց իրոք ոսկեզօծված լինելը լուրջ հարց էր: Բուխարու հակադիր պատի վրա, ներկամատիսով զծագրված երկու դիմանկար կար, որոնք հավակնում էին ցույց տալ մեկը տիկին Գրանդէի մեծ հոր՝ ծերունի դը լա Բերթելիերին, ֆրանսիական զվարդիայի լեյտենանտի համազգեստով, իսկ մյուսը մահացած տիկին Ժանդիեին՝ հովվուիու տարագով: Զոյց պատուհանները ծածկված էին Տուրի մետաքսադիպակե լայն կարմիր վարագույրներով, որոնք կիսումի բարձրացված էին եկեղեցական մետաքսէ ծոպավոր քուղերով: Այս շքեղ զարդարանքը, որ այնքան քիչ էր ներդաշնակում պարոն Գրանդէի սովորություններին, զնված էր տան հետ միասին, ինչպես միջնորմը, հայելին, թավշապատ արռողները և պատերի մեջ շինված վարդագույն փայտն պահարանները: Դան ամենից մոտ գտնվող լուսամուտի առաջ մի ծղոտէ աթոռ էր դրված, որի ոտքերը տեղավորված էին հաստ փայտերի վրա, որպեսզի տիկին Գրանդէն կարողանար հասնել անցորդներին դիտելու անհրաժեշտ բարձրության: Վայրի կեռասի փայտից շինված արդեն գունաթափ մի աշխատասեղան լեցնում էր պատուհանի խորշը, որի մոտ դրված էր Էժենի Գրանդէի թիկնաթոռը: Տասնինգ տարի, մայր և աղջիկ, հարատև աշխատանքի մեջ, ապրիլից մինչև նոյեմբերը, իրենց ամբողջ ժամանակը հանդարտորեն այդտեղ էին անցկացրել: Այս վերջին ամսի առաջին օրը միայն նրանք կարող էին վերադառնալ իրենց ձմեռային կայանը՝ բուխարու մոտ: Այդ օրը միայն Գրանդէն թույլ էր տախս, որ կրակ վառեն սրահում. մարտի 31-ին նա արդեն արգելում էր տաքացնել, առանց նկատի առնելու ո՛չ գարնան և ոչ էլ աշնան առաջին ցրտերը: Շնորհիվ խոշոր Նանոնի ճարպկության, մի փոքրիկ կրակարանում խոհանոցից բերված և հավաքված կրակը տիկին և օրիորդ Գրանդէներին օգնում էր ապրիլի և հոկտեմբերի ամենազու առավոտներն ու երեկոներն անցկացնելու: Մայր ու աղջիկ իսկական բանվորուիու աշխատասիրությամբ վերանորոգում էին ընտանիքի բոլոր ձերմակեղենը, և իրենց ժամանակն այնքան խղամտանքով էին զործադրում, որ եթե Էժենին փափագէր մի զգնոց ասեղնագործել իր մոր համար, ստիպված էր անհրաժեշտ ժամանակն իր քնից խել և խարել հորը՝ լույս ունենալու համար: Վաղուց արդեն ազահը բաժանում էր մոմերը իր աղջկան և Նանոնին, ինչպես առավոտները բաժանում էր այդ օրվա անհրաժեշտ հացն ու մթերքները:

Բարձրահասակ Նանոնը հավանաբար միակ մարդկային էակն էր, որ ընդունակ էր տանելու իր տիրոջ բռնակալությունը: Ամբողջ քաղաքը նախանձում էր, որ պարոն և տիկին Գրանդէները Նանոն ունեն: Բարձրահասակ Նանոնը, որ այսպես էր կոչվում հինգ ոտք և ութ մատ հասակի պատճառով, երեսունինգ տարուց ի վեր պատկանում էր Գրանդէներին: Թեև նա միայն վաթսուն լիվր ոռձիկ էր ստանում, բայց ամենահարուստ սպասուիին էր համարվում Սումյուրում: Այդ վաթսուն լիվրերը երեսունինգ տարվա ընթացքում հավաքվելով՝ նրան թույլ էին տվել վերշերս նոտար Կրյուշոյի մոտ չորս հազար ֆրանկ դնելու կենսաթոշակի համար: Խոշոր Նանոնի

Երկարատև ու համար խնայողությունների այս արդյունքը հսկայական թվաց: Ամեն մի սպասուի տեսնելով, որ վաթսուն տարեկան խեղճ կինը իր ծերության հացն ապահովել է՝ նախանձում էր նրան, առանց նկատի առնելու այն տաժանելի աշխատանքը, որով ձեռք էր բերված այդ ապահովությունը: Քսաներկու տարեկան հասակում նա ոչ մի տեղ չկարողացավ մտնել իր այնքան խորշելի դեմքի պատճառով, իրականում այդ տպավորությունը շատ անարդարացի էր, նրա դեմքը զվարդիական գրենադերի ուսերի վրա եթե լիներ՝ հիացմունքի առարկա կրառնար, բայց ամեն ինչ, ասում են, իր տեղը պետք է լինի: Ստիպված լինելով հեռանալ հրդեհված մի ազարակից, ուր կովեր էր խնամում, նա եկավ Սոմյուր և աշխատանք փնտրեց՝ ոգնորված ոչ մի բանից չիրաժարվելու հումկու եռանդից: Այն ժամանակ պարուն Գրանդեն մտածում էր ամուսնանալ և իր ընտանեկան հարկն ունենալ: Եվ նա նշմարեց այդ աղջկանը, որին բոլորը մերժել էին: Իբրև նախկին տակառագործ՝ լավ դատելով մարմնական ուժը՝ նա գուշակեց այն օգուտը, որ կարելի էր ստանալ հերկուլեսյան կազմվածք ունեցող մի էզ արարածից, որ կանգնած էր իր ոտքերի վրա, ինչպես վաթսունամյա կաղնին իր արմատների վրա. ուներ հզոր ազդրեր, քառակուսի կռնակ, սայլապանի ձեռքեր և աննկուն ուղղամտություն, ինչպիսին էր նրա անաղարտ առաքինությունը: Ո՛չ կոծիծները, որ զարդարում էին ռազմիկի նրա դեմքը, ո՛չ նրա կրմինդրի գույնը, ո՛չ ջլապինդ բազուկները և ոչ էլ ցնցոտիները չսարսափեցրին տակառագործին, որ դեռ գտնվում էր այն տարիքում, երբ սիրտը բարախում է: Նա կերակրեց դժբախտ աղջկան, հազցրեց, կոշիկ ու ոռձիկ տվեց և ծառայության առավ՝ առանց հետո խստորեն վարվելու: Տեսնելով, որ այսպես լավ ընդունվեց, խոշոր Նանոնը ուրախությունից թաքուն լաց եղավ և ամսկեղծությամբ կապվեց տակառագործին, որն այնուամենայնիվ նրան ավատականորեն շահագործեց: Նանոնն անում էր ամեն ինչ, եփում էր, պատրաստում լվացքի մոխրացուրը, գնում մինչև Լուառ գետը ձերմակեղենը լվանալու, և ուսերին դրած՝ տուն էր բերում: Առավոտ շատ կանուխ էր զարթնում և ուշ՝ անկողին մտնում. կութքի ժամանակ կերակրում էր բոլոր բանվորներին, հսկում մառանողների վրա. հավատարիմ շան նման պաշտպանում էր իր տիրոց բոլոր ինչքերը. և վերջապես կուրորեն վստահելով նրան՝ անտրսունջ հնազանդվում էր նրա անհեթեթ քմայքներին: 1811 հայտնի թվականին, երբ բերքահավաքը անլուր աշխատանքներ արժեց, Գրանդեն, Նանոնի քան տարվա ծառայությունից հետո նրան նվիրեց իր հին ժամացույցը, միակ նվերը, որ սպասուիին երբեւ ստացել էր իր տիրոջից: Գրանդեն նրան էր թողնում իր հնացած կոշիկները (Նանոնը տակապին կարող էր դրանք հագնել), բայց անընդունելի է Գրանդենի կոշիկները նկատել իբր նվեր, որովհետև երեք ամսում դրանք բոլորովին մաշվում էին: Անհրաժեշտությունը այդ դժբախտ աղջկան դարձեց այնքան ժատ, որ Գրանդեն ի վերջո նրան սիրեց, ինչպես սիրում են շանը, և Նանոնը թողեց, որ իր վզին անցկացնի մի վզկապ՝ սուր գամերով, որոնց ծակոցը չէր գգում այլս: Երբ Գրանդեն հացը կտրեր սովորականից ավելի ժատությամբ, Նանոնը չէր գանգատվում, նա զվարթորեն մասնակցում էր առողջապահական այն խնայողություններին, որոնք արդյունք էին այդ տան խստաբեր ուժիմի, որտեղ ոչ ոք չէր հիվանդանում:

Հետո Նանոնը ընտանիքի մի անդամ էր, նա ծիծառում էր, երբ Գրանդեն ծիծառում էր, տիսրում, սառչում, տաքանում, աշխատում նրա հետ միասին: Ինչպիսի քաղցր վարձատրություն էր նա գտնում այդ հավասարության մեջ: Երբեք տերը որևէ դիտողություն չէր անում սպասուիուն, երբ սա մի ծառի տակից վերցնում և ուտում էր մի փշացած ծիրան կամ մի լերկամորթ դեղձ:

— Դե՛, վայելիք, Նանոն, — ասում էր նրան Գրանդեն այն տարիներին, երբ ծառերի ճյուղերը կրում էին պտուղների բերից, որոնցով ազարակապաններն ստիպված էին իրենց խոզերին կերակրել:

Դաշտերի մի աղջկա համար, որ իր մատադ տարիքում միայն վատ վերաբերմունք էր տեսել, զթափրությունից միայն ընկալված մի թշվառի համար, պարուն Գրանդեն երկմիտ ժպիտը արևի մի ճշմարիտ ճառագայթ էր: Արդեն Նանոնի պարզունակ սիրտը և նեղ զլուխը միայն մի զգացում և մի

գաղափար կարող էին պարփակել: Երեսունհինգ տարուց ի վեր, նա իրեն տեսնում էր, թե ինչպես ոտարորիկ, ցնցոտիներ հազած կանգնել էր Գրանդեի արհեստանոցի առաջ և դեռ լսում էր, թե ինչպես տակառագործը հարցրեց. «ինչ ես ուզում, անուշիկս»: Եվ նրա երախտագիտությունը մնում էր միշտ թարմ: Երբեմն մտածելով, որ այս խեղճ կակը իր կյանքում ոչ մի փաղաքշական խոսք լսած չի լինի, որ նա անգիտակ է այն բոլոր զգացումներին, որ կինն է ներշնչում և որ կարող էր մի օր աստծու առաջ երևալ ավելի անմեղ, քան նույնիսկ կույս Մարիամը, Գրանդեն, զթասրտությունից մղված, ասում էր նրան նայելով.

— Խե՞ դժ Նանոն:

Նրա այս հառաջանքին հետևում էր պառավ սպասուիու մի անբացատրելի նայվածքը՝ ուղղված Գրանդեին: Այս խոսքը ժամանակ առ ժամանակ արտասանվելով՝ վաղուց կազմում էր չընդհատված բարեկամության մի շղթա, որին ամեն մի հառաջանք մի նոր օղակ էր ավելացնում: Այս գութը, որ դրված էր Գրանդեի սրտում և հաճույքով ընդունված էր պառաված աղջկա կողմից, զարշելի մի բան ուներ: Ազահի այս վայրագ գութը, որ ծերունի տակառագործի սրտում հազար ու մի հաճույքի ծնունդ էր տալիս, Նանոնի համար մի ամբողջ երջանկություն էր: Ով էլ չափ «Ճեղա Նանոն», աստված իր հրեշտակներին կանաչի նրանց ձայնի դյուրադարձությունից և նրանց խորհրդավոր ափսոսանքներից: Սովորում կային շատ մեծ թվով ընտանիքներ, որոնց աղախիններն ավելի լավ էին խնամված, բայց տանեցիք ոչ մի գրիացում չեն ստանում: Դրանից էլ առաջանում էր այս մյուս խոսքը. «Գրանդեներն ինչպէ՞ս են անում, որ բարձրահասակ Նանոնը նրանց այսքան կապված է. նա իրեն կարող է կրակը նետել նրանց համար»: Նրա խոհանոցը, որի վանդակածող լուսամուտները բակի վրա էին բացվում, լինում էր միշտ մաքուր, դասավորված, հով, իրոք, ազահին հատուկ մի խոհանոց, ուր ոչինչ չպիտի կորչեր: Երբ արդեն Նանոնը լվանում էր իր պանակները, հավաքում կերակրի մսացրողները, հանգցնում կրակը, նա թողնում էր խոհանոցը, որ բաժանված էր սրահից մի միջանցքով, և գալիս էր տերերի մոտ՝ կանեփ մանելու: Մի հատիկ մուլ բավարարում էր ամբողջ ընտանիքի լուսավորությանը: Սպասուին քնում էր այս միջանցքի խորքում գտնվող մի նեղ անցրով լուսավորված մի խցիկում: Նրա զորավոր կազմվածքը թույլ էր տալիս, որ անպատճ կերպով նա բնակվի նման մի խորշում, որտեղից, այն խոր լրության մեջ, որ ամբողջ տան վրա էր իշտում, նա գիշեր-ցերեկ կարող էր խմանալ ամենափոքր աղմուկն իսկ: Ուստիկանական զամփոփ նման՝ նա պարտավոր էր քնել մեկ աչքը միայն փակ, և հանգստանալ՝ հսկելով:

Բնակարանի մյուս մասերի ամսի կեսին, բարձրահասակ Նանոնը առաջին անգամ վառարանը վարեց երեկոյան մոտ: Աշունը շատ գեղեցիկ էր եղել: Այդ օրը՝ տոնական հանրահայտ օր էր կրուղյանների և գրասենյանների համար: Այնպես որ վեց ներհակները, զինված բոլոր միջոցներով, պատրաստվում էին գալ այդ սրահը, իրար գերազանցելու Գրանդեի հանդեպ տածած իրենց բարեկամության մեջ: Առավոտյան ամբողջ Սովորը տեսել էր տիկին Գրանդեներին, որոնք Նանոնի ընկերակցությամբ ծխական և օրիորդ եկեղեցի էին գնացել պատարաց լսելու, և ամեն որ հիշեց, որ այդ օրը օրիորդ Էժենիի ծննդյան տարեղարձն է: Հետևաբար հաշվելով, թե որ ժամին նրանց ձաշն արդեն ավարտված էր լինելու, նոտար Կրյուշոն, աբբա Կրյուշոն և պարոն դը Բոնֆոն շտապել էին Գրասեններից առաջ հասնել՝ շնորհավորելու համար օրիորդ Գրանդեի տարեղարձը: Երեքն էլ բերել էին հսկա ծաղկեփնչեր՝ քաղված իրենց փոքր ջերմոցներից: Նախագահի փնջի

1819 թվականին, նոյեմբերի ամսի կեսին, բարձրահասակ Նանոնը առաջին անգամ վառարանը վարեց երեկոյան մոտ: Աշունը շատ գեղեցիկ էր եղել: Այդ օրը՝ տոնական հանրահայտ օր էր կրուղյանների և գրասենյանների համար: Այնպես որ վեց ներհակները, զինված բոլոր միջոցներով, պատրաստվում էին գալ այդ սրահը, իրար գերազանցելու Գրանդեի հանդեպ տածած իրենց բարեկամության մեջ: Առավոտյան ամբողջ Սովորը տեսել էր տիկին Գրանդեներին, որոնք Նանոնի ընկերակցությամբ ծխական և օրիորդ եկեղեցի էին գնացել պատարաց լսելու, և ամեն որ հիշեց, որ այդ օրը օրիորդ Էժենիի ծննդյան տարեղարձն է: Հետևաբար հաշվելով, թե որ ժամին նրանց ձաշն արդեն ավարտված էր լինելու, նոտար Կրյուշոն, աբբա Կրյուշոն և պարոն դը Բոնֆոն շտապել էին Գրասեններից առաջ հասնել՝ շնորհավորելու համար օրիորդ Գրանդեի տարեղարձը: Երեքն էլ բերել էին հսկա ծաղկեփնչեր՝ քաղված իրենց փոքր ջերմոցներից: Նախագահի փնջի

ցողունները գեղեցկորեն կապված էին ոսկեզօծ, ձերմակ ատլասե ժապավենով: Էժենիի ծննդյան տարեղարձի հիշատակելի օրվա առթիվ պարոն Գրանդեն ըստ իր սովորության առավոտը վաղ շտապել էր նրան զտնել դեռ պառկած և հանդիսավորապես մատուցել իր հայրական ընծան, որ տասներեք տարիներից ի վեր նույն էր՝ հազվագյուտ մի ոսկեդրամ: Տիկին Գրանդեն ընդհանրապես իր աղջկան նվիրում էր ամառային կամ ձմեռային մի զգեստ, նայած հանգամանքներին: Այն երկու շրջազգեստները և ոսկեդրամները, որ Էժենին ստանում էր նոր տարվա և հոր տոնի առթիվ, կազմում էին մոտ հարյուր էկյուի համառ մի հասույթ, որի կուտակումը Գրանդեն սիրով էր դիտում: Չէ՞ որ դա նրա համար մի ուրիշ բան չէր, եթե միայն իր փողը մի արկողից հանելը և մյուսի մեջ դնելը, և այսպես ասած՝ այդ միջոցով քիչ-քիչ զարգացնելու իր ժառանգությունը ազահությունը: Երբեմն նա հաշիվ էր պահանջում իր աղջկա գանձի մասին, որը ժամանակով մեծացել էր լա Բերթիլիերների կողմից, նրան ասելով.

— Սա լինելու է քո ամուսնական դուգենք:

Դուգենք հինավորց մի սովորություն է՝ տակավին ընդունված և սրբությամբ պահպանված մասնավանդ Ֆրանսիայի կենտրոնական որոշ մասերում: Բեռոխում, Անժուում, երբ մի աղջկա ամուսնում է, իր կամ իր ամուսնու ընտանիքը պարտավոր է նրան տալ մի քակ, որտեղ ըստ իրենց կարողության լինելու է տասներկու կամ տասներկու անգամ տասներկու, կամ հազար երկու հարյուր արծաթ կամ ոսկի դրամ: Ամենախեղճ հովվուին չէր ամուսնուում առանց իր դուգենի, թեկուց տասներկու պղնձե սուխց կազմված լինի դա: Խոսույնում խոսում են տակավին հարուստ մի ժառանգությունի դուգենի մասին՝ որ պարունակում էր հարյուր քառասունշորս փորթուգալական ոսկի: Կղեմես VII պատր՝ Պատարեին դը Մեղիչի հորեղբայրը, իր եղբոր աղջկանը Հենրիս II-ի հետ ամուսնացնելիս, նրան ընծան տվեց տասներկու մեծարծեք ոսկե մեղալներ:

Ընթրիքի պահին, հայրը իր Էժենիին նոր զգեստի մեջ ավելի գեղեցիկ տեսնելով, ուրախացած բացականչել էր.

— Քանի որ Էժենիի տարեղարձի տոնն է, վառարանում կրակ անենք, սա մի բարի գուշակություն կլինի:

— Օրիորդը այս տարի ամուսնանալու է, կասկած չկա, — ասաց բարձրահասակ Նանոնը՝ տանելով սագի մնացորդը, տակառագործների այդ փասյանը:

— Ես նրան արժանի մարդ չեմ տեսնում Սումյուլում,—

Երկշոտ հայացքով ամուսնուն նայելով ասաց տիկին Գրանդեն, որը չնայած իր առաջացած տարիքին, ցույց էր տալիս ամուսնության լիակատար գերությունը, որի ներքո խեղճ կինը հեծում էր:

Գրանդեն զննեց իր աղջկան և զվարթությամբ գոշեց.

— Այսօր երեխաս քաններեք տարեկան եղավ. հարկ կլինի շուտով զբաղվել նրանով:

Էժենին և մայրը լրիկ մի նշանակալից հայցը փոխանակեցին:

Տիկին Գրանդեն նիհար, չոր-չոր մի կին էր, սերկեսիլի նման դեղին, ձախսլիկ, դանդաղաշարժ. մեկը այն կանանցից, որոնք կարծես բոնության ենթարկվելու համար ծնված լինեն: Նա խոշոր ոսկորներ ուներ, ինչպես և խոշոր քիթ, խոշոր ճակատ, խոշոր աչքեր, և առաջին ակնարկից իսկ անորոշ մի նմանություն էր հիշեցնում աղվամազով այն պտուղների հետ, որոնք ոչ համ ունեն, ոչ հոտ: Նրա

ատամները սևացած և սակավաթիվ էին, բերանը ծալքեր ուներ, իսկ կզակը, ինչպես ասում են, կոշիկի ծայրի էր նման: Նա պատվական կին էր, մի խկական լա Բերթելիեռ: Արքա Կրյուշոն հարմար առիթներ էր գտնում նրան ասելու, որ նա այնքան էլ տգեղ չէր եղել, ու նա հավատում էր դրան: Հրեշտակային մի քաղցրություն, երեխաների կողմից չարչարվող միջատի համակերպություն, հազվագյուտ երկյուղածություն, հոգեկան անխախտելի հավասարակշռություն և բարի սիրտը պատճառ էին դառնում, որ բոլորը նրան ցավակցեն ու հարգեն: Նրա ամուսինը ոչ մի անգամ միանվագ վեց ֆրանկից ավելի չէր տվել նրան մանր ծախսերի համար: Արտաքուստ թեև ծիծաղելի այս կինը, որն իր օժիտով և իր ժառանգություններով պարոն Գրանդեին բերել էր երեք հարյուր հազար ֆրանկից ավելի, խորապես նվաստացած էր զգացել իրեն այն կախումից ու մեկուսացումից, որի դեմ նրա հոգու մեղմությունը չէր թույլ տալիս ընդվզել: Նա երբեք չէր խնդրել մի սու, ոչ էլ դիտողություն արել այն պաշտոնական գրությունների համար, որ նոտար Կրյուշոն իրեն ստորագրել էր տալիս: Այդ հիմար և գաղտնի հպարտությունը, Գրանդեից միշտ անտեսված և վիրավորված այդ հոգու ազնվությունը իշխում էր այդ կնոջ ամբողջ վարմունքի վրա: Տիկին Գրանդեն անփոփոխ կերպով հագնում էր մի կանաչավուն, լսանտինե զգեստ, որը նա վարժվել էր մոտ մի տարի կրել, ապա բամբակէ մի լայն քող, ծղոտէ կարված զիխարկ և միշտ կրում էր սև տափտայե գոզնոց: Սակավադեպ տնից դուրս զալով՝ նա քիչ էր մաշում իր կոշիկները: Վերջապես իր համար նա ոչինչ չէր ուզում: Ուստի Գրանդեն, երբեմն խողահարությունից մղված, հիշելով, թե որքան ժամանակ էր անցել կնոջը տված վերջին վեց ֆրանկից, տարեվերջի իր բերքը վաճառելիս՝ նրա համար նվերներ էր նախատեսում: Այգեկութը զնող հոլանդացու կամ բելգիացու մատուցած չորս կամ հինգ ոսկուց Գրանդեն կազմում էր տիկին Գրանդեի տարեկան ամենամաքուր հասույթը: Բայց երբ նա ստանում էր այս հինգ ոսկին, ամուսինը նրան ասում էր հաճախ, որպես թե իրենց քաակը միևնունը լիներ. «Մի քանի սու չունե՞ս ինձ փոխ տալու». և խեղականիկ որեւէ քանով օգտակար լինելու այն մարդուն, որին նրա խոստովանահայրը ներկայացնում էր իբրև իր իշխանն ու տերը, իր ստացած նվերներից ձմեռները վերադարձնում էր նրան մի քանի էլյու: Երբ Գրանդեն իր գրպանից դուրս էր բերում հարյուր տուն, որ հատկացված էր ամսական մանր ծախսերին՝ թելին, ասեղին և իր աղջկա արդուզարդին, նա իր քաակը փակելուց առաջ չէր մոռանում հարցնել կնոջը.

— Իսկ դու, մայր, ոչինչ չե՞ս ուզում:

— Բարեկամս,— պատասխանում էր տիկին Գրանդեն մայրական արժանապատվության զգացումով տողորված,— հետո, հետո:

Ապարդյո՛ւն վեսմություն: Գրանդեն հավատում էր, որ ինքն առատաձեռն էր իր կնոջ հանդեպ: Փիլիսոփաները, որ հանդիպում են Նանոնների, տիկին Գրանդեների, Էժենիների, միթե իրավացի չե՞ն խորհելու, որ հեգնանքը նախախնամության բնավորության հիմունքն է:

Այդ ձաշից հետո, ուր առաջին անգամ օրիորդ Էժենիի ամուսնության մասին խոսք եղավ, Նանոնը զնաց մի շիշ հաղարջօնի բերելու պարոն Գրանդեի սենյակից, և քիչ մնաց, որ վայր ընկներ սանդուղքներից իջնելիս:

— Անխելք,— ասաց նրան տերը,— մի՞թե դու էլ կընկնես մյուսների պես:

— Տեր իմ, ձեր սանդուղքի այն աստիճանն է, որ չի պահում:

— Իրավունք ունի, ասաց տիկին Գրանդեն:— Դուք վաղուց պետք է նորոգել տայիք այն: Երեկ քիչ էր մսում Էժենիի ոտքը խախտվեր:

— Վերցրո՞ւ, — ասաց Գրանդեն Նանոնին, տեսնելով նրան բոլորովին գույնը զցած, — քանի որ այսօր Էժենիի տոնն է, և քիչ էր մտում, որ դու վայր ընկնեիր՝ խմի՛ թ մի փոքր բաժակ հաղարջողի կազդուրվելու համար:

— Իրոք ես արժանի եմ դրան, — պատասխանեց Նանոնը: — Իմ տեղը շատերը կիշրեին շիշը. սակայն ավելի շուտ, ես արմունկս կկոտրեի՝ շիշը օդի մեջ պահելու համար:

— Իմ խե՛ղան Նանոն, — ասաց Գրանդեն, նրա գավաթի մեջ հաղարջողի լցնելով:

— Որևէ մի տեղու չցավեց, — հարցրեց Էժենին՝ ուշադրությամբ նրան նայելով:

— Ոչ, քանի որ կարողացա ինձ պահել՝ կողքիս հենվելով:

— Դե՛ լավ, քանի որ Էժենիի տարեդարձն է, — ասաց Գրանդեն, — ես կնորոգեմ այդ աստիճանը: Դուք չեք իմանում ձեր ոտքը դնել այն անկյունը, որը դեռևս բավականին հաստատուն է:

Գրանդեն վերցրեց մոմը՝ թողնելով կնոջը, աղջկան և սպասուիոն այն լույսով, որ արձակում էին վառարանի թեժ բոցերը և գնաց խմորատունը բերելու տախտակներ, մեխեր և իր գործիքները:

— Հարկավո՞ր է ձեզ օգնել, — ձայն տվեց Նանոնը՝ լսելով նրա մուրճի հարվածները սանդուղքի վրա:

— Ո՛չ, ո՛չ, սա իմ գործն է, — պատասխանեց նախկին տակառագործը:

Այն պահին, երբ Գրանդեն անձամբ նորոգում էր իր որդինոտած սանդուղքը և երիտասարդ տարիները վերիիշելով սովորում էր ուժգնորեն, երեք Կրյուշոները դրանք բախեցին:

— Դո՞ւք եք, պարոն Կրյուշո, — հարցրեց Նանոնը՝ դրան վանդակից նայելով:

— Այո՛, — պատասխանեց նախազահը:

Նանոնը քացեց դուռը, և բուխարու արտացոլքը, որ անդրադառնում էր կամարի ներքեր, հնարավոր դարձրեց, որ երեք Կրյուշոները նշմարեն սրահի մուտքը:

— Ա՛, դուք էլ տոնում եք Էժենիի տարեդարձը, — ասաց նրանց Նանոնը՝ հոտոտելով ծաղիկները:

— Ներողամիտ եղեք, պարոններ, — ձայն տվեց Գրանդեն՝ ձանաշելով իր բարեկամների ձայնը, — հիմա գալիս եմ: Ես հպարտ մարդ չեմ, ինքս եմ վերանորոգում սանդուղքի աստիճաններից մեկը:

— Շինեցեք, շինեցեք, պարոն Գրանդեն: Ածխագործը քաղաքագլուխ է իր բնակարանում, — պաշտոնական շեշտով ասաց նախազահը՝ ծիծաղելով իր ակնարկության վրա, որը ոչ ոք չհասկացավ:

Տիկին և օրիորդ Գրանդեները ոտքի կանգնեցին: Այ ժամանակ նախազահն օգտվելով մթությունից՝ ասաց Էժենիին.

— Թույլ կտա՞ք, օրիորդ, ձեր ծննդյան տարեդարձի տոնի առթիվ մաղթել ձեզ երջանիկ տարիներ և մշտնշենական առողջություն, որը վայելում եք այժմ:

Եվ ներկայացրեց նրան Սոմյուրում հազվագյուտ ծաղիկների մի մեծ փունջ, ապա արմունկներով սեղմելով ժառանգուհուն, համբուրեց նրա վզի երկու կողմը այնպիսի մի սիրավիրությամբ, որ Էժենիին ամաչեցրեց: Նախագահը, որ նման էր մի մեծ ժանգոտած մեխի, կարծում էր, որ այդպիս սիրաբանում է:

— Մի՛ նեղվեք,— ասաց Գրանդեն ներս գալով,— արե՛ք, ինչպես պետք է անել տոն օրերին, պարոն նախագահ:

— Բայց իմ եղբորորդու համար,— պատասխանեց արքա Կրյուշոն՝ զինված իր ծաղկեփունջով,— օրիորդի ընկերակցությունը ամեն օրը տոնական օրի պիտի վերածեր:

Արքան համբուրեց Էժենիի ձեռքը: Իսկ նոտար Կրյուշոն պարզապես համբուրեց աղջկա երկու այտերը և ասաց.

— Ինչպես մեծանում եք, ամեն տարի՝ տասերկու ամիս:

Լույսը վերստին դնելով ժամացույցի դիմաց, Գրանդեն, որ չէր բաց թողնում որևէ կատակ, որ նրան դուր էր գալիս և որ կրկնում էր մինչև նրանից հազենալը՝ ասաց.

— Քանի որ Էժենիի տոնն է, վառենք ջահերը:

Նա խնամքով վերցրեց աշտանակի ճյուղերը, ամեն մի պատվանդանին ամրացրեց մի ճրագարերան, Նանոնի ձեռքից վերցրեց մի նոր մոմ, որի ծայրը թղթով փաթաթված էր, որեց անցքի մեջ, զննեց, թե ինչպես էր զետեղված և վառելուց հետո եկավ նստեց իր կնոջ կողքին, փոխն ի փոխ դիտելով իր բարեկամներին, իր աղջկան և զույգ աշտանակները:

— Դե Գրասենները չե՞ն եկել:

— Տակավին ոչ— պատասխանեց Գրանդեն:

— Գալո՞ւ են արդյոք,— հարցրեց ծերունի նոտարը՝ ծամածուելով քափկիրի նման ծակծկած դեմքը:

— Կարծում եմ,— պատասխանեց տիկին Գրանդեն:

— Ձեր այգեկութք վերջացե՞լ է,— հարցրեց նախագահ դը Բոնֆոնը Գրանդենին:

— Ամբողջությամբ,— պատասխանեց ծեր խաղողագործը, բարձրանալով իր նստած տեղից սրահի երկարությամբ ման գալու համար, և հպարտությամբ կուրծքն ուղեցնելով՝ նման իր արտասանած այս բառին— ամբողջությամբ:

Այդ պահին միջանցքի դրոնվ, որ խոհանոց էր տանում, Գրանդեն նկատեց բարձրահասակ Նանոնին, որ նստած էր օջախի առաջ և լույս ունենալով՝ պատրաստվում էր մանել այնտեղ, շհամարձակվելով մասնակցել տոնակատարությանը:

— Նանոն,— ասաց ծերունին առաջանալով դեպի միջանցքը,— հանգըրու օջախը, քո լույսը և եկ մեզ մոտ: Անտարակույս սրահը բավական մեծ է, որպեսզի ամենքիս տեղավորի:

— Բայց, պարոն, դուք հարգելի հյուրեր եք ունենալու:

— Մի՛ թե դու նրանցից պակաս արժես: Նրանք էլ Ադամի կողից են, ինչպես դու:

Գրանդեն նորից եկավ նախագահի մոտ և ասաց.

— Վաճառե՞լ եք ձեր բերքը:

— Ոչ, ճիշտն ասած պահում եմ: Եթե այժմ զինին լավ է, երկու տարուց ավելի լավ կլինի: Գինու վաճառականները, ինչպես զիտեք, երդում են արել պահպանել զինու համաձայնեցված զինը: Այս տարի բեղիացիք չեն կարող իրենց զինը մեզ պարտադրել, և եթե պատահի, որ ետ գնան, նորից կվերադառնան:

— Այո, բայց լավ դիմանանք,— ասաց Գրանդեն մի այնպիսի շեշտով, որ սարսու պատճառեց նախազահին:

«Արդյոք նրանց հետ արդեն բանակցո՞ւմ ե»,՝մտածեց Կրյուշն:

Այդ պահին դրան մի զարկ ազդարարեց Գրասենների ժամանումը, որն ընդհատեց տիկին Գրանդեի և աբբայի միջև սկսված խոսակցությունը:

Տիկին Գրասենը մեկն էր այն կարճահասակ, աշխուժ, թմվլիկ, սպիտակ և վարդագույն կանանցից, որոնք շնորհիվ պրովինցիայի վանական ռեժիմի և առաքինի կյանքի տվյալներին՝ քառասուն տարեկան հասակում մնում են դեռևս երիտասարդ: Նրանք նման են տարվա վերջին վարդերին, որոնց տեսքը հաճույք է պատճառում, բայց թերթիկները ինչ-որ սառնություն ունեն և բույրն արդեն նվազագույն է: Նա բավական լավ էր հազնվում, իր զգեստների ձևերը Փարիզից երեկո տալիս և այդ գծով ուղղություն տալիս Սոմյուրին ու երեկույթներ էր կազմակերպում: Նրա ամուսինը նախկին բնակապետ կայսերական գվարդիայում, Առատեռլիցում ծանր վիրավորված և կենսաթոշակավոր, հակառակ իր հարգանքին դեպի Գրանդեն, պահպանում էր զինվորականներին հատուկ առերևույթ համարձակությունը:

— Բարեւ ձեզ, Գրանդե, — ասաց խաղողագործին ձեռքը երկարելով և ցույց տալով մի տեսակ գերազանցություն, որով նա միշտ շախչախում էր Կրյուշներին — օրիորդ, — ասաց Էժենիին՝ տիկին Գրանդեին բարեկարուց հետո, — դուք միշտ գեղեցիկ եք ու խելոք, և իսկապես չփառ քայլություն ունեք ձեզ:

Հետո նա ներկայացրեց մի փոքր արկդ, որը կրում էր նրա սպասավորը, և պարունակում էր Կապին հատուկ մի քուփ՝ Եվրոպա նոր բերված և հազվագյուտ մի ծաղիկ:

Տիկին դը Գրասենը խիստ խանդադատագին համբուրեց Էժենիին, նրա ձեռքը սեղմեց և ասաց.

— Ադոլֆը ստանձնեց ձեզ բերել իմ փոքր նվերը:

Բարձրահասակ և խարտյաշ մի երիտասարդ, գունատ ու տկար, բավականին գեղեցիկ ձևերով, առերևույթ անհամարձակ, սակայն Փարիզում, ուր գնացել էր իրավաբանություն ուսանելու, ծախսել էր ութից տասը հազար ֆրանկ, բացի իր բոշակից, առաջացավ դեպի Էժենին, համբուրեց նրա այտերը և մատուցեց ձեռագործի մի տուփ, որի մեջ բոլոր գործիքները կարմրավայլ էին. իրականում շատ վատորակ, թեև կափարիչի զարդարանքի վրա գորթական տառերով բավական լավ փորագրված է. Գ. տառերը կարող էին հավատացնել տալ, թե շատ հոգ տարված աշխատանք է: Այդ տուփը բանալիս Էժենին զգաց մեկն այն կատարյալ և անսպասելի ուրախություններից, որ կարմրեցնում, ցնցում և հաճույքից դողորդացնում է մանկամարդ աղջիկներին: Նա իր աշքերն ուղղեց հոր վրա, կարծէս իմանալու համար, թե կարո՞ղ է լնդունել, և պարոն Գրանդեն ասաց. «Ընդունիր, աղջիկս» մի այնպիսի շեշտով, որը կարող էր նշանավոր դարձնել մի դերասանի: Երեք Կրյուշները մնացին զարմացած՝ նկատելով ոգևորված և երջանիկ հայացքը, որ Ադոլֆ դե Գրասենի վրա զցեց ժառանգուին, որի համար նման Ճյուղունը չլսված բան թվաց: Պարոն դե

Գրասենը մի պտղունց քթախոտ հրամցրեց Գրանդեին, ինքն էլ վերցնելով մի ուրիշ պտղունց, թռվեց իր կապույտ զգեստի կրծքից կախված Պատվո Լեզիոնի ժապավենի վրա ընկած քթախոտի փոշին, ապա նայեց Կրյուշոներին այնպիսի հայացքով, որ կարծես ուզում էր ասել. «Դիմացեք այս թրահարվածիս»: Տիկին դե Գրասենը նայեց կապույտ անոթներին, որոնց մեջ դրված էին Կրյուշոների ծաղկեփնչերը, ծաղրող կնոջ անողոքությամբ նրանց բերած նվերները փնտրելով: Այս փափուկ կացության մեջ արքա Կրյուշոնը սպասեց, որ ներկաները շրջան կազմած նստեն կրակի շուրջը և գնաց Գրանդեի հետ անցուղարձ անելու սրահի խորքում: Եթե այդ երկու ծերունիները Գրասեններից ամենից հեռու գտնվող լուսամուտի առաջն էին՝

- Այս մարդիկ,— ասաց արքան ազահի ականջին,— փողը փողոց են նետում:
- Ի՞նչ վնաս, եթե դա իմ նկուղն է ընկնում,— պատասխանեց նախկին տակառագործը:
- Սակայն դուք բոլոր միջոցներն ունեք՝ ձեր աղջկան ոսկե մկրատներ նվիրելու, — ասաց արքան:
- Ես նրան մկրատից ավելի լավ բան եմ տալիս,— պատասխանեց Գրանդեն:

«Եմ եղբորորդին տիսմարի մեկն է,— մտածեց արքան նայելով նախազահին, որի խառնափնթոք մագերն ավելացնում էին նրա թուխ դեմքի անշնորհությունը:— Մի՞ թե չէր կարող այնպիսի ոչինչ բան հնարել, որ արժեք ունենար»:

- Տիկին Գրանդե, թուղթ խաղանք,— ասաց տիկին դե Գրասենը:
- Արդեն բոլորս էլ հավաքված ենք, կարող ենք երկու խաղասեղան ունենալ...
- Քանի որ Էժենիի տոնն է, սարքեցեք ընդհանուր լոտո, — հարեց հայր Գրանդեն, — այս երկու երիտասարդները պետք է մասնակցեն:

Նախկին տակառագործը, որ ոչ մի խաղ չէր խաղում, ցույց տվեց իր աղջկան և Աղոլֆին:

- Շտապիր, Նանոն, դիր խաղասեղանները:
- Մենք կօգնենք ձեզ, օրիորդ Նանոն, — զվարթությամբ ասաց տիկին դե Գրասենը, խիստ երջանիկ՝ օրիորդ Էժենիին պատճառած ուրախության համար:
- Կյանքումս երբեք այս օրվա չափ գոհ չեմ եղել, — պատասխանեց ժառանգուիհին:— Ոչ մի տեղ չեմ հանդիպել այսպես սիրուն բանի:
- Աղոլֆն է քերել Փարիզից իր ընտրությամբ, — փսփսաց նրա ականջին տիկին դե Գրասենը:

«Շարունակի՛ թ, շարունակի՛ թ անիծյալ ինտրիգանուիհ, — ասում էր ինքն իրեն նախազահը:— Եթե պատահի, որ մի օր դատ ունենաս, դու կամ քո ամուսինը, ձեր բանը բուրդ կլինի»:

Նոտարը նստած մի անկյունում հանդարտ նայում էր արքայի կողմը և մտածում.

«Դե Գրասեններն ինչ ուզում են թող անեն, իմ հարստությունը եղբորս և եղբորորդուս հարստության հետ միասին կհասնի մեկ միլիոն հարյուր հազար ֆրանկի: Դե Գրասենները լավագույն դեպքում նրա կեսն ունեն միայն, աղջիկ էլ ունեն. թո՛ղ նվիրեն, ինչ ուզում են, բայց մի օր և՛ ժառանգուիհին, և՛ նվերները մերն են լինելու:

Երեկոյան ութ և կեսին պատրաստ էին երկու խաղասեղանները: Գեղեցիկ տիկին դե Գրասենին հաջողվել էր իր տղային նստեցնել Էժենիի կողքին: Այս հետաքրքիր, թեալ առերևույթ հասարակ տեսարանի դերակատարները, որ բռնում էին իրենց ձեռքերում գույնզգույն, թվազրված քարտեր և կապույտ ապակուց շինված ժետոններ, կարծես ունկնդրում էին ծեր նոտարի կատակախոսություններին, որ ոչ մի թվանիշ չէր քաշում, առանց որևէ դիտողություն անելու, բայց իրականում բոլորն էլ մտածում էին միայն պարոն Գրանդեի միլիոնների մասին: Ծեր տակառագործը սնակառությամբ զնում էր տիկին դե Գրասենի վարդագոյն փետուրներն ու թարմ արդուզարդը, բանկիրի ռազմատենչ գլուխը, Աղոլֆի արտահայտությունը, նախազահին, աբբային, նոտարին և ներքուստ մտածում էր.

«Այս մարդիկ եկել են իմ փողերի համար: Եկել են այստեղ իմ աղջկա համար և ձանձրանում են: Է՛, աղջիկս չի պատկանելու ո՛չ սրանց, ոչ էլ նրանց: Սրանք բոլորը ծառայելու են ինձ իբրև խոշոր կարթեր՝ ձուկ որսալու համար»:

Ըստանեկան այդ զվարթությունը երկու աշտարակների լույսով վատ լուսավորված այս հին, գորշ սրահում, այդ ծիծանները, որոնց ձայնակցում էր բարձրահասակ Նանոնի ճախարակի աղմուկը, և որոնք միայն Էժենիի և իր մոր շուրթերի վրա էին անկեղծ, այդ փոքրությունը, որ միացած էր

այնքան մեծ շահագրգորթյունների, այդ մանկամարդ աղջիկը, նման այն թռչուններին, որոնք իրենց վրա դրված և իրենց կողմից անզիտացված բարձր զնի զոհ են, շրջապատված ու հետապնդված բարեկամական արտահայտություններով, որոնց նա միամտորեն հավատում էր, այդ ամենը նպաստում էր, որ այդ տեսարանը լինի տիսրորեն ծաղրաշարժ: Մի՞ թե բոլոր ժամանակներին և բոլոր վայրերին հատուկ տեսարան չէ՞ սա, որ սակայն այստեղ հասցված էր ամենապարզ արտահայտության: Դեմքը Գրանդեի, որը շահագործում էր երկու ընտանիքների կեղծ մտերմությունը և մեծապես օգտվում այդ բանից, իշխում էր այս դրամայում և հասկանալի դարձնում այն: Մի՞ թե դա այն նոր աստվածը չէր, որին երկրպագում են, փողն իր բովանդակ զորությամբ և արտահայտված միայն մի կերպարանքով: Այնտեղ կյանքի քաղցի զգացումները երկրորդական տեղ էին զրավում և խանդավառում էին միայն երեք մաքուր սիրտ՝ Նանոնի, Էժենիի և նրա մոր սրտերը: Եվ որքան անզիտություն կար նրանց պարզամտության մեջ: Էժենին և նրա մայրը ոչինչ չզիտեին Գրանդեի հարստության մասին. նրանք արժեքավորում էին կյանքի երևույթները՝ իրենց աղոտ մտքերի լույսով և վարժված լինելով առանց փողի ապրելու՝ ո՛չ հարգում և ոչ էլ արհամարհում էին այն: Նրանց զգացումները, որ վիրավորված էին իրենցից թաքուն, բայց որ մնում էին միշտ էլ կենդանի և կազմում նրանց գոյության գաղտնիքը, նրանց դարձնում էին հետաքրքիր բացառություններ՝ միմիայն նյութապաշտ կյանքով ապրող այս մարդկանց ընկերության մեջ: Մարդկային դժնդան կ կացություն. շկա ոչ մի երջանկություն, որ չբիմ որևէ տգիտությունից: Այն պահին, երբ տիկին Գրանդեն շահում էր տասնվեց սու, ամենամեծ շահույթը այդ սրահում դրված խաղագումարներից, և բարձրահասակ Նանոնը համարձակ ծիծանում էր տեսնելով որ տիկինը զրպանում էր այդ մեծ գումարը, լսվեց փողոցի դռան մի այնպիսի ուժգին զարկ, որ կանայք ընդուստ վեր ցատկեցին իրենց աթոռներից:

— Դուռն այդպես բախտոր Սոմյուրի բնակիչ չի լինի, — ասաց նոտարը:

— Բայց մի՞ թե կարելի է այդ ձևով թակել, — ասաց Նանոնը: — Չլինի՞ թե դուռն ուզում են կոտրել:

— Ո՞ր սատանան է, — գոչեց Գրանդեն:

Նանոնը վերցրեց աշտանակներից մինը և Գրանդեի ընկերակցությամբ զնաց բանալու:

— Գրանդե՛, Գրանդե՛, — գոչեց կինը և վախի մի անորոշ զգուշացումից մղված՝ դեպի սրահի դուռը նետվեց:

Բոլոր խաղացողներն իրար նայեցին:

— Մենք եւ չգնա՞նք այնտեղ, — ասաց պ. դե Գրասենը: — Դուան այդ բախոցը ինձ բարեկամական չի թվում:

Պարոն դե Գրասենը հազիվ կարողացավ նշմարել դիմագիծը մի երիտասարդի, որին ուղեկցում էր փոստակառքերի մի բեռնակիր, ձեռքերում երկու մեծ ճամպրուկներ և պայուսակներ: Գրանդեն ընդուստ շուր եկավ դեպի իր կինը և ասաց.

— Տիկին Գրանդե, գնացեք ձեր լուսոն շարունակելու և ինձ առանձին թողեք պարոնի հետ:

Հետո թափով փակեց սրահի դուռը, ուր խաղացողները նորից զրավեցին իրենց տեղերը, առանց շարունակելու խաղը:

— Սոմյուրի մարդկանցի՞ց էր, պարոն դե Գրասեն, — հարցրեց նրա կինը:

— Ω՛չ, ճանապարհորդ է:

— Միայն Փարիզից կարող է լինել:

— Արդարն, — ասաց նոտարը, հանելով երկու մատնաշափ հաստությամբ իր ժամացույցը, որ հոլանդական նավի էր նման, — ժամը ինն է: Բա՛հ, Մեծ Գրասենյակի հանրակառքը երբեք չի ուշանում:

— Իսկ այդ պարոնը երիտասա՞րդ է, — հարցրեց աբբա Կրյուշոն:

— Այո, — պատասխանեց դե Գրասենը: — Նրա իրերը ամենաքիչը երեք հարյուր կիլո կղինեն:

— Նանոնը չի գալիս, — ասաց Էժենին:

— Ձեր ազգականներից կինի, — ասաց նախազահը:

— Շարունակենք խաղը, — մեղմորեն բացականչեց տիկին Գրանդեն: — Պարոն Գրանդեի շեշտից ևս նկատեցի, որ

նա սրտնեղվեց. հավանաբար նա զոհ չի լինի, որ մենք իր գործերի մասին ենք խոսում:

— Օրիորդ, — ասաց Աղոլֆն իր հարևանուհուն, — անկասկած նա ձեր հորեղբորորդի Գրանդեն կլինի, շատ սիրուն մի երիտասարդ, որին ես հանդիպել եմ պարոն դը Նյուսինգենի պարահանդեսում:

Աղոլֆը շշարունակեց. մայրը նրա ոտքը կոխեց: Հետո բարձր ձայնով նրանից երկու սու ուզելով իր խաղի համար՝ փափաց նրա ականջին:

— Լոելո՞ւ ես, մեծ ապուշ:

Այդ պահին Գրանդեն վերադարձավ առանց բարձրահասակ Նանոնի, որի և փոստակառքի բեռնակրի ոտնաձայնները լսվում էին աստիճանների վրա: Ճամփորդը, որ մի քանի րոպեից ի վեր այնքան հետաքրքրություն էր զարթեցրել և խիստ զրադեցրել երևակայությունները՝ հետևում էր

Գրանդեին: Այդ օտարականի այդտեղ գալը և այդ մարդկանց մեջ ընկնելը կարելի էր համեմատել խխունջի՝ մեղուների վեթակի մեջ ընկնելու կամ սիրամարգի՝ զյուղական խավար հավնոց ընկնելու հետ:

— Նստեցեք կրակի մոտ,— ասաց նրան Գրանդեն:

Նստելուց առաջ երիտասարդ օտարականը խիստ վայելչությամբ բարեւց ներկաներին: Ներկաները պատասխանելու համար ոտքի կանգնեցին և զլուխները խոնարհեցին, իսկ կանայք հանդիսավոր ուներանս արին:

— Անշուշտ մրսած եք, պարոն,— ասաց տիկին Գրանդեն,— թերևս զալիս եք...

— Ի՞նչ բան են կանայք, թողեք, որ պարոնը հանգստանա,— ասաց ծեր խաղողագործը, ընդհատելով ձեռքում բռնած մի նամակի ընթերցումը:

— Բայց, հայրիկ, թերևս պարոնը որևէ բանի կարիք է զգում,— ասաց Էժենին:

— Նա ինքը լեզու ունի,— խստությամբ պատասխանեց խաղողագործը:

Միայն անծանոթ հյուրը զարմացավ տեսարանից: Մյուսները ծերուկի բռնակալական ձևերին վարժված էին: Համենայն

դեպս, երբ այս երկու հարցումը տեղի ունեցավ, և պատասխաները փոխանակվեցին, անծանոթը ոտքի կանգնեց, մեջքը դարձրեց դեպի կրակը, բարձրացրեց ոտքի մեկը կոշիկի ներբանը տարացնելու համար և ասաց Էժենին:

— Իմ հորեղոր աղջիկ, շնորհակալ եմ ձեզանից: Տուրում ճաշել եմ արդեն:— Եվ ավելացրեց՝ Գրանդեի կողմը նայելով,— ոչնչի կարիք չունեմ, նույնիսկ բոլորովին ել հոգնած չեմ:

— Պարոնը մայրաքաղաքի՝ ց է զալիս,— հարցրեց տիկին դե Գրասենը:

Պարոն Շառլ, այսպես էր կոչվում փարիզաբնակ պարոն Գրանդեի որդին, լսելով, որ իրեն էին հարց տալիս, վզից շղթայով կախված մենակնոցը բռնեց և մոտեցնելով իր աջ աչքին՝ զննելու համար և՝ սեղանի վրա եղածը, և՝ սեղանի շուրջը հավաքված մարդկանց, միակնոցի միջով խիստ լպիրշությամբ նայեց տիկին դե Գրասենին և ամեն ինչ տեսնելուց հետո ասաց.

— Այո՛, տիկին: Լոտո՛ եք խաղում, հորեղոր կին, խնդրում եմ շարունակեցեք ձեր խաղը, որ անշուշտ շատ հետաքրքրական է, որպեսզի շղաղարեցնենք այն...

«Վստահ էի, որ նրա հորեղորորդին ե», մտածում էր տիկին դե Գրասենը՝ նրա վրա քնքուշ նայվածքներ նետելով:

— 47,— զոչեց ձեր արքան:— Նշանակիր, տիկին դե Գրասեն, ձեր համարը չէ՛ միթե:

Պարոն դե Գրասենը մի համարանիշ դրեց իր կնոջ քարտի վրա: Նրա կինը, տիսուր նախագուշացումներով համակված, հաջորդաբար զննեց փարիզաբնակ զարմիկին և Էժենիին՝ առանց ուշք դարձնելու խաղին: Ժամանակ ժամանակուին, խուսափուկ հայացքն էր

ուղղում իր հորեղորորդու կողմը. բանկիրի կինը հեշտությամբ նշմարեց նրանց մոտ զարմանքի ու հետաքրքրության մի crescendo\*:

Պարոն Շառլ Գրանդէն, քաներկու տարեկան մի սիրուն երիտասարդ, այդ պահին մի եզակի հակապատկեր էր ստեղծում այդ կատարյալ պրովինցիալ մարդկանց հետ, որոնց բավականին արդեն զայրացնում էին նրա ազնվական շարժուձևերը, և որին բոլորն էլ ուսումնասիրում էին՝ ծաղրելու համար: Այս հանգամանքը բացատրության է կարոտ: Քսաներկու տարեկան հասակում երիտասարդները դեռևս շատ մոտ են երեխայության՝ երեխայություններ թույլ տալու համար իրենց: Հետևաբար հարյուրից իննասունինը հավանաբար կշարժվեր Շառլ Գրանդէի նման: Այդ երեկույթից մի քանի օր առաջ հայրը նրան ասել էր, որ մի քանի ամսով մեկնի Սովորությունը իր եղբոր մոտ: Թերևս փարիզաբնակ Գրանդէն մտածում էր Էժենիի մասին: Շառլը, որ առաջին անգամն էր ընկնում պրովինցիա, մտածեց այնտեղ երևալ մոռայական երիտասարդի գերազանցությամբ, իր պերճանքով հուսահատեցնել այդ շրջանի բնակիչներին, մի հայտնություն լինել այնտեղ և ներմուծել փարիզյան կյանքի հնարքները: Վերջապես, եթե մի խոսքով ասենք՝ նա կուզենար Սովորություն ավելի ժամանակ հատկացնել իր եղունգները փայլեցնելուն, քան թե Փարիզում, և այնտեղ ցուցադրել հազնվելու ծայրահետ հոգատարություն, որից երբեմն նրբածաշակ երիտասարդը հրաժարվում է շնորհագեղ անփութությամբ: Շառլը իր հետ բերել էր որտորդության ամենազեղեցիկ զգեստը, ամենասիրուն հրացանը, ամենասիրուն դանակը, փարիզյան ամենասիրուն պատյանը: Նա բերել էր շատ լավ կարված ժիշտների հավաքածու, որոնցից մի մասը գորշ էր, մյուսները սպիտակ, սև, բգեղի գույնի, ոսկեցոլք, փայլվող, նախշուն, խաշաձև, ուղիղ կամ ծալված օձիքներով և վերից-վար ոսկի կոճակներով: Նա բերել էր փողկապի և օձիքի բոլոր տեսակները, որոնք այդ ժամանակ հարգի էին: Նա վերցրել էր իր հետ Բյուխոնի մոտ կարված երկու զգեստ և իր ամենանուրբ սպիտակեղենը: Նա բերել էր իր մոր նվերը՝ արդուզարդի գեղեցիկ ուկյա տուփը: Նա բերել էր պահամոլի իր սնոտի իրերը, առանց մոռանալու գրենական պիտույքների մի հմայիշ տուփ, որ նա նոր էր ստացել, գոնե նրա համար ամենասիրելի կնոջից, մի աշխարհիկ տիկնոցից, որին նա Աննետ էր անվանում և որ ամուսնու հետ տաղտկորեն ճամփորդում էր Շոտլանդիայում՝ լինելով զոհ որոշ կասկածների, որոնց ստիպված էր ժամանակավորապես զոհել իր երշանկությունը. և շատ գեղեցիկ բղթերի մի կապոց՝ երկու շաբաթը մեկ անգամ այդ կնոջը գրելու համար. և վերջապես մի ամբողջ բեռ փարիզյան անպետք իրերի կարելիության չափ կատարյալ մի հավաքածու, որի մեջ կային մենամարտի սկիզբը նշող մտրակից սկսած, մինչև նրա վախճանը դնող դրվագձկած սիրուն ատրճանակները, հողագործական այն բոլոր գործիքները, որոնցով անգործ երիտասարդը հերկում է կյանքը: Քանի որ հայրը ասել էր, որ մենակ և համեստ ճամփորդի, ուստի նա եկել էր իրեն վերապահված միանստարան մի կառու, բավական զոհ այն բանից, որ չէր փշացնի մի շատ գեղեցիկ ճամփորդական կառը, որ պատվիրել էր դիմավորելու համար իր սիրելի Աննետին՝ այդ աշխարհիկ տիկնոցը, որը... և այն, որին պիտի զնար միանալու հունիս ամսին, Բաղենի ջրերում: Շառլը ենթադրում էր, որ իր հորեղբոր մոտ կհանդիպի հարյուրավոր մարդկանց, ձիով և բարակներով որս կանի հորեղբոր անտառներում, մի խոսքով կապրի դրյակային կենցաղով. նա չէր կարծում, որ ինքն իր հորեղբորը գտնելու էր Սովորություն, ուր նրա մասին հարցրել էր՝ իմանալու համար Ֆրուաֆոնի ուղին: Բայց լսելով, որ նա քաղաքումն է ապրում՝ ենթադրում էր, թե նրան կզտնի մի խոշոր ապարանքի մեջ: Եվ վերջապես պատշաճ ձևով ներկայանալու համար իր հորեղբոր տանը, լինի Սովորություն թե Ֆրուաֆոնում, նա արել էր ճամփորդության հատուկ արդուզարդերից ամենապշտունք, ամենապարզ ընտիրը, ամենապաշտելին, ինչպես ասում էին այդ ժամանակ, նշելու համար մի բանի կամ մի մարդու կատարելությունը: Տուրում մի վարսավիր գանգրացրել էր նրա թուխ, գեղեցիկ վարսերը, այդտեղ

\* Գնալով բարձրացող ձայն՝ երաժշտության մեջ (իտալ.):

Նա իր սպիտակեղենները փոխել էր և կապել սև մետաքսե մի փողկապ, որը լավ պատշաճում էր նրա սպիտակ ու բարձր օձիքի հետ և գեղեցիկ կերպով շրջանակում էր նրա ժպտուն ու սպիտակ դեմքը: Ճամփորդության հատուկ մի բաձկոն, մինչև կեսը կոճկված, գրկում էր նրա իրանը և ցույց էր տալիս քիշմիրից կարված մի բաձկոնակ, որի տակը գտնվում էր մի այլ սպիտակ ժիլետ:

Նրա ժամացույցը, որ անփույթ կերպով զցված էր գրպաններից մեկի մեջ, ուկյա մի կարճ շղթայով ամրացված էր լամբակներից մեկին: Նրա մոխրագույն անդրավարտիքը երկու կողերի վրա էր կոճկվում և դրա կարվածքները գեղեցկացված էին սև մետաքսաթել ասեղնագործներով: Հաճելի ձևերով նա բանեցնում էր մի գավազան, որի փորագրված ոսկե գլուխը բոլորովին չէր աղարտում նրա մոխրագույն ձեռնոցների մաքրությունը: Վերջապես նրա գլխարկը ընտիր ճաշակով էր կարված: Փարիզեցին, ամենաբարձր շրջանակների պատկանող փարիզեցին միայն, առանց ծիծաղելի լինելու, կարող էր այսպէս հագնվել և թեթևամտության հատուկ մի ներդաշնակություն տալ այն բոլոր սնոտի բաների, որոնք ապահովում են խիզախ արտաքինը մի երիտասարդի, որ սիրուն ատրաճանակներ, լավ նշանառություն և Աննետ ուներ: Այժմ եթե ուզում եք լավ հասկանալ սոմյուրեցիների և երիտասարդ փարիզեցու փոխադարձ զարմացումը, կատարելապես ըմբռնել այն ուժեղ փայլը, որ ճամփորդի վայելչությունը գցում էր սրահի գորշ ստվերների և ընտանեկան պատկերը կազմող դեմքերի վրա, փորձեցեք պատկերացնել Կրյուշոներին: Նրանք երեքն էլ քրախոտ էին քաշում և վաղուց այլևս չեին խուսափում քթից իշնող կաթիլներից և սև, մանր քծերից, որոնք սփոված էին դեղնավուն ծալքերով ու փորփոր օձիքներ ունեցող շեկ գույնի շապիկների ժարունակությունը: Նրանց փափուկ փողկապները ոլորվում էին պարանների նման, հենց որ կապվում էին նրանց վզներին: Սպիտակեղենի հսկայական քանակությունը, որ նրանց հնարավորություն էր տալիս ամեն վեց ամիսը մեկ անգամ միայն լվացը անել մնում էր զգրոցների մեջ, և ժամանակը իր գորշ ու հին գույներն էր դրոշմում դրանց վրա: Նրանց մոտ միաբանել էին անշնորհքությունը և ծերության հատուկ տկարությունները: Նրանց դեմքերը՝ նույնքան թառամած, որքան իրենց հնամաշ զգեստները կամ իրենց ծալծլված անդրավարտիքները, թվում էին արդեն մաշված, կարծրացած, ծամածուռ: Մնացած հագուստների ընդհանուր անփութությունը, բոլորն էլ պակասավոր, թարմությունից զուրկ, ինչպես պրովինցիալի արդուզարդը, եթե մարդիկ անզգալիորեն հասնում են այն կետին, որ այլս իրար համար չեն հագնվում և խնայում մի գույգ ձեռնոցի փողը, ներդաշնակում էր Կրյուշոնների թափթփածության հետ: Նորաձեռնությունների հանդեպ խորշանքը միակ կետն էր, որի շուրջը գրասենյաններն ու կրյուշոյականները համաձայնում էին կատարելապես: Փարիզեցին հենց որ մենակնոցով դիտում էր սրահի տարօրինակ հարամասերը, տափտակամածի գերանները, այլևս փայտակերտվածքների ոճը կամ այն քծերը, որ ճանձերն էին դրոշմել այնտեղ, և որոնց թիվը բավական կլիներ՝ կետագրելու համար «Մերոպիկ Հանրապիտարանը» և «Մոնիթորը», անմիջապես լուսոյի մասնակցողները բարձրացնում էին գլուխները և զննում նրան այնպիսի հետաքրքրությամբ, որով կզննեին ընձուղտին: Պարոն դե Գրասենը և որդին, որոնց մոդայական մարդու տեսքը անծանոր չէր, այնուամենայնիվ միացան իրենց հարևանների զարմանքին, լինի դա այն պատճառով, որ ենթարկվում էին ընդհանուր մի զգացումի անբացատրելի ազդեցության կամ թե հավանություն էին տալիս դրան և հեզնալից նայվածքներ փոխանակելով իրենց հայրենակիցների հետ՝ ասում էին. «Ահա թե ինչպես են նրանք Փարիզում»: Ճիշտն ասած բոլորն էլ կարող էին Շառլին քննել հետաքրքրությամբ, առանց վախենալու, որ տանտիրոջը անհած կլինեն: Գրանդեն խորասուզված էր ձեռքում բռնած մի երկար նամակի ընթերցանության մեջ, և որը կարդալու համար իր մոտ էր դրել սեղանի վրա գտնվող միակ լույսը, առանց մտահոգվելու իր հյուրերի և նրանց հաճույքի մասին: Էժենին, որին նման կատարելությամբ մի տիպար, թե՝ իր անձով, և թե իր հագուստներով, ամբողջովին անծանոթ էր, կարծեց, որ իր հորեղբորորդին հրեշտակային ոլորտից վայր իշած մի էակ է: Նա երանավետությամբ էր շնչում այն բուրմունքը, որ հառնում էր նրա այնքան փայլուն և

շնորհայիորեն գանգրացված վարսերից: Նա փափագում էր հպվել նրա նուրբ ձեռնոցների սննդուստափայլ կաշուն: Նա նախանձում էր Շառլի շնորհայի ձեռքերին, նրա դեմքի գույնին, երիտասարդությանը և նրա դիմագծերի նրբություններին: Վերջապես, եթե այս պատկերը

կարող է խտացնել այն տպավորությունը, որ վայելչագեղ երիտասարդը գործեց մի անտեղյակ աղջկա վրա, որն անվերջ զբաղված էր միայն գուլպաներ կարկատելով և իր հոր հագուստները նորոգելով, որի կյանքն անցել էր այս կեղոստ պատերի մեջ, լուր փողոցում, մի ժամում հազիվ մի անցորդի տեսնելով, ապա նրա հորեղբորորդու տեսքը նրա սրտի մեջ զարթեցրեց մաքուր հեշտանքի հուզումներ, նման այն հուզումին, որ անզիհական մի հուշալբում մեջ Վեսթոլի<sup>3</sup> նկարած կանանց ֆանտաստիկ պատկերները պատճառում են մի երիտասարդի: Ֆինքեններն<sup>4</sup> այնքան հմտորեն են փորագրել այդ նկարները, որ չես ուզում փշել այդ ազնիվ թղթերի վրա, վախենալով, որ երկնային այդ հայտնությունները կթոշեն:

Շառլն իր զբանից հանեց մի թաշկինակ, որ ասեղնագործել էր այժմ Շոտլանդիայում ձամփորդող տիկինը: Տեսնելով այդ սիրուն ձեռագործը, որ հյուսված էր սիրով՝ սիրո համար կորած երկար ժամերի ընթացքում, Էժենին նայեց, թե իրո՞ք իր հորեղբորորդին կգործածի այն: Շառլ շարժուձեները, միակնոցը բռնելու ձևը, շինծու անպատկառությունը, նրա արիամարիանքը այն տուփի հանդեպ, որ այնքան հաճույք էր պատճառել հարուստ ժառանգուհուն, և որ իր զարմիկն անկասկած գտնում էր անարժեք կամ ծիծաղելի, վերջապես այն ամենը, ինչ վիրավորական էր Կրյուշոների ու Գրասենների համար, նրան այնքան դուր էր գալիս, որ քնելուց առաջ օրիորդ Գրանդեն երկար երազելու էր զարմիկների այդ փյունիկի մասին:

Թվանիշները դուրս էին բերվում խիստ դանդաղ և շուտով լուսոն դադարեց: Բարձրահասակ Նանոնը ներս եկավ և բարձրաձայն ասաց.

— Տիկին, ինձ անհրաժեշտ են սավաններ՝ այս պարոնի անկողինը պատրաստելու համար:

Տիկին Գրանդեն հետևեց Նանոնին: Այդ պահին տիկին Գրասենը ցած ձայնով ասաց.

— Պահենք մեր դրամները և վերջ տանք լուսոյին:

Ամեն մեկը վերցրեց իր երկու սուն մի անկյունը կոտրած

ափսեից, ուր լեցված էին դրանք, հետո բոլորը միասին կիսաշրջանաձև դարձան դեպի վառարանը:

— Ուրեմն ավարտեցի՞ք, — հարցրեց պարոն Գրանդեն, առանց ընդհատելու նամակը:

— Այո՛, այո՛, — պատասխանեց տիկին Գրասենը՝ Շառլ կողքին տեղ գրավելով:

Էժենին մղված այն մտածումներից մեկով, որոնք ծնում են մանկամարդ աղջկների սրտում, երբ զգացումը մուտք է գործում այնտեղ առաջին անգամ, բռնեց սրահը և գնաց մորն ու Նանոնին օգնելու: Եթե այդ պահին նրան հարցապնդեր որևէ ձարպիկ մի խոստովանահայր, նա անպայման կխոստովաներ, որ ո՛չ մոր և ոչ էլ Նանոնի մասին չէր մտածում, այլ մի կիզիչ ցանկություն մղում էր նրան ստուգելու իր հորեղբորորդու սենյակը, այնտեղ գրալվելու նրանով, ինչ-որ մի բան տեղափորելու, հսկելու, որ ոչինչ չմոռացվեր. նախատեսնելու ամեն ինչ, վերջապես նրա սենյակը դարձնելու որքան կարելի է մաքուր և շքեղ: Էժենին կարծում էր արդեն, որ միայն ինքը կարող է ըմբռնել իր հորեղբորորդու պահանջներն ու ձաշակը: Եվ արդարև նա հասավ ձիշտ ժամանակին՝ ապացուցելու համար իր մորն ու Նանոնին, որոնք վերադառնում էին՝ մտածելով, թե ամեն ինչ կարգին է արդեն, թե ամեն ինչ հարկավոր էր դեռ նոր անել: Նա հասկացրեց բարձրահասակ

Նանոնին՝ անկողնի սավանները տաքացնել կրակի դիմաց, նա անձամբ մաշված սեղանի վրա մի ծածկոց զցեց և հանձնարարեց Նանոնին, որ այն ամեն առավոտ փոխի: Նա համոզեց իր մորը, որ անհրաժեշտ է բուխարին լավ վառել և դժվարությամբ համոզեց Նանոնին, որ առանց հորը քան ասելու, փայտի մի խոշոր կրստ բարձրացնի միջանցքը: Նա շտապեց բերել սրահի խոռոչներից մեկի միջից հանգույցալ պարոն դը լա Բերթելիերի ժառանգությունից մնացած մի հին լաքած ափսե և մի բյուրեղն վեցանկյունի բաժակ, ոսկեթափ մի փոքրիկ գրալ, հնադարյան մի սրվակ, որի վրա «Ամուսներ» էին փորագրված, և հաղթականորեն այդ բոլորը տեղափորեց բուխարու մի անկյունում: Մի քառորդ ժամում նա շատ ավելի մտքեր հղացավ, քան աչքը բացած օրից:

— Մա՛յր,— ասաց նա,— իմ հորեղորորդին երբեք չի կարող տանել ճարպե մոմի հոտը. մեղրամու չդնե՞նք...

Եվ նա շտապեց, թեթև, որպես մի թռչուն, իր դրամապանակից վերցնել հարյուր սուանոց մի դրամ, որ ստացել էր մի ամբողջ ամսվա ծախսերի համար:

— Ա՛ռ, Նանոն,— ասաց նա,— շտապիր:

— Բայց ի՞նչ կասի քո հայրը:

Այս ահավոր առարկությունն արեց տիկին Գրանդեն, երբ նկատեց աղջկա ձեռքում Սևրի մի հին շաքարաման, որ Գրանդեն բերել էր Ֆրուաֆոնի դրյակից:

— Բայց որտեղի՞ց շաքար կվերցնես: Գժվե՞լ ես:

— Մայր, Նանոնը կգնի շաքար, ինչպես և մեղրամումեր:

— Բայց քո հա՞յրը:

— Հարմար կլինե՞ր, որ իր եղբորորդին չկարողանար մի բաժակ քաղցր ջուր խմել, մանավանդ, որ հայրս ուշք էլ չի դարձնի դրան:

— Հայրդ ամեն ինչ կնկատի,— ասաց տիկին Գրանդեն զլուխն օրորելով:

Նանոնը տատանվում էր, նա լավ էր ճանաչում իր տիրոջը:

— Շտապի՞ր, Նանոն, չէ՞ որ իմ տոնն է այսօր:

Նանոնը քահ-քահ ծիծաղեց՝ առաջին անգամ տիրուհուց որևէ կատակ լսելով, և հնազանդվեց: Այն պահին, երբ Էժենին և մայրը ձգնում էին Գրանդեի կողմից իր եղբորորդուն հատկացված սենյակը գեղեցկացնել, Շառլ դարձել էր ուշադրության առարկան տիկին Գրասենի, որը կոտրատվում էր նրա հետ:

— Խիստ քաջ եք դուք, պարոն,— ասում էր նա,— որ կարողացել եք թողնել մայրաքաղաքի ձմեռային հաճույքները և զալ բնակվել Սոմյուրում: Բայց եթե մենք ձեզ շատ չենք վախեցնում, ապա դուք կտեսնեք, որ այսուեղ էլ դեռ կարելի է զվարձանալ:

Եվ նետեց նրա վրա իրոք պրովինցիալ մի նայվածք, որի համար կանայք, ըստ սովորության, այնքան խոհեմություն և այնքան վերապահություն են դնում իրենց աշքերի խորքում,

օժտելով դրանք այն սիրազեղ ցանկասիրությամբ, որը հատուկ է եկեղեցականների հայացքին, որոնց համար ամեն մի հաճույք թվում է գողոն կամ մեղանչում: Շառլ իրեն այդ սրահում զգում էր

այնքան օտար, այնքան հեռու այն ընդարձակ դյոյակից և փառահեղ կյանքից, որ ենթադրում էր, թէ վարում է հորեղբայրը, որ ուշադրությամբ դիտելով տիկին Գրասենին, վերջապես նկատեց փարիզուիիների դեմքերի մասամբ ջնշված մի պատկեր: Նա շնորհալի ձևով պատասխանեց իրեն ուղղված մի տեսակ հրավերին և բնականորեն նրանց մեջ սկսվեց մի խոսակցություն, որի ընթացքում տիկին Գրասենը աստիճանաբար իջեցրեց իր ձայնը՝ ներդաշնակ դարձնելով իրենց մտերիմ խոսակցության իմաստին: Նա և Շառլ փոխադարձ վստահության մինույն պահանջներն ունեին: Հետևաբար մի քանի րոպե տեսած պչրուն գրույցներից և լուրջ կատակներից հետո՝ ձարպիկ պրովինցիալուհուն հաջողվեց ասել Շառլին, առանց լսվելու ուրիշներից, որոնք խոսում էին զինու վաճառքի մասին, որով այդ ժամանակ զբաղվում էին Սոմյուրի բոլոր բնակիչները.

— Պարո՞ն, եթե կամենայիք մեզ այցելելու պատիվն անել, անպայման նույնքան հաճույք կպատաճռեիք ամուսնուս, որքան և ինձ: Մեր սալոնը Սոմյուրում միակն է, ուր դուք կիհանդիպեք խոշոր վաճառականների ու ազնվականների. մենք պատկանում ենք այդ երկու դասակարգերին, որոնք ուզում են միայն մեզ մոտ իրար հանդիպել, որովհետև մեզ մոտ են զվարճանում: Իմ ամուսինը, հպարտությամբ եմ ես այդ ասում, հավասարապես է հարգված երկուսի կողմից էլ: Զեր այստեղ անցկացրած ժամանակամիջոցում՝ մենք կշանանք ձեր տաղտուկը մեղմացնել: Եթե միայն մնալու լինեիք պարոն Գրանդեի մոտ, ի՞նչ կլիներ ձեր վիճակը, աստված իմ: Զեր հորեղբայրը մի ժամանակ է և միայն իր խաղողի տունկերի դաշտարադումով է զբաղված: Զեր հորեղբոր կինը այնպես բարեպաշտ է, որ չի կարող երկու միտք իրար մոտ բերել իսկ ձեր հորեղբոր աղջիկը՝ մի փոքր անխելք է, դաստիարակությունից գորկ, սովորական մի աղջիկ, առանց օժիտի, և որ կյանքն անց է կացնում անպետք շորեր կարկատելով:

«Շատ լավիկն է այս կինը», մտածեց Շառլ Գրանդեն՝ պատասխանելով տիկին դե Գրասենի դիմագծի ծերծերումներին:

— Ինձ թվում է, այ կին, որ պարոնին դու ուզում ես զրավել,— ծիծաղելով ասաց բարձրահասակ ու զիրուկ բանկիրը:

Այս դիտողության պատճառով նոտարը և նախազարդ բավական շարակամ բաներ փսխացին, բայց աբբան նրանց նայեց նրբամտությամբ և վերցրեց մի պտղունց քթախոտ, որից հրամցնելով նաև ներկաներին, նրանց միտքը եզրակացրեց՝ ասելով:

— Տիկնոջից բացի ո՞վ կարող է Սոմյուրի հարգանքները մատուցել պարոնին:

— Ինչպես՞ս թե, ի՞նչ եք ուզում ասել, հարգելի աբբա, — հարցրեց պարոն դե Գրասենը:

— Ես ասում եմ, պարոն, այն, ինչ ամենանպաստավորն է ձեզ, ձեր տիկնոջ, Սոմյուրի քաղաքի և պարոնի համար, — ավելացրեց խորամանկ ծերունին՝ Շառլ կողմը դառնալով:

Առանց ցույց տալու, որ հետաքրքրվում էր նրանց խոսակցությամբ, աբբա Կրյուշոն գուշակել էր Շառլի և տիկին դե Գրասենի միջև եղած խոսակցությունը:

— Պարոն, — ասաց վերջապես Աղոլֆը Շառլին և աշխատելով անքրնազբոսիկ երևալ, — չգիտեմ, եթե դուք կարող եք ինձ վերհիշել, ես հաճույք եմ ունեցել ձեզ հետ միասին լինելու պարոն դը Նյուսինզենի տված պարահանդեսում, և...

— Կատարելապես, պարոն, կատարելապես, — պատասխանեց Շառլ՝ զարմացած բոլորի հետաքրքրության առարկան լինելուց:

— Պարոնը ձեր որդի՞ն է,— հարցրեց նա տիկին դե Գրասենին:

Աբբան չարամտությամբ նայեց մորը:

— Այո՛, պարոն,— պատասխանեց տիկին դե Գրասենը:

— Ուրեմն դուք շատ երիտասարդ պետք է լինեիք Փարիզում,— շարունակեց Շառլ՝ դիմելով  
Աղոլֆին:

— Ի՞նչ արած, պարոն,— պատասխանեց աբբան,— մենք նրանց Բարեկոն ենք ուղարկում, երբ  
նրանք հազիվ դադարում են կաթ ծծելուց:

Տիկին դե Գրասենը հարցաքննեց աբբային՝ զարմանալի խորությամբ մի հայացքով:

— Հարկավոր է պրովինցիա գալ,— ասաց աբբան իր խոսքը շարունակելով,— գտնելու համար  
երեսուն ու մի քանի տարեկան կանայք՝ տիկնոջ չափ երիտասարդ մնացած, երբ արդեն  
իրավագիտության թեկնածուի աստիճանով զավակներ ունեն: Թվում է, որ ես գտնվում եմ դեռևս  
այն ժամանակում, տիկին,— ավելացրեց աբբան իր եզ հակառակորդի կողմը դառնալով,— երբ  
երիտասարդները և կանայք պարահանդեսում բարձրանում էին աթոռների վրա՝ ձեր պարելը  
դիտելու համար: Ինձ համար ձեր հաջողությունները կարծես երեկ էին:

«Օ՛, ձե՛ք սրիկա,— մտածեց տիկին դե Գրասենը,— չինի՞ թե գուշակո՞ւմ է իմ մտքերը»:

«Երևում է, որ շատ հաջողություններ եմ ունենալու Սոմյուրում», ասում էր մտովի Շառլ իր  
բաձկոնի կոճակները քանդելով՝ ձեռքերը ժիլետի մեջ դնելով և նայվածքը դեպի տարածությունը  
նետելով՝ նմանվելու համար Շենտրիի<sup>5</sup> կողմից լորդ Բայրոնին տրված դիրքին:

Հայր Գրանդեի անուշաբրությունը, ավելի ճիշտ խիստ զբաղվածությունը, որի մեջ խորասուզել էր  
նրան նամակի ընթերցումը, չվրիպեց ոչ նոտարից և ել նախազահից, որոնք աշխատում էին մոմից  
խիստ լրացավորված ծերունու դիմագծերի աննկատելի շարժումներից կռահել նամակի  
պարունակությունը: Խաղողագործը դժվարությամբ էր կարողանում պահել իր դեմքի սովորական  
հանդարտությունը: Ճիրավի ամեն ոք կարող էր ըմբռնել նրա կեղծ հանդարտությունը՝ կարդարվ  
հետևյալ ճակատագրական նամակը.

«Եղբա՛յր իմ, շուտով քաններեք տարի կլինի, որ միմյանց չենք տեսել: Իմ ամուսնությունը մեր  
վերջին տեսակցության պատճառն էր, որից հետո մենք բաժանվեցինք իրարից, երկուս

եւ ուրախ: Արդարն ես չեմ կարող նախատեսել, որ դու կլինեիր միակ նեցուկը ընտանիքի, որի  
բարգավաճումը դու այն ժամանակ դրվագում էիր: Երբ դու ստանաս այս նամակը, ես այլս  
գոյություն չեմ ունենա: Այն կացության մեջ, ուր գտնվում էի ես, չուզեցի տեսնել սնանկության  
ամորը: Ես ինձ պահեցի մինչև վերջին վայրկյանը անդունդի եզրին՝ միշտ հուսալով փրկել  
կացությունը: Բայց արդեն անհրաժեշտ է ընկնել այդ անդունդի մեջ: Իմ ներկայացուցիչը եղող  
բորսային միջնորդի և իմ նոտար Ռոգենի միացյալ սնանկությունը տարավ իմ վերջին նյութական  
միջոցները և ոչինչ չթողեց: Ես դժբախտ եմ, գիտենալով, որ չորս միլիոն պարտը ունեմ և իմ ներկա  
վիճակում միայն դրա քանինին տոկոսը վճարելու պատրաստի փող ունեմ: Պահեստում գտնվող  
իմ գինիները ենթակա են գների կործանարար անկման, որը հետևանք է ձեր քերքերի առատության  
և որակին: Երեք օր հետո Փարիզը կասի. «Պարոն Գրանդեն խարեբայի մեկն էր»: Ես՝ մաքուր  
մարդս, պառկելու եմ վատահամբավ պատանքում: Ես խլում եմ իմ զավակի անտւնը, որն  
արատավորում եմ, և նրա մոր հարստությունը: Իմ դժբախտ զավակը, որին պաշտում եմ, ոչինչ

Հգիտե: Մենք քնքշագին հրաժեշտ տվյալներ իրար: Նա բարեբախտաբար չգիտեր այս բոլորը, և իմ կյանքի վերջին կոհակները թափվում են այդ հրաժեշտի մեջ: Արդյոք նա ինձ անիծելու չէ՝ մի օր: Եղբա՛յր իմ, եղբա՛յր իմ, մեր զավակների անեծքը սոսկալի է: Նրանք կարող են բողոքարկել մերը, բայց իրենց անեծքը անդարձ է: Գրանդէ՛, դու մեզնից անդրանիկն ես, դու պարտավոր ես պաշտպանել ինձ. այնպես արա, որ Շառլը ոչ մի դառն խոսք չնետի իմ գերեզմանին: Եղբա՛յր իմ, եթե ես քեզ գրելու լինեի իմ արյունով և իմ արցունքներով, ապա այնտեղ այնքան կոկիծ չեր լինի, որքան ներդնում եմ այս նամակի մեջ, որովհետև լաց պիտի լինեմ, պիտի արյունեմ, պիտի մահանամ ես, պիտի դադարեմ տառապելուց: Բայց այժմ տառապում եմ և չոր աչքերով դիտում մահր: Դու Շառլի հայրն ես այսուհետև. մոր կողմից՝ նա ազգականներ չունի, և դու գիտես, թե ինչու: Ինչո՞ւ շնչարականդվեցի հասարակական նախապաշարումներին, ինչո՞ւ տերի տվի սիրո, ինչո՞ւ մի մեծ իշխանի ապօրինի աղջկա հետ ամուսնացա: Շառլը այլևս ընտանիք չունի: Ո՛հ, իմ դժբախտ զավակ, իմ զավակ... Լսի՛ր, Գրանդէ՛, քեզնից ոչինչ չեմ աղերսում ինձ համար: Հավանաբար քո հարստությունը այնքան է մեծ չէ՝ ազատել կարողանալու համար երեք միլիոնի մի անշարժագրավ: Ես խնդրում եմ զավակիս համար: Լա՛վ իմացիր, եղբայր, իմ աղերսող ձեռքերը կցված են քո մասին մտածելիս: Գրանդէ՛, մեռնեխս, քեզ եմ վստահում Շառլին: Ես առանց ցավի եմ դիտում իմ ատրճանակները՝ հավատացած, որ դու նրա հայրն ես լինելու: Նա՝ Շառլը ինձ շատ էր սիրում. ես այնքան լավ էի նրա համար, երբեք նրան չէի ընդդիմանում. նա ինձ չի անիծի: Դու ինքդ կտեսնես. նա քաղցրաբար է, իր մորն է քաշել. քեզ երբեք վիշտ չի պատճառի: Խեղճ երեխս, վարժված ճոխ կյանքի վայելքներին՝ նա անձանոր է մնացել այն բոլոր զրկանքներին, որին մեզ երկուսիս էլ դատապարտել է մեր սկզբնական թշվառությունը... Եվ ահա նա էլ աղքատացած և մենակ: Այո, բոլոր բարեկամները կիեռանան նրանից, և ես եմ նրա նվաստացումների միակ պատճառը: Ա՛հ, ես կուզենայի ունենալ այնպիսի ուժեղ բազուկ, որ կարողանայի մի հարվածով նրան ուղարկել երկինք՝ իր մոր մոտ: Խենթությո՞ւն. նորից եմ վերադառնում իմ դժբախտությանը, Շառլի դժբախտությանը: Ես նրան քեզ մոտ եմ ուղարկում, որպեսզի դու նրան պատշաճ ձեռվ իմաց տաս և՛ իմ մահը, և՛ իր ապագա ճակատագիրը: Հայր եղիր նրա համար, բայց լավ հայր: Մի անգամից նրան մի զրկիր իր անզբար կյանքից, կարող ես սպանել նրան: Ես նրանից ծնկաչոր խնդրում եմ հրաժարվել այն պահանջից, որ նա կարող է հարուցել իմ դեմ՝ իբրև իր մոր ժառանգորդ: Բայց դա արդեն ավելորդ խնդրանք է: Նա արժանապատվություն ունի և անպայման պիտի զգա, որ ինքը չի կարող միանալ իմ պարտատերերին: Հարմար ժամանակ համոզիր նրան, որ հրաժարվի իր ժառանգական իրավունքից: Հայտնիր նրան կյանքի այն խիստ պայմանները, որ ես թողնում եմ նրան. և եթե նա իմ հանդեպ իր խանդաղատանքը պահի, ասա իրեն իմ անունից, որ ամեն ինչ կորած չէ իր համար:

Այո, աշխատանքը, որ մեզ երկուսիս փրկել է, կարող է նրան տալ այն հարստությունը, որը ես նրանից խլում եմ: Եվ եթե նա ուզենա իր հոր ձայնը լսել, որ պիտի ուզենար մի անզամ գերեզմանից դուրս գալ նրան տեսնելու համար, թո՛ղ մեկնի, թո՛ղ գնա Հնդկաստան: Եղբա՛յր իմ, Շառլը շիտակ և արիասիրտ երիտասարդ է. դու նրան կտաս բավական ապրանք, ավելի շուտ նա կմեռնի, քան թեզ չի վճարի այն առաջին դրամագուխը, որ դու նրան փոխ կտաս. Գրանդէ՛, դու նրան փոխ կտաս, հակառակ դեպքում խղճի խայթ կունենաս: Ո՛հ, եթե իմ զավակը քեզ մոտ օգնություն և գուրգուրանք զգտնի, ապա ես հավիտյան քեզ համար վրեժ պիտի աղերսեմ աստծուց քո քարարտության համար: Եթե ես կարողանայի փրկել որևէ արժեթղթեր, կարող էի նրա համար մի գումար ապահովել իր մոր թողած հարստությունից, բայց ամսավերջի իմ վճարումները կլանեցին իմ բոլոր հասույթները: Ես չէի ուզենա մեռնել՝ կասկածելով իմ զավակի ապագայի մասին: Ես կուզենայի սուրբ խոստումներ տեսնել քո ջերմ ափերի մեջ, որոնք իմ սիրտը պիտի տաքացնեին: Բայց ժամանակ չունեմ: Այն պահին, երբ Շառլը ճամփորդում է, ես ստիպված եմ կազմել իմ հաշվեկիրը: Ուզում եմ ապացուել, որ շիտակությունն է իշխել իմ բոլոր գործերում և իմ

դժբախտությունների մեջ չի գտնվում ո՞չ թերացում և ոչ էլ խարդախություն: Մի՞թե Շառի համար չէ, որ ես ապացուցելու եմ այդ բանը: Մնաս բարյա՝ վ, եղբայր: Թող աստուծոն բոլոր օրինությունը քեզ վրա լինի այն վեհանձն խնամակալության համար, որին ես հանձնում եմ Շառին, և որը դու ընդունում ես, ես չեմ կասկածում դրան: Միշտ քեզ համար աղոթող մի ձայն է լինելու այն աշխարհում, ուր մենք բոլորս էլ գնալու ենք մի օր, և որի շեմքին եմ արդեն:

### Վիկոնք-Անժ-Գիյոմ Գրանդե»:

— Զրուցո՞ւմ եք ուրեմն,— ասաց հայր Գրանդեն՝ նամակը ճշտությամբ իր նախկին ծալքերով ծալելով և դնելով ժիշետի գրպանը:

Նա նայեց եղբորորդու դեմքին՝ վախի և խոնարհության

արտահայտությամբ, որի տակ թաքցրեց իր հուզմունքն ու հաշիվները:

— Տաք զավ:

— Շատ լավ, սիրելի հորեղբայր:

— Բայց ո՞ւր են մեր կանայք,— ասաց հորեղբայրը՝ արդեն մոռանալով, որ եղբորորդին իր տանն է քննելու:

Այդ պահին Էժենին և տիկին Գրանդեն սրահ վերադարձան:

— Ամեն ինչ կարգի՞ն է,— հարցրեց ծերունին՝ իր հանդարտությունը վերագտնելով:

— Այո, հայր իմ:

— Լավ, եթե հոգնած եք, եղբորորդի, Նանոնը ձեզ կառաջնորդի ձեր սենյակը: Այդ իհարկե պհնասերի սենյակ չի լինի, բայց դուք ներողասիտ կլինեք իւեղ խաղողագործների հանդեա, որոնք երբեք փող չեն ունենա: Հարկերը մեզանից խլում են ամեն ինչ:

— Մենք չենք ուզում անփափկանկատ լինել, Գրանդե,— ասաց բանկիրը:— Դուք թերևս խոսելիքներ ունեք ձեր եղբորորդու հետ: Բարի զիշեր ենք մաղթում ձեզ: Ցտեսություն:

Այս խոսքերից հետո հյուրերը ոտքի կանգնեցին և ամեն մեկը իր հարգանքը հայտնեց՝ ըստ իր բնավորության: Ծերունի նոտարը գնաց վերցրեց իր լապտերը դոան միջից, վառեց և առաջարկեց դե Գրասեներին ուղեկցել: Տիկին դե Գրասենը չէր նախատեսել այդ դիպվածը, որ երեկոյթը ընդհատել էր տալու, դրա համար էլ նրա սպասավորը չէր եկել դեռ:

— Կուզենայի՞ք ինձ պատվել՝ ընդունելով իմ թևը, տիկին,— ասաց աբբա Կրյուշոն տիկին դե Գրասենին:

— Շնորհակալ եմ, հարգելի աբբա: Զավակս ինձ թևանցուկ կանի,— պատասխանեց նա չոր-չոր:

— Կանայք ինձ հետ իրենց չեն անվանարկում,— պատասխանեց աբբան:

— Ուրեմն թևի պարոն Կրյուշոյին տուր,— ասաց նրան ամուսինը:

Աբբան գեղանի կնոջն առաջնորդեց բավականին արագությամբ, որպեսզի նրանք մի քանի քայլ քարավանից առաջ գտնվեն:

- Այդ երիտասարդը շատ լավն է, տիկին,— ասաց նրա թևը սեղմելով:— Մնաք բարով, զամբյուղներ, այգեկութը վերջացավ: Դետք է մնաք բարով ասել օրիորդ Գրանդեխն: Էժենին պատկանելու է փարիզեցուն: Եթե այս հորեղբորորդին սիրահարված չէ արդեն որևէ փարիզուհու, ապա ձեր որդին՝ Ադրիֆը նրա մեջ գտնելու է իր ամենից ավելի մեծ մրցակիցր...
- Թողե՛ք, ինդրեմ, հարգելի աբբա: Այդ երիտասարդը շուտով ըմբռնելու է, որ Էժենին մի տգետ և արդեն իր թարմությունը կորցրած աղջիկ է: Նրան մի՞քեւ չուսումնասիրեցիր: Այս երեկո նա սերկածիլի նման դեղին էր:
- Թերես այդ բանը դուք արդեն նկատել եք տվել նրա հորեղբորորդուն:
- Եվ չեմ ել քաշվել...
- Միշտ նատեցե՛ք Էժենիի կողքին, տիկին, և դուք մեծ բան չեք ունենա ասելու այդ երիտասարդին իր հորեղբոր աղջկա մասին: Նա ինքը կանի անհրաժեշտ համեմատությունը, որ...
- Նա ինձ խոսք տվեց մեզ մոտ զալ ճաշելու վաղը չե, մյուս օրը...
- Օ՛, եթե ցանկանաք, տիկին...— ասաց աբբան:
- Իսկ ի՞նչ եք ուզում, որ ցանկանամ, հարգելի աբբա: Չինք՞ ուզում եք ինձ վատ խրատներ տալ: Ես երեսունինը տարեկան չեմ դարձել և, փառք աստծո, անբիծ անունով, որպեսզի այն արատավորեմ՝ եթե նույնիսկ մեծ Սոգուի կայսրությունն ինձ տալու լինեն: Մենք՝ երկուսս կ գտնվում ենք այն տարիքում, եթե զիտենք, թե խոսեն ինչ է նշանակում: Կղերականի համար դուք արդարն անպատշաճ զաղափարներ ունեք: Ֆի՛, այդ արդեն արժանի է ֆոբլազին:
- Ուրեմն կարդացե՞լ եք ֆոբլազը<sup>6</sup>:
- Ո՛չ, հարգելի աբբա, ես ուզեցի ասել «Վտանգավոր կապերը»<sup>7</sup>:
- Օ՛, այս դիրքը անհունապես ավելի բարոյալից է,— ծիծաղելով ասաց աբբան:— Բայց դուք ինձ նույնքան վատաբարո եք համարում, որպիսին է ժամանակակից երիտասարդը: Ես պարզապես ուզում էի ձեզ...
- Կհամարձակվե՞ք ասել, թե չիք մտածում վատ խորհուրդներ տալ ինձ: Պարզ չե՞՞, միթե: Եթե այդ երիտասարդը, որ շատ լավն է, այդ մասին ես համաձայն եմ ձեզ հետ, ինձ սիրահարելիս լիներ, ապա չեք մտածի իր հորեղբոր աղջկա մասին: Փարիզում ես զիտեմ, որ որոշ խելոք մայրեր այդ ձևով են իրենց զոհաբերում՝ իրենց զավակների երջանկությունն ու հարստությունն ապահովելու համար: Սակայն մենք պրովինցիայում ենք, պարոն աբբա:
- Այո, տիկին:
- Եվ,— շարունակեց տիկինը,— ես, ոչ ել Ադրիֆը, չեխնք փափազի այդ գնով և ունենալ նույնիսկ հարյուրավոր միլիոններ:
- Տիկին, ես բոլորովին շխոսեցի հարյուրավոր միլիոններից: Փորձությունը թերես մեր երկուսիս ել ուժերից վեր է: Միայն ես կարծում եմ, որ մի պատվավոր կին կարող է ունենալ շատ բարի դիտավորությամբ փոքր սիրաբանություններ, առանց հետևանքի, որոնք հասարակության մեջ ունեցած նրա պարտականություններից են, և որ...
- Հիրավի:

— Պարտավոր չե՞նք արդյոք, տիկի՞ն, հաճելի լինել միմյանց... Թույլ տվեք ինձ խնչել: Վստահացնում եմ ձեզ, տիկին,— վերսկսեց նա,— որ նա ձեզ իր մենակնոցով ավելի փաղաքշանքով էր դիտում, քան երբ ինձ էր նայում. բայց ես նրան ներում եմ, որ գեղեցկությունը գերադասում էր ծերությունից:

— Պարզ է,— ասում էր նախազահը իր թավ ձայնով,— որ փարիզաբնակ պարոն Գրանդէն ուղարկել է իր որդուն Սովոր՝ բացառապես ամուսնացնելու դիտավորությամբ...

— Բայց այդ դեպքում եղբորորդին չէր կարող ընկնել ոռմբի պես,— պատասխանեց նոտարը:

— Այդ ոչինչ չի նշանակում,— նկատեց պարոն դե Գրասենը,— ծերուկը ծածկամիտ է:

— Դե Գրասեն, բարեկամս, ես այդ երիտասարդին ճաշի եմ հրավիրել: Անհրաժեշտ է, որ դու գնաս հրավիրելու նաև պարոն ու տիկին Լարսոնիերներին, դյու Օսուսներին, հասկանալի է, նաև գեղանի օրիորդ դյու Օսուսյին, միայն թե այդ օրը կարողանա լավ հազնվել. նրա մայրը խանդից մղված, նրան այնքան վատ է հազցնում:— Հույս ունեմ, պարոններ, դուք էլ մեզ կպատվեք ձեր ներկայությամբ,— ավելացրեց նա՝ կանգնեցնելով թափորը՝ երկու Կրյուշոների կողմը դառնալու համար:

— Միա հասաք ձեր տունը, տիկին,— ասաց նոտարը:

Երեք Գրասեններին հրաժեշտ տալուց հետո, երեք Կրյուշոները վերադարձան իրենց տները, պրովինցիայի մարդկանց հատուկ վերլուծման հանձարով ամեն կողմից ուսումնասիրելու համար այդ օրվա մեծ եղելությունը, որ փոխում էր գրասենյանների և կրյուշոների փոխադարձ դիրքերը: Սքանչելի այն ողջամտությունը, որ դեկավարում էր այս մեծ շահասերների բոլոր գործերը, երկուսին էլ զգացրեց ժամանակավոր մի զինակցության անհրաժեշտությունը՝ ընդհանուր թշնամու հանդեպ: Պարտավոր չէի՞ն արդյոք փոխադարձաբար արգելել Էմենիին՝ որ սիրի իր հորեղբորորդուն, և Շառիխ՝ մտածելու իր հորեղբոր աղջկա մասին: Փարիզեցին կարո՞ղ էր դիմադրել նենզավոր ակնարկություններին, քաղցրմեղցր բամբասանքներին, գովասանքով լի շարախտություններին, միամիտ ուրացումներին, որոնք մշտապես պտտվելու էին նրա շուրջը՝ նրան խարելու համար:

Երբ չորս ազգականները առանձին մնացին սրահում, պարոն Գրանդէն ասաց իր եղբորորդուն.

— Պետք է պառկել: Այժմ շատ ուշ է խոսելու համար այն գործերի մասին, որոնք ձեզ այստեղ բերին: Վաղը հարմար ժամանակ կունենանք: Մենք նախաձաշում ենք ժամը ուրիշն: Կեսօրին ուսում ենք պտուղ և մի կտոր հաց, խմում ենք մի գավար սպիտակ գինի: Հետո ճաշում ենք ժամը հինգին, փարիզեցիների նման: Այս է մեր սովորությունը: Եթե ուզում եք ծանոթանալ քաղաքին կամ շրջակայքին, դուք ազատ եք օդի նման: Ներողամիտ կլինեք, եթե իմ գործերը ինձ միշտ թույլ չտան ձեզ ընկերանալու: Դուք հավանորեն այստեղ բոլորից կլսեք, որ ես հարուստ եմ. «պարոն Գրանդէն այսպես, պարոն Գրանդէն այնպես»: Թող խոսեն. նրանց շատախտությունը երբեք չի վնասում իմ վարկին: Իրականում ես փող չունեմ և աշխատում եմ իմ այս տարիքում մի երիտասարդ ենթավարպետի նման, որ միայն երկու առողջ բազուկ և մի վատ ունդա ունի: Դուք ինքներդ երևի շուտով կհասկանաք, թե ի՞նչ արժե մի էլյուս, երբ այն սեփական քրտինքով է շահվում: Շտապեցեք, Նանոն, ձրագները:

— Հույս ունեմ, եղբորորդի, որ դուք կգտնեք ձեզ անհրաժեշտ բոլոր բաները,— ասաց տիկին Գրանդէն,— բայց եթե որևէ բանի պակաս զգալու լինեք, կարող եք կանչել Նանոնին:

— Սիրելի հորեղորկին, այդ դժվար կլինի: Կարծում եմ, որ հետս բերել եմ ինձ անհրաժեշտ ամեն ինչ: Թույլ տվեք ձեզ, ինչպես և իմ երիտասարդ զարմուհուն բարի զիշեր մաղթել:

Շառլ Նանոնի ձեռքից վերցրեց մի վառած մեղրամում, Անժուի մի դեղնավուն մում, խանութում հնացած և այնքան նման ճարպէ մոմի, որ պարու Գրանդէն անկարող էր կասկածել նրա գոյությունը բնակարանում և չնկատեց նույնիսկ այդ շքեղությունը:

— Ես ձեզ ցույց կտամ ճամփան, — ասաց ծերուկը:

Փոխանակ դուրս գալու սրահի դռնից, որ բացվում է կամարի ներքեւ, Գրանդէն քաղաքավարություն ունեցավ անցնելու միջանցքով, որը սրահը բաժանում էր խոհանոցից: Մի միափեղկ դուռ, որի մեջտեղը մի ձվածև ապակի էր ամրացված, ծածկում էր միջանցքը սանդուղքի կողմից, մասամբ արգելելու համար ցրտի մուտքը: Բայց և այնպես ձմեռը քամին միշտ էլ այդ կողմից էր փշում ուժգնորեն և հակառակ այն բանի, որ սրահի դրան ձեղքերը փակված էին բամբակով, հազիվ էր հաջողվում պատշաճ աստիճանի ջերմություն պահպանել այնտեղ: Նանոնը գնաց փակելու զիշավոր մուտքի դուռը, կողպեց սրահը և գոմից արձակեց մի գայլաշուն, որի ձայնը խոպոտ էր, կարծես կոկորդի բորբոքումովքրնված լիներ: Այս կենդանին, որ հայտնի էր իր կատաղությամբ, միայն Նանոնին էր ճանաչում: Այդ երկու դաշտարնակները հասկանում էին իրար: Երբ Շառլ Նկատեց ծխով ծածկված և դեղնավուն պատերը, որտեղ որդինակեր ճարով սանդուղքը ցնցվում էր նրա հորեղբոր ծանր քայլերից, նրա սրափումը *rinforzando\** եղավ: Նա կարծում էր, թե գտնվում է հավանցի թառի վրա: Նրա հորեղբոր կինը և աղջիկը, որոնց կողմը նա դարձավ դիտելու համար նրանց դիմագծերը, այնքան լավ էին վարժված այդ սանդուղքներին, որ չգուշակելով նրա զարմանքի պատճառը, այդ շարժումն ընդունեցին որպես բարեկամական արտահայտություն և պատասխանեցին հաճոյալից մի ժպիտով, որ նրան հուսահատություն պատճառեց:

«Ի՞նչ գրողի համար է հայրս ինձ այստեղ ուղարկել», — մտածեց նա:

Երբ հասավ սանդուղքի առաջին հարբակին, նկատեց երեք դուռ, ներկված էտրուսկյան կարմիր գույնով և առանց շրջանակի, փոշոտ պատերի մեջ կորած դրներ՝ պաշտպանված հեղյուսված և տեսանելի երկարի շերտերով, որոնք վերջանում էին բոցի լեզուների պես, ինչպես կողպերի երկու վերջավորությունները: Այս դրուերից մեկը, որ գտնվում էր սանդուղքի վերը, և որը տանում էր դեպի խոհանոցի վերև գտնվող սենյակը, ըստ երևոյթին փակված էր պատով: Եվ հիրավի այնտեղ կարելի էր մուտք գործել միայն պարու Գրանդէի սենյակից: դա նրա առանձնասենյակն էր: Միակ լուսամուտը, որից նա լույս էր ստանում, բակի կողմից պաշտպանված էր հաստ երկաթե վանդակաձողերով: Ոչ ոք, նույնիսկ տիկին Գրանդէն, իրավունք չուներ այնտեղ մտնելու. ծերուկը ուզում էր այնտեղ մենակ լինել, ինչպես ալքիմիկոսը իր հնոցի առօա: Անկասկած խիստ ճարպկությամբ մի ծածուկ թաքսոնց էր շինված այնտեղ, որտեղ պահպում էին սեփականությունների կալվածագրերը, որտեղ կախված էր ոսկիները կշռելու կշեռքը, այնտեղ էին զիշերված ժամերին և գաղտնաբար գրվում անդորրագրերը, ստացագրերն ու արկում հաշիվները. այնպես որ գործի մարդիկ տեսնելով Գրանդէին ամեն ինչի միշտ պատրաստ, կարող էին երևակայել, որ նա իր հրամանի ներքո ունի մի թոշունի կամ մի սատանա: Այդուղի էր անպայման նախկին տակառագործը գալիս շոյելու, գուրգուրելու, տաքացնելու, գրկելու իր ոսկին, երբ Նանոնը խոմփում էր առաստաղը ցնցելու աստիճան, երբ գայլաշունը հսկում էր բակում ու հորանջում, երբ տիկին և օրիորդ Գրանդէները խորը քնած էին: Նրա պատերը հաստ էին և լուսամուտների փեղկերը վստահելի: Ինքը միայն ուներ այս լաբորատորիայի բանալին, ուր ասում էին, նա քննում

\* ՈՒՆՔՈՐԳԱՆԴՈ (իտալ.) — երաժշտական տերմին՝ արագ տեմպ:

Եր այն հատակագծերը, որոնց վրա նշանակված էին պտղատու ծառերը, և որոնց միջոցով նա հաշվում էր իր արտադրանքը՝ մինչև վերջին տրցակը կամ ոստը: Էժենիի սենյակը այս պատճեշված դրան դիմացն էր: Իսկ հարթակի վերջավորության վրա՝ ամուսինների հարկարաժինն էր, որը տան ամբողջ առաջամասն էր գրավում: Տիկին Գրանդեի սենյակը Էժենիի սենյակին կից էր, ուր մտնում էին ապակեպատ դրուվ: Ընտանիքի զինավորի սենյակը միջնորմով բաժանված էր կնոջ սենյակից, իսկ իր խորհրդավոր առանձնասենյակից՝ հաստ պատով: Հայր Գրանդեն իր եղբորորդուն հաստկացրել էր երկրորդ հարկի բարձր ձեղունը՝ իր սենյակի վերևուն, որպեսզի կարողանա լսել նրա ուսնաձայնը, եթե երբեմն նա ուզենա ման գալ: Երբ Էժենին և մայրը հասան հարթակի մեջտեղը՝ բաժանվելուց առաջ իրար համբուրեցին, ապա Շառլին ցտեսության կապակցությամբ ասված մի քանի խոսքից հետո, որոնք թեև սառն էին շրթունքների վրա, բայց շերմ էին աղջկա սրտում, նրանք առանձնացան իրենց սենյակները:

— Դուք ահավասիկ ձեր սենյակումն եք,— ասաց հայր Գրանդեն իր եղբորորդուն՝ նրա սենյակի դուռը բանալով:— Եթե դուքս զալու պահանց զգաք՝ կկանչեք Նանոնին: Առանց նրան, ծառա եմ ձեզ, որովհետև շունք առանց ծպտուն հանելու կրգկտե ձեզ: Լավ քնեցք: Գիշեր բարի: Հա՛, հա՛, այդ կանայք ձեզ համար կրակ են արել:

Այդ րոպեին բարձրահասակ Նանոնը երևաց՝ ձեռքը անկողինը տաքացնող մի ջեռակ:

— Այս էլ մի ուրիշ բան,— ասաց պ. Գրանդեն,— մի՞քե իմ եղբորորդուն ծննդկան կնոջ տեղ եք դնում: Առեք տարեք այդ կրակը, Նանոն:

— Բայց, պարո՞ն, սավանները խոնավ են, և այս պարոնը հիրավի կնոջ նման նուրբ է:

— Լավ, քանի որ միտքդ դրել ես,— ասաց Գրանդեն, հրելով նրան ուսերից,— բայց ուշադիր եղիր, որպեսզի հրդեհ չառաջացնես:

Հետո ազահը վայր իշավ անորոշ խոսքեր մոլտալով:

Շառլը մնաց շվարած իր պայուսակների հետ: Աչքերը շրջելով զյուղական տնակներին հաստուկ ծաղկեփնջերով նկարուն թղթերով պաստառված ձեղնասենյակի պատին, արդեն ակոսած մաշված քարից շինված բույսարուն, որի լոկ տեսքը սառնություն էր բուրում, աթոռներին, որոնք ներկված եղեգից էին հյուսված և կարծես չորսից ավելի անկյուններ ունեին, բացված վիճակում գտնվող զիշերասեղանին, որի մեջ հեծելազորային մի փոքրիկ սերժանտ կարող էր սեղմվել, անկյունի բարակ, եղջրավոր և որդից ծակծկված գորգին՝ որ փուլած էր ամպհովանով անկողնի առջև, որի կտավն վարագույները այնպես էին դողդողում, որ կարծես վայր էին ընկնում, նա լրջությամբ նայեց բարձրահասակ Նանոնին և ասաց:

— Այս ի՞նչ է, սիրելի՝ ս, հիրավի պարոն Գրանդեն՝ Սոմյուրի նախկին մերի, փարիզարնակ պարոն Գրանդեն եղբոր տանն եմ գտնվում:

— Այո, պարո՞ն, մի շատ սիրալիք, մի շատ քաղցրաբարո, մի կատարյալ պարոնի տանը: Կուզենայի՞ք ձեզ օգնեմ՝ ձեր պայուսակները բանալու համար:

— Արդարն, ուզում եմ, իմ նախկին զինվոր: Արդյոք դուք չե՞ք ծառայել կայսերական զվարդիայի ծովայիններ քի մեջ:

— Օ՛հ, օ՛հ, օ՛հ,— ասաց Նանոնը,— զվարդիայի ծովայինները ի՞նչ բան են: Աղվա՞ծ են, գնո՞ւմ են ջրի երեսով:

— Լսեցե՛ք, իմ գիշերանոցը հանեցեք այդ պայուսակից: Ահավասիկ բանալին:

Նանոնը զմայլվեց՝ տեսնելով կանաչ մետաքսի վրա ոսկեզօծ ծաղիկներով հնագույն նկարներով գիշերանոցը:

— Դուք սա հազնելո՞ւ եք, որպեսզի պառկեք, — հարցրեց Նանոնը:

— Այո՛:

— Սուրբ աստվածածին, զյուղի տաճարի խորանի համար ի՞նչ գեղեցիկ վարագույր կլիներ: Բայց, իմ սիրելի գողտրիկ պարոն, դա նվեր տվեք եկեղեցուն, դուք կփրկեք ձեր հոգին, հակառակ դեպքում դա պատճառ կլինի, որ ձեր հոգին կորչի: Օ՛, այդպէս որքան սիրուն եք: Ուզում եմ այստեղ կանչել օրիորդին, որ ձեզ տեսնի:

— Դե, Նանոն, քանի որ նանոն եք, ուզո՞ւմ եք լրել: Թողեք քննեմ: Վաղը կարգադրելու եմ իմ գործերը, և եթե գիշերանոցը ձեզ այդքան դուք է գալիս, դուք կարող եք փրկել ձեր հոգին: Ես շատ լավ քրիստոնյա եմ, որպեսզի մեկնած րոպեիս չմերժեմ ձեզ մի գիշերանոց, որ դուք կգործածեք, ինչպէս ուզեք:

Նանոնը մնաց ոտների վրա զամված, հիացմունքով դիտելով Շառլին, առանց հավատալու նրա ասածին:

— Ի՞նձ տալ այդ գեղեցիկ զարդը, — ասաց նա հեռանալով, — այդ պարոնը երազումն է արդեն: Գիշեր բարի:

— Գիշեր բարի, Նանոն:

«Ի՞նչ անելու համար եկա ես այստեղ, — ասաց ինքն իրեն Շառլ՝ նիրիելով: — Իմ հայրը հիմար չէ, իմ ձամփորդությունը մի նպատակ կունենա: Օ՛, «լուրջ գործերը վաղը, ասել է չգիտեմ որ հուն ապուշը»:

— Սո՞ւրբ կույս, որքան համակրելի է իմ հորեղբորորդին, — ասաց Էժենին՝ ընդհատելով իր աղոթքը, որն այդ երեկո չկարողացավ վերջացնել:

Տիկին Գրանդեն ոչ մի մտածում չունեցավ իր անկողնում: Նա միջնորմի կենտրոնում գտնվող հաղորդակցության դրան միջից իմացավ, որ ազակը անցուդարձ է անում իր սենյակում: Նման բոլոր անհամարձակ կանանց, նա ուսումնասիրել էր իր տիրոջ բնավորությունը: Ինչպէս որ մրրկահավը նախատեսում է մրրիկը, նա էլ աննշմարելի նշաններից նախազգացել էր այն ներքին փոթորկիկը, որ ցնցում էր Գրանդեին, ուստի իր սեփական արտահայտությամբ, մեռած էր ձևանում: Գրանդեն նայում էր առանձնասենյակի իր իսկ շինել տված թիթեղապատ դրանը և ասում:

— Ի՞նչ արտառոց զաղափար է ունեցել իմ եղբայրը՝ որդուն ինձ կտակելով: Հիանալի՝ ժառանգություն: Ես քսան էլյու իսկ չունեմ նրան տալու: Բայց քսան էլյուն ի՞նչ կարող է անել այս պՃնասեր երիտասարդին, որ իմ ծանրացափին նայում էր՝ կարծես կրակի մեջ զցելու համար:

Մտածելով տառապանքի այդ կտակի հետևանքների մասին, Գրանդեն գուցե ավելի մտահույզ էր, քան իր եղբայրը, երբ այդ կտակը գրում էր:

---

\* Nanon — ânon (իշուկ), բառախաղ է:

— Ես կունենա՞մ ոսկեթել այն պարեգոտք...— ասում էր Նանոնը, որ քնեց խորանի վարագույրը ասես հազար, և իր կյանքում առաջին անգամ լինելով, երազեց ծաղիկներ, գորգեր, դամասկյան դիպակներ, ինչպես Էժենին, որը սեր երազեց:

Դեռատի աղջիկների միօրինակ և անբասիր կյանքում կզա այն քաղցր ժամը, երբ արևը նրանց հոգիների մեջ սփոռում է իր ճառագայթները, երբ ծաղիկը նրանց մտածումներ է արտահայտում, երբ սրտի բարախումները նրանց ուղեղներին են հաղորդում իրենց ջերմ բեղմանավորումը և գաղափարները վերածում են մի տարտամ տենչանքի. անմե՛ դ տիրության և քա՛ դցը հրձվանքի օր: Երբ երեխաները սկսում են տեսնել, ժպտում են, երբ աղջիկը նշմարում է զգացումը իրազես՝ ժպտում է, ինչպես ժպտում էր, երբ երեխա էր: Երեւ լրվար կյանքի սերն է, մի՞ թե սերը սրտի լրվար չէ: Էժենիի համար հասել էր աշխարհի երևույթները հստակությամբ տեսնելու պահը: Շուտ արթնացող, ինչպեսպրովինցիայի բոլոր աղջիկները, նա վաղ առավոտից ոտքի կանգնեց, աղոթեց և սկսեց արդուգարդն անել, մի գրադմունք, որ սրանից հետո իր իմաստն էր ունենալու: Նա հարթեց նախ շագանակագույն վարսերը և նրանց ծանր հյուսակները մեծ ինսամքով պտտեցրեց զիսի վերևը՝ զգուշանալով, որ մազերը հյուսվածքից դուրս չփախչեն, և իր գլխազարդի մեջ դրեց մի այնպիսի համաշխափություն, որը նրա դեմքի մաքուր գծերին ավելացնելով մի ինչ-որ նոր քան՝ պայծառացրեց նրա ամաշկու հստակությունը: Զեռքերը մի քանի անգամ լվալով մաքուր ջրի մեջ, որից մորթը կարծրանում և կարմրում է, նա դիտեց իր գեղեցիկ կյոր բազուկները և ուզեց իմանալ, թե ինչ միջոցով իր հորեղբորորդին այնքան փափուկ և սպիտակ ձեռքեր ուներ և եղունգներն այնքան լավ էին կտրված: Նա հազար նոր գուլպաներ և իր ամենագեղեցիկ ոտնամանները: Նա սեղմեց իրանը՝ առանց մի օդակ քաց թողնելու: Վերջապես կյանքում առաջին անգամ ցանկանալով գեղեցիկ երևալ՝ նա ճաշակեց մի նոր և բարեձե շրջազգեստ հագնելու երջանկությունը, և որը նրան ավելի գրավիչ էր դարձնում: Երբ նրա հարդարանքը վերջացավ՝ նա լսեց եկեղեցու ժամացույցի զարկերը ցավ, երբ միայն յոթ հարված համրեց: Լավ հազնվելու համար անհրաժեշտ ժամանակն ունենալու ցանկությունը նրան շատ վաղ էր արթնացրել: Չիմանալով տասն անգամ վարսերի մի խոպովիկ շինելու և նրա տպավորությունն ուսումնասիրելու արվեստը՝ Էժենին պարզապես ծալեց իր թևերը, նստեց պատուհանի առաջ, դիտեց բակը, նեղ պարտեզն ու նրա վրա իշխող բարձր տեռասները: Տիուր և սահմանափակ տեսարան, որ գորկ չէր մեկուսացած վայրերի կամ անմշակ բնության հատուկ խորհրդավոր գեղեցկությունից: Խոհանոցի մոտ գտնվում էր մի ջրհոր, քարաշար եզերքով և օգտագործելի ճախարակով, որ բռնված էր երկարէ կոր ձողով, այս հորը պարուրված էր՝ եղանակից թոշնած, կարմրած ու այրված որթատունկի ճյուղերով: Այդտեղից խաղողի ծուռումու ցողունը հասնում էր պատին, կառչում նրան, տատանվում տան երկարությամբ և վերջանում մի փայտակույտի վրա, ուր փայտը դարսված էր գրամոլի գրքերի կանոնավորությամբ: Բակի սալահատակը ներկայացնում էր սևորակ թեկ, որ ժամանակի ընթացքում թողել էին մամուները, խոտերը, շարժման բացակայությունը: Հաստ պատերն ունեին կանաչ ծեփեր, ծածկված վետ-վետ, թիսագույն, երկար շերտերով: Վերջապես ուր աստիճանները, որոնք գտնվում էին բակի ներքնամասում և հանգում պարտեզի դրանք, անշատված էին իրարից և ծածկված բարձր տունկերով, ինչպես իր կնոշ ձեռքով թաղված ասպետի գերեզմանը՝ խաչակիների արշավանքի ժամանակ: Քարաշեն մի հիմքի վրա բարձրանում էր մի փուած, փայտե վանդակադու հնանալուց կիսով թափված, բայց որին ըստ իրենց քմայքի, պարուրել էին մազլցող տունկեր: Վանդակադուն երկու կողմերից երկարում էին երկու ազազուն խնձորենու ծուռումու ճյուղերը: Երեք գուգահեռ ծառուղիներ, ավազու և բաժանված քառակուսիների, որոնց հողերը եզերված էին տոսախներով, կազմում էին այն պարտեզը, որ տեռասի ստորոտում վերջանում էր լորենիների կանաչ ծածկույթով: Մի ծայրում հաղարծենի, մյուսում՝ հսկա մի լնկուզենի, որ իր ճյուղերը տարածում էր մինչև տակառագործի առանձնասենյակը: Աշնանային գեղեցիկ արևի մաքուր և գեղեցիկ մի օր, որ

բնորոշ է Լուառի ավերին, սկսում էր փարատել զիշերվա դրոշմած փայլը, որ տարածվում էր գեղատեսիլ իրերի, պատերի և բակն ու պարտեզը շենցնող տունկերի վրա:

Էժենին մի նոր հրապույր գտավ այդ բոլորի մեջ, որ նրան այնքան սովորական էին թվում առաջ: Հազարավոր շփոթ մտածումներ ծնունդ էին առնում նրա հոգում և այնտեղ աճում, քանի դրսում մեծանում էին արևի ճառագայթները: Վերջապես նա ունեցավ այն անորոշ, անբացատրելի հաճույքի սարսուռ, որ պարուրում է մեր հոգուր կենցաղը, ինչպես ամայր պարուրում է մեր մարմանական կեցությունը: Այս մտքերը ներդաշնակում էին այդ արտակարգ պեյզաժի մանրամասնությունների հետ, և նրա սրտի ներդաշնակությունը զուգորդվեց բնության ներդաշնակություններին: Երբ արևը հասավ պատի այն մասին, որտեղ կախված էին Վեներայիծամերը՝ հաստ տերևներով և փոփոխվող գույներով, ինչպես աղավնիների պարանոցը, հույսի երկնային ճառագայթներ Էժենիի ապագան լուսավորեցին և նա հաճույք զգաց՝ դիտելով պատի այդ մասը, նրա դաշտուկ ծաղիկները, նրա կապույտ զանգակիները, թոշնած խոտերը, որոնց խառնվեց մի գեղեցիկ հուշ՝ մանկության հիշատակների նման: Շշուկը, որ ամեն մի տերև հանում էր այս թնդուն բակում, երբ պոկվում էր իր ճյուղից, պատասխան էր տալիս դեռատի աղջկա ծածուկ հարցումներին: Նա կարող էր այստեղ մնալ ամրող օրը, առանց նկատելու ժամանակի փախուստը: Հետո նա զգաց հոգու հուզումնալի սարսուռներ: Նա հաճախ բարձրանում էր իր տեղից, կանգնում հայելու առջև և նայում իրեն, ինչպես բարեխիղձ հեղինակն է քննում իր գործը՝ ինքնաքննադատության և ինքն իրեն լուսանքներ ասելու համար:

«Ես բավական գեղեցիկ չեմ նրա համար»: Այսպես էր Էժենիի խոնարի և տառապանքներով բեղուն մտածողությունը: Խեղական աղջիկը արդարացի չէր իր նկատմամբ, բայց համեստությունը, ավելի ճիշտ երկյուղը սիրո առաջին առաքինություններից մեկն է: Էժենին այն առողջակազմ աղջիկներից էր, որոնց հանդիպում ենք մանր բուրժուազիայի մեջ, և որոնց հմայքը գուեիկ է թվում, սակայն եթե նա նման է Միլոսյան Վեներային, ապա նրա գծերն ազնվացած էին քրիստոնեական զգացումի այն քաղցրությամբ, որ մաքրագործում է կնոջը և տալիս նրան իրն արձանագործներին անձանոթ մի վեհություն: Նրա գլուխը մեծ էր, ճակատը առնական, բայց նրբակերտ ֆիլիսափի Յուպիտերին<sup>8</sup> հատուկ մոխրագույն աչքեր, որոնց խորքում նրա կուսագեղ կյանքն էր ցոլանում, ունեին պոռթկացող լույսի հմայքը: Նրա կլոր դեմքի գծերը, երբեմն թարմ և վարդագույն, ավելի ցայտուն էին դարձել բավականին զթասիրտ ծաղկախտից, որ հետքեր չէր թողել, բայց փշացրել էր մորթի թափային նրբությունը, սակայն նորից՝ այնքան նուրբ և այնքան փափուկ, որ մոր մաքուր համբույրն իսկ՝ նրա վրա թողնում էր անցողիկ կարմրություն: Նրա քիթը մի քիչ մեծ էր, բայց ներդաշնակ՝ բռուրակարմիր բերանի հետ, որի հազարավոր գծերով շուրթերը լի էին սիրով և բարությամբ: Նրա վիզն ուներ կատարյալ կորություն: Խնամքով քողարկված լեցուն կուրծքը քաշում էր հայացքներ և երազել տալիս: Հազնվածքի անկատարությունը անպայման նվազեցնում էր նրա հմայքը, բայց ճշմարիտ ճանաչողների համար այդ բարձրահասակ իրանի անձկունությունը պետք է իր թովշանքն ունենար: Բարձրահասակ և զորեղ Էժենին ամբոխի համար հմայիչ ոչինչ չուներ. բայց նա գեղեցիկ էր դյուրին տեսանելի այն գեղեցկությամբ, որին սիրահարվում են միայն արվեստագետները: Այն նկարիչը, որ այս աշխարհում փնտրում է աստվածամոր երկնային մաքրությամբ մի կերպար և կանացի ամեն մի էակի մեջ դիտում է Ռաֆայելի կողմից կոռահված համեստորեն հպարտ աչքեր, կուսական տեսք, որոնք երբեմն բնության պարզ են հանդիսանում, բայց որոնք պահպանվում կամ ձեռք են բերվում քրիստոնեական անբասիր կյանքի շնորհիվ, այդ նկարիչը, սիրահարված այդքան հազվագյուտ մողելի, Էժենիի դեմքի վրա, պիտի գտներ բնածին և անզիտված մի վսեմություն: Նա պիտի գտներ սիրո մի ամբողջ աշխարհ, այդ հանդարտ ճակատի մեջ և նրա աչքերի կտրվածքում, նրա կոպերի կազմության մեջ՝ մի ինչ-որ աստվածային բան: Նրա դիմագծերը, նրա գլխի շրջագիծը, որ երբեք չէին հոգնել կամ աղճատվել հաճույքի պոռթկումներից,

նման էին հանդարտ լճերի հեռավորության մեջ այնքան մեղմորեն հատված հորիզոնի գծերին: Այս հանդարտ, կարմիր լուսածիր կերպարանքը, ասես փթթած մի սիրուն ծաղիկ, հանդարտեցնում էր հոգին և հաղորդում էր այնտեղ ցոլացող մաքուր խղճի հմայքը ու հրամայում նայվածքին: Էժենին դեռևս գտնվում էր կյանքի այն եզերքում, ուր ծաղկում են մանկության պատրանքներ, երբ հետագայում անձանոթ երանությամբ քաղում են մարգարտածաղիկներ: Եվ նա ասում էր ինքն իրեն, հայելու մեջ նայելով և առանց դեռևս ձանաշելու սերը:

«Ես շատ տգեղ եմ. նա ուշադրություն չի դարձնի ինձ»: Հետո նա բացեց իր սենյակի դուռը, որ նայում էր սանդուղքիվրա և գլուխը երկարեց՝ տան աղմուկները լսելու համար:

«Չի արթնանում»,— մտածեց նա՝ լսելով Նանոնի առավոտյան հազը, տեսնելով, թե ինչպես նա անցուղարձ էր անում, սրահն ավլում, կրակը վառում, շունը կապում և ախտոռում խոսակցում անասունների հետ:

Էժենին անմիջապես ցած իջավ և շտապեց Նանոնի մոտ, որ կովն էր կթում:

— Նանոն, իմ բարի Նանոն, սերուցք պատրաստիր իմ հորեղորորդու սուրճի համար:

— Բայց օրիորդ, պետք էր երեկվանից պատրաստել,— ասաց Նանոնը և կուշտ ծիծառեց:— Չեմ կարող սեր քաշել: Ձեր հորեղորորդին անուշիկ է, անուշիկ, հիրավի շատ անուշիկ: Դուք նրան չտեսաք ուկուց և մետաքսից հյուսված իր սենեկազգեստով: Ես տեսա: Նա շատ նուրբ սպիտակեղեններ է հազնում, ինչպես քահանայի եկեղեցական շուրջառը:

— Նանոն, մեզ համար կարկանդակ պատրաստիր:

— Բայց ո՞վ ինձ փայտ կտա փուտի համար, և՝ այսուր, և՝ յուտ,— ասաց Նանոնը, որ Գրանդեի վարչապետը լինելու հանգամանքով, երբեմն էժենիի և նրա մոր աշքին հսկայական կարևորություն էր ստանում:— Այդ բոլորը գողանալո՞ւ ենք այդ մարդուց, տոնելու համար ձեր հորեղորորդուն: Դուք ինքներդ նրանից յուտ, այսուր, փայտ խնդրեցեք, նա ձեր հայրն է, կարող է ձեզ տալ: Ահավասիկ նա իշխում է մթերք տալու համար...

Էժենին սարսափած փախավ պարտեզ, երբ լսեց թե ինչպես սանդուղքը ձռնչում էր հոր ոտքերի տակ: Նա արդեն զգում էր այն խոր ամորթիսածության ազդեցությունը և մեր երջանկության այն հասուն գիտակցությունը, որ մեզ հավատացնել է տալիս, հավանաբար իրավացիորեն, թե մեր թարուն մտածումները քանդակված են մեր ձակաստների վրա և ուրիշի աշքին են զարնում: Եվ վերջապես նկատելով իր հայրենի տան սառն չքավորությունը, խեղճ աղջիկը սրտնեղում էր, որ չէր կարող այն ներդաշնակել իր հորեղորորդուպերճանքի հետ: Նա հոգեկան գորեղ պահանջ զգաց՝ նրա համար մի բացառիկ բան անելու, բայց ի՞նչ, նա ոչինչ չզիտեր: Պարզամիտ և անկեղծ՝ նա հետևում էր իր հրեշտակային բնավորությանը, առանց զգուշանալու իր զգացումներից և տպավորություններից: Իր հորեղորորդու տեսքը միայն բավական էր եղել՝ նրա մեջ արթնացնելու կնոջ բնական հակումները, որոնք զարգացան առավել ևս արագ, որ արդեն քսաներեք տարեկան լինելով՝ նա իր իմացականության և ցանկությունների ամբողջական զարգացման մեջ էր գտնվում: Առաջին անգամ էր, որ նա սրտում սարսափ զգաց իր հոր տեսքից, տեսավ նրա մեջ իր բախտի տիրոջը և մտածեց, որ ինքը հանցավոր էր՝ նրանից իր որոշ մտածումները թաքցնելու համար: Նա սկսեց քայլել արագաքայլ՝ զարմանալով, որ շնչած օդը ավելի մաքուր էր, որ արևի ձառագայթներն ավելի կենարար էին, որոնցից նա քաղում էր բարոյական ջերմություն, մի նոր կյանք: Այն պահին, երբ նա կարկանդակը ձեռք բերելու միջոց էր որոնում, Գրանդեի և Նանոնի միջև տեղի էր ունենում

Վիճաբանություն, որ նրանց մեջ նույնքան հազվադեպ էր, ինչպես ծիծեռնակները՝ ձմռանը:  
Բանալիները ձեռքին՝ ծերուկը եկել էր կշռելու օրվա համար անհրաժեշտ ուստելիքները:

— Երեկվա հացից մնացե՞լ է, — հարցրեց նա Նանոնին:

— Ոչ մի փշրանք, պարոն:

Գրանդեն վերցրեց մի կլոր խոշոր հաց, այսուրոտ, ձևավորված այն սակառիկների մեջ, որոնք  
Անժուում գործ են ածվում խմոր հունցելու համար և հացը կտրելու էր, եթե Նանոնը ասաց.

— Այսօր հինգ հոգի ենք, պարոն:

— Ճիշտ է, — պատասխանեց Գրանդեն, բայց քո հացը կշռվում է վեց լիվր և դեռ կավելանա:  
Մանավանդ որ փարիզեցի այս երիտասարդները, կտեսնես, հաց չեն ուտում:

— Ուրեմն նրանք միայն **ֆրիպ** են ուտում, — ասաց Նանոնը:

Անժուում ֆրիպը, որ ժողովրդական քառ է, նշանակում է ոչ ցամաք հաց, սկսած հասարակ ֆրիպից,  
որը կարագքաված հացն է, մինչև վրան դեղձի անուշ քսած յուլոտ հացը՝ ֆրիպներից  
ամենահարգին, և բոլոր նրանք, որոնք իրենց մանկության շրջանում լիզել են ֆրիպը և թողել հացը,  
կիմանան այս ասացվածքի արժեքը:

— Ոչ, — պատասխանեց Գրանդեն, — նրանք չեն ուտում ոչ ֆրիպ և ոչ էլ հաց: Նրանք համարյա թե  
մարդու տրվող աղջիկների նման են:

Վերջապես օրվա ճաշացուցակը Ժատորեն պատվիրելուց և մառանի դարակները փակելուց հետո,  
եթե ծերուկն ուղղվում էր դեպի մրգատունը, Նանոնը կանգնեցրեց նրան, ասելով.

— Պարոն, տվեք ինձ այսուր և յուղ. ուզում եմ երիտասարդների համար մի կարկանդակ  
պատրաստել:

— Չե՞ր կամենա տունս կողոպտել իմ եղբորորդու համար:

— Ինչպես դուք, ես էլ ձեր եղբորորդու մասին ավելի չեմ մտածում, քան ձեր շան... բայց ահա դուք  
ինձ վեց կտոր շաքար եք տվել, եթե ինձ հարկավոր է ութը:

— Ա՛հ, Նան՛ն, ես քեզ երբեք այսպես չեմ տեսել: Գլխովդ ինչե՞ր են անցնում: Մի՞թե այստեղ դու ես  
տիրուիին: Դու վեց կտորից ավելի շաքար չես ունենա:

— Այդ դեպքում ձեր եղբորորդին ինչո՞վ է քաղցրացնելու իր սուրճը:

— Երկու կտորով. ես առանց շաքարի կխմեմ:

— Ձեր տարիքին ուրեմն դուք առանց շաքարի՝ եք խմելու սուրճը: Ավելի շուտ ես իմ փողով ձեզ  
համար շաքար կզնեմ:

— Դու քո գործով միայն զբաղվիր:

Հակառակ զների անկման, տակառագործի համար շաքարը միշտ էլ գաղութից եկած մթերքներից  
ամենաթանկն էր. նրա համար շաքարի լիվրը չէր դադարել վեց ֆրանկ արժելուց: Շաքարը  
ինայողությամբ գործածելու ստիպողականությունը, որ մնացել էր կայսրության շրջանից, նրա  
անփոփոխ սովորություններից մեկն էր: Ամեն կին, նույնիսկ ամենից պարզամիտը, զիտե

խորամանկության դիմել իրնպատակին հասնելու համար. Նանոնք թողեց շաքարի հարցը՝ կարկանդակն ստանալու համար:

— Օրիորդ,— ձայն տվեց պատուհանից,— դուք կարկանդակ եք ուզում, այնպես չէ՞:

— Ոչ, ոչ, պատասխանեց Էժենին:

— Լավ, Նանոն,— ասաց Գրանդեն՝ լսելով իր աղջկա ձայնը,— վերցրեք:

Նա բաց արեց դարակը, ուր այսուրն էր պահվում, տվեց նրան մի չափ, ավելացրեց մի քանի ունցիա յուր այն կտորի վրա, որ արդեն կտրել էր:

— Փայտ ևս անհրաժեշտ է՝ փոռը վառելու համար,— ասաց անհողողող Նանոնը:

— Լավ, դու ինքդ կվերցնես անհրաժեշտ փայտը,— մելամաղձությամբ պատասխանեց Գրանդեն,— բայց այդ դեպքում, դու մեզ համար կպատրաստես վրան պտուղներով կարկանդակ, մեր բոլոր կերակուրներն էլ փոռում կեփես: Այդ ձեռվ դու երկու անգամ կրակ չես անի:

— Պա՛հ,— բացազանչեց Նանոնը,— կարիք չկա այդ բանն ինձ ասելու:

Գրանդեն իր հավատարիմ մինխստրի վրա գրեթե հայրական մի հայացք նետեց:

— Օրիո՞րդ,— ձայնեց խոհարարուիին,— մենք կարկանդակ կունենանք:

Հայր Գրանդեն վերադարձավ՝ բեռնավորված պտուղներով, որոնք խոհանոցի սեղանի վրա գտնվող պնակներից մեկի մեջ դրեց:

— Տեսեք, պարո՞ն,— ասաց Նանոնը,— ձեր եղբորորդու սիրուն կոշիկները: Ի՞նչ կաշի է և ինչպիսի լավ հոտ ունի: Ինչո՞վ են դրանք մաքրում: Արդյոք ձեր հավկիթից շինված ներկո՞վ պետք է մաքրեմ:

— Նանո՞ն, կարծում եմ, որ հավկիթը կփշացնի այդ կաշին: Բայց և այնպես, ասա նրան, որ չես իմանում մարոկենին ներկելու ձեր... սա մարոկենի է: Նա ինքը կզնի Սոմյուրում անհրաժեշտ ներկը՝ այս կոշիկները փայլեցնելուհամար: Իմացել եմ, որ այդ ներկի մեջ շաքար էլ են խառնում՝ նրան փայլեցնելու հատկություն տալու համար:

— Ուրեմն, ուտել կարելի՞ է,— ասաց սպասուիին կոշիկները մոտեցնելով իր քթին:— Բա՛հ, բա՛հ, տիկնոց օդեկոլոնի հոտ ունեն սրանք. որքա՞ն տարօրինակ է:

— Տարօրինակ,— ասաց տերը,— դու գտնում ես, որ տարօրինակ է, երբ կոշիկի վրա ծախսվում է այն հագնող անձի արժեքից ավելին:

— Պարոն,— ասաց Նանոնն իր տիրոջը, երբ սա մրգերի պահեստը փակելուց հետո նորից եկավ,— մի՞թե շաքարը մեկ կամ երկու անգամ միս եփելու չենք՝ ներկայության պատճառով ձեր...

— Այո:

— Ուրեմն անհրաժեշտ է, որ գնամ մսագործի խանութը:

— Ամենևին ոչ: Հավերից մսացուր կպատրաստես: Ազարակապաններն անգործ չեն թողնի քեզ: Բայց ես կասեմ Կորնուայեին, որ ինձ համար ագռավներ սպանի: Այդ որսից աշխարհիս լավագույն մսացուրն է ստացվում:

- Ճի՞շտ է պարոն, որ նրանք դիակներ են ուսում:
- Որքան հիմար ես, Նանոն. նրանք ել բոլորի նման ուսում են՝ ինչ որ գտնում են: Մի՞քեւ մենք չենք ապրում դիակներից: Ի՞նչ են հապա ժառանգությունները:
- Հայր Գրանդեն ուրիշ հրահանգներ չունենալով՝ նայեց ժամը և նկատելով, որ դեռ կես ժամ կար մինչև նախաճաշը՝ վերցրեց գլխարկը, մոտեցավ իր աղջկան համբուրելու և ասաց.
- Կուզենայի՞ ինձ հետ զրունել Լուառի ափին, իմ մարզագետիններում: Այնտեղ մի քիչ գործեր ունեմ:
- Էժենին գնաց վերցնելու վարդագույն շղարշով պատած իր հարդե գլխարկը, ապա հայր ու աղջկան, միասին, ծուռումուր փողոցով իջան դեպի հրապարակը:
- Այսպես առավոտյան ո՞ւր եք գնում,— ասաց նոտար Կրյուշոն, երբ հանդիպեց Գրանդեին:
- Մի բանի նայելու, — պատասխանեց ծերուկն՝ առանցիր ծանոթի առավոտյան զրուանքի շարժառիթից խարվելու:
- Երբ հայր Գրանդեն գնում էր մի բանի նայելու, նոտարը փորձից գիտեր, որ կարելի է նրա հետ մի շահ ապահովել: Ուստի և ընկերացավ նրան:
- Եկեք Կրյուշո,— ասաց Գրանդեն նոտարին:— Դուք իմ բարեկամներից եք: Ես ձեզ կապացուցեմ, թե որքան հիմար բան է լավ հողի մեջ կաղամախի տնկելը...
- Ուրեմն ձեզ համար արժեք չի՞ ներկայացնում վաթսուն հազար ֆրանկի գումարը, որ դուք ստացաք Լուառի ձեր մարզագետնում տնկված կաղամախիներից,— ասաց նոտար Կրյուշոն աշքերը չուած:— Մի՞քեւ բախտը ձեզ չժպտաց... Կտրե՛ լ ձեր ծառերն այն պահին, երբ սպիտակ փայտ չէր գտնվում Նանտում և վաճառել դրանք երեսուն ֆրանկով:
- Էժենին մտիկ էր անում՝ առանց գիտակցելու, որ իր կյանքի ամենից հանդիսավոր բովեն էր մոտենում և որ նոտարին պիտի հաջողվեր իր նկատմամբ գերազույն և հայրական մի վճիռ արձակել տալ: Գրանդեն հասել էր իր հիանալի մարզագետիններին, որ գտնվում էին Լուառի ափին, և որտեղ երեսուն բանվոր զբաղված էին հանված կաղամախների թողած փոսերը մաքրելով, լցնելով և հարթելով:
- Պարոն Կրյուշո, տեսեք թե մի կաղամախին, որքան տեղ է զրավում հողում,— ասաց նա նոտարին:— Ժան, — գոռաց մի բանվորի, — շա... շա... շափի՞ր քո հողաշափով ամ... ամ... ամեն ուղղությամբ:
- Չորս անգամ ութը ոտք, — պատասխանեց բանվորը, երբ ավարտեց:
- Երեսուն երկու կորուստ,— ասաց Գրանդեն Կրյուշոյին:— Այս զծի վրա ես տնկել էի երեք հարյուր կաղամախի, այնպես չէ՞ երեք հա... հա... հարյուր անգամ երեսուն ե... երկու ո... ոտք, որ ինձ կորցնել էր տալիս հինգ հ... հարյուր խուրձ չոր խոտ. ավելացրեք երկու անգամ երկու կողմերը, — հազար հինգ հարյուր, մեջտեղի կարգերը նույնքան: Այնպես որ աս... աս... ասենք հազար խուրձ չոր խոտ:
- Շատ լավ! — ասաց Կրյուշոն իր բարեկամին օգնելուհամար,— այդ խոտի հազար խուրձն արժե մոտ վեց հարյուր ֆրանկ:

— Աս... աս... ասացեք հա... հա... հազար երկու հարյուր, հազար հարյուր, քանի որ երեքից չորս հարյուր ֆրանկ էլ տալիս է աշնանախտտը: Լավ հա... հա... հաշվեցեք, հազար երկու հարյուր ֆրանկ ամեն տարի, քա... քա... քառասուն տարվա ընթացքում, տոկոսներով մի... միասին տա տա... տալիս է մի քա... քա... քան, որը դուք գի... գի... գիտեք:

— Ասենք վաթսուն հազար ֆրանկ,— ասաց նոտարը:

— Հավատում եմ: Սա կա... կանի... վաթսուն հազար ֆրանկ:— Այսպիսով,— շարունակեց խաղողագործը առանց կակազելու,— երկու հազար կաղամախի, քառասուն տարվա ընթացքում հիսուն հազար ֆրանկ չեն տա ինձ: Կորուստ կա: Ես այդ գտել եմ, ես ինքս,— ասաց Գրանդէն՝ պարձենալով,— ժան,— հարեց նա,— հողով կլցնես փոսերը, բացի նրանցից, որ Լուառի մոտն են գտնվում, որտեղ կտնկես իմ գնած կաղամախիները: Կտնկես գետի մեջ, որտեղ նրանք կաձեն կառավարության հաշվին,— ավելացրեց նա, դառնալով դեպի Կրյուշոն և իր քթի ուռուցքը թեթևակի շարժելով, որ հավասար էր ամենահեգնական քմծիծաղին:

— Պարզ է... կաղամախիները պետք է տնկել միայն տկար հողերում,— ասաց Կրյուշոն, շշմած Գրանդէի հաշիվներից:

— Ա... յո... պարոն,— հեգնանքով պատասխանեց տակառագործը:

Էժենին, որ դիտում էր Լուառի հոյակապ տեսարանը, առանց լսելու իր հոր հաշիվները, հանկարծ ականջ որեց Կրյուշոյի խոսքերին, որ ասում էր իր կլիենտին:

— Շատ լավ, դուք Փարիզից ձեր աղջկա համար փեսացու եք քերել տվել. ամբողջ Սոմյուրը միայն ձեր եղբորորդու մասին է խոսում: Շուտով պատրաստելո՞ւ եմ մի նոր պայմանագիր, հայր Գրանդէ:

— Առ... առավոտ կա... կա... նուխ դուք դու... դուրս էիք եկել ինձ այդ... քանը աս... աս... ասելու համար,— պատասխանեց Գրանդէն. այս դիտողությունն ուղեկցելով քթի ուռուցքի շարժումը,— լավ, իմ վաղեմի բարեկամ, ես անկեղծ եմ ուզում լինել ձեզ հետ և ձեզ ասելու եմ այն, ինչ դու... ուզում եք իմ... իմ... իմանալ: Ես կնախնտրեմ նե... նետել իմ աղ... աղ... աղջկան Լուառ գետը, քան թե, գիտեք, նրան տա... տալ իմ եղ... եղ... եղբորորդուն: Դուք կարող եք հայ... հայտարարել այս քանը: Բայց ոչ... որքան ուզում են՝ թող շաղակրատեն:

Այս պատասխանը Էժենիին մի տեսակ շլացում պատճառեց: Այն հեռավոր հույսերը, որ սկսվել էին նրա սրտում բուսնել, որոնք ծաղկել էին հանկարծ, իրականացել և կազմել ծաղիկների մի խուրձ, կտրեցին և արմատախիլ արեցին ու արդեն թափեցին գետին, հողի վրա: Նախորդ երեկոյից ի վեր նա կապված էր Շառլին երջանկության այն բոլոր թելերով, որոնք միացնում են հողիները, այսուհետև տառապանքն էր նրանց զորացնելու: Մի՞ թե կնոշ ազնիվ ճակատագրին հատուկ չէ ավելի հուզվել դժբախտության շքեղությունից, քան բախտավորության պերճանքներից: Ինչպե՞ս հայրական զգացմունքը կարողացել էր այդքան մթագնել իր հոր սրտում: Ի՞նչ ոճիրի համար արդյոք Շառլը հանցապարտ կարող էր լինել: Խորհրդավոր իր հարցեր: Արդեն իր նորածին սերը, այնքան խոր մի գաղտնիք, խորհրդավորություններով էր շրջապատվել: Նա վերադարձավ դողդոջուն քայլերով և երբ հասավ վաղեմի մոայլ փողոցը, որ նրա համար միշտ այնքան ուրախ էր, և որը հանկարծ գտավ տխուր, նա շնչեց այն թախիծը, որ ժամանակն ու իրերը դրոշմել էին այնտեղ: Սիրո բոլոր զիտելիքները հայտնի էին արդեն նրան: Բնակարանից հազիվ մի քանի քայլ հեռու, նա հորից առաջ անցավ և նրան սպասեց դրան մոտ, դուռը բախելուց հետո: Բայց Գրանդէն նոտարի ձեռքում նկատելով մի լրագիր՝ դեռևս թղթագոտին շհանված՝ ասաց նրան.

— Ինչպե՞ս են արժեթղթերի գները:

- Դուք չեք ուզում ինձ լսել, Գրանդե՛, — պատասխանեց Կրյուշոն: — Շուտով գնեցեք դրանցից, դեռևս քսան տոկոս կարելի է շահել նրանցով՝ երկու տարում: Զհաշված բարձր տոկոսները, ութսուն հազար ֆրանկից կստացվի հինգ հազար ֆրանկի ունտա: Արժեթղթերն արժեն ութսուն ֆրանկ հիսուն սանտիմ:
- Կտեսնենք, — պատասխանեց Գրանդե՛ն՝ կզակը շփելով:
- Աստվա՛ծ իմ, — բացազնչեց նոտարը, որ թերթը բաց էր արել:
- Ի՞նչ կա, — շտապ հարցրեց Գրանդե՛ն այն պահին, երբ Կրյուշոն թերթը նրա աշքի առաջ էր դնում՝ ասելով. — «Կարդացեք այս հոդվածը».
- «Պարոն Գրանդե՛ն, Փարիզի ամենից շատ հարգված առևտրականներից մեկը, երեկ ինքնասպանություն գործեց, սովորականի պես բորսայում երևալուց հետո: Նա դեպուտատների պալատի նախագահին իր հրաժարականն ուղարկել էր արդեն, ինչպես և հրաժարվել էր առևտրական դատարանում իր դատավորի պաշտոնից: Բորսային միջնորդի և նոտարի, պարոնայք Ոռողենի և Սուշեի սնանկությունը նրան կործանել էին նյութապես: Պարոն Գրանդե՛ի վայելած հարգանքն ու վարկն այնպես էին, որ նա անպայման օգնություն կարող էր գտնել Փարիզի հրապարակում: Ցավալի է, որ այս պատվավոր մարդը տեղի է տվել հուսահատական առաջին մոմենտին» և այլն:
- Ես այդ գիտեի արդեն, — ասաց ծեր խաղողագործը նոտարին:
- Այս նախադասությունը քարացրեց Կրյուշոյին, որ հակառակ նոտարին հատուկ իր սառնարյունության, սարսուր զգաց մարմնում, մտածելով, որ հավանաբար փարիզաբնակ Գրանդե՛ն թերևս ապարդյուն կերպով աղերսել էր Սոմյուրի Գրանդե՛ի միլիոնները:
- Բայց նրա որդին, երեկ այնքան ուրախ...
- Նա դեռ ոչինչ չգիտե, — պատասխանեց Գրանդե՛ն նույն հանդարտությամբ:
- Ցտեսություն, պարոն Գրանդե՛, — ասաց Կրյուշոն, որ ըմբռնեց ամեն ինչ և շտապեց նախագահ դը Բոնֆոնի մոտ՝ նրան հանգստացնելու համար:
- Եթք Գրանդե՛ն տուն վերադարձավ, նախաճաշը պատրաստ էր: Տիկին Գրանդե՛ն, որի գիրկը նետվեց Էժենին նրան համբուրելու համար, սրտի այն խոր զեղումով, որ գաղտնի տառապանքն է պատճառում մեզ, արդեն նստել էր իր բարձրացված աթոռին և հյուսում էր ձմեռային թեզանիքներ:
- Դուք կարող եք նախաճաշել, — ասաց Նանոնը սանդուղքը չորս-չորս աստիճան իջնելով, — տղան նիրիում է քերովքեի պես: Օ՛հ, որքան համակրելի է նա փակ աշքերով: Մտա իր սենյակը և նրան կանչեցի: Ոչ մի ձայն:
- Թող քնի, — ասաց Գրանդե՛ն, — նա միշտ կլ ժամանակ կունենա այսօր արթնանալ՝ վատ լուրեր իմանալու համար:
- Ի՞նչ կա, — հարցրեց Էժենին իր սուրճի մեջ դնելով շաքարի երկու փոքրիկ կտոր, որ չգիտես քանի գրամ էին կշռում, և որ ծերուկն իր պարապ ժամերին կոտրատելով զվարձանում էր:
- Տիկին Գրանդե՛ն, որ չէր համարձակվել նույն հարցն անել, նայեց ամուսնուն:
- Նրա հայրն ինքնասպանություն է գործել:

- Իմ հորեղբա՞յրը... ասաց Էժենին:
- Խե՛ դժ երիտասարդ,— հառաջեց տիկին Գրանդեն:
- Այո՛, խե՛ դժ,— վերսկսեց Գրանդեն,— այլս ոչ մի սու չունի նա:
- Նա քնել է այնպես, կարծես աշխարհի թագավորը լինի,— քաղցր շեշտով ասաց Նանոն:
- Էժենին դադարեց ուտելուց: Նրա սիրտը կծկվեց այնպես, ինչպես կծկվում է, երբ առաջին անդամ սիրված էակի դժբախտության առաջացրած կարեկցությունը տարածվում է կնոջ ամբողջ մարմնում: Դեռասի առջիկը լաց եղավ:
- Չու չես ճանաչում քո հորեղբորը, ինչո՞ւ ես լաց լինում,— ասաց հայրը նրա վրա նետելով սոված վազրի այն հայացքներից մեկը, որ նա անպայման նետում էր իր ոսկու դեզերին:
- Բայց, պարոն,— ասաց սպասուիին,— ո՞վ կարող է գութ չունենալ այս խեղճ երիտասարդի համար, որ անշարժ նիրհում է, առանց տեղյակ լինելու իր բախտին:
- Ես քեզ հետ չեմ խոսում, Նանոն, դու լեզուդ քեզ պահիր:
- Էժենին այդ իսկ րոպեին սովորեց, թե կինը, որ սիրում է, պետք է միշտ թաքցնի իր զգացումները, նա չպատասխանեց:
- Հույս ունեմ, տիկին Գրանդե, որ մինչև իմ վերադառնալը նրան ոչինչ չեք ասի,— ասաց ծերունին:— Ստիպված եմ զնալ, պետք է գծեմ իմ մարզագետինների իրամը ձամփի եզերքում: Կեսօրվա նախաձաշին կվերադառնամ և իմ եղբորորդու հետ անձամբ կխոսեմ իր գործերի մասին:— Ինչ վերաբերում է քեզ, օրիորդ Էժենի, եթե դու լաց ես լինում այդ պՃնասերի համար, բավ է, զավակս: Նա շուտով մեկնելու է Հնդկաստան: Չու նրան այլս չես տեսնի...
- Հայրն իր զիլարկի եզերքից վերցրեց ձեռնոցները, հազար սովորական հանդարտությամբ, մի լավ տեղավորեց՝ մատներն իրար մեջ անցկացնելով և դուրս եկավ:
- Ա՛հ, մայրիկ, խեղդվում եմ,— բացազնչեց Էժենին, երբ իր մոր հետ առանձին մնաց:— Ես երեք այսպես չեմ տառապել:
- Տիկին Գրանդեն տեսնելով, որ առջիկը գունաթափ է լինում, բաց արեց պատուհանը, որպեսզի մաքուր օդ շնչի:
- Ես ինձ լավ եմ զգում,— ասաց Էժենին մի վայրկյան հետո:
- Այս ներվային հուզմունքը մինչև այդ օրը առերևույթ հանդարտ և սառն մի բնավորության մոտ, ազդեց տիկին Գրանդեի վրա, որ նայեց իր աղջկան համակրանքով լի հստակատեսությամբ, որ հասուիկ է մայրերին՝ իրենց գուրգուրանքների առարկայի հանդեպ, և նա գուշակեց ամեն ինչ: Բայց ձիշտն ասած, հունգարացի նշանափոր քույրերի կյանքը, որ բնության սխալմունքով իրար էին կցված, ավելի մտերմիկ չեր, քան Էժենիի և իր մոր կյանքը, որ միշտ միասին էին եղել այդ լուսամուտի խոռոշում, միասին՝ եկեղեցում և քնի մեջ շնչում էին միևնույն օդը:
- Իմ խեղճ զավակ,— ասաց տիկին Գրանդեն՝ ափերի մեջ առնելով նրա գլուխը իր կրծքին սեղմելու համար:

Այս խոսքերի վրա աղջիկը բարձրացրեց զլուխը, իր նայվածքով հարցաքննեց մորը, գուշակեց նրա թաքուն մտքերը և ասաց.

— Ինչո՞ւ համար նրան ուղարկել Հնդկաստան: Եթե դժբախտ է, մի՞թե ավելի ճիշտ չէ, որ նա մնա այստեղ: Մեր ամենից մոտ ազգականը չէ՝ միթե:

— Այո, զավակս, խիստ բնական կլիներ դա. բայց քո հայրն ունի իր դրդապատճառները: Մենք պարտավոր ենք հարգել դրանք:

Մայր ու աղջիկ նստեցին լուս, մեկն իր բարձրացված աթոռին, մյուսը իր փոքր թիկնաթռողին և երկուսն էլ վերսկսեցին իրենց աշխատանքը: Իր նկատմամբ մոր ցուցաբերած սրտի զարմանալի նրբանկատության առաջացրած երախտագիտությունից ճնշված, Էժենին նրա ձեռքը համբուրեց՝ ասելով.

— Որքա՞ն բարի ես, իմ սիրելի մայր:

Այս բառերից ձառագայթեց մոր ծերացած դեմքը, որ թոշնած էր անվերջ տառապանքներից:

— Նրան լա՞վ ես գտնում,— հարցրեց Էժենին:

Տիկին Գրանդեն միայն ժպիտով պատասխանեց, ապա մի վայրկյան լոելուց հետո՝ ցած ձայնով ասաց.

— Մի՞թե արդեն սիրում ես նրան: Այդ լավ չէր լինի:

— Լավ չէր լինի,— շարունակեց Էժենին,— ինչո՞ւ: Դու հավանում ես նրան, Նանոնն էլ է հավանում: Ինչո՞ւ ես չպիտի հավանեմ: Լավ, մայրիկ, նրա նախաձաշի սեղանը պատրաստենք:

Նա մի կողմ դրեց իր աշխատանքը. նույնն արեց և մայրը, ասելով.

— Դու գժվել ես:

Բայց նա հարմար գտավ արդարացնել իր աղջկա խենթությունը՝ մասնակից լինելով դրան:

Էժենին կանչեց Նանոնին:

— Ուրիշ ի՞նչ եք ցանկանում, օրիորդ:

— Նանեն, անհրաժեշտ է կեսօրվա համար սերուցք ունենալ:

— Ա՛, կեսօրվա՝ համար. լավ,— պատասխանեց պառավ սպասուիին:

— Լավ, նրան թանձր սուրճ տուր, ես դը գրասեններից լսել եմ, որ սուրճը Փարիզում թանձր էն պատրաստում: Շատ սուրճ լցրու:

— Բայց որտեղի՞ց ձարեմ:

— Գնի՞ր:

— Իսկ եթե պարոնը ինձ հանդիպի՞ :

— Նա իր մարզագետիններումն է:

- Վազում եմ: Բայց պարոն Ֆեսարն արդեն ինձ հարցրեց, երբ նրանից մոմ էի գնում, թէ երեք քուրմերը մեզ մո՞ւ են: Ամբողջ քաղաքն իմանալու է մեր անհարմար վարմունքը:
- Եթե երեք քո հայրը,— ասաց տիկին Գրանդեն,— նկատի մի որևէ բան, նա ընդունակ է մեզ ծեծելու...
- Լավ, նա մեզ կծեծի, մենք կլ նրա հարվածները կնդունենք ծնկաշոք:
- Իրեն պատասխան տիկին Գրանդեն աչքերը երկինք բարձրացրեց: Նանոնք գլխանոցը դրեց և դուրս եկավ: Էժենին հանեց սպիտակ սփոռցներ, գնաց բերելու նաև մի քանի ողկույզ այն խաղողներից, որ նա շտեմարանում պարանից կախելով զվարճացել էր. նա թեթև քայլերով անցավ միջանցքից՝ իր հորեղբորորդուն չարբնացնելու համար. նա չկարողացավ իրեն զսպել և դրոնից լսեց նրա հանդարտ և համաշափ շնչառությունը:
- Դժբախտությունը հսկում է նրա սնարին, երբ նա հանդարտ քնած է,— ասաց նա ինքն իրեն:
- Նա խաղողի ամենականաշ տերևներից վերցրեց, դրանց վրա գեղեցիկ դասավորեց խաղողը, որպես մի փորձված բուֆետապան և հաղթական կերպով դրեց սեղանի վրա: Նա խոհանոցից, իր հոր հաշված տանձերից գողացավ և բուրգի նման դիզեց տերևների մեջ: Նա գնում էր, զալիս, վազվզում, ցատկուտում: Նա շատ կկամենար իր հոր ամբողջ տունը ցամաքեցնել, բայց նրա հայրն ամեն ինչ փակ էր պահում: Նանոնք բերեց երկու թարմ հավկից: Երբ Էժենին նկատեց այդ հավկիցները՝ ցանկություն ունեցավ համբուրգել նրան:
- Լանդի ազարակապանը ձու ուներ իր զամբյուղում. ես նրանից խնդրեցի, և նա չմերժեց՝ ինձ հաձելի լինելու համար, անուշիկը:
- Երկու ժամ տևող պատրաստությունից հետո, որի ընթացքում Էժենին քսան անգամ թողեց իր աշխատանքը տեսնելու համար, թէ սուրճը լավ եփվում է, ականջ դնելու այն աղմուկին, որ իր հորեղբորորդին էր հանում վեր կենալիս, վերջապես նրան հաջողվեց մի շատ պարզ, ոչ թանկ նախաճաշ պատրաստել, որը սակայն իրենց տան արմատացած սովորությունների խիստ խախտումն էր: Նրանք սովորություն ունեին կեսօրվա նախաճաշը ոտի վրա անելու: Ամեն մեկն առնում էր մի կտոր հաց, մի պտուղ կամ կարագ և մի բաժակ գինի: Տեսնելով, որ սեղանը կրակի մոտ էր դրված և աթոռներից մեկն իր հորեղբորորդու ճաշասարքի առաջ, տեսնելով պտուղներով լի երկու պնակը, ձվամանը, ձերմակ գինու շիշը, հացը և կոտրտված շաքարը ափսեում, Էժենին իր ամբողջ կությամբ սարսաց՝ այդ ժամանակ միայն մտածելով այն հայացքների մասին, որ հայրը կարող էր իր վրա նետել, եթե հանկարծ վրա հասներ: Այդ պատճառով էլ հաճախակի նայում էր պատի ժամացույցին, հաշվելու համար, թէ իր հորեղբորորդին պիտի կարողանա նախաճաշել հոր վերադարձից առաջ:
- Հանգստացիր, Էժենի, եթե հայրդ վերադառնա՝ ամեն ինչ ինձ վրա կվերցնեմ,— ասաց տիկին Գրանդեն:

Էժենին չկարողացավ պահել իր արցունքները:

— Ո՛հ, իմ բարի մայր,— բացականչեց նա,— ես բավականաշափ չեմ սիրել թեզ...

Շառլը մի երգ մրմուալով՝ իր սենյակում հազար անգամ անցուդարձ անելուց հետո, ցած իշավ վերջապես: Բարեբախտաբար ժամը միայն տասնմեկն էր: Փարիզեցին... Նա այնքան պշրանքով էր հագնվել, կարծես թէ Շոտլանդիայում ճամփորդող ազնվական կնոջ դդյակումն էր գտնվում: Նա

ներս մտավ ժպտուն և սիրալիր դեմքով, որն այնքան լավ էր սազում երիտասարդությանը և որը տխուր հրձվանք պատճառեցճառեց Էժենիին: Նա իր Անժուի դրյակների կործանումը կատակի տվեց և մեծ ուրախությամբ հորեղբորկնոց հետ խոսակցության բռնվեց:

— Լավ անցկացրի՞ք գիշերը, իմ սիրելի հորեղբորկին, և դո՞ւք, զարմուիիս:

— Լավ, պարոն: Իսկ դո՞ւք,— հարցրեց տիկին Գրանդեն:

— Շատ լավ:

— Քաղցած եք երևի, իմ զարմիկ, սեղան նստեցեք,— ասաց Էժենին :

— Բայց ես երբեք չեմ նախաձաշում կեսօրից առաջ և այդ ժամին եմ միայն զարթնում: Միայն թե ձանապարհին այնքան վատ եմ կերել, որ չեմ մերժի: Արդեն...

Նա Բրեգեի արտադրած ամենասիրուն ժամացույցներից մեկը հանեց.

— Պա՛հ, միայն ժամը տասնմեկն է: Ես վաղ եմ արթնացել:

— Վա՛դ...— ասաց տիկին Գրանդեն:

— Այո, բայց ուզում էի կարգավորել գործերս: Լավ, սիրով կուզենայի մի բան ուտել, հավ կամ կաքավ:

— Սո՞ւրբ կույս,— բացազանչեց Նանոնը՝ լսելով այս խոսքերը:

«Կարավ», մտածում էր Էժենին, որ կուզենար իր ամբողջ խնայողությունը տալ մի կաքավի:

— Եկեք նստեցեք,— ասաց տիկին Գրանդեն:

ՊՃԱՎՈՂ այնպես նստեց բազկաթոռին, ինչպես գեղեցիկ կինը իր բազմոցի վրա տեղավորվելիս: Էժենին և իր մայրը վերցրին աթոռները և նստեցին նրա մոտ կրակի դիմաց:

— Դուք միշտ այստե՞ղ եք ապրում,— հարցրեց Շառլ՝ գտնելով, որ սրահը ցերեկն ավելի տգեղ էր, քան գիշերվա լույսով:

— Միշտ,— պատասխանեց Էժենին, նրան դիտելով,— բացի այգեկութի օրերից: Այդ դեպքում գնում ենք օգնելու Նանոնին, և բոլորս էլ Նուայեի վանքում ենք գիշերում:

— Դուք երբե՞ք չեք գրոսնում:

— Երբեմն կիրակի օրերը, երեկոյան ժամերգությունիցհետո, երբ եղանակը լավ է,— ասաց տիկին Գրանդեն.— գնում ենք կամուրջի վրա կամ դիտելու խոտի հունձը:

— Այստեղ թատրոն ունե՞ք:

— Թատրոն գնա՛լ,— բացականչեց տիկին Գրանդեն,— դերասանների նայե՛լ: Բայց պարոն, մի՞թե չգիտեք, որ դա մահացու մեղք է:

— Հրամեցեք իմ սիրելի պարոն:— ասաց Նանոնը, հավկիթները բերելով,— մենք ձեզ կիրամցնենք թերխաշ վառեկներ:

— Օ՛, թարմ հավկիթներ,— ասաց Շառլը, որ փարթամ կյանքի վարժվածների նման, այլևս չեր մտածում իր կաքավի մասին:— Բայց սա հիանալի է, միայն թե՝ իմ սիրելի զավակ, երե կարագ ունեք:

— Ա՛հ, կարա՞գ, բայց այդ դեպքում դուք կզրկվեք կարկանդակից:

— Կարագ բեր, Նանո՞ն, — գոչեց Էժենին:

Դեռատի աղջիկը դիսում էր իր հորեղբորորդուն, երբ սա պատառներ էր վերցնում և այնքան հաճույք զգում, որքան Փարիզի ամենից զգայուն գրիգետուիին կզա, դիտելով մի մելոդրամ, ուր անմեղությունն է հաղթանակում: &իշտ է, որ Շառլը դաստիարակված լինելով շնորհագեղ մոր կողմից, աշխարհիկ մի կնոշից կատարելազործված՝ ուներ շնորհալի, նրբացած, պշրական շարժուձևներ, որոնք նման էին մի մանկահասակ տարփուիու շարժումներին: Դեռատի աղջկա սրտացավությունն ու խանդադատանքը իրավմամբ մազնիսական ազդեցություն ունեն: Ուստի Շառլը տեսնելով, որ իր հորեղբորկնոց և հորեղբորաղջկա ուշադրության առարկան է դարձել, չկարողացավ խուսափել այն զգացումների ազդեցությունից, որոնք իր կողմն էին հոսում և այսպես ասած՝ իրեն ողողում: Նա Էժենիի վրա զցեց զգվանքից և գորովից փայլող մի հայացք, որ կարծես ժպտում էր: Երկար դիտելով Էժենիին՝ նա նկատեց նրա անարատ դեմքի գծերի գեղեցիկ ներդաշնակությունը, նրա անմեղունակ կեցվածքը, նրա աչքերի ոյութական հստակությունը, ուր կայծկլտում էին սիրո նորածին խոհերը, և ուր ցանկությունը գերծ էր հեշտանքից:

— Արդարեւ, իմ սիրելի զարմուիի, եթե դուք օպերայում մեծ արդուզարդով մեծ օթյակում գտնվելու լինեիք, ես կարծում եմ, որ հորեղբորս կինը իրավացի կլիներ, դուք այնտեղ շատ մեղքերի պատճառը կլինեիք՝ տղամարդկանց ցանկության և կանանց նախանձի մղելով:

Այս հաճոյախոսությունը սեղմեց Էժենիի սիրտը, որն ուրախությունից սկսեց բարախել, թեև նա ոչինչ չըմբռնեց Շառլի ասածից:

— Օ՛, հորեղբորորդի, դուք ուզում եք ծաղրել մի խեղճ պրովինցիալուիու:

— Եթե դուք ինձ լավ ճանաչեիք, զարմուիս, կիմանայիք, որ ատում եմ հեզնանքը, որը թոշնեցնում է սիրտը և վիրավորում բոլոր զգացումները...

Եվ շատ շնորհալի ձևով կերավ կարագով հացը:

— Ոչ, հավանաբար, ես չունեմ անհրաժեշտ սրամտությունը ուրիշներին ծաղրելու համար, և այդ պակասը ինձ շատ վնասներ է հասցնում: Փարիզում մարդիկ կարողանում են սպանել մի ուրիշ՝ ասելով «քարի սիրտ ունի»: Այս նախադասությունը ուզում է ասել, «չեղճ մարդը հիմար է ոնզեղջյուրի նման»: Բայց ծաղրը ինձ չի հասնում, որովհետև հարուստ եմ. և մարդիկ լավ են հասկանում, որ դաշտում ամեն ձեր ատրճանակով ընդունակ եմ առաջին հարվածով և երեսուն ոտք հեռավորությունից՝ որևէ տիկնիկ գետին տապալել:

— Այն, ինչ դուք ասում եք, ցույց է տալիս, որ բարի սիրտ ունեք, — ասաց տիկին Գրանդեն:

— Դուք շատ գեղեցիկ մատանի ունեք, — ասաց Էժենին, կարելի՞ է տեսնել:

Շառլը մեկնեց ձեռքը՝ մատանին դեպի մատի ծայրը հրելով, և Էժենին կարմրեց մատների ծայրով իր հորեղբորորդու վարդագույն եղունգներին հպվելով:

— Նայեցեք, մայր իմ, որքա՞ն գեղեցիկ աշխատանք է:

— Օ՛, ահազին ոսկի է պարունակում,— ասաց Նանոնը սուրձը բերելով:

— Ի՞նչ է այդ,— հարցրեց Շառլը ծիծաղելով:

Նա ցույց էր տալիս մի երկարաձև, մուգ հողե աման՝ ներսը հախճապակի, եզերքը մոխրի շերտով, որի մեջ թափվում էր սուրձը, երբ տաքությունից փրփրում էր:

— Սա **խաշված** սուրձ է,— ասաց Նանոնը:

— Օ, իմ սիրելի հորեղբորկին, ես գոնե աստի բարերար մի հետք թողնեմ, որ այստեղով անցել եմ: Շատ ետ եք մնացել: Ես ձեզ կսովորեցնեմ Շափթալի սիստեմի սրճամանի մեջ լավ սուրձ պատրաստել:

Եվ նա փորձեց բացատրել Շափթալի սիստեմի սրճամանի ձևը:

— Լավ, եթե այդքան ժամանակ է պահանջում դա,— ասաց Նանոնը,— հարկ կլինի, որ մարդ իր ամբողջ կյանքը դրա պատրաստությամբ անցկացնի: Ես երբեք էլ այդ ձևով սուրձ չեմ պատրաստի: Այո՛ : Ո՞վ խոտ պիտի տա մեր կովին, երբ իմ ամբողջ ժամանակը սուրձ պատրաստելով անցկացնեմ:

— Ես ինքս կպատրաստեմ,— ասաց Էժենին:

— Երեխա,— ասաց տիկին Գրանդեն, իր աղջկան նայելով:

Այս բառի վրա, որ հիշեցրեց, թե շուտով ի՞նչ վիշտ էր թափվելու այդ դժբախտ երիտասարդի զիսին, երեք կանայք էլ լուցին և նայեցին նրան զթասրտությամբ, մի բան, որ նա նկատեց:

— Ի՞նչ կա, իմ զարմուհի:

— Սո՛ւս,— ասաց տիկին Գրանդեն Էժենիին, որ պատրաստվում էր պատասխանել:— Դու գիտես, զավակս, որ քո հայրը ինքը ստանձնեց խոսել պարոնի հետ...

— Ինձ Շառլ անվանեցեք,— ասաց երիտասարդ Գրանդեն:

— Ա՛, ձեր անունը Շա՞ռլ է: Ի՞նչ գեղեցիկ անուն, — բացազնչեց Էժենին:

Նախազգացված դժբախտությունները գրեթե միշտ էլ իրականանում են: Ճիշտ այդ պահին Նանոնը, տիկին Գրանդեն և Էժենին, որ առանց սարսուով չեն մտածում ծեր տակառագործի վերադարձի մասին, լսեցին դուռն մի հարված, որի ձայնը իրենց լավ ծանոթ էր:

— Ահավասիկ հայրիկը,— ասաց Էժենին:

Եվ նա փախցրեց շաքարամանը, մի քանի կտոր շաքար ծածկոցի վրա զցելով: Նանոնը հավկիթների ամանը տարավ: Տիկին Գրանդեն ուղղվեց սարափահար եղնիկի նման: Առաջացավ խուճապային մի վախ, որից Շառլը զարմացավ առանց կարողանալու բացատրել այն:

— Բայց ի՞նչ կա,— հարցրեց նա:

— Ահա հայրս վերադարձավ,— ասաց Էժենին:

— Հետո՞...

Պարոն Գրանդեն ներս մտավ, նայեց սեղանին իր սրատես աչքերով, նայեց Շառլին և տեսավ ամեն ինչ:

— Օ՛, օ՛, դուք ձեր զարմիկին տոն եք սարքել, լավ է, շատ լավ, խիստ շատ լավ,— ասաց նա՝ առանց կակագելու:— Եթի կատուն վազվում է տանիքում, մկները խաղում են տախտակամածի վրա:

«Տհ՞ն...»— ինքն իրեն ասաց Շառլը, անընդունակ պատկերացնելու այս ընտանիքի սովորություններն ու ապրելակերպը:

— Ինձ տուր իմ բաժակը, Նանոն,— ասաց ծերուկը:

Էժենին բերեց բաժակը: Գրանդեն գրպանից հանեց եղջյուրի կորով մի դանակ, լայն շեղբով կտրեց մի տարտին, վերցրեց մի քիչ կարագ, խնամքով քսեց թխվածքի վրա և ոտքի կանգնած՝ սկսեց ուտել: Այդ րոպեին Շառլն իր սուրճի մեջ շաքար էր զցում: Հայր Գրանդեն նկատեց շաքարի կտորները, նայեց իր կնոջը, որը գունատվեց և ետ քաշվեց: Գրանդեն խեղճ պառավի ականջին մոտենալով՝ ասաց.

— Այսքան շաքար որտեղի՞ց է:

— Նանոնը Ֆեսարի մոտից բերեց, տանը չունեինք:

Անկարելի է երևակայել այն խոշոր շահագրգությունը, որը այդ լուս տեսարանն էր ներկայացնում երեք կանանց համար. Նանոնը դուրս էր եկել խոհանոցից և նայում էր դեպի սրահը՝ տեսնելու, թե դեպքերն ինչպես կընթանան: Շառլը համտես անելով իր սուրճը՝ շատ դառն գտավ այն, փնտրեց շաքարը, որը Գրանդեն թաքցրել էր արդեն:

— Ի՞նչ եք ուզում, իմ եղբորորդի, — հարցրեց նրան ծերուկը:

— Շաքար:

— Կաթ ավելացրեք, — պատասխանեց տանտերը, — ձեր սուրճը կքաղցրանա:

Էժենին վերցրեց շաքարամանը, որը Գրանդեն թաքցրել էր, և վերստին դրեց սեղանի վրա, հանդարտ կերպով իր հորը նայելով: Արդար փարիզուիին, որ իր սիրահարի փախուստը դյուրացնելու համար իր տկար ձեռներով մետաքսահյուս մի ելարան է բռնում, ավելի քաջություն ցույց չի տալիս, քան Էժենին այն պահին, երբ շաքարը նորից սեղան էր բերում: Սիրահարը կվարձատրի փարիզուիուն, որը նրան ցույց կտա իր կապտած թևերը, որոնց յուրաքանչյուր վիրավորված երակը կողողվի արցունքներով, համբույրներով և կրուժվի հաճույքից. Մինչդեռ Շառլը երեք չէր իմանալու խոր հուզումների գաղտնիքը, որոնք փշրում էին Էժենիի սիրտը, որ այդ բոպեին ծեր տակառագործի հայացքներից շանթահար էր եղել:

— Դու չես ուտում, կի՞նս:

Խեղճ ստրկուիին առաջ եկավ, ողորմելի ձևով կտրեց մի կտոր հաց և վերցրեց մի տանձ: Էժենին իր հորը համարձակորեն խաղող հրամցրեց, ասելով.

— Ճաշակիր իմ պահածո խաղողից, հա՛յր: Հորեղբորորդի, դուք ել այդ ուտելու եք, չէ՞: Ես ինքս եմ բերել այս սիրուն ողկույզները ձեզ համար:

— Ա՛, եթե ոչ ոք նրանց արգելք չլինի, նրանք ողջ Սովորությունը կողոպուտի կմատնեն ձեզ համար, եղբորորդի: Երբ վերջացնեք, միասին պարտեզ կզնանք, ես ձեզ կասեմ այնպիսի բաներ, որոնք քաղցր չեն:

Էժենին և իր մայրը Շառլի վրա դարձրին իրենց հայացքները, որոնց արտահայտությունից երիտասարդը չէր կարող սխալվել:

— Ի՞նչ են նշանակում այդ խոսքերը, հորեղբայր: Իմ դժբախտ մոր մահից ի վեր... (այս երկու բառերն ասելիսնրա ձայնը թուլացավ) այլևս ինձ համար դժբախտություն չի կարող գոյություն ունենալ...

— Իմ եղբորորդի, ո՞վ կարող է իմանալ այն վշտերը, որոնցով աստված փորձում է մեզ,— ասաց նրան տիկին Գրանդեն:

— Տա՛, տա՛, տա՛,— ասաց Գրանդեն,— ահավասիկ հիմարություններն սկսվում են: Ցավով եմ նայում, եղբորորդի, ձեր սպիտակ ձեռքերին:

Եվ նրան ցույց տվեց, այսպես ասած, ոչխարի թիակներ, որոնցով բնությունը նրա բազուկներն եր վերջացրել:

— Սիա ձեռքեր, որոնք փող հավաքելու համար են ստեղծված: Դուք մեծացել եք՝ ձեր ոտքը դնելով այնպիսի կաշու մեջ, որով շինվում են թղթապանակներ, ուր մենք արժեթղթեր ենք պահում: Վա՛տ է, շա՛տ վատ:

— Ի՞նչ եք ուզում ասել, հորեղբայր: Թող կախվեմ, եթե մի բան հասկանում եմ:

— Եկեք,— ասաց Գրանդեն:

Ազահն իր դանակի շեղբը շխկացրեց, ճերմակ զինու մնացորդը խմեց և բացեց դուռը:

— Իմ հորեղբորորդի՝, քա՛ջ եղիք:

Երիտասարդ աղջկա շեշտը Շառլի արյունը սառեցրեց և նա մահացուցիչ մտատանջություններով լի՛ հետևեց իր ահավոր ազգականին: Էժենին, նրա մայրը և Նանոնը անդիմադրելի հետաքրքրությունից մղված, հավաքվեցին խոհանոցում գաղտնի կերպով դիտելու երկու դերակատարների այն տեսարանը, որ տեղի էր ունենալու խոնավ, փոքր պարտեզում, ուր հորեղբայրը իր եղբորորդու կողքով քայլեց նախ լոռությամբ: Գրանդեն չէր նեղվում Շառլին իմաց տալու նրա հոր մահը, բայց մի տեսակ կարեկցանք էր զգում նրա հանդեպ, որ առանց գրոշի է մնացել և փնտրում էր հարմար նախադասություններ՝ մեղմացնելու այդ անողոք ճշմարտության արտահայտությունը: «Դուք կորցրիք ձեր հորը», դժվար չէր ասել: Հայրերը որդիներից առաջ են մեռնում: Բայց «Դուք այլևս ոչ մի հարստություն չունիք». այդ խոսքի մեջ էին աշխարհի բոլոր դժբախտությունները: Եվ ծերուկը երրորդանգամ մեջտեղի ծառուղու շրջանը կատարեց, որի ավագները նրա ոտքերի տակ խշխում էին: Կյանքի ճակատագրական հանգամանքներում՝ մեր հոգին սերտորեն կապվում է այն վայրերի հետ, ուր ուրախությունն ու վիշտն են հասնում մեզ: Ուստի առանձին ուշադրությամբ Շառլ զննում էր այդ փոքր պարտեզի աստիճանները, դեղնտրակ, թափվող տերևները, պատերի ավերումները, պտղատու ծառերի տարօրինակ ձեւերը — գեղատեսիլ մանրամասնություններ, որոնք նրա հիշողության մեջ մնալու էին քանդակված և հզոր ապրումներին հատուկ վերիիշողության օրենքով՝ հավիտենականորեն խառնված այդ գերազույն ժամին:

- Տաք և գեղեցիկ եղանակ է,— ասաց Գրանդեն՝ օդի մի մեծ զանգված ներս քաշելով:
- Այո, հորեղբայր... բայց ինչի՞ համար...
- Դե՛ լավ, զավա՛ կս, քեզ վատ լուրեր ունեմ հաղորդելու: Քո հայրը շատ վատ է...
- Ուրեմն ինչո՞ւ եմ ես այստեղ: Նանոն,— գոռաց նա,— սուրհանդակի ձիե՞ք: Այս երկրում ես անպայման կցտնեմ մի կառք,— ավելացրեց նա՝ հորեղբոր կողմը դառնալով, որ անշարժ սպասում էր:
- Զիերն ու կառքն անօգուտ են,— պատասխանեց Գրանդեն՝ ոյիտելով Շառլին, որ մնաց լուռ և ակնապիշ:— Այո, իմ խեղճ զավակս, դու արդեն գուշակում ես: Նա մեռել է: Բայց այդ ոչինչ, ավելի վատը կա, նա ինքնասպանություն է գործել...
- Իմ հա՞յրը...
- Այո: Բայց այդ էլ ոչինչ: Թերթերը խծրծում են դրա մասին, կարծես իրենց իրավունքը լինի: Ա՛ռ, կարդա՛:
- Գրանդեն, որ վերցրել էր Կրյուշոյի թերթը, Շառլի առաջը դրեց ճակատագրական հոդվածը: Այդ պահին դժբախտ երիտասարդը դեռևս երեխա, դեռևս այն տարիքում, երբ զգացումները բնական ձևով են արտահայտվում, փղձկաց, արցունքները հորդեցին:
- «Լա՛վ, լա՛վ— ինքն իրեն ասաց Գրանդեն:— Նրա աչքերնինձ սարսափ էին պատճառում: Հիմա ոք լաց եղավ, նա արդեն ազատված է»:
- Այս բոլորը դեռ մեծ քան չեն, իմ խեղճ եղբորորդի,— բարձրաձայն վերսկսեց Գրանդեն՝ առանց հետաքրքրվելու, թե Շառլը լս՞ում է իրեն:— Ոչինչ, դու կմխիթարվես այդ բոլորից, բայց...
- Երբե՞ք, երբե՞ք: Հա՛յր իմ, հա՛յր իմ...
- Նա քեզ կործանել է. դու առանց փողի ես մնացել:
- Այդ ինչի՞ սէ պետք: Ո՞ւր է իմ հայրը... իմ հա՞յրը:

Լացն ու հեծկլտանքը ահավոր ձևով թնդում էին այդ պատերի մեջ և կրկնվում արձագանքների ձևով: Երեք կանայք, գութից ցավաբեկ, լաց էին լինում: Լացը նույնքան վարակիչ է, որքան ծիծաղը: Շառլը, առանց լսելու իր հորեղբոր սասաները, վազեց դեպի բակ, գտավ սանդուղքը, բարձրացավ իր սենյակն ու ընկավ անկողնի վրա, դեմքը վերմակի մեջ, որպեսզի ազգականներից հեռու՝ ազատ լաց լինի:

— Պետք է թողնել, որ առաջին տեղատարափն անցնի,— ասաց Գրանդեն սրահ մտնելով, ուր Էժենին և մայրը շտապով նստած իրենց տեղը՝ դողդոջուն մատներով աշխատում էին, աչքերի արցունքը չրացնելուց հետո:— Բայց այս երիտասարդը ոչ մի բանի պիտանի չեն, նա ավելի զբաղվում է մեռելներով, քան թե որամով:

Էժենին սարսուր զգաց, լսելով, թե ինչպես է հայրն արտահայտվում ամենանվիրական վշտի մասին: Այդ բոպեից նա սկսեց իր հորը դատել: Շառլի հեծկլտանքը թեև խլացած, թնդում էր այդ արձագանքող տանը: Եվ նրա խոր տնքոցը, որ կարծես հողի խորքից էր գալիս, միայն երեկոյան մոտ դադարեց՝ աստիճանաբար թուլանալուց հետո:

— Դժբա՛խտ երիտասարդ, — հառաչեց տիկին Գրանդեն:

Ճակատագրակա՞ն հառաչանք: Հայր Գրանդեն նայեց իր կնոջը, Էժենիին և շաքարամանին, վերհիշեց արտակարզ նախաձաշը, որը հատկապես պատրաստել էին իր դժբախտ ազգականի համար և ծառացավ սրահի մեջ:

— Հը՛, հույս ունեմ, — ասաց նա իր սովորական հանդարտությամբ, — որ դուք չեք շարունակելու ձեր շոյլությունները, տիկին Գրանդեն: Ես ձեզ իմ դրամը չեմ տալիս, որ այդ շոպիկ երիտասարդին շաքարով խեղդեք:

— Այդ բանում իմ մայրը ոչ մի դեր չի ունեցել, — ասաց Էժենին: — Այդ ես ի...»

— Որովհետև արդեն չափահաս ես, ուրեմն այդ պատճառ՝ վ է, որ ուզում ես ինձ ընդդիմանալ, մտածիր, Էժենի... — վրա բերեց Գրանդեն՝ ընդհատելով աղջկան:

— Հայր իմ, ձեր եղբորորդուն, ձեզ մոտ, հարկավոր էր, որ ոչինչ չպակասի...

— Տա՛, տա՛, տա՛, — ասաց տակառագործը խրոմատիկ՝ չորս հաջորդական տոնով, — իմ եղբոր զավակը այսպես, իմ եղբոր զավակը այնպես: Շառլ մեզ համար մի բան չէ, նա ոչ մի սու, ոչ մի գրոշ չունի. նրա հայրը սնանկացել է. և երբ այդ պճառակար մի կուշտ լաց կլինի՝ կմեկնի այստեղից. ես չեմ ցանկանում, որ նա հեղաշրջի իմ տան կյանքը:

— Ի՞նչ է նշանակում սնանկանալ, հա՛յր, — հարցրեց Էժենին:

— Սնանկանալ, — ասաց հայրը, — նշանակում է կատարել մարդու համար ամենաանպատվարեր գործը:

— Այդ պետք է, որ մեծ մեղք լինի, — ասաց տիկին Գրանդեն և մեր եղբայրը պետք է որ դժոխապարտ լինի:

— Էլի քո սաղմոսն սկսեցիր, — ասաց նա կնոջը՝ ուսերը թոթվելով: — Սնանկանալ, Էժենի, — վերսկսեց նա, — գողություն է, որը օրենքը դժբախտաբար պաշտպանում է: Մարդիկ իրենց ունեցվածքը վստահել են Գիյոմ Գրանդեն՝ նրա պատվավոր և պարկեշտ մարդու համբավի համար, սակայն նա ամեն ինչ յուրացրել է և թողել նրանց միայն աշքերը՝ լալու համար: Մեծ ձանապարհների դողն ավելի գերադասելի է, քան սնանկացողը: Առաջինը հարձակվում է ձեզ վրա և դուք կարող եք ձեզ պաշտպանել. նա իր գլուխն է վտանգում, իսկ երկրորդը...: Վերջապես Շառլ անպատված է:

Այս խոսքերն իրենց ամբողջ ծանրությամբ ճնշիչ կերպով արձագանքեցին խեղճ աղջկա սրտում: Այնքան մաքուր, որքան անտառների խորքում բուսած մի նուրբ ծաղիկ, նա բոլորովին անզիտանում էր աշխարհի քարացած ըմբռնումները, նրա ստապատիր դատողությունները և սովիստությունները: Հետևաբար նա ընդունեց այդ զարհուրելի բացատրությունը, որ իր հայրը դիտումնավոր կերպով տալիս էր սնանկության մասին, առանց բացատրելու ակամա սնանկության և կանխամտածված սնանկության տարբերությունը:

— Լավ, հայր, ուրեմն դուք չկարողացա՞ք արգելել այդ դժբախտությունը:

— Իմ եղբայրն ինձնից խորհուրդ չհարցրեց, հետո նա պարտ է չորս միլիոն:

- Ի՞նչ քան է միլիոնը, հայր,— հարցրեց նա երեխային հատուկ միամտությամբ, որ հանկարծ կարծում է, թե գտել է այն, ինչ ցանկանում էր:
- Միլիոնը,— ասաց Գրանդեն:— Դա մի միլիոն քսան սունց է, հինգ հատ քսան սունց անում է հինգ ֆրանկ:
- Աստված իմ, աստված իմ,— հառաչեց Էժենին,— քայց իմ հորեղբայրը ինչպէ՞ս է կարողացել չորս միլիոն միայն ինքն ունենալ: Ֆրանսիայում մի՞ թե կա մեկ ուրիշը, որ նույնքան միլիոններ ունենա:
- Հայր Գրանդեն կզակը շոյելով ժպտում էր, իսկ քթի ուոր կարծես մեծանում էր:
- Բայց ի՞նչ է լինելու Շառլ՝ իմ հորեղբորդին:
- Նա մեկնելու է Հնդկաստան, ուր ըստ իր հոր ցանկության, ստեղծելու է իր կարողությունը:
- Բայց փող ունի՞ ճամփորդելու համար:
- Ես նրան կվճարեմ իր ճամփորդության ծախսը... մինչև... այո, մինչև Նանս:

Էժենին փաթաթվեց իր հոր վզովը:

— Ա՛հ, հա՛յր, դուք բարի եք, դո՛ւք:

Նա իր հորը, որի խիոճը մի փոքր տանջում էր իրեն, գրեթե ամոթապարտ թողնելու ուժգնությամբ էր համբուրում:

- Շա՞տ ժամանակ է հարկավոր մի միլիոն հավաքելու համար,— հարցրեց Էժենին:
- Բա՛հ,— պատասխանեց տակառագործը,— դու զիտես ինչ քան է նապոլեոն ոսկեղբամբ, ուրեմն նրանից անհրաժեշտ է հիտուն հազար հատ՝ մի միլիոն դարձնելու համար:
- Մայր, մեր ազգականի համար պատարագ անել տանք:
- Ես էլ էլ մտածում,— պատասխանեց մայրը:
- Հենց այդ է. միշտ մտածեցեք փող ծախսելու մասին,— գոչեց հայրը:— Մի՞թե կարծում եք, որ մենք հայուրներ ու հազարներ ունենք:

Այդ պահին մի խուլ հառաջանք, ավելի դժոխակ, քան բոլոր նախորդները, բարձրացավ ձեղնահարկից և սարսափեցրեց Էժենիին և նրա մորը:

- Նանո՞ն, շտապիր վեր բարձրանալ, չինք, թե նա ինքնասպանություն գործի,— ասաց Գրանդեն:— Պա՛հ, սա ի՞նչ քան է,— շարունակեց նա իր կնոջ և աղջկա կողմը դառնալով, որոնք նրա ենթադրության պատճառով իսկ գունատվել էին:— Ճեր երկուսի կողմից ոչ մի հիմարություն: Զեզ թողնում եմ: Գնում եմ զբաղվելու մեր հոլանդացիներով, որոնք մեկնում են այսօր: Հետո գնալու եմ Կրուշոյի մոտ, խոսելու նրա հետ այս բոլորի մասին:

Եվ նա գնաց: Երբ Գրանդեն իր ետևից փակեց դուռը, Էժենին և իր մայրը խոր շունչ քաշեցին: Մինչև այս առավոտ աղջիկը երբեք չեր նեղվել իր հոր ներկայությունից: Սակայն մի քանի ժամից ի վեր, բոպե առ բոպե, նրա զգացումներն ու գաղափարները փոփոխությունների էին ենթարկվում:

- Մայրիկ, մի տակառ գինին քանի՞ լուի արժե:
- Հայրդ իրենները վաճառում է հարյուրից հարյուրիցիսուն, երբեմն մինչև երկու հարյուր ֆրանկով, իմ իմացածի համաձայն:
- Երբ նա հազար շորս հարյուր տակառ գինի է հանո՞ւմ...
- Ճիշտ որ, զավակս, ես չգիտեմ դա ինչ կանի, հայրդ որ ինձ հետ երբեք իր գործերի մասին չի խոսում:
- Բայց այդ դեպքում հայրիկը պետք է, որ հարուստ լինի:
- Թերևս: Բայց պարոն Կրյուշոն ինձ ասել է, որ նա երկու տարի առաջ Ֆրուաֆոնի կալվածն է գնել: Այդ բանը նրան հավանորեն նյութապես նեղ դրության մեջ է գցել:

Էժենին այլս չկարողանալով որևէ բան ըմբռնել իր հոր հարստության մասին, դադարեցրեց իր հաշվումը:

— Նա ինձ չնկատեց, անուշիկը,— ասաց Նանոնը վերդառնալով:— Նա իր անկողնի վրա ընկած է հորթի նման և լաց է ինում Մազքաղենացու պես, կարծես մի ճշմարիտ օրինություն լինի: Ի՞նչ վիշտ կարող է ունենալ այս դժբախտ երիտասարդը:

— Գնանք նրան միփարելու, մայրիկ, շուտ և եթե դուռը բախեն, կիշնենք անմիջապես:

Տիկին Գրանդեն չկարողացավ հակառակել իր աղջկա ձայնի ներդաշնակությանը: Էժենին վսեմ էր. նա կին էր արդեն: Երկուսը միասին, բարախուն սրտով, բարձրացան Շառլի մոտ: Դուռը բաց էր: Երիտասարդը ո՞չ տեսնում էր և ոչ լսում: Արտասվաթոր, նա կցկտուր տնրոցներ էր արձակում:

— Որքա՞ն է նա սիրում իր հորը,— ասաց Էժենին ցած ձայնով:

— Անկարելի էր նրա այս խոսքերի շեշտի մեջ չնկատել իր կամքից անկախ սիրահարված մի սրտի հույսերը: Ուստի տիկին Գրանդեն իր աղջկա վրա ձգեց մայրական մի հայացք, ապա կամացուկ ականջին ասաց.

— Զգուշացի՞ր, դու կարող ես նրան սիրել:

— Նրան սիրե՞լ,— վրա բերեց Էժենին:— Ա՛յս, թե իմանայիր ի՞նչ ասաց իմ հայրը:

Շառլը դարձավ նրանց կողմը և ճանաչեց հորեղբոր կնոջը և աղջկան:

— Ես կորցրի իմ հորը, իմ դժբախտ հորը: Եթե նա ինձ վստահած լիներ իր դժբախտության գաղտնիքը՝ մենք միասին կաշխատեինք այն դարմանել: Աստված իմ, իմ լավ հայրը, ես այնքան վստահ էի, թե նորից կտեսնեմ նրան, որ կարծում եմ, սառնորեն համբուրեցի...

Հեծկլսոցը նրան ընդհատեց:

— Մենք նրա համար կաղորենք,— ասաց տիկին Գրանդեն:— Համակերպեցեք աստծու կամքին:

— Հորեղբորորդի,— ասաց Էժենին,— քաջ եղեք: Չեք կորուստն անփոխարինելի է, բայց այժմ մտածեցեք փրկելու ձեր պատիվը...

Կանացի բնագործ և նրբամտությամբ, որն ամեն ինչի մեջ շնորհը է գտնում, նույնիսկ եթք ցանկանում է միսիթարել, Էժենին ուզում էր իր հորեղորդու տառապանքը մոռացնել տալ՝ հորդորելով նրան մտածել իր մասին:

— Իմ պատի՞վը, — գոչեց երիտասարդը կատաղի շարժումով մազերը ետ զցելով:

Եվ նա նստեց իր անկողնի վրա, թևերը կրծքին ծալած:

— Ա՛, ձի՞շտ է: Իմ հայրը սնանկացե՞լ է, — ասում էր հորեղայրս:

Նա սրտաճմիկ մի ձիչ արձակեց և դեմքը թաքցրեց ձեռքերի մեջ:

— Թողե՞ք ինձ, հորեղորադշիկ, թողե՞ք ինձ. աստվա՞ծ իմ, աստվա՞ծ իմ, ներիր իմ հորը: Նա հավանորեն շատ է տանջվել:

Այդ երիտասարդական, իրական, անկեղծ, առանց հաշվի, առանց հետին մտքի կոկիծը սոսկալիորեն հանկուցիչ մի բան ուներ: Դա մի ամորթիած կոկիծ էր, որ Էժենի և մոր պարզ սրտերն ըմբռնեցին, երբ Շառլը նրանց նշան արեց, որ իրեն իր վշտի հետ մենակ թողնեն: Նրանք վայր իշան, լրիկ վերագրավեցին իրենց տեղերը պատուհանի մոտ և մի ժամ աշխատեցին՝ առանց մի բառ ասելու իրար: Էժենին երիտասարդի իրերի վրա նետած մի հարևանցի ակնարկով, ուշասի աղջիկների այն հայացով, որ մի ակնթարթում ամեն ինչ տեսնում է, նկատել էր նրա արդուզարդի մանր իրերը, նրա մկրատները, ոսկեզօծ ածելիները: Կոկիծի միջից դուրս ելուող այդ պերճությունը, թերևս իր հակադրության պատճառով, նրա համար Շառլին դարձրեց ավելի հետաքրքրական: Երբեք այդրան ծանր մի եղելություն, երբեք այդրան եղերական մի տեսարան չէր ցնցել երևակայությունը երկու էակների, որոնք մշտապես խորասուզված էին հանդարտության ու մենության մեջ:

— Դե, մա՛յր իմ, մենք կպահենք մեր հորեղոր սուզը, — ասաց Էժենին:

— Քո հայրը կորոշի այդ, — պատասխանեց տիկին Գրանդեն:

Նրանք նորից լրտ մնացին: Էժենին իր ձեռագործի ասեղնակետերը նշանակում էր այնպիսի մի ներդաշնակությամբ, որ դիտողի համար քողազերծ էր դարձնում նրա մտերիմ խորհրդածությունների բեղմնավոր էությունը: Այդ պաշտելի աղջիկը առաջին հերթին ցանկանում էր հաղորդակից լինել իր հորեղորդություն սուզին: Ժամը չորսի մոտ, դուռն մի հարված արձագանք տվեց տիկին Գրանդեն սրտում:

— Ի՞նչ կարող է պատահել հորդ հետ, — ասաց նա իր աղջկան:

Գինեգործը ներս մտավ ուրախ: Նա հանեց իր ձեռնոցները և սկսեց ձեռքերն այնպես ուժգին շփել, որ կարծես ուզում էր մորթը հանել, եթե նրանց վերնամաշկը դաբաղված չիներ ոուսական կաշվի նման, սակայն չուներ նրա կուենի և խունկի հոտը: Նա ման էր գալիս, նայում էր ժամացույցին: Վերջապես նա հայտնեց իր գաղտնիքը:

— Կնի՞կ, — ասաց առանց կակազելու, — բոլորին էլ ճանկեցի: Մեր գինին վաճառված է:

Հոլանդացիք և բելգիացիք պետք է մեկնեին այս առավոտ. Ես ման եկա հրապարակում, նրանց պանդոկի դիմաց, խեղկատակություն անող մարդու նման: Նրան, որ ճանաշում ես, ինձ մոտեցավ: Լավագույն այգիների սեփականատերերը պահում են իրենց հունձքը և սպասում. Ես նրանց հակառակը շքելադրեցի: Մեզ ծանոթ բելգիացին հուսահատվել էր: Ես զգացի այդ: Եվ գործը գլուխ եկավ: Նա վերցնում է մեր բերքը՝ ամեն մի տակադի համար վճարելով երկու հարյուր ֆրանկ, կեսը

կանխիկ: Նա ինձ վճարեց ոսկով: Մուրհակները ստորագրված են. ահա, վեց լուիդոր քեզ համար: Երեք ամիս հետո զինու արժեքն իշնելու է:

Այս վերջին բառերն արտասանվեցին հանդարտ, բայցայնքան խոր հեգնական շետով, որ Սովորի մարդիկ, որ այդ րոպեին հավաքված էին հրապարակի վրա և ապշած էին Գրանդեի կատարած վաճառքի լուրից, սարսուո կզային, եթե լսեին: Խուճապահար մի վախ կարող էր զինու արժեքը պակասեցնել հիսուն տոկոսով:

— Այս տարի դուք հազար տակառ ունեք, չէ՞ հայր, — ասաց Էժենին:

— Այո, աղջնակ:

Այս բառը ծեր տակառագործի ուրախության գերադրական արտահայտությունն էր:

— Այդ անում է երկու հարյուր հազար հատ քսան սո՞ւ:

— Այո, օրիորդ Գրանդե:

— Այդ դեպքում, հայր, դուք շատ հեշտությամբ կարող եք օգնել Շառլին:

Բալթազարի զարմանքը, զայրույթը և ապշությունը Մանեթեկել-փարեսը<sup>9</sup> տեսնելիս, չէր կարելի համեմատել Գրանդեի այն հանդարտ ցասումին, որ արդեն մոռացած լինելով եղբորորդուն, հանկարծ նկատեց, որ նա բնակվում էր դստեր սրտի և հաշիվների մեջ:

— Ա՛հ, այն վայրկյանից, երբ այդ պՃնասերը ոտք դրեց իմ տնից ներս, ամեն ինչ ծուռ է գնում: Դուք ցանկանում եք գնել շաքարեղեններ, կազմակերպել հրավերքներ ու ինչույքներ: Ես հակառակ եմ այդ բոլորին: Ես զիտեմ, թե իմ տարիքում ինչպիսի կյանք վարեմ: Բացի դրանից ես ոչ մի աղջկանից և ոչ էլ մի ուրիշից դաս առնելու պետք չունեմ: Ես եղբորորդու համար հարկ եղածը կանեմ: Դուք չպետք է ձեր քիթը խորեք այնտեղ: Գալով քեզ, Էժենի, — ավելացրեց նա իր աղջկա կողմը դառնալով, — այլս ինձ հետ նրա մասին մի՝ խոսիր. հակառակ դեպքում Նանոնի ուղեկցությամբ քեզ Նուայեի վանքը կուղարկեմ վաղն իսկ, եթե ինձ չլսես: Ո՞ւր է այն տղան, վա՞յր իջավ:

— Ոչ, բարեկամս, — պատասխանեց տիկին Գրանդեն:

— Ուրեմն ի՞նչ է անում :

— Լալիս է իր հոր վրա, — պատասխանեց Էժենին:

Գրանդեն նայեց իր աղջկան՝ առանց կարողանալու միբառ ասել: Նա էլ մի փոքր հայրական զգացում ուներ: Սրահում մի քանի անգամ շրջելուց հետո՝ հանկարծ նա բարձրացավ վեր՝ իր առանձնասենյակը՝ ընտրելու համար հանրային այն արժեթղթերը, որ գնելու էր: Նրա երկու հազար արպան անտառները, որ ամբողջությամբ կտրված էին, նրան տվել էին վեց հարյուր հազար ֆրանկ. այդ գումարի վրա ավելացնելով կաղամախիններից ստացված փողը, նախորդ տարվա և այս տարվա իր եկամուտները, չհաշված երկու հարյուր հազար ֆրանկի գործարքը, որ նոր էր կնքել, նա կունենար ինը հարյուր հազար ֆրանկի մի գումար: Կարճ ժամանակում արժեթղթերի միջոցով, որոնց զինը յոթանասուն ֆրանկ էր, հարյուրին քանի շահելու հեռանկարը նրան զայթակդում էր: Նա իր սպեկուլյացիան հաշվեց այն թերթի վրա, ուր նրա եղբոր մահն էր հայտարարված, և լսում էր, առանց ունկնդրելու իր եղբորորդու հեծկլսոցը: Նանոնը զարկեց պատին՝ հրավիրելով իր տիրոջը իշնել ձաշելու: Կամարի տակ և սանդուղի վերջին աստիճանի վրա Գրանդեն ասում էր ինքն իրեն:

«Քանի որ ես իմ ութ տոկոսը կվաստակեմ, ապա կանեմ այդ գործը: Երկու տարում ես կունենամ մեկ միլիոն հինգ հարյուր հազար ֆրանկ, որ ոսկով իսկ կատանամ Փարիզից: Բայց ո՞ւր է իմ եղբորորդին»:

- Ասում է, թե չի ուզում ճաշել,— պատասխանեց Նանոնը:— Այդ լավ չէ:
- Ուրեմն նույնքան խնայողություն,— պատասխանեց տերը:
- Ա՛, **այսու**,— պատասխանեց Նանոնը:
- Բա՛հ, նա միշտ էլ լալու չէ: Սովածությունը գայլին ստիպում է անտառից դրւս գալ:
- Ճաշը տարօրինակորեն լուր անցավ:
- Իմ լավ բարեկամ,— ասաց տիկին Գրանդեն, երբ սեղանը հավաքեցին,— անհրաժեշտ է, որ սուզ բռնենք:
- Իրականում, տիկին Գրանդե, չգիտեք ինչ հնարեք, որպեսզի փող ծախսեք: Սուզը սրտում է գտնվում և ոչ զգեստների մեջ:
- Բայց եղբոր սուզը անվիճարկելի է և եկեղեցին մեզ հրամայում է, որ...
- Ձեր սուզի զգեստները գնեցեք ձեր վեց լուիդորներով. ինձ էլ մի սև ժապավեն կտաք. դա ինձ բավական կլինի:

Էժենին աշքերը դեպի երկինք բարձրացրեց՝ առանց մի բառ ասելու: Կյանքում առաջին անգամ, նրա ազնիվ հակումները, որ մինչև այդ նիրիած, ձնշված և հանկարծ արթնացել էին, ամեն վայրկյան վիրավորվում էին: Այդ երեկոն արտաքուստ նման էր նրանց միօրինակ կյանքի հազարավոր երեկոներին, բայց իրականում դա ամենից ահավորն էր: Էժենին աշխատում էր առանց գլուխը բարձրացնելու և բոլորվին չգործածեց ասեղնագործի արկղիկը, որը նախորդ օրը արհամարիել էր Շառլ: Տիկին Գրանդեն հյուսում էր իր թեզանիքը: Գրանդեն, խորասուզված հաշիվների մեջ, որոնց արդյունքը հաջորդ օրը զարմանք էր պատճառելու ամբողջ Սոմյուրին, չորս ժամ իր բրամատերը պտտացրեց իրաք շուրջը: Այդ օրը ոչ ոք նրանց չայցելեց: Այդ պահին ամբողջ քաղաքը խոսում էր Գրանդեի ճարպիկ գործարքի, իր եղբոր սնանկության, և նրա եղբորորդու ներկայության մասին: Իրենց ընդհանուր շահերից շատախոսելու պահանջին ենթարկվելով՝ Սոմյուրի միջին և բարձր դասակարգի բոլոր այգեգործ սեփականատերերը հավաքվել էին պարոն դե Գրասենի մոտ, ուր ահավոր անեծքներ էին արձակվում նախկին մերի հասցեին:

Նանոնը հյուսում էր, և նրա ճախարակի աղմուկը միակ ձայնն էր, որ լսվում էր սրահի դեղնած առաստաղի ներքո:

- Մենք մեր լեզուները չենք մաշում,— ասաց նա՝ ցույց տալով կեղևը հանված նուշի նմանվող խոշոր և ձերմակ ատամները:
- Ոչինչ չպետք է մաշել,— ասաց Գրանդեն՝ զարթնելով իր խորհրդածություններից:

Նա երեք տարի հետո նախատեսում էր ութ միլիոնի հեռապատկերը և նավարկում ոսկու այդ երկար մակերեսի վրա:

- Քննեք: Ես կզնամ իմ եղբորորդու մոտ մեր բոլորի կողմից բարի գիշեր մաղթելու և իմանալու, թե չի ուզում բան ուտել:

Տիկին Գրանդեն սպասեց սանդուղքի առաջին աստիճանի վրա՝ լսելու համար այն խոսակցությունը, որ տեղի էր ունենալու Շառի և ծերուկի միջև։ Էժենին, ավելի համարձակ, քան մայրը, երկու աստիճան վեր ելավ։

— Ուրեմն, եղբորորդի՝, դուք վիշտ ունեք։ Այս, լացե՞ք, դա բնական է։ Հայրը միշտ էլ հայր է։ Բայց մեր ցավի համար համբերատարություն ենք ունենալու։ Երբ դուք լաց եք լինում, ես ձեզնով եմ զրադաւում։ Դուք տեսնում եք, որ ես լավ ազգական եմ։ Դե, արիացեք։ Չե՞ք ցանկանա մի փոքր բաժակ գինի խմել։ Գինին մի բան չարծե Սովորում, այստեղ գինին հրամցնում են այնպես, ինչպես Հնդկաստանում մի բաժակ թեյը։— Բայց,— շարունակեց Գրանդեն, — դուք առանց լույսի եք։ Վա՛տ է, շա՛տ վատ։ Անհրաժեշտ է, որ մարդ իր արածը տեսնի։

Գրանդեն առաջ եկավ դեպի ծխնելույզը։

— Բա՛հ, ահավասիկ մի մեղրամում, — ասաց նա։ — Ո՞րտեղից են նրանք կարողացել մեղրամում ճարել։ Այդ քածերը կարող են քանդել իմ տան տախտակամածը, որպեսզի այս երիտասարդի համար հավկիթ խաշեն։

Երբ այս խոսքերը իմացան, մայր ու աղջիկ շտապեցին իրենց սենյակները, և իրենց ծակերը մտնող սարսափահար մկներին հատուկ փութելությամբ մտան անկրողինք։

— Տիկին Գրանդե, ուրեմն դուք զա՞նձ ունեք, — ասաց մարդը իր կնոջ սենյակը մտնելով։

— Բարեկամս, ես աղոթում եմ, սպասեցե՞ք, — պատասխանեց խեղճ կինը այլայլված ձայնով։

— Թո՞ղ սատանան տանի քո բարի աստծուն, — պատասխանեց Գրանդեն՝ մրթմրթալով։

Ազահները երբեք չեն հավատում հանդերձալ կյանքի։ Ներկան նրանց համար ամեն ինչ է։ Այս դաստորդայունը ահավոր լույս է սփռում ներկա դարաշրջանի վրա, երբ ավելի, քան մի այլ ժամանակ, դրամը տիրապետում է օրենքների, քաղաքականության և բարքերի վրա։ Հաստատություններ, գրքեր, մարդիկ և ուսմունքները ձգտում են գալիք կյանքի հավատքը քանդել, որի վրա հազար ութիարյուր տարիներից ի վեր հենվում է հասարակական կառուցվածքը։ Այժմ դաշտադր մի անցում է, որից մարդիկ այնքան էլ չեն վախենում։ Ապագան, որը մերն է լինելու հոգեհանգստի պատարազից հետո, տեղափոխվել է ներկայի մեջ. per fas et nefas՝ հասնել սնամեց վայելքների և փարթամ կյանքի երկրային դրախտում, քարացնել սիրտը և անձը մահացնել անցողական վայելքների համար, ինչպես որ երբեմն, մարտիրոսվում էին՝ հավիտենական իրականության համար. ահա ընդհանուր մտածությունը. մի մտածություն, որ արդեն գրված է ամեն տեղ, նույնիսկ օրենքներում, որոնք օրենսգետին հարց են տալիս. «ի՞նչ ես վճարում», փոխանակ ասելու. «ի՞նչ ես մտածում»։ Երբ այս մտածելակերպը բուրժուազիայից հասնի ժողովրդին, ի՞նչ է լինելու երկիրը։

— Տիկին Գրանդե, վերջացրի՞ն, — հարցրեց տակառագործը։

— Բարեկամս, քեզ համար եմ աղոթում։

— Շատ լավ։ Գիշեր բարի։ Վաղն առավոտ մենք կխոսենք։

Խեղճ կինը քնեց այն դպրոցականի նման, որ իր դասերը սովորած չլինելով՝ վախենում է, որ զարթնելիս կհանդիպի իր ուսուցչի բարկացած դեմքին։ Այն պահին, երբ նա սարսափից

\* Արդարով ու անարդարով (անխսիր բոլոր միջոցներով) (լատ.):

փաթաթվում էր իր վերմակով, որ ոչինչ չսի, Էժենին բորիկ ոտներով և զիշերանոցով նրա մոտ սպրոյեց և համբուրեց նրա ճակատը:

— Ո՛հ, սիրելի մայր,— ասաց,— վաղը ես նրան կասեմ որ ես էի:

— Ո՛չ, նա կարող է քեզ ուղարկել Նուայե: Թո՛ղ ինձ, որ կարգադրեմ: Նա ինձ չի ուտի:

— Լսո՞ւմ ես, մայր:

— Ի՞նչ:

— Նա շարունակ լալիս է:

— Գնա քնի՛ր, աղջիկս: Ոտներդ կարող են սառչել, տախտակամածը խոնավ է:

Այսպես անցավ այն հանդիսավոր օրը, որ ճնշելու էր միաժամանակ և հարուստ, և աղքատ ժառանգուհու ողջ կյանքի վրա և որի քունն այլևս ամբողջական ու մաքուր չէր լինելու, ինչպես մինչ այդ օրը: Հաճախ մարդկային կյանքի որոշ գործունեություններ, գրականորեն խոսելով, անհավանական են թվում, թեև իրականում ճշմարիտ են: Մի՛թե ճշմարիտ չէ, որ շատ անգամ մոռացության են տրվում մեր ինքնարուիս որոշումները՝ հոգեբանական վերլուծումով լրասաբանելու անհրաժեշտությունը, չբացատրելով մեր ներաշխարհի այս խորհրդավոր պատճառները, որ նրանց ծնունդ են տվել: Թերևս Էժենիի խոր սերը անհրաժեշտ կլիներ վերլուծել իր ամենանորք նյարդերի մեջ, քանի որ ծաղրասեր մարդիկ կասեին, որ այդ սերը հիվանդության փոխվեց, թողնելով խոր ազդեցություն նրա ամբողջ գոյության վրա: Շատերը գերադասում են շրնդունել լուծումները, փոխանակ կշռելու ուժը այն կապերի, հանգույցների, բարեկամությունների, որոնք բարոյական աշխարհի մի դեպքը թաքուն կերպով մյուսին են գործում: Այդ դեպքում Էժենիի անցյալ կյանքը ծառայելու է, մարդկային բնավորությունը քննողների համար, որպես երաշխիք նրա միամիտ անմտածության և հոգեկան բխումների հանկարծահասության: Որքան հանդարտ էր եղել նրա գոյությունը, նույնքան սաստկությամբ էլ կանացի գութը՝ զգացումներից ամենից հանձարիմացը, զարգացավ նրա հոգում: Ուստի, օրվա իրադարձություններից հուզված՝ նա հաճախ արթնացավ իր քնից, լսելու իր հորեղբորորդուն, կարծելով, թե լսում է նրա հառաջանքները, որոնք նախորդ օրից ի վեր արդեն արձագանքում էին նրա սրտում. երբեմն նա նրան տեսնում էր վշտից մահամերձ, երբեմն՝ սովամահ լինելիս: Առավոտյան մոտ՝ նա որոշակի լսեց մի ահավոր բացազանչություն: Անմիջապես հազնվեց և արշալուսին, թեթևաքայլ շտապեց հորեղբորորդու մոտ, որ իր սենյակի դուռը բաց էր թողել: Աշտանակի ճրագաբերանի մեջ մոմն ամբողջովին վառվել էր: Շառլը պարտված բնությունից, քնել էր զգեստներով, թիկնաթոռի մեջ նստած և գլուխը մահճակալին հենած. նա երազում էր ստամբար դատարկ մարդկանց հասուլ երազով: Էժենին կարողացավ լաց լինել ազատորեն. նա կարողացավ հիանալ այդ երիտասարդ, զեղեցիկ, վշտից մարմարակերպ դեմքի, արցունքներից ուրած աչքերի վրա, որոնք թեև փակ, կարծես շարունակում էին արտասվել: Շառլը համակարգար գուշակեց Էժենիի ներկայությունը, բացեց աչքերը և գտավ նրան խանդադատած:

— Ներողություն, իմ զարմուհի,— ասաց նա՝ բնականաբար անզիտանալով և՝ ժամը, և՝ վայրը, ուր գտնվում էր ինքը:

— Սրտեր կան, իմ զարմիկ, որ ձեզ հասկանում են այստեղ, և մենք կարծեցինք, որ դուք որևէ բանի կարիք ունեիք: Դուք պետք է անկողին մտնեք: Այդպես կհոգնեք:

— Ճիշտ է:

— Ուրեմն ցտեսություն:

Եվ նա փախուստ տվեց, երջանիկ ու ամոթահար՝ նրա մոտ եկած լինելու համար: Անմեղությունը կարող է միայն նման խիզախություններ ունենալ: Եթի իրազեկ ես՝ առաքինությունը մոլության նման հաշվի է առնում ամեն ինչ: Էժենին, որ իր հորեղբորդու մոտ չէր շփոթվել, հազիվ էր կարողանում կանգնել ոտքի վրա, եթի մենակ էր իր սենյակում: Հանկարծ նրա անզիտակ կյանքը դադարել էր. նա սկսեց տրամաբանել և կշտամբել իրեն: «Ի՞նչ զաղափար կկազմի նա իմ մասին: Նա այժմ կմտածի, որ ես սիրում եմ իրեն»: Ճենց Էժենին էլ ցանկանում էր, որ Շառլ հավատա դրան:

Անկեղծ սերն ունի իր և կանխազիտությունը, զիտե, որ սերը սեր է հարուցում: Այդ մենակյաց աղջկա համար ի՞նչ իրարաձություն էր՝ զաղտագոյի մի երիտասարդի մոտ լինելը: Միրո մեջ մի՞ թէ չկան մտածումներ և գործեր, որոնք որոշ հոգիների համար, սուրբ նշանախոսության հավասար են: Մի ժամ հետո նա մտավ իր մոր սենյակը և նրան հագցրեց, ըստ իր սովորության: Նրանք միասին եկան իրենց ամենօրյա տեղերը զրավեցին, լրասամուտի առաջ և սպասեցին Գրանդէին այնպիսի մտահոգությամբ, որ, ըստ խառնվածքի, սրտերը սառեցնում է կամ այրում, սեղմում կամ լայնացնում, մինչդեռ իրականումնրանք ընտանեկան վեճերի կամ պատիժների են սպասում՝ արդարք շատ բնական մի զգացում, որ ընտանի անասուններին ստիպում է պոռչտալ ամենափոքր ուղղիչ պատժի համար, մինչդեռ նրանք լրում են, եթի իրենց անուշադրության պատճառով որևէ վերք են ստանում:

Վերջապես Գրանդէն եկավ, բայց մտացրիվ խոսեց իր կնոջ հետ, համբուրեց Էժենիին և Ճաշի նստեց, կարծես բոլորովին մոռացած իր նախորդ օրվա ապառնալիքները:

— Ի՞նչպես է իմ եղբորորդին: Երիտասարդը նեղություն չի պատճառում մեզ:

— Պարոն, նա քնած է,— պատասխանեց Նանոնը:

— Ավելի լավ, մոմի կարիք չի ունենա, — ասաց Գրանդէն հեգնական տոնով:

Այդ անկիրթ բարեսրտությունը, այդ դառն ուրախությունը տարօրինակ թվացին տիկին Գրանդէին, որ նայեց իր ամուսնուն՝ մեծ ուշադրությամբ: Ծերուկը, այստեղ հավանաբար պատշաճ է դիտել տալ, թե Սովորում, Անժուում, Պուատուում, Բրետայնում, ծերուկ բառը, որ հաճախ գործածել ենք Գրանդէին նշելու համար, տրվում է անխիղճ մարդկանց, ինչպես նաև ամենից պարզամիտներին, եթի նրանք որոշ տարիքի են հասում: Այս մակդիրը ոչնչով չի կանխորոշում անհատական բարեհոգությունը, — ծերուկն ուրեմն վերցրեց իր զիսարկը, ձեռնոցները և ասաց.

— Մեր Կրյուշոներին հանդիպելու համար ես ուզում եմ ման զալ հրապարակում:

— Էժենի, անպայման հայրդ մի մտազբաղում ունի:

Արադրե արդէն սակավաքուն Գրանդէն իր զիշերների կեսը հատկացնում էր այն նախապատրաստական հաշխվներին, որոնք նրա տեսողություններին, դիտողություններին, ծրագրերին տալիս էին զարմանալի ճշություն և ապահովում նրանց հարատև հաջողությունը, որ զարմանք էր պատճառում Սովորուիք բնակիչներին: Համբերության և ժամանակի միացումից է ծնվել մարդկային ամեն կարողություն: Զորավոր մարդիկ ուզում են և արթուն մնում: Ազաների կյանքը մարդկային զորության հարատև մի վարժություն է՝ անձնավորությանհամար ի սպաս գրված: Դա հենվում է երկու զգացումների՝ ինքնասիրության և շահի վրա, բայց քանի որ շահը որոշ չափով հաստատուն ու լավ ըմբռնված ինքնասիրություն է, իրական գերազանցության անընդհատ վկայությունը, ապա ինքնասիրությունը և շահը մի ամբողջության՝ եսասիրության երկու մասերն են կազմում: Գուցե դրանից է առաջանում արտակարգ այն հետաքրքրությունը, որ արծարծում են

Ճարպիկ կերպով բեմ ելած ազահները: Ամեն ոք մի թելով կապված է այդ անձնավորությունների հետ, որոնք ճարակված են մարդկային բոլոր զգացումներից և ամփոփում են դրանք: Որտե՞ղ կարելի է գտնել մի մարդ, որ զուրկ լինի ցանկությունից և սոցիալական ո՞ր ցանկությունը կարելի է իրականացնել առանց դրամի:

Գրանդէն հիրավի մտագրաղ էր, ինչպես արտահայտվել էր կինը: Նրա, ինչպես և բոլոր ազահների մոտ, կար մի հարատև պահանջ խաղ սարքել մարդկանց հետ, օրինական ձեռվ կորզել նրանց փողը: Չե՞ որ պարտադրել ուրիշներին՝ նշանակում է ապացուցել իր ուժը, հարատևորեն իրավունք ունենալ արհամարիելու նրանց, որոնք խիստ թույլ լինելով՝ թողնում են, որ իրենց հոշոտեն: Օ՛, ո՞վ է երքիցե ըմբռնել աստուծոն ուսքերի առաջ հանդարտորեն պառկած գառնուվին, որ աշխարհի բոլոր զոհերի ամենից ավելի հուզիչ խորհրդանիշն է, նրանց ապագա խորհրդանիշը, վերջապես տառապանքի և բուլության փառաբանումը: Ազահը թողնում է, որ այդ գառնուկը գիրանա, նա կինամի նրան, հետո կմորթի, կեփի, կուտի և կարհամարիի: Դրամն ու արհամարհանքը ազահների սնունդն են կազմում: Գիշերվա ընթացքում ծերուկի մտքերն այլ ուղղություն էին բռնել, ահա թե ինչից էր նրա ներողամտությունը: Նա հղացել էր մի նոր դավ՝ ծաղրելու համար փարիզեցիներին, գալարելու նրանց, գետնահարելու, ձմլելու, տանել-քերելու, քրտնեցնելու, հուսալու, գունաթափելու. նրանցով զվարձանալու համար էր, որ նախկին տակառագործը հղացել էր այդ բոլորը, իր գորշ սրահի խորքում, կամ Սովորի իր տան որդնոտած սանդուղքի աստիճանները բարձրանալիս: Նրան զբաղեցրել էր իր եղբորորդին: Նա ուզում էր իր մահացած եղբոր պատիվը փրկել, առանց սակայն, որ դա սու արժենար և իրեն, և եղբոր որդուն: Նրա նյութական միջոցները երեք տարով ներգրավելու էին, նրան մնում էր միայն իր կալվածները կառավարել, հետևաբար իր նենքամիտ գործունեության համար սնունդ էր պետք, և նա այդ գոտել էր իր եղբոր սնանկության մեջ: Իր թաթերի մեջ ճգմելու ոչինչ չգտնելով՝ ուզում էր փարիզեցիներին փշել հօգուտ Շառլի, և էժան գնով ցույց տալ իրեն իբրև շատ լավ եղբայր: Ընտանեկան պատիվը այնքան փոքր տեղ էր բռնում նրա հաշիվների մեջ, որ կարելի կլիներ նրա բարի կամեցողությունը համեմատել միայն այն պահանջին, որ ունենում են խաղամուները, երբ դիտում են մի լավ խաղ, որին իրենք չեն մասնակցում փողով: Եվ Կրյուշոները նրան անհրաժեշտ էին այդ բանի համար, բայց նա չէր ուզում նրանց մոտ գնալ, այլ նրանց բերել իր սեփական բնակարանը, նույն երեկոյան իսկ սկսել իր հղացած կոմեղիան, որպեսզի հաջորդ օրը ողջ քաղաքի հիացմունքի առարկան դառնա ինքը՝ առանց մի գրոշ ծախսելու:

Իր հոր բացակայությունից օգտվելով, Էժենին երջանկություն ունեցավ համարձակ զբաղվելու իր սիրեցյալ զարմիկով, առանց վախի նրա վրա սփռելու իր զթարտության գանձերը. զթարտությունը կնոց վեհ գերազանցություններից միակն է, որ նրանք սիրում են զգացնել և ներում են, երբ տղամարդիկ վերցնում են իրենցից: Երեք կամ չորս անգամ Էժենին գնաց իր հորեղբորորդու մոտ՝ նրա շնչառությանը նայելու համար, իմանալու, թե նա քնա՞ծ էր արդյոք, հետո երբ նա արյնացավ, սուրճը, սերուցքը, հավկիթները, պտուղները, ափսեները, բաժակները, վերջապես ամեն ինչ, որ անհրաժեշտ էր նախաձաշի համար, դարձան նրա ինսամքի առարկան: Նա թեթևորեն բարձրացավ սանդուղքի մաշված աստիճաններով՝ լսելու իր հորեղբորորդու հանած աղմուկը: Հազնվո՞ւմ էր նա արդյոք, լալի՞ս էր տակավին: Էժենին կամաց դոանը մոտեցավ:

— Զարմի՛կս:

— Զարմուհի՞ս:

— Ցանկանո՞ւմ էք նախաձաշել սրահում, թե՞ ձեր սենյակում:

— Ուր ոք ուզում եք:

— Ի՞նչպես եք:

— Սիրելի զարմուհիս, ես ամոթ եմ զգում, որ քաղցած եմ:

Դուն հետևից տեղի ունեցող այս խոսակցությունը Էժենիի համար վիպական մի ամբողջ դրվագ էր:

— Այդ դեպքում մենք ձեր նախաձաշը սենյակը կբերենք՝ հորս չհակառակելու համար:

Թոշունի արագությամբ նա խոհանոց վերադարձավ:

— Նանո՞ն, գնա նրա սենյակը կարգի բեր:

Այդ սանդուղքը, որով այնքան բարձրացել իջել էր, ուր ամենաթեթև քայլերին իսկ արձագանք էին տալիս, այժմ Էժենիին թվում էր, թե կորցրել է իր խարիսխությունը, այժմ սանդուղքը թվում էր լուսավոր, խոսուն, իր նման նորատի, իր սիրո նման նորատի, որին աջակցում էր: Վերջապես նրա մայրը, նրա բարի և ներողամիտ մայրը կամենում էր օգնել իր աղջկա սիրո քմահաճույքներին, և երբ Շառլի սենյակը կարգավորվեց, երկուսն էլ շտապեցին ընկերակից լինել դժբախտ երիտասարդին. չէ՞ որ քրիստոնեական գթասրտությունը հրամայում էր նրան միսիթարել: Այս երկու կանայք կրոնից բավականաչափ փոքր սովորություններ էին քաղում՝ արդարացնելու համար իրենց անսովոր վարվելակերպ:

Շառլ Գրանդէն դարձավ ամենաքաղցր և ամենասիրակիր խնամքի առարկան: Նրա վշտաբեկ սիրտը խիստ զգացվեց այն քնքուշ բարեկամությունից, այն քաղցր համակրանքից, որ այս տևականորեն բռնադատված երկու հոգիները, մի բոպե իրենց ազատ գտնելով վշտերի աշխարհում՝ իրենց բնական ոլորտում կարողացան ծավալել: Ազգակցական կապից քաջալերված՝ Էժենին սկսեց դասավորել նրա սպիտակելենները, արդուզարդի առարկաները, որ Շառլը բերել էր իր հետ և ազատ կերպով կարողացավ հիանալ ամեն մի գեղեցիկ առարկայով, արծաթե և ոսկե մանր իրերով, որ նրա ձեռքն էին ընկնում և որ նա երկար պահում էր մատների մեջ՝ դիտելու պատրվակով: Շառլը ոչ առանց խոր խանդադատների տեսավ այն վեհանձն հետաքրքրությունը, որ հորեղբորկինն ու աղջիկը ցուցաբերում էին իր նկատմամբ: Նա բավական լսվ էր ճանաչում փարիզյան կյանքը և զիտեր, որ իր վիճակում, նա միայն սառն և անտարբեր սրտերի կիանդիպեր: Էժենին նրան երևաց իր առանձնահատուկ գեղեցկության ամբողջ շքեղությամբ, և այդ պահից սկսած նա հիացավ նրանց կենցաղի անմեղության վրա, որը նա ծաղրել էր նախորդ օրը: Այդ պատճառով էլ, երբ Էժենին զգացմունքի ամբողջ անմեղությամբ Նանոնի ձեռքից վերցրեց սրճախառն կաթով լի հախճապակյա ամանը՝ անձամբ սպասարկելու համար իր հորեղբորդուն, նրա վրա ձգելով մի բարի հայացք, փարիզեցու աչքերը լցվեցին արցունքով: Շառլը բռնեց նրա ձեռքերը և համբուրեց:

— Բայց ի՞նչ պատահեց դարձյալ, — հարցրեց աղջիկը:

— Ո՛հ, երախտագիտության արցունքներ են սրանք, — պատասխանեց Շառլ:

Էժենին հանկարծ դառնալով բուխարու կողմը՝ վերցրեց աշտանակները:

— Նանոն, վերցրու և տար սրանք, — ասաց նա:

Երբ նա նայեց իր հորեղբորդուն՝ դեռևս կարմրած էր, բայց գեր նրա հայացքը կարողացավ կեղծել և չըրսևորել այն անհուն ուրախությունը, որ լցնում էր նրա սիրտը, սակայն նրանց աչքերը արտահայտեցին միևնույն զգացումը, ինչպես որ նրանց հոգիները ձուլվեցին նույն մտածման մեջ, — ապագան նրանց էր պատկանում:

Այս քաղցր հոգումը առավել ևս հաճելի եղավ Շառի համար, որ իր անհուն վշտի մեջ չէր սպասում դրան: Փողոցի դռան զարկը երկու կանանց ստիպեց վերադառնալ իրենց տեղերը:

Բարեբախտաբար նրանք բավական արագ կարողացան վայր իշխել սանդուղներով և վերսկսել իրենց աշխատանքը, եթե Գրանդէն ներս էր մտնում: Եթե նա նրանց նկատած լիներ նույնիսկ կամարի տակ՝ դա բավական կլիներ նրա կասկածն արթնացնելու համար: Նախաձաշից հետո, որը ծերուկը ոտքի վրա և շտապով արեց, Ֆրուաֆոնից եկավ պահակը, որը դեռևս չէր ստացել խոստացված ոռմիկը, նա իր հետ բերել էր մի նապաստակ, պարկում սպանված կաքավներ և ջրաղացպանների ուղարկած օձաձկներ և գայլաձկներ:

— Է՛հ, է՛հ, այդ խեղճ Կորնուայեն միշտ էլ խիստ պատեհ է գալիս: Մրանք ուտելո՞ւ բան են:

— Այո, իմ թանկագին, առատաձեռն պարոն, երկու օր է ինչ սպանված են:

— Նանո՞ն, շտապիր,— ասաց ծերուկը:— Այս բոլորը պատրաստիր ճաշի համար: Ես ուզում եմ կոչունք տալ երկու Կրյուշոներին:

Նանոնք ապշած՝ մեծ-մեծ բաց արեց աչքերը և նայեց ներկաներին:

— Բայց,— ասաց նա,— ես ո՞րտեղից կարող եմ խոզի յուղ և համեմներ գտնել:

— Կնիկ,— ասաց Գրանդէն,— վեց ֆրանկ տուր Նանոնին և ինձ էլ հիշեցրու, որ մառանից լավ զինի բերեմ:

— Ուրեմն, պարոն Գրանդէն,— սկսեց պահապանը, որ մի ճառ էր պատրաստել՝ իր ոռմիկի հարցը լուծելու համար,— պարոն Գրանդէն...

— Տա՛, տա՛, տա՛,— ասաց Գրանդէն,— զիտեմ ինչ ես ուզում ասել, դու լավ տղա ես. մենք այդ կկարգադրենք վաղը, այսօր խիստ զբաղված եմ:— Տիկին, տուր նրան հարյուր սու, (հինգ ֆրանկ),— ասաց նա կնոջը:

Եվ նա մեկնեց: Դժբախտ կինը շատ երջանիկ էր, որ տասնմեկ ֆրանկով կարողացավ խաղաղություն գնել: Նա շատ լավ զիտեր, որ Գրանդէն ամբողջ տասնինգ օր լուս և հանդարտ կմնար, եթե այսպես սու առ սու նրանից ետ վերցներ իր տված բոլոր փողերը:

— Ստացիր, Կորնուայեն,— ասաց նա պահակի ձեռքը դնելով տասը ֆրանկ. Մի օր մենք վարձատրելու ենք ձառայությունները:

Կորնուայեն այլևս ասելիք չուներ և մեկնեց:

— Տիկին,— ասաց Նանոնը, որ դրել էր իր սև զիխարկը և վերցրել կողովը,— ես երեք ֆրանկի միայն կարիք ունեմ, մնացածը վերցրեք: Այդ բավական է:

— Մի լավ ճաշ պատրաստիր, Նանոն, իմ հորեղորորդին ցած է գալու,— ասաց Էժենին:

— Անպայման մեզ մտ մի տարօրինակ բան է կատարվում,— ասաց տիկին Գրանդէն:— Այս երրորդ անգամն է մեր ամռուսությունից ի վեր, որ քո հայրը մարդկանց ճաշի է հրավիրում:

Ժամը չորսի մոտ, այն պահին, եթե Էժենին և մայրը ավարտել էին սեղանը պատրաստել վեց հոգու համար և տան մեծը մի քանի շիշ այն ընտիր զինուց էր բերում, որ գուրգուրանքով պահում են պրովինցիայի մարդիկ, Շառլ Մտավ սրահ: Երիտասարդը գունատ էր: Նրա շարժուձևը, նրա զուսպ կեցվածքը, նրա հայացքը և ձայնի հնչյունն արտահայտում էին շնորհալի քաղցրությամբ լի

տիրություն: Նա կեղծ վիշտ չէր ցույց տալիս, հիրավի տառապում էր, նրա դիմագծերի վրա փոփած հոգսի քողը նրան տալիս էր այն հետաքրքիր արտօհայտությունը, որ այնքան դուր էր գալիս կանանց: Էժենին նրան ավելի սիրեց դրա համար. թերևս դժբախտությունը նրան ավելի էր մոտեցրել իրեն: Շառլը այլևս նրա համար այն գեղեցիկ և հարուստ երիտասարդը չէր, անմատչելի ոլորտում գտնվող, այլ ահավոր թշվառության մեջ կորած մի ազգական: Թշվառությունը հավասարության մայրն է: Կինը նմանվում է հրեշտակին այն քանով, որ տառապող մարդիկ նրան են պատկանում: Շառլը և Էժենին միմյանց հասկացան և իրաք հետ խոսեցին աչքերով միայն. դժբախտ պճամողը կորած, մի անկյունում լրված որբը, մնաց լուռ, հանդարտ ու հպարտ, բայց ժամանակ առ ժամանակ նրա զարմուհու քաղցր և զգվալից հայացքը շողում էր նրա վրա, ստիպում նրան թողնել իր տիտուր մտածմունքները, նրա հետ սավառնել հույսի և ապագայի դաշտերը, ուր Էժենին սիրում էր նրա հետ լինել:

Այդ պահին Սովորի բնակչությունն ավելի հուզված էր Գրանդէի կողմից Կրյուշներին տրված ճաշկերույթով, քան նախորդ օրը, նրա բերքի վաճառումով, որը խաղողագործության հանդեպ մի մեծ դաշտաճանություն էր: Եթե դիվանագետ խաղողագործը իր ճաշկերույթը տված լիներ այն մտքով, ինչ մտքով Ալկիֆիադեսն իր շան պոչն էր կտրել<sup>10</sup>, նա հավանաբար մի մեծ մարդ կդառնար, բայց խիստ բարձր լինելով մի քաղաքի համար, որի հետ նա խաղ էր անում անվերջ, նա ամենին բանի տեղ չէր դնում Սովորը: Դե Գրասենները շուտով իմացան Շառլի հոր ինքնասպանությունն ու հավանական սնանկությունը և որոշեցին նույն երեկոյան իսկ այցելել իրենց կլիենտին՝ մասնակից լինելու նրա դժբախտությանը և ցույց տալու իրենց բարեկամության հավաստիքը: Բայց նրանք հետաքրքրվել էին նաև իմանալու, թե ի՞նչ նպատակով, ստեղծված հանգամանքների մեջ, Գրանդէն Կրյուշներին ճաշկերույթի էր հրավիրել: Ճիշտ ժամը հինգին, նախագահ Կ. դը Բոնֆոնը և նրա նոտար հորեղբայրը ոտից գլուխ տոնական հազուտաներ հազար՝ եկան Գրանդէի մոտ: Հրավիրյալները սեղան նստեցին և սկսեցին ճաշել մեծ ախորժակով: Գրանդէն լրջադեմ էր, Շառլ՝ լուս, Էժենին՝ մունջ, իսկ տիկին Գրանդէն սովորականից ավելի շխտեց, այնպես որ այդ հրավերը իսկապես մեռելածաշ դարձավ: Եթբ ճաշը վերջացավ՝ Շառլը իր հորեղբորը և հորեղբորկնոցն ասաց.

— Թույլ տվեք, որ սենյակս քաշվեմ: Ստիպված եմ մի երկար և տիտուր թղթակցությամբ զբաղվել:

— Խնդրեմ, իմ եղբորորդի:

Նրա գնալուց հետո, եթբ ծերուկը եզրակացրեց, որ Շառլը իր գրությունների մեջ խորասուզված՝ ոչինչ չէր լսի, ծածկամիտ կերպով իր կնոջը նայեց:

— Տիկին Գրանդէ, այն, ինչի մասին, որ խոսելու ենք, ձեզ համար լատիներենի պես բան է: Ժամը արդեն յոթ և կեսն է, ժամանակ է, որ հանգստանաք: Գիշեր բարի, աղջի՝ կս:

Նա համբուրեց Էժենիին, և երկու կանայք դուրս եկան: Եվ սկսվեց այն տեսարանը, ուր հայր Գրանդէն իր կյանքում մինչ այդ անծանոթ ուժգնությամբ դիմեց այն հնարագիտություններին, որ նա ձեռք էր բերել մարդկանց հետ իր ունեցած հարաբերությունների շնորհիվ, և որի համար նա ծեր շուն մակդիրն էր ստացել նրանցից, որոնց կծել էր մի փոքր ավելի սաստկությամբ: Եթե Սովորի մերը իր փառասիրությաննավելի մղում տար, եթե երջանիկ պայմանները նրան հասցնելով հասարակության բարձր շրջանակներին՝ նրան ուղարկեին մասնակցելու այն կոնգրեսներին, որտեղ քննարկվում էն ազգերի գրքերը, և եթե նա գործադրելու լիներ այն հանձարը, որով նրան օժտել էր անձնական շահը՝ անկասկած նա փառավորապես օգտակար կլիներ Ֆրանսիային: Շատ հավանական է նաև, որ, եթե նա Սովորից դուրս գար, մի այլ տեղ կդառնար մի խղճուկ մարդ:

Թերևս գտնվում են մտքեր, որոնք ինչպես որ այդ ձիշու է որոշ կենդանիների համար, ոչնչի ծնունդ չեն տալիս, եթե հեռանում են այն կլիմայից, ուր ծնվել են:

— Պա... ա...ա... բո՞ն նա... նա... նախազահ, դ... ուք աս... ասում եք, որ սնաաանկությունը...

Կակազումը, որ շատ երկար ժամանակներից ի վեր կեղծում էր Գրանդեն և որ բնական էր թվում, ինչպես նաև խլությունը, որից նա դժգոհում էր անձրևու օրերին, այս դեպքում Կրյուշոների համար այնքան հոգնեցուցիչ էր, որ նրանք ակամա ծամածություններ էին անում՝ լսելով խաղողագործին և ջանք էին թափում կարծես ամբողջացնելու այն բառերը, որոնց մեջ Գրանդեն հաճությամբ էր միարձվել: Այստեղ հավանորեն անհրաժեշտ է Գրանդենի կակազումի և խլության պատմությունն անել: Ոչ ոք Անժուում չզիտեր և չէր կարող ավելի լավ արտասանել տեղական ֆրանսերենը, որքան խորամանկ խաղողագործը: Անցյալում, հակառակ իր ամբողջ նրբամտությանը, նա խարվել էր մի հրեայից, որ վիճաքանությունների մեջ իր ձեռքը ականջին էր տանում՝ լսակողի նման, ավելի լավ լսելու պատրվակով, և իր բառերը փնտրելիս այնքան լավ էր լփոխում, որ Գրանդեն՝ զոհ դառնալով դրան, ստիպված եղավ այդ վարպետ հրեային թելադրել այն բառերն ու զաղափարները, որ նա կարծես փնտրում էր, և ամբողջացնել հիշյալ հրեայի դատողությունները, խոսելով այնպես, ինչպես որ անիծյալ հրեան պետք էր, որ խոսեր, վերջապես, դառնալ հրեայի պես, քան մնալ Գրանդե:

Տակառագործը այդ տարօրինակ պայքարից դուրս եկավ՝ կնքելով միակ գործարքը, որից իր ամբողջ առևտրականկյանքում դժգոհ պիտի լիներ: Բայց եթե դրանից նա նյութական կորուստ ունեցավ, փոխարենը բարոյապես շահեց և ստացավ մի լավ դաս, որից հետո պտուղներ քաղեց: Ուստի ծերուկն ի վերջո օրինեց հրեային, որ իրեն սովորեցրել էր առևտրական հակառակորդին համբերությունից հանելու արվեստը և զբաղեցնելով նրան իր միտքն արտահայտելով՝ շարունակ ստիպել նրան, որ ուշք չդարձնի իր մտքին: Հետևաբար ոչ մի գործի համար այնքան անհրաժեշտ չէին խլությունը, կակազումը և մանվածապատ ու անհականալի բառերի գործածումը, որոնց մեջ Գրանդեն կարողանում էր թաքցնել իր մտքերը, որքան այսօրվա գործի համար: Նախ նա չէր ուզում ընդունել իր մտքերի պատասխանատվությունը. հետո նա ուզում էր իր ասածի տերը լինել և իր իսկական մտարրությունները կասկածի մեջ թողնել:

— Պա... բո՞ն դը Բո՞ն... Բո՞ն... Բո՞նֆո՞ն...

Երկրորդ անգամ, երեք տարուց ի վեր, Գրանդեն Կրյուշոյի զարմիկին անվանում էր պ. դը Բո՞նֆո՞ն: Նախազահը կարծեց, որ նենգամիտ ծերուկի կողմից փեսացու է ընտրված:

— Դուռտուր աս-աս-ասում էեիք, որ սնանկությունները կաաարելի է ոոորշ պարագաներում աաարգիիիլել առ... առ... առ...

— Առևտրական դատարանների միջոցով: Այդ ամեն օր լինում է,— ասաց պարոն Կ. դը Բո՞նֆո՞նը՝ որսալով կամ կարծելով, թե արդեն գուշակել է հայր Գրանդենի միտքը և ուզենալով սիրով բացատրել նրան:— Լսեցի՛ք:

— Լը...լը...լը... սում եմ, — խոնարհաբար պատասխանեց ծերուկը նենգամիտ երեխայի զապվածությամբ, որը ներքուստ ծիծաղում է իր ուսուցչի վրա, իսկ արտաքուստ ձևացնում է, որ նրան լսում է մեծ ուշադրությամբ:

— Երբ մի ականավոր և հարգված մարդ, որպիսին էր, օրինակի համար, Փարիզի ձեր հանգույցյալ պարոն եղբայրը...

— Իմ... մ եղբայրը, այո:

- Իր պարտավորությունները վճարել չկարողանալու վտանգի առաջ է գտնվում:
- Այդ անվա... ա... ա.... նվում է պարտավորությունները վճարել չկարողանա՞լ:
- Այո, որ նրա սնանկությունը անխուսափելի է դառնում, առևտրական դատարանը, որի առաջ նա դատելի է (լա՝ վ հետեւցե՛ք), դատավարությամբ իրավունք ունի նրա առևտրական տան համար լուծարքողներ նշանակել: Լուծարքի ենթարկելը չի նշանակում սնանկություն, հասկանո՞ւմ եք: Սնանկություն հայտարարելով՝ մարդը անպատվում է, բայց իր առևտրական տունը լուծարքելով՝ նա մնում է պատվավոր մարդ:
- Տա... տար... բեր... ու... թյունը մեծ է, եթե ծա... ա... ա... խսը ավելի չէ,— ասաց Գրանդեն:
- Բայց լուծարքը կատարվում է նույնիսկ առանց առևտրական դատարանի միջնորդության: Որովհետև,— ասաց նախագահը իր քթախոտը քաշելով,— ինչպե՞ս է հայտարարվում սնանկությունը:
- Այո, այդ մասին ես երբեք չեմ մտա... մտածել,— պատասխանեց Գրանդեն:
- Նախ,— շարունակեց դատավորը,— առևտրականը կամ նրա օրինապես գրանցված լիազորը վաճառատան հաշվեկշիռը առևտրական դատարանի քարտուղարությանն է հանձնում, և երկրորդ՝ այդ բանը կատարվում է պարտատերերի պահանջորդով: Այդ, եթե առևտրականը չի հանձնում իր հաշվեկշիռը, եթե ոչ մի պարտատեր չի պահանջում, որ դատարանը այդ առևտրականին սնանկ հայտարարելու վճիռ արձակի, այդ դեպքում ի՞նչ է կատարվում...
- Այ... այո... ասեք տես... տես... նենք:
- Այդ դեպքում վախճանվածի ընտանիքը, նրա ներկայացուցիչները, ուղղակի ժառանգները, կամ առևտրականը՝ եթե մեռած չէ, կամ բարեկամները՝ եթե նա թաքնված է, կատարում են լուծարքը: Գուցե ցանկանում եք ձեր եղբոր գործերը լուծարքե՞լ,— հարցրեց նախագահը:
- Ա՛հ, Գրանդեն,— բացազանչեց նոտարը,— դա լավ կլինի: Մեզ մոտ պրովինցիաներում պատվի հասկացողությունկա: Եթե դուք փրկեկիք ձեր անունը, քանի որ դա ձեր անունն է, ի՞նչ մարդ կլինեիք:
- Հոյակապ,— ասաց նախագահը՝ իր հորեղբորն ընդհատելով:
- Ան... ան... անկասկած,— պատասխանեց ծեր խաղողագործը,— իմ եղ... եղ... եղբայրը ան... ան... վանվում էր Գրանդեն, ճիշտ ի... ի... ինձ նման: Ա... ա... այդ բա... ցա... հայտ է: Ես ո... ո... ոչ չեմ ա... ա... ասի: Եվ ե... ե... ես... ա... այդ լու... լու... ծարքը բո... բո... լոր դեպ... դեպքերում նպա... ս... տա... վոր... կ... կլիներ իմ եղ... եղ... բոր... ո... ո... որդու համար, որին ես սի... ի... սիրում եմ: Բայց անհրաժեշտ է ուսումնասիրել: Ես չէ... չեմ. ճա... ճա... ճանաշում Փա... Փա... րիզի սա... սատանորդներին:
- Ես Սո... Սո... Սոմյուրում եմ գտ... գտ... գտնվում: Իմ վա... վազերը, իմ... խր... խր.... ամսները, վերջապես իմ գործերը: Ի՞նչ բան է մի քա... քա... ռամսայակ: Ես երբեք չեմ դրել մուրհակներ: Ես շատ եմ ստացել դրանցից, բայց երբեք չեմ ս. ս... սսորա... ա... գրել մուր... մուրհակներ: Դա վը... վը... ճարվում է, զեղ... զեղջվում: Սիա իմ բո... բո... լոր ի... ի... իմացածը: Իմա... ա... իմացել եմ նաև որ կա... կա... կարելի է գնել մուր... մուրհակները:
- Այո,— ասաց նախագահը:— Կարելի է մուրհակներն անմիջապես գնել, որոշ տոկոս վճարելով: Հասկանո՞ւմ եք:

Գրանդեն ձեռքին լսափողի ձև տվեց ու մոտեցրեց ականջին և նախազահը նրա ականջի մոտ կրկնեց իր նախադասությունը:

— Բայց,— պատասխանեց խաղողագործը,— ու...ու... ուրեմն զլ...զլ... խացավանք ու առա... վելություն կա այդ ա...մենի մեջ: Իմ տա... տա... տարիքում ես ոչինչ չեմ ի... ի... մանում այդ բոլորի մասին: Ան...ան...անհրա...մեշտ է, որ ես այստեղ մը...մը...մնամ այգեկութին հս...հս... հսկելու համար: Խա...խա...խաղողի հատիկները դիզվում են և նրանցով ենք վճա...արում: Նպի և ա...առաջ պետք է հս... հսկել բեր...քա...հավաքին: Ես կա... կա... կարևոր գործեր ու...ու...ունեմ Ֆրուաֆոնում: Ես չեմ կա...կա...րող թռղնել իմ տու...ու...նը, գո...գո...րծերի համար ո...ո...րոնց...ից ես ոչինչ չեմ հաս... կա...կանում: Դուք խ... խ... խոսում եք, լու... լուծարքի մա...մասին, սնան...ան...կուրյան հայ... տա...րարությունը կան... կանիւելու համար, իմ ներ...կա... յությունը Փա...րի...րի...զում ան...հրա...հրամեշտ է: Չի կա...կա...րե...րելի նույն ժա...ժա...ժամա...նակում երկու տեղ գտ... գտնվել, իսկ ես մի փո...փոքք թռչուն չեմ և...

— Ես ձեզ հասկանում եմ,— բացազնեց նոտարը:— Շատ լավ. բայց դուք ունեք բարեկամներ, ին բարեկամներ, որ ընդունակ են ձեր հանդեպ անձնվիրություն ցույց տալու:

— «Լավ,— մտածում եր խաղողագործը,— ինքներդ որոշեցեք»:

— Եվ երե մեկը գնար Փարիզ, գտներ ձեր Գիյում եղբոր ամենակարևոր պարտատերերից մեկին և նրան ասեր...

— Մի վա... վայրկյան,— շարունակեց Գրանդեն, — և նրան ի՞նչ ա... ա... սեր: Այս...պիսի մի քան. «Սոմյուրում... ապրող Գրանդեն այս... այս... պես, Սոմյուրում... ապ... րող... Գրանդեն այն... այն...պես: Նա սի...սիրում է իր եղբորը, նա սի... սիրում է իր եղբոր... որ...դուն: Գրանդեն լավ ազ...ազ...ազգական է և շատ լավ մտա...ա...դրություններ ունի: Նա լավ գնե...գներով վաճառել է իր խաղողը: Մի պահան...ցեք, որ սնան...ան...կուրյուն հայտ... աաաարա...արվի. հավաք... վարվե...ցեք և նշա...նշա...նակեցեք լու... լուծարք: Այդ դեպ...դեպ...քում Գրանդեն կմտածի: Դուք ա...ա...վելի... շա...հա...հավոր դուրս կցա... ա... ք... լու... լուծարքով, քան թե թռղ... նել, որ դա...դա... տարանը իր քիթը մտ... ցնի... այն...տեղ: Ճի՞շտ չէ:

— Ճիշտ է,— ասաց նախազահը:

— Որովհետև, ինչպես տեսնում եք, պարոն Բոն...Բոն... Բոն...ֆոն, որոշե...շելուց առաջ, ան...անհրա...մեշտ է քն... քննել: Հարկավոր է ու...ու...ութերից վեր գործ չ...չ...քոնել: Դր...դր...դրամական գոր... գոր... ծառություններում նյու... նյութա...թական միջոց.... միջոցներն և պար...ար...տականություննե...ներն ան...անհրա... հրամեշտ են, երե չես ու... ուզում կոր...ծանվել: Մի՞ թե ճիշտ չէ:

— Անշուշտ,— ասաց նախազահը:— Ես համոզված եմ, որ մի քանի ամսում կարելի կլինի որոշ գումարով գնել պարտատերերի պահանջները, և որոշ կարգադրությամբ՝ վճարել ամբողջությամբ: 0՝ շներին ցույց տալով ձարպի մի կտոր, կարելի է նրանց շատ հեռուները տանել: Երբ սնանկություն չէ հայտարարված դատարանով և մուրհակները ձեր ձեռքումն են, դուք ձյունի նման մաքուր կլինեք:

— Զյու...ձյու...նի նման,— պատասխանեց Գրանդեն ձեռքը լսափողի վերածելով:— Չեմ հասկանում ձյու...ձյունը:

— Բայց,— գոռաց դատավորը,— ուզո՞ւմ եք ինձ լսել:

— Լր...սում եմ:

— Մուրհակն ապրանք է, որի արժեքը կարող է բարձրանալ և ցածրանալ: Այդ վաշխառության օրինականացումը Զերեմի Բենթամի<sup>11</sup> սկզբունքից է բխում: Այս հրապարակախոսը ապացուցել է, թե այն նախապաշտումը, որ նշավակում է վաշխառուներին, պարզապես հիմարություն է:

— Այ քեզ բա՞ն,— ասաց ծերուկը:

— Որովհետև, սկզբունքով, ըստ Բենթամի, փողը ապրանք է, և այն, ինչ փող է ներկայացնում, նույնպես մի ապրանք է,— շարունակեց նախագահը,— որովհետև որոշ է, թե ենթակա լինելով առևտրական գործերի վրա ազդող սովորական փոփոխականություններին, այս կամ այն ստորագրությունը կրող մուրհակ-ապրանքը, ինչպես որ այս կամ այն ապրանքը, շուկայում առաջ է կամ սակավ, թանկ արժի կամ ոչինչ չարժի, դատարանը որոշում է... (բա՞հ, որքան հիմար եմ ես, ներողություն): Ես կարծում եմ, որ ձեզ կհաջողվի ձեր եղբոր պարտքը հարյուրին քանի հինգ վճարելով՝ փակել:

— Դուք անվան... ան...եցիք Ժե...ժե...րեմի Բեն...

— Բենթամ, անգլիացի:

— Այդ երեմաբանությունները,— ծիծառելով ասաց նոտարը,— մեզ զերծ են պահելու ավելորդ ողբերից:

— Այդ անգլիացիները եր...եր...երբեմն ու...ու...նեն առողջ դա...դա...տողություն,— ասաց Գրանդեն:— Այսպես, ը...ը...ըստ Բեն...Բեն...թամի, եթե իմ եղբոր մուր... հակները արժեք են ներ...ներ...կայացնում...կամ չեն ներ...ներ... ներկայաց...նում, ճիշտ եմ աս...աս...ասում, չէ՞: Այդ ինձ համար պարզ է... Պարտատերերը կլինեին, ոչ, չեն լինի... Այդպես եմ հաս...հասկանում ես:

— Թողե՛ք բ բացատրեմ այդ բոլորը,— ասաց նախագահը:— Ըստ իրավաբանության, եթե դուք ձեր ձեռքում ունենաք ձեր եղբոր բոլոր փոխանակագրերը, ձեր եղբայրը կամ նրա ուղղակի ժառանգները այլևս ոչինչ պարտք չեն լինի ոչ ոքի: Հասկանալի՞ է:

— Հասկանալի է,— պատասխանեց ծերուկը:

— Ըստ արդարասիրության, եթե ձեր եղբոր մուրհակները առնվում-ծախսում են բորսայում (լավ լսեցեք այս բառը,— առնվում-ծախսում են) այսքան տոկոս վնասով և եթե ձեր բարեկամներից մեկն այնտեղ գտնվի պատահմամբ և դրանք զնի, այդ դեպքում պարտատերերը ոչ մի բոնության ենթարկված չլինելով իրենց մուրհակները ծախելու համար, հանգուցյալ Գրանդեի ժառանգությունն իր պարտքից ազատված կլինի օրինական ձևով:

— Ճիշտ է, գործը գո...գո... գործ է,— ասաց տակառագործը:— Այդպես է: Բայց և այնպես հաս...հաս... հասկանում եք, որ այդ դժ...դժ...վար է: Ես փող չու...չու... չունեմ, ոչ էլ ժա...ժա...մանակ, ոչ...

— Այս, դուք չեք կարող մեկնել: Ես պատրաստ եմ ձեր փոխարեն զնալ Փարիզ (դուք իմ ճանապարհածախոսը հանձն կառնեք, մի շատ փոքր գումար): Ես ինքս այնտեղ կտեսնեմ պարտատերերին, կիսում, ժամկետը երկարաձգել կտամ, և ամեն ինչ կկարգադրվի վճարման հավելումով, որը դուք կավելացնեք լուծարքի գումարներին, որպեսզի կարողանանք ձեռք բերել պարտքը կազմող փոխանակագրերը:

— Կուես...տես...տեսնենք, ես չեմ ու...ու...ուզում, ես չեմ կա...կա...բոդ հանձն առ...առ... առնել, առանց... Ով... ով... ով... չի կարող, չի կարող: Հաս...հաս...հաս...կան՝ ոմ եք:

— Այդ ճիշտ է:

— Այդ ա... ամենից, որ հայտնաբերեցիք գ...զլուխստրա...քում է: Այդ առ...առ... առաջին ան...ան...զամն է կյանք...կյանքումս, որ ստիպ... ստիպված եմ լի...լի...նում մտածել...

— Այո, դուք իրավագետ չեք:

— Ես մի խեղճ խա...խաղողագրծ եմ և ոչինչ չեմ ի...ի... իմանում ձեր աս... ասածների մասին. ան...անհրա...անհրաժեշտ է, որ ուսում... ուսումնախրեմ այդ:

— Դե լավ...— ասաց նախազահը, ցանկանալով ամփոփել վիճաբանությունը:

— Եղբորորդի...— ասաց նոտարը՝ հանդիմանական շեշտով ընդհատելով նրան:

— Ի՞նչ հորեղբայր,— պատասխանեց նախազահը:

— Թույլ տուր, որ պարոն Գրանդեն քեզ բացատրի իր միտքը: Հարցը հիմա կարևոր լիազորության մասին է: Անհրաժեշտ է, որ մեր սիրելի բարեկամը ճշտությամբ որոշի իր միտքը:

Փողոցի դրանը տրված մի զարկ, որ դե Գրասեն ընտանիքի զալն էր հայտնում, նրանց մուտքն ու բարիների փոխանակումը՝ արգելեց Կրյուշոյին ավարտել իր խոսքը: Նոտարը գոհ մնաց այդ ընդհատումից. արդեն Գրանդեն շեղ-շեղ էր նայում նրան և նրա քթի ուոր ցույց էր տալիս նրա ներքին փոթորիկը: Բայց, նախ, խոհեմ նոտարը հարմար չէր գտնում, որ դատարանի առաջին ատյանի մի նախազահ Փարիզ գնար պարտատերերին կապիտույսցիայի ենթարկելու և օգնելու մի անպատիվ խաղի, որը խստապահանց ուղղամտության, օրենքն էր խախտում, ապա Գրանդեն դեռևս հայտնած չլինելով, որ ինքը պատրաստ է վճարելու, թեկուզ նվազագույն չափով, բնագրմամբ սարսափում էր, որ իր եղբորորդին մասնակից լինի մի նման գործի: Հետևաբար օգտվելով դե Գրասենների զալուց՝ նա իր եղբորորդու թեկից բռնեց և տարավ լրտասմուտի խորքը:

— Դու արդեն բավական սիրահոժար գտնվեցիր նրա հանդեպ, եղբորորդի, սակայն այդքան նվիրվածությունը բավական է: Աղջկան տիրանալու տենչանքը քեզ կուրացնում է: Գրողը տանի, մի՞թե խելքը կորցրել ես: Այժմ ինձ թող թիվավարել նավակը, դու ինձ օգնիր միայն մաներելու: Մի՞թե հարմար է, որ դատավորի քո արժանապատվությունը վտանգես նման մի...

Նա չլրացրեց իր խոսքը՝ լսելով, որ պարոն Գրասենը նախկին տակառագործին ասում էր նրա ձեռքը սեղմելիս:

— Գրանդե, մենք լսեցինք ձեր ընտանիքին հասած սոսկալի դժբախտությունը՝ Գիյում Գրանդեի առևտրական տան կործանումը և ձեր եղբոր մահը: Մենք եկել ենք ձեզ հայտնելու մեր ցավը և բերելու մեր մասնակցությունը ձեր վշտին:

— Բացի կրտսեր Գրանդեի մահից, ուրիշ դժբախտություն գոյություն չտնի,— ասեց նոտարը, ընդհատելով բանկիրին,— նույնիսկ ինքնասպանության դժբախտությունը գոյություն չէր ունենա, եթե նա մտածեր իր եղբոր օգնությունը հայցել: Մեր հին բարեկամը, որի պատվավորությունը մինչև մատների ծայրն է հասնում, մտածում է Փարիզի Գրանդեի առևտրական տան պարտքերը լուծարքել: Իմ եղբորորդին՝ նախազահը, չցանկանալով նրան ենթարկել դատական գործի

զիխացավանքին, պատրաստ է անմիջապես մեկնել Փարիզ, համաձայնության գալու պարտատերերի հետ և պատշաճ կերպով նրանց գոհացնելու:

Այս խոսքերը, հաստատված իր կզակը շոյող խաղողագործի կեցվածքով, տարօրինակ շփոթության մատնեցին երեք դե Գրասեններին, որ ճանապարհին հանդարտ խորհրդածել էին Գրանդեի ազահության մասին և գրեթե ամբաստանել էին նրան եղբայրասպանության մեջ:

— 0՝, ես վստահ էի դրան,— գոչեց բանկիրն՝ իր կնոջը նայելով:— Ի՞նչ էի ասում քեզ, տիկին դե Գրասեն, եթե այստեղ էինք գալիս: Գրանդեն մինչև մազերի ծայրը համակված է պատվով և չի թույլ տա, որ իր անվանը նվազագույն ստվեր ընկնի: Դրամը առանց պատվի հիվանդություն է, պրովինցիաներում գոյություն ունի պատվո գիտակցություն: Այդ լավ է, շատ լավ: Գրանդե՛, ես հին զինվորական եմ և չեմ կարող կեղծել իմ միտքը և պարզ ձևով կասեմ: Դա պարզապես հոյակապ է:

— Բայց հոյ... հոյա... ակապը թանկ է նստում,— պատասխանեց ծերուկը, եթե բանկիրը ջերմորեն նրա ձեռքն էր թոթվում:

— Բայց այդ բանը, իմ սիրելի Գրանդե, ասած թող անհաճ չթվա պարոն նախազահին,— շարունակեց դե Գրասենը,— այդ բանը պարզապես առևտրական գործ է և միայն փորձառու վաճառականը կարող է գումար բերել: Մի՛ թե անհրաժեշտ չէ իմանալ մուտքի հաշվապահություն, փողի կանխավճար, տոլկոսների հաշիվ: Ես գնալու եմ Փարիզ իմ սեփական գործերի համար և այդ դեպքում կարող եմ ստանձնել նաև...

— Մենք կա... կա... կարող ենք հնա... հնա... հնարա... վորության սահ... մաններում կար... կար... կարգադրել այդ առանց իմ կող... կողմից որ... և է պար... տա... վորություն ստանձնելու, որովհետև ես չեմ ցան... կանում մի բան անել, որ ինձ կա... կա... րող է դուք չգալ, — կակազելով պատասխանեց Գրանդեն,— որովհետև որոշ է, որ պարոն նախազահը բնականաբար կուզենար, որ ես իր ճանապարհածախաը վճարեի:

Ծերուկն այս վերջին բառերն ասաց առանց կակազելու:

— Է՛հ,— ասաց տիկին դե Գրասենը,— Փարիզում գտնվելն ինքնըստինքյան հաճույք է: Ես ուրախությամբ կվճարեի իմ ճանապարհածախաը՝ այնտեղ գտնվելու համար:

Եվ նա նշան արեց իր ամուսնուն, կարծես քաջալերելու նրան, որ ինչ գնով էլ լինի այդ հանձնարարությունը իր մրցակցի ձեռքից խլի: Ապա նա խոր հեզնանքով նայեց Կրյուշոներին, որոնց արտահայտությունը ողորմելի էր այդ րոպեին: Այդ ժամանակ Գրանդեն բանկիրի կոճակից բռնած՝ մի անկյուն քաշեց:

— Ես ձեզ վրա ավելի վստահություն ունեմ, քան թե նախազահի,— ասաց նա:— Բայց դրանից՝ տակը մի վատ բան կա— ավելացրեց նա ուրը շարժելով:— Հետո, ուզում եմ ռենտայի անցնել, ուզում եմ մի քանի հազար ֆրանկի բաժնեթուղթ գնել տալ, բայց ուրսուն ֆրանկից ոչ ավելի: Ամսի վերջերին, ասում են արժեքները կիշնեն: Դուք գիտեք այս գործերը, չէ՞:

— Ի՞նչ խոսք, ուրեմն ես մի քանի հազարի ռենտա՝ եմ վերցնելու ձեզ համար:

— Սկզբում ոչ շատ մեծ բան: Սու... ո՛ւս: Ես ուզում եմ այդ խաղը խաղալ այնպես, որ ոչ ոք չիմանա: Այս ամսի վերջը դուք ինձ համար մի գործարք կլատարեք, սակայն ոչինչ մի ասեք Կրյուշոներին, նրանք կարող են վիրավորվել այդ բանից: Եվ քանի որ դուք Փարիզ եք գնալու, մենք միասին կըննենք թե՝ իմ խեղճ եղբորորդու համար ի՞նչ շանսեր կան:

— Համաձայն եմ: Վաղը ես կմեկնեմ փոստակառքով, — բարձրաձայն ասաց դե Գրասենը, — և կգամ ձեր վերջին հրահանգները ստանալու ժամը... ժամը քանիսի՞ն:

— Ժամը հինգին, ճաշից առաջ, — ասաց խաղողագործը՝ ձեռքերը շփելով:

Երկու խմբակցությունն էլ շարունակեց մի քանի րոպե միասին լինել: Մի փոքր դադարից հետո, դե Գրասենը Գրանդեի ուսը թափ տալով՝ ասաց.

— Հաճելի է ձեզ նման լավ ազգականներ ունենալ:

— Այո, այո, միայն թե դա չերևա, — պատասխանեց Գրանդեն, ես լավ ազգա... զա... կան եմ: Ես սիրում էի իմ եղբորը, և այդ ցույց կտամ, եթե ինձ վրա... վրա փող չի նս... նս... տե... լու:

— Մենք գնում ենք, Գրանդե, — ասաց քանկիրը՝ բարեբախտաբար չքողնելով, որ նա իր նախադասությունն ավարտի: — Քանի որ շտապում եմ մեկնել, մի քանի գործեր ունեմ, որ պետք է կարգի բերեմ:

— Լավ, լավ, ես էլ արդեն ձեզ ծանոթ հարցի ուսումնասիրության համար ուզում եմ առանձնանալ իմ խորհրդակցության սենյակում, ինչպես ասում է նախազահ Կրյուշոն:

«Թո՛ւ, ես այլևս պարոն Բոնֆոնը չեմ», — տիրությամբ մտածեց դատավորը, որի դեմքը պաշտպանողական ձարից ձանձրացած դատավորի տեսքն ստացավ:

Մրցորդ ընտանիքների պարագուխները մեկնեցին միասին: Ոչ մեկը և ոչ էլ մյուսը այլևս չին մտածում հենց այդ առավոտ իսկ Գրանդեի կատարած դավաճանության մասին՝ խաղող մշակող այս երկրի հանդեպ, և իզուր իրենց մտքերը պրատեցին՝ իմանալու համար, թե իրենցից ամեն մեկն ի՞նչ էր մտածում ծերուկի իսկական դիտավորությունների մասին, այս նոր գործում:

— Եկեք մեզ հետ տիկին Դորսոնվալի տունը, — ասաց դե Գրասենը նոտարին:

— Մենք ավելի ուշ կգնանք, — պատասխանեց նախազահը, — եթե հորեղբայրս թույլ տա՝ մենք նախ կգնանք օրիորդ Գրիպոկուրին մի թեթևակի այցելելու, որին խոսք եմ տվել:

— Ուրեմն, ցտեսություն, պարոններ, — ասաց տիկին դե Գրասենը:

Եվ երբ դե Գրասենները մի քանի քայլ հեռացան Կրյուշոներից՝ Արոլֆն ասաց իր հորը:

— Նրանք լավ դիվուտել են:

— Լո՛ւ կաց, զավա՛կս, — պատասխանեց մայրը, — դեռևս կարող են լսել, մանավանդ, որ այն, ինչ որ դու ես ասում, տգեղ է և դրանից Իրավաբանական դպրոցի հոտ է փշում:

— Ի՞նչ կասեք հորեղբա՛յր, — գոռաց դատավորը, երբ նկատեց, որ դե Գրասենները հեռացել են, — ես սկզբում նախազահ դը Բոնֆոն էի. իսկ վերջում դարձա պարզապես Կրյուշո:

— Ես լավ նկատեցի, որ այդ բանը թեզ դուր չէր գալիս, բայց հովը ի նպաստ դե Գրասենների էր փշում: Քո ամբողջ բանականությամբ հանդերձ հիմար ես... Թող որ նրանք ճանապարհ ելնեն հայր Գրանդեի կտեսնենքներով, և հանդարտ կաց, երեխա: Էժենին այնուամենայնիվ քո կինը կլինի:

Մի քանի վայրկյանում Գրանդեի վեհանձն որոշման լուրը միաժամանակ տարածվեց երեք քնակարաններում, և ամբողջ քաղաքը խոսեց միայն նրա եղբայրական անձնվիրության մասին:

Բոլորն կլ ներում էին Գրանդեին՝ այգետերերի միջև կատարած ու դրժած նրա երդումը և իր բերքը ծախածինելը և հիանում նրա պատվասիրության վրա, գովում նրա վեհանձնությունը, որի համար նրան անընդունակ էին համարում: Ֆրանսիական բնավորության հատուկ է անմիջապես խանդավառվել, պողքկալ, տարվել բռպեսական ասուաներով, օրվա ծփուն տաշեղներով: Կոլեկտիվ էակները, ժողովուրդները մի՞ թե առանց հիշողության են:

Եթե հայր Գրանդեն դուռը փակեց նրանց հետևից, ձայն տվեց Նանոնին:

— Ազատ մի՛ թողնիր շունը և մի՛ քնիր, մենք աշխատելու ենք միասին: Ժամը տասնմեկին Կորնուային գտնվելու է իմ դռան առջև Ֆրուաֆոնի կառքով: Ուշարիր եղիր նրա գալուն, մի թողնիր, որ նա դուռը բախի, և թույլ տուր ուղղակի ներս մտնի: Ոստիկանության օրենքներն արգելում են զիշերներն աղմկել, մանավանդ պետք չէ, որ թաղեցիներն իմանան, թե ճանապարհվում եմ:

Այս ասելուց հետո Գրանդեն բարձրացավ իր առանձնասենյակը: Նանոնը լսում էր, թե ինչպես նա այնտեղ խլրում էր, որոնում, գնում-գալիս, բայց զգուշությամբ: Պարզ էր, նա չէր ուզում արթնացնել ո՛չ կնոջը և ոչ աղջկան և մանավանդ գրգռել եղբորորդու ուշադրությունը, որին նա արդեն անիծել էր՝ նրա սենյակում լույս նկատելով:

Գիշերվա կեսին Էժենին հորեղորորդու համար մտահոգված թվաց, թե լսում է մահամերձի տրտունջ, իսկ նրա համար այդ մահամերձը միայն Շառլ կարող էր լինել: Եթե նրանից բաժանվեց՝ նա խիստ գրւնատ, խիստ հուսահատ էր, թերևս ինքնասպանություն էր գործել: Հանկարծ նա զլուխը ծածկեց կնքուտի նմանող մի ծածկոցով և ուզեց դուրս գալ: Նախ մի ուժեղ լույս, որ ներս էր թափանցում նրա սենյակի դռան ձեղքերից, հրդեհի վախ առաջացրեց: հետո շուտով գոտեանդվեց՝ լսելով Նանոնի ծանր ոտնաձայնը և բազմաթիվ ձիերի վրնջունին խառնվող նրա ձայնը:

— Մի՞ թե հայրս փախցնում է իմ հորեղորորդուն,— մտածեց նա զգուշությամբ իր դուռը բաց անելով, որպեսզի չլսվի նրա ձռնչոցը, սակայն այնքան, որ կարելի լիներ տեսնել, թե ինչ էր կատարվում միշանցքում:

Հանկարծ նրա հայացքը հանդիպեց հոր հայացքին, որը ինչքան էլ անորոշ և անհոգ լիներ, նրան սարսափեցրեց: Ծերուկը և Նանոնը կցված էին մի հաստ փայտով, որի ամեն մի ծայրը դրված էր նրանց աջ ուսին, այդ փայտից էր կախված պարանից ամրացված մի տակառիկ, նման այն տակառիկներին, որ իր պարապ ժամերին, զվարձանալու համար, շինում էր իր հացատանը:

— Սո՛ լրբ կույս, որքան ծանր է, պարոն,— ասաց Նանոնը ցածր ձայնով:

— Ինչ դժբախտություն, որ միայն խոշոր սուեր են,— պատասխանեց ծերուկը:— Ուշադրություն դարձրու մոմակալին չղիպցնես:

Այս տեսարանը լուսավորված էր մի մոմով միայն, որ սանդուղքի բազրիքի երկու ձաղերի մեջ էր դրված:

— Կորնուայե, — ասաց Գրանդեն իր in partibus\* պահապանին, — վերցրե՞լ ես քո ատրճանակները:

— Ոչ, պարոն: Բա՛ հ, արժե՞ ձեր խոշոր սուերի համար վախենալ:

— Լա՛ վ, ոչինչ, — ասաց հայր Գրանդեն:

---

\* Անպաշտոն:

— Հետո արագ ենք գնալու, — շարունակեց պահապանը, — ձեր ազարակապանները ձեզ համար իրենց լավագույն ձիերն են ընտրել:

— Լավ, լա՛վ, նրանց չե՞ս ասել, թե ուր եմ գնում:

— Ես ինքս չեի իմանում:

— Լավ: Կառքն ամո՞ւր է:

— Կառքը, տեր իմ, նա կտանի երեք հազար: Ձեր այս անպիտան տակառիկները որքա՞ն են կշռում:

— Օ՛հ, ասաց Նանոնը, — ես լավ գիտեմ, մոտավորապես հազար ութ հարյուր:

— Կլու՞ս, թե ոչ, Նանո՞ն: Կասես կնոջս, որ զյուղ եմ գնալու: Ճաշին կվերադառնամ: Արագ գնա, Կորնուայե, ժամը իննից առաջ Անժեր պետք է լինել:

Կառքը մեկնեց: Նանոնը կողպեց դուռը, ազատ արձակեց շանը, պառկեց ուար ճմլված, և թաղում ոչ ոք չիմացավ ո՞չ Գրանդէի մեկնումը և ոչ էլ նրա մեկնումի դրդապատճառը: Ծերուկի գաղտնապահությունը կատարյալ էր: Ոչ ոք նրա բնակարանում, որ ոսկով լիքն էր, չեր տեսել մի սու: Առավոտյան նավահանգստում լսած լինելով, որ ոսկով արժեքը, Նանում սկսված սպառազինությունների պատճառով, կրկնապատկվել էր, և Անժեր էին եկել սպեկուլյացիայով զբաղվող մարդիկ՝ ոսկի գնելու նպատակով, ծեր խաղողագործը իր ազարակապաններից պարզապես փոխառությամբ վերցրած ձիերով, կարողացավ փոխադրել իր ոսկին, որպեսզի վաճառի և վերադառնա՝ փոխարենը պետական գանձարանի վրա վճարելի արժեթղթերով, որոնց գումարին ավելացնելով այս գործարքից առաջանալիք շահույթը, նա պիտի կարողանար իր ուզած եկամուտային արժեթղթերը գնել:

— Հայրս մեկնում է, — ասաց Էժենին, որ սանդուղքի բարձրությունից ամեն ինչ լսել էր:

Տանը վերահաստատվել էր լրությունը և կառքի հեռավոր աղմուկը աստիճանաբար նվազելով, այլս չեր լավում նիրեղ Սովորում: Այդ ժամանակ ականջներով լսելուց առաջ Էժենին նախ իր խորքում լսեց մի տրսունջ, որ անցավ միջնորմներից և զալիս էր իր հորեղբորդու սենյակից: Թրի բերանի պես բարակ մի լույս՝ դռան ճեղքից անցնում էր և հորիզոնական կտրում մաշած սանդուղքի ճաղերը:

— Նա տառապում է, — ասաց Էժենին՝ սանդուղքի երկու աստիճանները բարձրանալով:

Մի երկրորդ հեծեծանք նրան տարավ սենյակի առջևի հարթակը: Նա հրեց արդեն կիսաբաց դուռը: Շառլը քնած էր, գլուխը իին թիկնաթռողից վայր կախած: Գրիշն ընկել էր ձեռքից, որը գրեթե տախտակամածին էր հասնում: Նրա կցկտուր շնչառությունը, որ հետևանք էր նրա պառկելու ձևին, Էժենիին սարսափ պատճառեց, և նա ընդոստ ներս մտավ:

«Նա շատ հոգնած պետք է լինի», ասաց ինքն իրեն Էժենին՝ նկատելով տասի չափ կնքված նամակներ: Նա կարդացնրանց հասցեները: — Պարոններ Ֆարբի Բրեյթմանը և ընկ. կառագործներ, պարոն Բյուխոն, դերձակ և այլն:

— Անպայման կարգադրել է իր բոլոր գործերը, որպեսզի կարողանա շուտով Ֆրանսիայից հեռանալ, — մտածեց Էժենին:

Էժենիի աչքերը հանդիպեցին երկու բաց նամակի, որոնցից մեկը՝ «Բմ սիրելի Աննետ...»: Մթագնեց նրա հայացքը: Նրա սիրտը սկսեց բարախել, նրա ոտքերը գամվեցին տախտակամածին:

— Իր սիրելի Աննետ. նա սիրո՞ւմ է, նա սիրվա՞ծ է: Այլևս ոչ մի հույս... Արդյոք ի՞նչ է գրում նրան:

Այս մտածումներն անցան նրա սրտով և նրա մտքով, նա այդ բառերը կարդում էր ամեն տեղ, նույնիսկ տախտակամածի վրա, ուր բոցեղեն տառերով էին արձանագրված:

«Արդեն հրաժարվե՞մ նրանից: Ո՛չ, ես չպետք է կարդամ այդ նամակը: Ես պարտավոր եմ դուրս գնալ... Իսկ եթե կարդա՞մ...»

Նա նայեց Շառլին, մեղմությամբ առավ նրա գլուխն իր ձեռքերի մեջ և դրեց թիկնաթոռի մեջքին և Շառլը թռղեց, որ անի նման մի երեխայի, որը նույնիսկ քնած տեղը ճանաչում է իր մորը և առանց արթնանալու, ընդունում նրա խնամքն ու համբույրները: Էժենին բարձրացրեց նրա կախված ձեռքը և մոր նման, քաղցրությամբ համբուրեց նրա մազերը: «Սիրելի Աննետ». ինչ-որ դևայս այս երկու բառը ճշում էր նրա ականջներին:

— Գիտեմ, որ լավ բան չեմ անում, սակայն պետք է կարդամ այդ նամակը,— ասաց նա:

Էժենին շուր տվեց իր գլուխը, որովհետև իր ազնիվ ուղղամտությունը կշտամբեց նրան: Կյանքում առաջին անգամ նրա սրտի մեջ լավն ու վատը դեմ առ դեմ էին գտնվում: Մինչ այդ, նա ոչ մի պատճառ չեր ունեցել կարմրելու իր որևէ արածից: Վերջապես սերն ու հետաքրքրությունը հաղթեցին: Ամեն մի նախադասություն նրա սիրտը ավելի հուզեց, և այն կրծող բուռն տենչը, որ այդ ընթերցման ժամանակնրա էռությունը կենդանացրեց, ավելի քաղցրություն տվեց նրա առաջին սիրո հաճույքներին:

«Բմ սիրելի Աննետ, մեզ ոչինչ չեր կարող բաժանել, բացի այն դժբախտությունից, որ ընկճում է ինձ և որը մարդկային ոչ մի խոհեմություն չեր կարող նախատեսել: Հայրս ինքնասպան է եղել, նրա և իմ հարստությունն ամբողջովին կորած է: Ես մնացի որք մի տարիքում, երբ իմ ստացած դաստիարակության իսկ պատճառով, ես կարող եմ երեխա համարվել: Սակայն անհրաժեշտ է, որ ես իբրև հասուն մարդ դուրս գամ այն անդունդից, որտեղ որ ընկել եմ այսօր: Այս գիշերվա մի մասը հատկացրել եմ իմ հաշիվներն անելուն: Եթե ես ուզում եմ Ֆրանսիայից հեռանալ պատվավոր մարդու նման, և այդ կասկածից դուրս է, ապա գրպանում չունեմ անգամ հարյուր ֆրանկ՝ գնալու և փորձելու համար իմ Բախսոր Ամերիկայում կամ Հնդկաստանում: Այո՛, իմ խեղճ Աննա, ես պիտի գնամ բախս փնտրելու ամենից մահաբեր կլիմաների ներքո: Այդ երկինքների տակ շուտով և ապահովաբար կարելի է հարստանալ ասացին ինձ: Իսկ Փարիզում ես չեմ կարող մնալ: Ո՛չ իմ հոգին, ոչ էլ դեմքը կարող են տանել այն վիրավորանքը, սառնությունն ու արհամարհանքը, որ սպասում են կործանված մարդուն, սնանկացածի որդուն: Աստված իմ, երկու միլիոն պարտք ունենալ... Դրա համար առաջին շաբաթին ես մենամարտում մահացած կլինեի: Ահա թե ինչու, երբեք չեմ վերադառնա այնտեղ: Քո սերն իսկ, ամենաքաղցրն ու ամենաանձնուրացը բոլոր սերերից, որ երբեկց ազնվացրած լինի մարդկային սիրտը, չի կարող ինձ այնտեղ վերադարձնել: Ավա՞ն, սիրեցյալս, այլևս բավականաշափ փող չունեմ քեզ մոտ գալու համար, տալու և ստանալու մի վերջին համբույր, մի համբույր, որից ես կքաղեի իմ ձեռնարկության համար անհրաժեշտ ուժը»...

— Խե՞ դժ Շառլ, լավ որ կարդացի, ես ոսկի ունեմ և կտամ նրան,— ասաց Էժենին:

Նա շարունակեց իր ընթերցանությունը՝ արցունքները սրբելուց հետո:

«Մինչ այսօր ես բոլորովին չեմ մտածել աղքատության տառապանքների մասին: Եթե ես ունեմ ճամփորդության համար անհրաժեշտ հարյուր լուիդոր, մի սու իսկ շունեմ ապրանք գնելու համար: Բայց ոչ Փարիզում իմ ունեցած պարտքերի կարգադրությունից հետո միայն ես կարող եմ իմանալ, թե ունեմ հարյուր թե մի լուիդոր: Եթե ինձ ոչինչ չմնա, հանգիստ կերպով կզնամ Նանս, նաև կնսում որպես մի հասարակ նավաստի և այնտեղ էլ կսկսեմ, ինչպես սկսել են կամքի տեր մարդիկ, որ իրենց երիտասարդ տարիքում ոչ մի սու չեն ունեցել, բայց Հնդկաստանից վերադարձել են հարստացած: Այս առավոտից սկսած, ես սառն կերպով քննել եմ իմ ապագան: Նա ավելի սոսկալի է ինձ համար, քան մի ուրիշի, ինձ համար, որ գուրգուրվել եմ ինձ պաշտոր մոր կողմից, սիրվել հայրերի լավագույնից, որն իր կյանքի առաջին քայլերին իսկ հանդիպել է մի Աննայի սիրույն: Ես կյանքից միայն ծաղիկներ եմ քաղել, նման մի երջանկություն չեր կարող երկար տևել: Սակայն, սիրելի Աննետ, ես ավելի քաջություն ունեմ, քան անհոգ երիտասարդին է թույլ տրված ունենալ, մանավանդ այն երիտասարդին, որը վարժվել է փարիզյան ամենաքնքուշ կնոջ փաղաքշանքներին, որին ամեն ինչ ժպտացել է տանը, և որի ցանկությունները օրենք են եղել իր հոր համար... Օ՛հ, հայրս մեռել է, Աննետ: Ես մտածեցի իմ կացության, ինչպես և քո կացության մասին: Ես խիստ ծերացա այս քանչղորս ժամում: Թանկագին Աննետ, որպեսզի Փարիզում ինձ քեզ մոտ պահելու համար դու զոհեիր քո կյանքի շրեղությունները, քո արդուզարդը, օպերայում քո օրյակը, այնուամենայնիվ մենք դարձյալ չենք կարողանա իմ անկանոն կյանքի համար անհրաժեշտ գումարը գոյացնել, բացի դրանից ես չեմ կարող այդքան գոհարերում ընդունել: Արդ, մենք այսօր վերջնականապես պետք է բաժանվենք»:

— Նա նրանից բաժանվում է, սուրբ աստվածածին, ի՞նչ երջանկություն:

Էժենին վեր ցատկեց ուրախությունից: Շառլ շարժվեց, Էժենին ահից դողաց, բայց բարերախտաբար երիտասարդը չզարթնեց: Էժենին շարունակեց:

«Ե՞րբ եմ վերադառնալու: Զգիտեմ: Հնդկաստանի կլիման շուտ է ծերացնում եվրոպացիներին, մանավանդ, երբ նրանք աշխատում են: Ասենք տասը տարի հետո: Տասը տարի հետո քո աղջիկը կլինի տասնութ տարեկան և կլինի քո ընկերուիկին, քո լրտեսը: Քեզ համար մարդիկ անողոք կլինեն, իսկ քո աղջիկը՝ հավանաբար ավելի: Մենք աշխարհիկ այդ դատողություններից և մանկահաս աղջիկների այդ ապերախտություններից օրինակներ ունենք: Աշխատենք օգտվել դրանցից: Քո հոգու խորրում պահի ր, ինչպես որ ես եմ պահում, այս զորս տարիների երջանկության հիշատակը, և եթե կարող ես, հավատարիմ եղիր քո դժբախտ բարեկամին: Համենայն դեպս ես չեմ կարող այդ պահանջել, որովհետու իմ սիրելի Աննետ, ես պարտավոր եմ հարմարվել իմ կացությանը, կյանքն ընդունել մի բուրժուայի նման և այն ըմբռնել ճշմարտացիրեն: Հետևաբար ես պարտավոր եմ մտածել ամուսնության մասին, որ իմ ներկա գոյության անհրաժեշտություններից մեկն է, և ես խոստովանում եմ քեզ, որ այստեղ, Սոմյուրում, իմ հորեղբոր մոտ, ես գտա մի զարմուիի, որի նիստուկացը, դիմագծերը, միտքն ու սիրտը դու կիավանեիր, և որը բացի դրանից, ունենալու է...»:

«Նա շատ հոգնած պետք է լիներ, որ նամակն այսպես կիսատ է թողել», ասաց Էժենին ինքն իրեն՝ նկատելով, որ նամակն ընդհատված էր այդ նախադասության կեսին:

Էժենին իրավունք էր տալիս Շառլին: Մի՞ թե անհավատալի է թվում, որ այդ բոպեին անմեղ աղջիկը չնկատեց նամակում եղած սառնությունը: Կրոնական դաստիարակությամբ մեծացած անգիտակ և մաքուր աղջիկների համար ամեն ինչ սեր է, երբ նրանք իրենց ոտքը սիրո հմայիչ ոլորտներն են

դնում: Նրանք այնտեղ քայլում են՝ շրջապատված երկնայինայն լույսով, որ նրանց հոգուց է ժայթքում և իր շողերն է նետում նրանց սիրածի վրա, նրանք գունավորում են նրանց՝ իրենց սեփական զգացումների կրակով և նրանց վերագրում իրենց գեղեցիկ խոհերը: Կնոջ սիսալմոնքների պատճառը գրեթե միշտ զախս է դեպի լավն ունեցած նրա հավատից կամ դեպի ճշմարիտը տածած նրա վստահությունից: Էժենիի համար «Իմ սիրելի Աննետ, իմ սիրեցյալ» բառերը նրա սրտում արձագանքում էին իրեն սիրու ամենազեղեցիկ արտահայտություններ և փայփայում նրա հոգին, ինչպես որ նրա մանկական տարիներում Venite adoremus-ի՝ աստվածային հնչյունները երգեհոնի ձայնակցությամբ զգվում էին նրա լսողությունը: Արցունքները, որ դեռևս թրջում էին Շառի աչքերը, ցույց էին տալիս նրա հոգու ամբողջ ազնվությունը, որից որևէ դեռատի աղջիկ միշտ էլ հմայվում է: Կարո՞ղ էր նա իմանալ, որ եթե Շառը այնքան սիրում էր իր հորը և նրա վրա ողբում, ապա այդ սիրու դրդապատճառն ավելի շուտ հայրական բարությունն էր, քան Շառի սրտի ազնվությունը: Պարոն և տիկին Գիյոմ Գրանդեները, միշտ գրիացում տալով իրենց զավակի քմահաճույքներին, ընձեռնելով նրան հարստության բոլոր հաճույքները, ազատ էին թողել Շառին սոսկակի այն հաշիվներից, որոնցով Փարիզում որդիներից շատերը ավելի կամ նվազ չափով հանցանոր են փարիզյան հաճոյալից կյանքի պայմաններում, և առաջ են բերում գաղափարներ, ծրագրեր, որոնց իրականացման շարունակական հետաձգումը և ուշացումը՝ նրանք սրտի ցավով վերագրում են իրենց ծնողների կենդանի լինելուն: Հետևաբար հոր առատաձեռնությունը հաջողել էր Շառի սրտում դնել որդիիական ճշմարիտ սեր, առանց որևէ հետին մտրի: Սակայն Շառը փարիզյան տղա էր, Փարիզի բարքերի, ինչպես և Աննետի շնորհիվ ամեն ինչ հաշվելու վարժված: Արդեն նա ծերունի էր՝ երիտասարդի դիմակով: Նա ստացել էր շրջապատի այն ահավոր դաստիարակությունը, որի պատճառով մի երեկոյում, մտածումներով և խոսքերով կատարվում են ավելի շատ ոճիրներ, քան արդարադատությունների, ուր մարդիկ ուժեղ են այն չափով, ինչ չափով ճիշտ են տեսնում, իսկ այնտեղ ճիշտ տեսնել նշանակում է շհավատալ ոչնչի, ոչ զգացումների, ոչ մարդկանց, ոչ էլ իրադարձություններին: Այնտեղ կեղծ իրադարձություններ են ստեղծում: Այնտեղ ճիշտ տեսնելու համար անհրաժեշտ է ամեն առավոտ կշռել որևէ բարեկամի դրամապանակը, քաղաքականորեն բարձր մնալ բոլոր կարելիություններից, ժամանակավորապես ոչ մի բանի՝ ոչ զեղարվեստական գործերի, ոչ ազնիվ արարքների վրա չիխանալ և ամեն բանի համար իրեն դրդապատճառ ներկայացնել անձնական շահը: Բյուրավոր խենթություններից հետո, բարձրաշխարհիկ կինը՝ գեղեցիկ Աննետը ստիպում էր Շառին լրջորեն մտածել: Նա Շառի վարսերի մեջ միաբնելով հոտավետ ձեռքը, խոսում էր նրա հետ նրա ապագա վիճակի մասին: Նրա ծամերից խոպոպիկներ հյուսելով՝ նրան կշռել էր տալիս կյանքը: Նա նրան ներշնչում էր մեղկություն և նյութապաշտություն, կրկնակի այլասերում, սակայն նուրբ, վայելուշ և լավ ճաշակով այլասերում:

— Շատ միամիտ էք, Շառ! — ասում էր նա: — Ես դժվարությամբ պիտի կարողանամ ծանոթացնել ձեզ աշխարհիկ հասարակությանը: Դուք շատ վատ վարվեցիք պարոն դե Լյուպոյի հետ: Ես գիտեմ, որ նա շատ էլ պատվավոր մարդ չէ, բայց համբերեցեք որ նա զրկվի ամեն տեսակի իշխանությունից, այդ դեպքում դուք նրան կարող եք ազատորեն արհամարհել: Գիտե՞ք, ինչ էր ասում մեզ տիկին Կամպան. «Զավակներս, որքան ժամանակ որ մի մարդ մինհստրության մասն է կազմում՝ պաշտեցեք նրան, բայց երբ նա ընկնում է այնտեղից՝ օգնեցեք աղքանոց քարշ տալու նրան: Երբ զորավոր է, նա մի տեսակ աստված է, իսկ երբ տապալվում է, ավելի ցած է, քան Մարատը՝ կյուրիդիում, որովհետև նա շարունակում է ապրել, իսկ Մարատը մեռած էր: Կյանքը

---

\* Եկեք պաշտենք (լատ.) աղոթքի առաջին բառերը:

կոմբինացիաների շարան է. անհրաժեշտ է դրանք ուսումնասիրել, հետևել դրանց՝ իրեն լավ դիրքում պահել կարողանալու համար»:

Շառլը շատ մոդայական մարդ էր, շատ երկար էր ծնողների կողմից երջանիկ եղել բարձր դասի կողմից շատ էր շոյվել, որպեսզի կարողանար մեծ զգացմունքներ ունենալ: Մաքուր ուսկու սերմը, որ մայրը նետել էր նրա սրտի մեջ, արդեն թուլացել էր փարիզյան կյանքի փորձություններում: Նա այդ գործածել էր մակերեսորեն և նա պետք է մաշվեր շփումից: Բայց Շառլը այդ ժամանակ քսանմեկ տարեկան էր: Այդ տարիքում կյանքի թարմությունն ու հոգու գեղեցկությունը անբաժանելի են թվում: Զայնը, նայվածքը, դեմքը զգացումների հետ կարծես ներդաշնակ են թվում: Հետևաբար ամենից խիստ դատավորը, ամենից թերահավատ երդյալը, ամենից դժվարահաճ վաշխառուն միշտ էլ կասկածում են հավատալու զգացումների ծերությանը, հաշիվների խարդախությանը, եթե հայացքները դեռևս լողում են վճիռ հեղուկի մեջ և ճակատների վրա ոչ մի կնճիռ չի գտնվում:

Շառլը երբեք առիթ չէր ունեցել կիրառելու փարիզյան բարոյականության խրատները և մինչև այսօր նա իր անփորձությամբ հմայիչ էր: Բայց, իրենից անկախ, նրա հոգում մտել էր իր եսասիրությունը: Փարիզեցիներին հատուկ քաղաքատնտեսության սերմերը, թաքնված նրա սրտում՝ շուտով բոլողչելու էին, հենց որ նա պարապ հանդիսատեսից վերածվեր իրական կյանքի դրամայում խաղացող դերասանի:

Գրեթե բոլոր աղջիկները ենթարկվում են արտաքինի քաղցր խոստումներին. բայց երեւ նույնիսկ Էժենին պրովինցիայի որոշ աղջիկների շափ խոհեմ և շրջահայաց էլ լիներ, մի՞թե կկարողանար չվստահել իր հորեղբորորդուն, եթե սրա շարժուձևները խոսքերն ու գործերը դեռևս ներդաշնակում էին սրտի տենչերին: Մի դիպված, աղջկա համար ճակատազրական, սրբեց նրա սրտում եղած ճշմարիտ զգայնության այդ վերջին զեղումները և լսելի դարձեց, այսպես ասած, խղճմտանքի վերջին հառաջները: Նա մի կողմ դրեց իր համար սիրով լի այդ նամակը և սկսեց հաճույքով դիտել իր քնած հորեղբորորդուն: Նրա համար կյանքի թարմ պատրանքները դեռևս խաղում էին Շառլի դեմքի վրա: Նա նախ ինքն իր համար երդվեց միշտ սիրել նրան: Հետո իր աշքերը դարձեցերկրորդ նամակի վրա, այլևս առանց մեծ նշանակություն տալու անպատշաճությանը և եթե նա սկսեց կարդալ այդ նամակը, ապա միայն նրա համար, որ ստանար նոր ապացույցներ այն ազնիվ հատկությունների համար, որոնք ինչպես բոլոր սիրող կանայք, նա վերագրում էր իր ընտրածին:

«Իմ սիրելի Ալֆոնս, այն բոպեին, որ դու կկարդաս այս նամակը, ես այլևս բարեկամներ չեմ ունենա: Բայց քեզ խոստովանում եմ, որ կասկածելով հանդերձ աշխարհիկ այն մարդկանց վրա, որոնք վարժվել են շոայել այս բառը, ես ոչ մի կասկած չունեմ քո բարեկամության մասին: Հետևաբար ես քեզ եմ հանձնարարում կարգադրել իմ գործերը և վստահ եմ, որ դու կանես հնարավորը իմ ունեցածներից ինձ մի լավ օգուտ ապահովելու համար: Այժմ դու տեղյակ ես լինելու իմ կացությանը: Ես այլևս ոչինչ չունեմ և ուզում եմ գնալ Հնդկաստան: Ես արդեն գրել եմ բոլոր նրանց, որոնց կարծում եմ, որ պարտը եմ մանր գրւմարներ, և դու այս նամակին կից կգտնես նրանց ցուցակը, այն չափով ճշգրիտ, ինչ չափով կարողացա այդ անել հիշողությամբ: Գրադարանս, իմ կահկարասիները, կառքերը և ձիերը կարծում եմ բավական են պարտքերս վճարելու համար: Ես ուզում եմ պահել միայն այն անարժեք սնոտի իրերը, որոնք անհրաժեշտ են մի քանի ապրանքներ ձեռք բերելու համար: Իմ թանկագին Ալֆոնս, այդ վաճառումների համար, այստեղից, ես քեզ կուղարկեմ օրինական մի փոխանորդագիր՝ գործադրելու որևէ ընդդիմության դեպքում: Դու ինձ կուղարկես իմ բոլոր զենքերը, իսկ Բրիտոնը կվերցնես քեզ: Ոչ ոք այդ սրանչելի կենդանու արժեքը չի կարող վճարել, ավելի շուտ ես ուզում եմ նրան քեզ նվիրել, ինչպես որ մահամերձը իր գործածած մատանին նվիրում է իր կտակարանին: Ֆարի, Բրեյլման և Ընկ. ինձ համար մի շատ հանգստավետ ուղեկառք կառուցեց, բայց ինձ շիամննեց: Աշխատիր, որ այն պահեն իրենց, առանց ինձնից որևէ հաստուցում պահանջելու: Եթե նրանք մերժելու լինեն, կարգադրիր այնպես, որ իմ

ուղղամտությունը չենթարկվի կասկածի այն հանգամանքներում, որ գտնվում էմ այժմ: Ես կղզեցուն պարտը էմ վեց լուիդոր, որ կորցրել էմ խաղի մեջ, չմոռանաս այդ նրան...»:

— Սիրե՛ լի զարմիկ, — մրմնջաց Էժենին, նամակը իր տեղում դնելով և մանրաքայլ իր սենյակը փութաց, ձեռքին վառած մոմերից մեկը բռնած:

Այնտեղ մեծ հուզմունքով նա բացեց կաղնե փայտից շինված վաղեմի մի պահարանի զգրոցը, մեկը վերածնունդի ամենագեղեցիկ գործերից, որի վրա դեռ կիսովին ջնջված նշմարվում էր թագավորական երեխի սալամանդրը: Նա զգրոցից վերցրեց ոսկե գնդազարդերով և թոթոռն մետաղաթելերով եզերված կարմիր թավշե մի խոշոր քսակ, որ մնացել էր իր տատի ժառանգությունից: Նա հպարտությամբ կշռեց այն իր ափերի մեջ և հաճույքով սկսեց հաշվել իր փոքր հարստությունը, որի քանակը մոռացել էր: Նախ նա իր գանձից առանձնացրեց դեռ նոր, քսան փորթուզալական ոսկին, տրված Ժան V-ի օրով, 1725 թվականին, պաշտոնական շուկայում հինգ լիզբոնյան կամ ամեն մեկը հարյուրվաթսունութ ֆրանկ վաթսունչորս սանտիմ արժողությամբ, ինչպես հայրն էր իրեն ասել, սակայն որի պայմանական արժեքը, նրա հազվագյուտության և արևի նման փայտուն գեղեցկության շնորհիվ, հարյուրութսուն ֆրանկ էր: Նմանապես հինգ ձենովյան ոսկի կամ ձենովյահ հարյուր լիվր արժեցող դրամ. մի այլ հազվագյուտ դրամ, սակարանուս ութսունյոթ ֆրանկ արժողությամբ, բայց ոսկեդրամների հավաքածու սիրողների համար՝ հարյուր ֆրանկ: Մրանք մնացել էին ծերունի պարոն դը լա Բերթելիենից: Նաև՝ երեք հատ իսպանական քառյակ ոսկի՝ Ֆիլիպ V-ի, 1729 թվականին կտրված, տիկին Ժենիվիլեի ընծան, որը նվիրելիս նրան կրկնել էր միևնույն նախադասությունը. «Այս սիրելի դեղձանիկը, այս փոքր դեղնորակն արժի ինսունութ լիվր: Սա լավ պահեցեք, անուշիկս, ձեր գանձի ծաղիկն է լինելու: Նաև՝ այն, ինչ իր հոր համար ամենից արժեքավոր էր (այդ դրամների ոսկին քսաներեք և ավելի մի կոտորակ կարատ էր), հոլանդական հարյուր դուքսատ՝ կտրված 1756 թ. և համարյա տասներեք ֆրանկ արժեքով: Նաև՝ իսիստ հետաքրքրական իրեր... մեղալներ՝ արժեքավոր՝ ազահների համար, երեք րուայի՝ Կշիռի նշանով և ուրիշ հինգ րուայիներ՝ Աստվածածնի նկարներով, բոլորն էլ մաքուր ոսկի՝ քսանչորս կարատով, Մեծ Մոգրի սքանչելի դրամը, որի յուրաքանչյուր մի ոսկին արժեք էրեսունյոթ ֆրանկ և քառասուն սանտիմ, բայց նվազագույնը հիսուն ֆրանկ այն ճանաչողների համար, որոնք սիրուս են ոսկի շոշափել: Նաև՝ քառասուն ֆրանկանց նապուենը, որ նախորդ օրն էր ստացել և անտարբեր կերպով նետել էր կարմիր քսակի մեջ:

Այս գանձը պարունակում էր նոր և կույս դրամներ, արվեստի ճշմարիտ գործեր, որոնցով հայր Գրանդեն ժամանակ առ ժամանակ հետաքրքրվում էր, ուզում էր կերստին տեսնել՝ որպեսզի աղջկանը բացատրեր ներքին արժանիքները — եզերքների գեղեցկությունը, մակերեսի մաքրությունը, գրերի հստակությունը, որոնցով ցայտուն գծերը մնում էին անաղարտ: Բայց նա չէր մտածում ո՛չ այդ հազվագյուտ դրամների, ոչ իր հոր հիվանդոտ սովորության և ոչ էլ վտանգի մասին, որ նրան կարող էր սպասել իր հոր համար այնքան սիրելի այդ գանձից բաժանվելու դեպքում: Ո՛չ, նա միայն մտածում էր իր հորեղբորորդու մասին և հաշվային մի քանի սիսաներից հետո, վերջապես կարողացավ իմանալ, որ ինքն ուներ մոտ հինգ հազար ութիարյուր ֆրանկ իրական արժեքով դրամներ՝ որոնք պայմանականորեն, կարող էին ծախվել մոտ երկու հազար էկյուտ: Այդ հարստությունը տեսնելով՝ նա սկսեց ծափահարել այն երեխայի պես, որը մարմնական անմեղունակ շարժումների մեջ է վատնում իր չափազանց ուրախությունը: — Այսպես հայր ու աղջիկը, ամեն մեկն առանձին, իրենց հարստությունները հաշվեցին. հայրը՝ վաճառելու համար իր ոսկին՝ Էժենին՝ իրենը խանդադատանքի օվկիանոսի մեջ նետելու: Նա դրամները նորից լցրեց իին քսակի մեջ, այն վերցրեց իր հետ և անվարան վեր բարձրացավ: Իր հորեղբորորդու թաքուն աղքատությունը նրան մոռացնել էր տալիս գիշերն ու պատշաճությունները, և հետո՝ նա ուժով էր իր խղճով, իր անձնվիրությամբ, իր երշանկությամբ:

Այն րոպեին, երբ նա մի ձեռքին մոմը և մյուսում քսակը՝ Երևաց շեմքի վրա, Շառլը զարթնեց, տեսավ իր հորեղորադշկան և հանկարծակի եկած՝ մնաց զարմացած: Էժենին առաջ եկավ, լուսը դրեց սեղանի վրա և հուզված ասաց.

— Զարմիկս, պետք է, որ ես ձեզնից ներողություն խնդրեմ մի շատ ծանր հանցանքի համար, որ գործել եմ ձեր հանդեպ: Բայց աստված ինձ կների այդ մեղքը, եթե դուք ուզենաք այն ներել:

— Ի՞նչ է որ,— ասաց Շառլն աչքերը շփելով:

— Ես կարդացի այս երկու նամակները:

Շառլը կարմրեց:

— Այդ ի՞նչպես կատարվեց,— շարունակեց աղջիկը:— Ինչո՞ւ համար էի վեր բարձրացել, այժմ էլ չգիտեմ: Բայց թվում է, թե շատ էլ չեմ զηցում, որ այդ նամակները կարդացել եմ, քանի որ նրանք ինձ ձանաչեցրին ձեր սիրտը, ձեր հոգին և...

— Եվ ի՞նչ,— հարցրեց Շառլ:

— Եվ ձեր ծրագրերը, մի որոշ գումար ունենալու անհրաժեշտությունը ...

— Իմ թանկագին զարմուհի...

— Սուս, սուս, իմ զարմիկ, մի խոսեք այդքան բարձր, չզարթնեցնեք ոչ ոքի: Ահավասիկ,— ասաց նա իր քսակը բանալով,— խնայողությունը մի խեղճ աղջկա, որը ոչ մի բանի կարիք չունի: Շառլ, ընդունեցեք այն: Այս առավոտ դեռևս չգիտեի, թե ինչ է դրամը, դուք ինձ սովորեցրիք. նա մի միջոց է, ուրիշ ոչինչ: Հորեղորորդին գրեթե եղայր է. դուք կարող եք ձեր քրոջ քսակը վերցնել փոխառությամբ:

Էժենին, նույնքան կին՝ որքան դեռահաս աղջիկ, չեր նախատեսել մերժումը: Իսկ հորեղորորդին մնում էր լուս:

— Մի՞ թե մերժում եք,— հարցրեց Էժենին, որի սրտի զարկերը լսվում էին խորունկ լուսթյան մեջ:

Իր հորեղորորդու վարանումը նվաստացրեց նրան. բայց նրա անմիջական չքավորությունը՝ նրա մտքի առաջ ներկայացավ ավելի սաստկորեն, և նա ծունկի եկավ:

— Ես չեմ բարձրանալու մինչև չընդունեք այս ոսկին,— ասաց աղջիկը,— հորեղորորդի, զքացեք, մի պատասխան տվեք... որպեսզի իմանամ, որ դուք ինձ պատիվ եք անում, թե դուք ազնիվ եք, թե...

Վսեմ հուսահատության աղաղակ լսելով՝ Շառլի աչքերից արցունքի կաթիլներ թափվեցին Էժենիի ձեռքերի վրա. նա վերցրեց աղջկա ձեռքերը, որպեսզի թույլ չտա նրան՝ ծունկի եկած մնալ: Այդ տաք արցունքներից հուզված՝ Էժենին խլեց քսակը և պարունակությունը թափեց սեղանի վրա:

— Ուրեմն ընդունո՞ւմ եք, չէ?— ասաց նա ուրախությունից լաց լինելով,— ոչինչ մի վախենաք, հորեղորորդի, դուք կհարստանաք: Այս ոսկին ձեզ բախտ բերի. մի օր դուք ինձ կվերադառնեք այն, մանավանդ որ մենք կընկերանանք. վերջապես ես պատրաստ եմ ընդունելու բոլոր այն պայմանները, որ դուք կրնեք: Բայց հարկ չէ, որ այս նվերին այդքան կարևորություն տաք:

Վերջապես Շառլը կարողացավ հայտնել իր զգացմունքները:

— Այո, Էժենի, ես շատ փոքրողի կլինեի, եթե շընդունեի այն, բայց ոչնչի փոխարեն՝ ոչինչ, վստահության փոխարեն՝ վստահություն:

— Ի՞նչ եք ուզում ասել,— հարցրեց աղջիկը սարսափած:

— Լսեք ինձ, իմ թանկագին զարմուիի, ես ունիմ այդտեղ...

Նա ընդհատեց իր ասածը՝ ցույց տալու համար փոքր պահարանի վրա կաշեպատ մի քառակուսի արկի:

— Ես այդտեղ ունեմ, տեսնում եք, չէ՞ , մի բան, որ ինձ համար կյանքիս չափ արժեքավոր է: Այդ տուփը իմ մոր նվերն է: Այս առավոտից ի վեր ես մտածում եի, որ եթե նա իր գերեզմանից դուրս գար, ինքն իսկ ներկա պայմաններում կվաճառեր այդ տուփը, որի համար, իր սիրուց մղված, նա մեծ գումար է վատնել: Բայց իմ կողմից վաճառելը սրբապղծություն կլիներ:

Էժենին լսելով այս խոսքերը՝ խոր հուզումով սեղմեց հորեղբորորդու ձեռքը:

— Ո՛չ— շարունակեց Շառլ մի փոքր դադարից հետո, որի միջոցին նրանք միմյանց նայեցին թաց աչքերով, — ո՛չ, ես չեմ ուզում այն փշացնել և ոչ էլ վտանգել իմ ճամփորդությունների ընթացքում: Սիրելի Էժենի, դուք նրա ավանդապահն եք լինելու: Երբեք բարեկամն այդքան նվիրական մի բան չի վստահել իր բարեկամին: Դուք ինքներդ դատեցեք:

Նա վերցրեց տուփը, դուրս հանեց իր պատյանից, բաց արեց, իր հիացած զարմուհուն տիսրությամբ ցույց տվեց արդուզարդի մի արկդիկ, որի վրա կատարված աշխատանքը ծախսված ուկուն տալիս էր շատ ավելի արժեք, քան իր քաշով արժեք:

— Սա, որի վրա դուք հիանում եք, մեծ բան չէ, — ասաց նա մի զսպանակ սեղմելով, և բաց արեց մի զույգ հատակ:— Ահա այն բանը, որ ինձ համար բովանդակ աշխարհն արժե:

Եվ նա դուրս հանեց երկու դիմանկար՝ տիկին դը Միրբելի երկու գլուխգործոցները՝ մարզարիտներով շրջանակված:

— Օ՛հ, որքան գեղեցիկ անձնավորություն. սա չէ՞ միթե այն կինը , որին դուք գր...

— Ոչ, — ասաց տղան ժպտալով:— Այդ կինը իմ մայրն է, և ահա հայրս, ձեր հորեղբորկինը և հորեղբայրը: Էժենի, ծնկաչոր խնդրում եմ ձեզնից այս զանձը պահել: Եթե պատահի, որ ես կորչեմ՝ կորցնելով նաև ձեր փոքր զանձը, այս ոսկին կհատուցի ձեր պարտքը. միայն ձեզ կարող եմ թողնել այս երկու նկարները, դուք միայն արժանի եք դրանք պահելու: Բայց երբ հարկ կլինի՝ ոչնչացրեք, որպեսզի ձեզնից հետո ուրիշի ձեռք չընկնեն:

Էժենին լուս էր:

— Ուրեմն այո, չէ՞ , — ավելացրեց Շառլ շնորհալիորեն: Լսելով այս խոսքերը, որ իր հորեղբորորդին ասաց այդ բոպեին, նա նրան հառեց սիրող կնոջ առաջին հայացքը, մեկն այն հայացքներից, որում համարյա նույնքան նազանք կա, որքան խորություն: Շառլ վերցրեց նրա ձեռքը և համբուրեց:

— Ո՛վ անմեղության հրեշտակ, մեր միջև դրամը միշտ էլ նշանակությունից զուրկ կլինի, այնպես չէ՞ : Այն զգացումը, որ նրան որոշ նշանակություն կտա, այսուհետև ամեն ինչ կլինի:

— Դուք ձեր մորն եք նման: Նրա ձայնը նույնքան քա՛ դցը էր, որքան ձերը:

— Ո՛հ, շատ ավելի քաղցր...

— Այո, ձեզ համար,— ասաց աղջիկը,— խոնարհելով թարթիչները:— Իսկ հիմա, Շառլ, քնեցեք, ես այդ խնդրում եմ, հոգնած եք: Ցտեսություն մինչև վաղը:

Նա մեղմորեն իր ձեռքը դուրս քաշեց իրեն ուղեկցող և ճամփան լուսավորող Շառլի ձեռքերից: Երբ միասին դուն շեմքին հասան՝ Շառլն ասաց.

— Ո՛հ, ինչո՞ւ նյութապես կործանված եմ:

— Բա՛հ, իմ հայրը հարուստ է: Գոնե այրպես եմ կարծում,— պատասխանեց Էժենին:

— Խե՞ դեմքսա, — վրա բերեց Շառլը մի քայլ առաջ անելով սենյակի մեջ և մեջքը պատին հենելով, — Եթե դա Ժիշտ լիներ՝ նա չէր քողնի, որ իմ հայրը մահանա, չէր քողնի, որ դուք այս թշվառության մեջ ապրեք, վերջապես նա ինքը այլ ձևով կապրեք:

— Բայց Ֆրուաֆոնը նրան է պատկանում:

— Եվ ի՞նչ կարծենա Ֆրուաֆոնը:

— Չգիտեմ, բայց նա ունի և Նուայեն:

— Մի քանի խղճուկ ազարակներ:

— Նա ունի խաղողի այգիներ և մարգագետիններ...

— Անպետք բաներ, — ասաց Շառլը արհամարհուտ եղանակով:— Եթե ձեր հայրը միայն քսանչորս հազար լիվր եկամուտ ունենար, մի՞թե դուք կապրեիք այս խոնավ և մերկ սենյակում, — ավելացրեց նա ձախ ոտքը առաջ տանելով:— Իմ զանձերը դուք, ուրեմն, պահելու եք այդտեղ, — ասաց նա իր մտքերը քողարկելու համար ցույց տալով մի հնացած պահարան:

— Գնացե՞ք պառկելու, — ասաց Էժենին՝ թույլ չտալով նրան մտնել շհավաքված սենյակը:

Շառլ գնաց, և նրանք փոխադարձ ժպիտով միմյանց բարի զիշեր մաղթեցին:

Երկուսն էլ քնեցին նույն երազով, և այդ րոպեից սկսած, Շառլ սկսեց մի քանի վարդեր սփռել իր սուզի վրա:

Հաջորդ առավոտ տիկին Գրանդեն իր աղջկան տեսավ նախաձաշից առաջ, Շառլի հետ զբոսնելիս: Երիտասարդը շարունակում էր տիսուր մնալ, ինչպես որ այդ անխուսափելի էր մի դժբախտի համար, որ իր վշտերի հատակը իջած՝ չափում է այն անդունի խորությունը, ուր նա զահավիժել էր և զգում է իր ապագայի ողջ ծանրությունը:

— Հայրս միայն ճաշին է զալու, — ասաց Էժենին՝ իր մոր դեմքի դրոշմված մտահոգությունը նկատելով:

Էժենիի շարժումների մեջ, դեմքի վրա, ձայնի բացառիկ քաղցրության մեջ հեշտ էր նկատել նրա և իր հորեղբորդու մտածումների նույնանմանությունը: Նրանց հոգիները զերմորեն կապվել էին իրար՝ գուցե և նախքան իմանալու զգացումների այն ուժը, որընցով նրանք միացել էին միմյանց: Շառլը մնաց սրահում, և նրա տիսուր յանը ոչ ոք չխանգարեց: Երեք կանայքն էլ զբաղված էին: Գրանդեն մոռացել էր իր անմիջական գործերի կարգադրությունը, և դրա համար բավականաշավ

մարդիկ եկան նրան փնտրելու: Տանիք շինողը, կապարագործը, որմնադիրը, հող փորողները, ատադագործը, հողային վարձակալներն ու ազարակապանները. ոմանք վերանորոգման հատուկ սակարկություններ անելու, մյուսները ազարակների վարձքը վճարելու, կամ փող ստանալու համար: Տիկին Գրանդեն և Էժենին ստիպված եղան երթևեկել՝ բանվորների և զուտացիների անվերջ հարցումներին պատասխանելու համար: Նանոնք խոհանոցում ընդունում էր եկամտային պարտքերը: Նա միշտ սպասում էր իր տիրոջ հրահանգներին՝ իմանալու թե ինչ բան պետք է պահի տան համար և ինչը վաճառի շուկայում: Ծերուկը սովորություն ուներ, ինչպես զյուղական ազնվականներից շատերը, իր վատ գինին խմել և ուտել իր փշացած պտուղները: Երեկոյան ժամը հինգի մոտ, Գրանդեն վերադարձավ Անժերից բերելով տասնչորս հազար ֆրանկ ոսկով ձեռք բերված թագավորական արժեթղթեր, որոնք նրան տոլկոս կրերեին մինչև այն օրը, երբ նա վճարեր իր ունտաները: Նա Կորնուայեին թողել էր Անժերում՝ ինսամելու համար ծայր աստիճան հոգնած ձիերը և ետ բերելու դանդաղորեն, երբ բոլորովին հանգստացած կլինեին:

— Անժերից եմ գալիս, կի՞ն, և քաղած եմ:

Նանոնք լսելով նրա ձայնը՝ ճաց խոհանոցից:

— Մի՞թե երեկվանից ի վեր ոչինչ չեք կերել:

— Ոչինչ,— պատասխանեց Գրանդեն:

Նանոնք բերեց ապուրը: Դե Գրասենը եկավ իր կլիենտի հրահանգներն ստանալու, երբ արդեն ամբողջ ընտանիքը բոլորված էր ձաշի սեղանի շուրջը: Հայր Գրանդեն իր եղբորորդուն նույնիսկ չէր նկատել:

— Առանց շտապելու ձաշի՝ Գրանդեն՝, — ասաց բանկիրը: — Մենք հետո կխսունք: Գիտե՞՞ս թե ինչ արժե ոսկին Անժերում, որտեղ առնում են այն՝ Նանտ տանելու համար: Ես միտք ունիմ ոսկի ուղարկել Անժեր:

— Մի՞ ուղարկիր, — պատասխանեց ծերուկը, — այնտեղ արդեն անհրաժեշտ չափով ոսկի կա: Մենք լավ բարեկամներ ենք, ուստի և չեմ կարող ձեզ խորհուրդ շտալ, որ ժամավաճառ չլինեք:

— Բայց ոսկին այնտեղ արժե տասներեք ֆրանկ հիսուն սանտիմ:

— Ասացեք արժեր:

— Բայց որտեղի՞ց կարող էր ոսկի եկած լինել:

— Այս զիշեր ես Անժեր եմ գնացել, — ասաց նրան Գրանդեն ցած ձայնով:

Բանկիրը զարմանքից ցնցվեց: Հետո շշուկով նրանք սկսեցին խոսել, որի միջոցին դե Գրասենը և Գրանդեն հաճախակի Շառլին էին նայում: Այն բռպեին, երբ նախկին տակառագործը վստահաբար թելադրում էր բանկիրին, որպեսզի իր համար հարյուր հազար լիվրի ունտա զնի, դե Գրասենը ակամա զարմանքի արտահայտություն ունեցավ:

— Պարոն Գրանդեն՝, — ասաց նա Շառլին, — Փարիզ եմ մեկնում, որևէ հանձնարարություն չունե՞ք ինձ տալու...

— Ոչ մի պարոն, շնորհակալ եմ, — պատասխանեց Շառլը:

- Նրան ամելի լավ շնորհակալություն հայտնիր, եղբորորդի: Պարոնք գնում է Գիյում Գրանդեի առևտրական տան հաշիվները կարգավորելու:
- Մի՞թե որևէ հույս կա, — հարցրեց Շառլը:
- Բայց, — բացազանչեց տակառագործը լավ կեղծված հպարտությամբ, — մի՞թե իմ եղբորորդին չեք դուք: Չեր պարտքը մերն է: Մի՞թե Գրանդե չեք կոչվում դուք:
- Շառլը ոտքի կանգնեց, գրկեց հայր Գրանդեին, համբուրեց նրան, գունատվեց և դուրս եկավ: Էժենին հիացած իր հորն էր նայում:
- Երթաք բարո՞վ, իմ բարի դե Գրասեն, ամբողջովին նվիրված եմ ձեզ. և մի լավ հուպ տվեք այդ մարդկանց:
- Երկու դիվանագետները միմյանց ձեռքը սեղմեցին, նախկին տակառագործը մինչև դուրը առաջնորդեց բանկիրին, ապա դուռը փակելուց հետո վերադարձավ և թաղվելով իր թիկնաթոռի մեջ՝ ասաց Նանոնին.
- Ինձ հաղարջօղի տուր:
- Բայց որովհետև չափազանց հուզված էր և չէր կարողանում տեղում նստած մնալ, նա նորից ոտքի կանգնեց, նայեց պարոն դը լա Բերթելիերի նկարին և սկսեց երգել, շարժվելով միայն այնպիսի ձևով, որ Նանոնը պարի քայլեր էր անվանում:
- Ֆրանսիական պահակազորում,
- Ես մի բարի հայր ունեի...
- Նանոնը, տիկին Գրանդեն և Էժենին միմյանց էին զննում փոխադարձաբար և լուռ: Խաղողագործի ուրախությունը նրանց միշտ էլ սարսափ էր ազդում, երբ իր գազարնակետին էր հասնում: Երեկոն շուտով վերջացավ: Նախ հայր Գրանդեն ցանկացավ վաղ քնել, իսկ երբ անկողին էր մտնում, նրա տանն ամեն ինչ պետք է քներ, ինչպես որ երբ Օգոստոսը խմում էր՝ ողջ Լեհաստանը հարրում էր: Շառլը, Նանոնը և Էժենին էլ տանտիրոջից պակաս հոգնած չէին: Գալով տիկին Գրանդեին՝ նա քնում էր, ուստում, խմում, քայլում՝ ըստ իր ամուսնու ցանկության: Այնուամենայնիվ մարսողությանը հատկացված երկու ժամկա ընթացքում տակառագործը շատ ավելի զվարք լինելով, քան երբնէ, ասաց իր մասնահատուկ խրատախոսություններից շատերը, որոնցից մեկը բավական է նրա մտքի չափանիշը տալու համար: Երբ նա խմեց հաղարջօղին, նայեց բաժակին և ասաց.
- Հազիվ շուրբերդ բաժակին ես մոտեցնում, և նա արդեն դատարկ է: Ահա մեր պատմությունը: Կարելի չէ և լինել, և եղած լինել: Դրամները չեն կարող ն' գորվել, և՝ մնալ քո քսակի մեջ, այլապես կյանքը շատ գեղեցիկ կլիներ:
- Նա եղավ ուրախ և ողորմած. և երբ Նանոնը վերադարձավ իր ճախարակի հետ՝ նա ասաց.
- Հոգնած կլինես, — ասաց նա, — թող քո վուշը:
- Լա՞վ... թե չէ... ձանձրանում եմ, — պատասխանեց աղախինը:
- Խե՞ դժ Նանոն: Հաղարջօղի ուզո՞ւմ ես:

— Ա՛հ, ինչ վերաբերում է հաղարջօղուն՝ չեմ մերժի, տիկինն այն պատրաստում է ավելի լավ, քան դեղագործները: Նրանց վաճառածը դեղ է:

— Նրանք շատ են շաքար խառնում և համը կորսվում է,— ասաց ծերուկը:

Հաջորդ օրը, ժամը ութին ընտանիքը հավաքվելով նախաձաշի՝ առաջին անգամ իսկական մտերմության մի տեսարան էր ներկայացնում: Դժբախտությունն արագ միացրել էր տիկին Գրանդեին, Էժենիին և Շառլին: Նանոնք ինքն էլ նույնն էր զգում, առանց իմանալու, թե ինչու: Չորսը միասին սկսում էին կազմել մի ընտանիք: Գալով ծեր խաղողագործին, որի ազահությունը գոհացում էր գտել արդեն, և վստահ, որ պահանջող շուտով կմեկնի, և ինքը կվճարի միայն նրա ճամփորդության ծախսը մինչև Նանտ՝ նրան դարձրել էին զրեթե անտարբեր դեպի նրա ներկայությունն իր բնակարանում: Նա թույլ տվեց, որ երկու երեխաները,— նա այսպես էր անվանում Շառլին և Էժենիին,— ազատ իրենց ուզածի պես շարժելուն տիկին Գրանդեի հսկողության ներքո: Նա բացարձակ վստահություն ուներ տիկին Գրանդեի վրա, երբ հարցը վերաբերում էր հանրային և կրոնական բարոյականնին: Նրան զբաղեցնում էին բացառապես ճանապարհը եզերող իր մարզագետինների և փոսերի դասավորությունը, Լուառում կադամախիններ տնկելը և Ֆրուաֆոնում այգիների ձմեռային աշխատանքները: Այդ պահից Էժենիի համար սիրո գարնանածաղիկը բացվել սկսեց: Գիշերայինայն տեսարանից ի վեր, երբ հորեղբորաղջիկը տվեց իր գանձը հորեղբորորդուն, Էժենիի սիրտը գանձին էր հետևել: Երկուսն էլ մեղսակից միննույն գաղտնիքին, միմյանց էին նայում՝ փոխադարձաբար միմյանց հասկանալով. մի հանգամանք, որ ավելի էր խորացնում նրանց զգացումները և տալիս էր նրանց ավելի նույնություն, ավելի մտերմությունը երկուսին էլ, այսպես ասած, դուրս բերելով սովորական լյանքից: Ազգակցական կապը մի՞թե նրանց իրավունք չէր տալիս իրենց շեշտի մեջ դնելու ավելի քաղցրություն, իրենց հայացքներում՝ խոր գորգուրանք: Էժենիին հաճելի էր, որ կարող է իր զարմիկի ցավը նորածին մի սիրո մանկական հրձվանքով քնացնել: Մի՞թե շնորհագեղ նմանություն չկա սիրո և կյանքի սկլիրնավորումների մեջ: Երեխային չե՞ն օրորում անուշ երգերով և քաղցր նայվածքներով: Նրան մի՞թե չեն պատմում սրանչելի հերթաբներ, որոնք նրա ապագան ուսկեզօծ են ցույց տալիս: Նրա համար հույսը անընդհատ չի՝ շարժվում իր լուսաշող թևերը: Չի՝ բափում նա փոխնիփոխ ուրախության ու վշտի արցունքներ: Մի՞թե նա չի վիճում անարժեք իրերի համար, մանրախիճերի համար, որոնցից նա փորձում է կառուցել մի շարժական պալատ, հազիվ քաղված և արդեն մոռացված ծաղկեփնջերի համար: Նա չի՝ տենչում բռնել ժամանակը, առաջ զնալ լյանքում: Սերը մեր երկրորդ վերափոխությունն է: Շառլի և Էժենիի միջև սերն ու մանկությունը նույն բանը եղան, այդ եղավ առաջին տարիանքը իր բոլոր երեխայություններով, և երկուսի սրտերի համար էլ տիրությամբ պարուրված, ավելի զգվածից: Սգո շղարշի ներքո տիրությամբ ծնվող սերը ավելի խորապես էր ներդաշնակում այդ քայլաշվող տան պրովինցիալ պարզության հետ: Լուռ բակում, ջրհորի եզերքին, մի քանի բառ փոխանակելով իր հորեղբորաղջկա հետ՝ նստած մի մամուապատ նստարանի վրա, առանձնանալով այդ փոքր պարտեզում մինչև արևի մայր մտնելը և միմյանց ոչինչ բաներ ասելով զբաղված կամ պարիսպների ու տան միջև եղած խաղաղության մեջ ինքնամփոփ՝ ինչպես եկեղեցու կամարների տակ, Շառլնը մբռնեց սիրո սրբությունը, երբ իր մեծաշուք տիկինը, իր սիրելի Աննետը նրան միայն ձանաշել էր տվել փոթորկալից հույզեր: Այդ բռպեին նա թողնում էր իր փարիզյան պշրուն, փառամոլ, փայլուն տարփանքը՝ հանուն մաքուր և ճշմարիտ սիրո: Նա սիրեց այդ տունը, որի բարքերը այլս այնքան ծաղրելի չէին թվում նրան: Նա առավոտ վաղ ցած էր իջնում՝ մի քանի վայրկյան Էժենիի հետ խոսել կարողանալու համար, մինչև Գրանդեն զար օրվա պաշարը տալու, և երբ ծերուկի ոտնաձայնը լսվում էր սանդուղքից, նա փախչում՝ էր պարտեզը: Առավոտյան այդ տեսակցության փոքր հանցանքը, որ Էժենիի մոր համար էլ մի զաղտնիք էր, և որը Նանոնք չտեսնել էր ձևացնում, աշխարհի ամենից անմեղունակ սիրուն տալիս էր արգելված

հաճույքների ցերմությունը: Ապա կեսօրից հետո, երբ հայր Գրանդեն գնում էր այցելելու իր կալվածներն ու ձեռնարկությունները, Շառլ մնում էր մոր և աղջկա մոտ ու մինչ այդ անծանոթ հոգեկան հաճույքներ էր վայելում, օգնելով նրանց թելք քանդելու, դիտելով նրանց աշխատանքը և կամ լսելով նրանց շահակրատանքը: Գրեթե վանական այդ կյանքի պարզությունը, որ բացահայտում էին այդ գեղեցիկ հոգիները, որոնց համար աշխարհն անծանոթ էր, նրան խորապես հուզեցին: Նա կարծել էր, որ նման բարքերի գոյությունն անկարելի էր Ֆրանսիայում, և հնարավոր էր համարել միայն Գերմանիայում, այն էլ առասպելորեն և Ավգուստ Լաֆոնտենի<sup>12</sup> վեպերում: Շուտով Էժենին նրա համար Գյոթեի Մարգարիտը ներկայացնող իդեալը եղավ, բացառյալ նրա մեղքը: Օրեցօր նրա հայացքները, նրա խոսքերը գերեցին խեղճ աղջկան, որ երանությամբ հանձնվեց սիրո հոսանքին: Նա կառչում էր իր երջանկությանը, ինչպես լողացողը կկառչի ուռենու ճյուղին՝ ջրից դուրս գալու և եզրքի վրա հանգստանալու համար: Սոտալուտ մեկնումի վիշտը միթե չէր տիրեցնում արդեն այս խուսափող օրերի ամենաուրախ ժամերը: Ամեն օր մի փոքր դեպք նրանց հիշեցնում էր մոտալուտ բաժանումը: Այսպես, դե Գրասենի մեկնումից երեք օր հետո, Գրանդեն Շառլին տարավ առաջին ատյանի դատարանը, պրովինցիայի մարդկանց հանդիսավորությամբ նրան ստորագրել տալու իր հոր ժառանգության իրավունքից հրաժարումը: Ահավո՞ր հրաժարում. ընտանեկան մի տեսակ հավատուրացություն: Նա գնաց նոտար Կրյուշոյի մոտ՝ գրել տալու համար երկու փոխանորդագիր, մեկը դե Գրասենի, մյուսը այն բարեկամի համար, որը նրա կարասիները պետք է վաճառեր: Հետո հարկ եղավ կատարել անհրաժեշտ ձևականությունները՝ արտասահմանյան անցագիր ստանալու համար: Վերջապես երբ սուզի հասարակ զգեստները հասան, որ Շառլ պատվիրել էր Փարիզում, նա իր մոտ հրավիրեց Սոմյուրից մի դերձակ, որին վաճառեց այլևս ավելորդ հագուստները: Այս վաճառումը շատ դուր եկավ հայր Գրանդեին:

— Ա՛յ, դուք ահավասիկ մի իսկական տղամարդ եք, որ նաև պետք է նստի և մեկնի՝ կարողություն ձեռք բերելու համար,— ասաց նա՝ տեսնելով, որ Շառլ հագնվել է սև և հաստ կտորից կարված մի զգեստ:— Այդ լա՛վ է.

— Զեզնից խնդրում եմ, պարոն,— պատասխանեց Շառլ,— հավատաք, որ ես զիտակցում եմ իմ ամբողջ կացությունը :

— Այդ ի՞նչ բան է,— հարցրեց ծերուկը, որի աշքերը կենդանացան, տեսնելով մի ափ ոսկի, որ Շառլ նրան ցույց տվեց:

— Պարոն, ես հավաքել եմ իմ կոճակները, իմ օղակները, այն ամենը, որ ավելորդ էին և որ կարող էին ներկայացնել որևէ արժեք, բայց Սոմյուրում ոչ ոքի ծանոթ չինելով, այս առավոտ ես ուզում էի ձեզնից խնդրել որ....

— Զեզնից գնել դրանք,— ընդհատեց Գրանդեն....

— Ո՛չ, հորեղբայր, ինձ մատնանշել մի պատվավոր մարդ, որին...

— Տվե՛ք ինձ այդ ամենը, իմ եղբորորդի, ես ինքս կբարձրանամ այս ամենը գնահատելու և կգամ ձեզ ասելու, թե նրանք ի՞նչ արժեն ամենայն ձշությամբ: Զարդեղենի ոսկի,— ասաց նա քննելով մի երկար շղթա, — տասնութը, տասնինը կարատ:

Ծերուկը պարզեց իր լայն ձեռքը և վերցրեց ոսկու այդ զանգվածը:

— Հորեղբորադջիկ, — ասաց Շառլ Էժենիին, — թույլ տվեք, որ ձեզ նվիրեմ այս երկու կոճակները, որոնցով ժապավեններ կարող եք կապել ձեր դաստակալներին:

— Առանց տատանվելու ընդունում եմ,— պատասխանեց Էժենին՝ խորհրդավոր մի հայացք ձգելով նրան:

— Հորեղորկին, ահա իմ մոր մատնոցը, ես այդ զանձի նման էի պահում իմ ճամփորդական իրերի մեջ,— ասաց Շառլը՝ ոսկյա մի սիրուն մատնոց տալով տիկին Գրանդէին, որն ավելի քան տասը տարի փափագում էր ունենալ մի այդպիսի իր:

— Ինձ պակասում են բառեր՝ շնորհակալություն հայտնելու ձեզ,— ասաց պառավ մայրը, որի աչքերը թրջվեցին:— Առավոտ և երեկո իմ աղոթքներում, ճամփորդների համար աղոթելիս, ձեզ համար ամենից անհրաժեշտը կավելացնեմ: Երբ ես մեռնեմ, Էժենին ձեզ համար կպահի այս զարդը:

— Եղբորորդի, այս բոլորն արժե ինը հարյուր ուժունինը ֆրանկ յոթանասուննինգ սանտիմ,— ասաց Գրանդէն դուռը բաց անելով:— Բայց ես ձեզ դրանք վաճառելու տանջանքից ազատելու համար կվճարեմ նրանց արժեքը... լիվրով:

Լիվր բառը, Լուսափ ափերին նշանակում է, որ վեց էկուանոց՝ դրամները կընդունվեն առանց զեղչի, վեց ֆրանկի արժողությամբ:

— Ես չեի համարձակվում այդ խնդրել ձեզնից,— պատասխանեց Շառլը,— սակայն ինձ համար տհաճ է իմ զարդեղնները վաճառքի հանել մի քաղաքում, ուր դուք եք ապրում: Կեղսոտ շորերը պետք է տանը լվանալ— ասել է Նապոլեոնը, հետևաբար՝ շնորհակալություն ձեր հաճոյակատարության համար:

Գրանդէն քորեց իր ականջները և մի բոպե լոռություն տիրեց:

— Սիրելի հորեղբայր,— շարունակեց Շառլը նրա կողմը նայելով մտահոգությամբ, կարծես նա վախենում էր նրայուրազգացությունը վիրավորելուց, — իմ հորեղորադշիկն ու մայրը չմերժեցին ինձ և ընդունեցին իմ չնշին նվերները. հաձեցեք դուք ևս ընդունել քսի այս զույգ կոճակները, որոնք ինձ համար այլևս անպետք են. նրանք ձեզ վերհիշել կտան մի խեղճ երիտասարդի, որը հեռու ձեզնից՝ այսուհետև պիտի մտածի նրանց մասին, որոնք իր ամբողջ ընտանիքն են կազմում:

— Տղա՛ս, տղա՛ս, լավ է չզրկվել բոլոր ունեցածից... Ի՞նչ ունիս դու, այ կին,— դառնալով նրա կողմը՝ հարցրեց նա ընշաքաղցությամբ:— Ա՛հ, ոսկյա մատնոց, իսկ դո՞ւ, աղջիկս, աղամանդակուու ձարմանդ: Լավ, ես ընդունում եմ քո կոճակները, — շարունակեց նա Շառլի ձեռքերը սեղմելով:— Բայց... դու ինձ թույլ կտաս. վճարեմ քո, այո... քո ճամփորդությունը դեպի Հնդկաստան: Այո, ես ուզում եմ ստանձնել քո ճամփորդության ծախսը: Մանավանդ, որ ելքորորդի, քո զարդեղնները գնահատելիս, ես նկատի եմ ունեցել միայն նրանց ոսկու քանակը, իսկ նրանց վրա եղած աշխատանքից գուցե կարելի է մի քան շահել: Այսպես ուրեմն՝ կարգադրված է: Ես ձեզ կտամ հազար հինգիարյուր ֆրանկ... լիվրով, որը պարտք եմ վերցնելու Կրյուշոյից, որովհետև տանը ես մի սև գրոշ իսկ չունեմ. այդ ուրիշ քան կլիներ, եթե, իհարկե, այս միջոցին Պերոստեն, որ ուշացրել է իր ազարակավարձը, վճարի ինձ: Այո՛, այո՛, ես կզնամ նրան տեսնելու:

Նա վերցրեց իր գլխարկը, հագավ ձեռնոցները և դուրս եկավ:

— Ուրեմն մեկնելո՞ւ եք անպայման,— հարցրեց Էժենին՝ նրա վրա զցելով հիացմունքով լի տիտոր մի հայացք:

— Այդ անհրաժեշտ է,— պատասխանեց Շառլը զլուխը հակելով:

Մի քանի օրից ի վեր Շառլի կեցվածքը, ձևերը, խոսքերը արտացոլում էին խորապես վշտահար մարդու հոգին, մի մարդ, որ զիտակցում էր իր վրա ընկած ծանր պարտականությունները և իր դժբախտությունից նոր արիություն է ստանում: Նա այլևս չէր հառաջում, նա դարձել էր տղամարդ: Ահա թե ինչու Էժենին իր հորեղբորորդու բնավորությունը երբեք այնքան լավ չէր պատկերացրել, որքան, երբ տեսավ նրան սանդուղքների վրա, իր սև ու հաստ դրապից կարված զգեստներով, որ այնքան սազում էին նրա գունատ դեմքին և վշտաբեկ կեցվածքին: Այդ օրը երկու կանայք էլ, որ Շառլի ընկերակցությամբ եկեղեցում ներկա եղան Գիյոմ Գրանդեի հոգեհանգստի պատարագին, սուզի զգեստներ էին հագել:

Երկրորդ նախաճաշին՝ Շառլը նամակներ ստացավ Փարիզից և կարդաց:

— Ինչպե՞ս է, գոհ եք ձեր գործերից, հորեղբորորդի, — ցած ձայնով հարցրեց Էժենին:

— Նման հարցեր երբեք չպետք է տալ, աղջիկս, — ասաց Գրանդեն: — Տեսնում ես, ես քեզ հետ չեմ խոսում իմ գործերից, ինչո՞ւ ես ուզում քո քիթը մտցնել քո հորեղբորորդու գործերի մեջ: Վերջապես թող հանգիստ այդ երիտասարդին:

— Օ՛, ես ոչ մի գաղտնիք չունեմ, — բացազանչեց Շառլը:

— Տա՛, տա՛, տա՛, եղբորորդի՝, դու մի օր կըմբռնես, որ առևտրական կյանքում պետք է լեզվին սանձ դնել:

Երբ երկու սիրահարները առանձին մնացին պարտեզում, Շառլը ասաց Էժենին՝ տանելով նրան հին նստարանի մոտ, որի վրա ընկուզենու ստվերի տակ նրանք նստեցին:

— Ես չեմ սխալվել Ալֆոնսի նկատմամբ. նա հիանալի է վարվել. իմ գործերը կարգադրել է խոհեմությամբ և պարկեշտությամբ: Փարիզում այլևս ոչ ոքի ոչինչ պարտական չեմ: Իմ բոլոր կահկարասիքը լավ զնով են վաճառվել, և նա ինձ ասում է, թե հետևելով շատ ճանապարհորդած մի նավապետի խորհուրդներին, երեք հազար ֆրանկով նա ինձ համար պատրաստել է տվել եվրոպական հետաքրքրական իրերից մի փոքր հավաքածու, որից մեծ շահ կարելի է ստանալ Հնդկաստանում: Նա ուղարկել է իմ իրերը Նանտ, ուր արդեն գտնվում է Յավա մեկնող մի նավ: Հինգ օր Էժենի, գուցե մշտնջենապես մենք միմյանցից կրաժանվենք, գեր առնվազը երկար ժամանակով: Իմ ապրանքը, որ հետո եմ տանելու և տասը հազար ֆրանկը, որ ինձ ուղարկել ենիմ բարեկամներից երկուսը, քիչ չեն փոքր գործի սկիզբը դնելու համար: Տարիներ հետո միայն թերևս ես կարողանամ մտածել վերադառնալու մասին: Թանկաղին զարմուիիս, իմ կյանքը և ձերը նույն կշեռքի նժարների մեջ մի դնեք, ես կարող եմ մեռնել, իսկ ձեզ համար կարող է ներկայանալ մի հարուստ բախտ...

— Սիրո՞ւմ եք ինձ, — հարցրեց Էժենին:

— Ո՛հ, այո, շա՛տ, — պատասխանեց նա շեշտի մի այնպիսի խորությամբ, որ ցույց էր տալիս նրա զգացումների հավասար խորությունը:

— Կսպասեմ, Շառլ: Աստված իմ, հայրս լուսամուտի առաջն է, — ասաց նա իր հորեղբորորդուն, որը մոտենում էր նրան համբուրելու համար:

Նա փախավ կամարի տակ: Շառլը հետևեց նրան: Նկատելով Շառլին, Էժենին զնաց դեպի սանդուղքի ստորոտը, ուր բաց արեց դուռը, հետո առանց իսկապես իմանալու, թե ուր է զնում նա, հասավ Նանոնի խցիկի մոտ, միջանցքի ամենից քիչ լուսավորված անկյունը: Շառլը, որ հետևել էր

նրան, բռնեց նրա ձեռքը, և նրան մոտեցնելով իր կրծքին, մեղմությամբ գրկեց: Էժենին չդիմադրեց, նա ստացավ և վերադարձեց բոլոր համբույրներից ամենամաքուրը, ամենաքաղցրը, ինչպես և ամենակատարյալը:

— Սիրելի Էժենի, հորեղբորորդին ավելի բախտավոր է, քան եղբայրը, նա կարող է ամուսնանալ իր հորեղբորաղջկա հետ,— ասաց Շառլը:

— Ամե՞ն,— բացազանչեց Նանոնը՝ բաց անելով իր խցի դուռը:

Երկու սիրահարները սարսափահար փախուստ տվին և մտան սրահը, որ Էժենին վերսկսեց իր աշխատանքը, իսկ Շառլը սկսեց կարդալ սուրբ Կույսին ձռնված շարականը՝ տիկին Գրանդեի աղոթագրքում:

— Հը՞մ,— ասաց Նանոնը,— մենք ամենքս կլ աղոթում ենք:

Այն բովեից, երբ Շառլը հայտնեց իր մոտալու մեկնումը, Գրանդեն շարժվեց, ցույց տալու համար, թե շատ է հետաքրքրվում իր եղբորորդիով: Նա չէր խանգարում ոչչի, ինչ իրեն ծախսի չէր ենթարկում. նրա համար գտավ մի ծրաբող, և ասաց, որ այդ մարդը իր սնդուկները շատ թանկ վաճառելու հավակնություն ունի, հետևաբար ամեն կերպ ուզեց ինքը շինել, և դրա համար իին տախտակներ գործածեց: Առավոտ վաղ նա արքնանում էր՝ ռանդելու, հարմարացնելու, տաշելու, մեխելու համար այդ բարակ տախտակները, որոնցից շատ գեղեցիկ սնդուկներ էր պատրաստում: Նա այդ սնդուկների մեջ դասավորեց Շառլի բոլոր իրերը և հանձն առավ դրանք Լուառով մինչև նավ տանել, ապահովագրել և ճիշտ ժամանակին Նանտ հասցնել:

Այն համբույրից հետո, որ նա ստացել էր միջանցքում, Էժենիի համար ժամերը սահում էին ահավոր արագությամբ: Երբեմն նա ցանկանում էր հետևել իր հորեղբորորդուն: Նա, ով ճանաչել է սիրո ամենից կախարդողը, այն սերը, որի տևողությունն ամեն օր կրծատվում է կյանքից, ժամանակից, մահացու հիվանդությունից, մարդկային ճակատազրի խաղերից, նա կհասկանա Էժենիի տառապանքները: Նա հաճախ լալիս էր՝ զբոսնելով պարտիզում, որն այլևս խիստ նեղ էր թվում նրան, ինչպես նեղ էին բակը, տունը, քաղաքը,— նա արդեն վաղօրոք թռչում էր ծովերի անհունության վրայով: Վերջապես մեկնումի նախօրեն հասավ: Նոյն առավոտ, երբ Նանոնը և Գրանդեն բացակա էին, նա պահարանի այն դարակի մեջ, որը միակն էր, որ փակվում էր բանալիով, արդեն դատարկ քանակի մոտ հանդիսավորապես զետեղեց թանկազին արկողիկը, որի մեջ գտնվում էին երկու դիմանկարները: Այդ գանձի զետեղմանը ուղեկցեցին բազմաթիվ համբույրներ ու արցունքներ: Երբ Էժենին զգրոցի բանալին դրեց իր ծոցը՝ չկարողացավ արգելել, որ Շառլը համբուրի բանալիի թաքստոցը:

— Նա այլևս դուրս չի գալու իմ ծոցից, բարեկամա:

— Իմ սիրտն էլ այնտեղ կլինի միշտ:

— Ա՛հ, Շա՛ռլ, լավ չէ,— ասաց նա մի փոքր սաստող շեշտով:

— Մի՞թե չենք ամուսնացել,— ասաց նա, — ես արդեն ունեմ քո խոսքը, կտամ և իմը:

— Մինչև մահը քոնն եմ,— կրկնեցին երկուսն էլ:

Ոչ մի խոստում այս աշխարհում ավելի մաքուր չէր եղել: Էժենիի անբիծ մաքրությունը ժամանակավրապես սրբազն էր Շառլի սերը: Զաջորդ օրվա նախաճաշը տխուր էր: Հակառակ այն բանի, որ Շառլը Նանոնին տվել էր ոսկեզօծ մի հազուստ և մի խաչ՝ ժանետի խաչի ձևով, նա

անգամ, որ միշտ համարձակ էր իր զգացումներն արտահայտելու մեջ, արցունք ուներ աչքերի խորքում:

— Այս դժբախտ, անուշիկ պարոնը, որ ծովերի վրայով գնալու է... Թո՛ղ աստված նրան առաջնորդ լինի:

Ժամը տասն և կեսին ամրող ընտանիքը Շառլին ողջերթ մաղթելու համար շարժվեց դեպի Նանտ մեկնող հանրակառքը: Նանոնք արձակել էր շանը, փակել դուռը և տանում էր Շառլի պայուսակը: Հին փողոցի բոլոր խանութպանները, իրենց կրպակների սեմերին կանգնած՝ դիտում էին թափորք, որին հրապարակում միացավ և նոտար Կրյուշոն:

— Չպետք է լաց լինես, Էժենի, — ասում էր նրան մայրը:

— Իմ եղբորորդի, — ասաց Գրանդեն հյուրանոցի դրան մոտ համբուրելով Շառլի երկու այտերը, — մեկնեց՝ քաղքատ, վերադարձեք հարուստ, դուք ձեր հոր պատիվը փրկված կցտնեք: Ես, Գրանդեն, ստանձնում եմ այդ բանը, որովհետև, այն ժամանակ ձեզնից է կախված, որ...

— Ա՛յ, հորեղբայր, դուք մեղմացնում եք իմ մեկնումի դառնությունը: Չէ՞ որ ինձ ամենահարզի նվերն եք անում:

Չհասկանալով նախկին տակառագործի խոսքերը, որին ընդհատել էր, Շառլ հորեղբոր կարծրացած դեմքը երախտագիտական արցունքներով ողողեց: Մինչդեռ Էժենին ամրող ուժով հոր և հորեղբորդու ձեռքերն էր սեղմում: Միայն նոտարը, Գրանդեն նրամտության վրա հիացած, ժամանակում էր, որովհետև միայն նա էր լավ հասկացել ձերուկին: Չորս սովորցիները, շրջապատված շատ մարդկանցով, սպասեցին կառքի մոտ՝ մինչև նրա մեկնելը: Հետո, երբ կառքը տեսողությունից ծածկվեց և միայն նրա ձայնն էր լսվում հեռվից՝

— Բարի՛ ճանապարհ, — ասաց խաղողագործը:

Բարեբախտաբար նոտար Կրյուշոն միակը եղավ, որ լսեց այդ բացազանչությունը: Էժենին և իր մայրը շտապել էին գնալ քարափի մի անկյունը, որտեղից դեռ կարող էին տեսնել հանրակառքը, նրանք շարժում էին սպասակ թաշկինակները, որին Շառլը պատասխանում էր՝ իրենը թափահարելով:

— Մա՛յր, մի րոպեով ես կցանկանայի աստուծո գորությունն ունենալ, — ասաց Էժենին այն պահին, երբ այլս չտեսավ Շառլի թաշկինակը:

Չընդհատելու համար դեպքերի ընթացքը, որոնք կատարվեցին Գրանդենի ընտանիքում, անհրաժեշտ է կանխավ մի հայացք նետել այն գործառնությունների վրա, որ դե Գրասենի միջնորդությամբ ծերուկը արեց Փարիզում: Բանկիրի մեկնումից մի ամիս հետո Գրանդեն ուներ հարյուր հազար լիվրի պետական պարտաթղթեր՝ գնված ուղիղ ութուն ֆրանկի: Նրա մահից հետո նրա ունեցվածքի ինվենտարից քաղված տեղեկանքները երբեք չկարողացան նույնիսկ փոքր չափով պարզել այն միջոցները, որոնց շնորհիվ, մղված իր կասկածամտությունից, նա կարողացավ պետական գանձի վրա ունեցած իր մինչև մահը պարտաթղթերի արձանագրությունը փոխարինել հենց պարտաթղթերով: Նոտար Կրյուշոն մտածեց, որ Նանոնը, անկախ իր կամքից, հավատարիմ գործիք է եղել դրամը փոխադրելուն: Մոտավորապես այդ շրջանում աղախինը բացակայեց հինգ օրով, պատրվակելով, թե գնում է որոշ գործեր կարգավորելու Ֆրուաֆոնում, կարծես թե ծերուկն ընդունակ էր որևէ բան երեսի վրա թողնելու: Ինչ վերաբերվում է Գիյու Գրանդենի առևտրական գործերին, տակառագործի բոլոր նախատեսություններն իրականացան:

Ֆրանսիական բանկում գտնվում են, ինչպես այդ բոլորին հայտնի է, Փարիզի և դեպարտամենտների բոլոր մեծ կարողությունների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ: Դե Գրասենների և Սոմյուրի Ֆելիքս Գրանդեի անուններն այդտեղ ծանթ էին և վայելում էին գրավադրումներից գերծ մեծ հողային կալվածների վրա հենված ֆինանսական հռչակի հատուկ հարգանքը: Սոմյուրի բանկիրի ներկայությունը, որը լիազորված էր, ասում էին, պատվաբեր կերպով լուծարքելու փարիզյան Գրանդեի առևտրատունը, բավական եղավ, որպեսզի առևտրականի հիշատակը՝ բողոքարկվելու ամոթը չձանաչի: Պարտատերերի ներկայությամբ կատարվեց կնիքների լուծումը և ընտանեկան նոտարը կանոնավոր կերպով սկսեց ժառանգության ինվենտարացումը: Շուտով դե Գրանդե ժողովի հրավիրեց բոլոր պարտատերերին, որոնք միաձայն Սոմյուրի բանկիրին ընտրեցին որպես լուծարքող՝ ընկերակցությամբ հարուստ առևտրատան դեկավար և ամենից ավելի շահագրգուստներից մեկի՝ Ֆրանսուա Կելլերի և նրանց վատահեցին անհրաժեշտ բոլոր իրավունքները՝ փրկելու և՝ ընտանիքի պատիվը, և պարտատերերի շահերը: Սոմյուրի Գրանդեի վարկը, հույսը, որ նա դե Գրանդե միջոցով ներշնչեց պարտատերերին, հեշտացրին փոխամածայնությունը: Պարտատերերից ոչ մեկը չընդդիմացավ: Ոչ ոք չէր մտածում իր պահանջները արձանագրել տալ շահերի և վնասների հաշվին, և ամեն մեկն ասում էր.

— Սոմյուրի Գրանդեն կվճարի:

Անցավ վեց ամիս: Փարիզեցիները շրջանառության մեջ գտնվող փոխանակագրերը դնել և պահում էին իրենց դրամապանակների խորքում: Այդ առաջին արդյունքն էր, որ տակառագործը ցանկացել էր ստանալ: Առաջին ընդհանուր ժողովից ինք ամիս հետո, երկու լուծարքողները քառասունյոր տոկոս բաժանեցին բոլոր պարտատերերին: Այդ գումարը ստացվել էր արժեթղթերի, ստացվածքների, հանգույցալ Գիլոմ Գրանդեի ընդհանրապես շարժական և անշարժ իրերի վաճառումից, որ կատարվեց խղճամիտ հավատարմությամբ: Պարտատերերը հաճությամբ ընդունեցին Գրանդեի սքանչելի և անվիճելի պատվավորությունը: Եթե այս գովասանքները պատշաճ կերպով տարածվեցին ամեն կողմ, պարտատերերը պահանջեցին իրենց փորի մնացորդը: Հավաքական կերպով նրանք այդ գրեցին Գրանդեին:

— Ահա վերջապես բուն հարցը,— ասաց նախկին տակառագործը նամակը կրակ նետելով,— մի՛ քիչ համբերություն, իմ միամիտ բարեկամնե՞ք:

Պատասխանելով այդ նամակի առաջարկներին՝ սոմյուրաբնակ Գրանդեն պահանջեց, որ իր եղբոր ժառանգությունը ներկայացվող բոլոր փոխանակագրերը զետեղվեին նոտարի մոտ, կցելով դրան նախորդ վճարումների ընկալագրերը՝ պատրվակելով, թե անհրաժեշտ է մաքրել հաշիվները և այդ ձևով՝ ճշգրտել ժառանգության կացությունը: Զետեղման այդ գործը մեծ դժվարություններ առաջացրեց: Պարտատերը ընդհանրապես մի տեսակ մոլագար է: Այսօր նա պատրաստ է համաձայնել, բայց վաղը նա կարող է ամեն ինչ կրակի և արյունի տալ. ավելի վերջը նա կարող է ծայրահեղորեն հեղահամբույր լինել: Այսօր նրա կինը ուրախ էր, որ իր վերջին փոքր զավակի ատամները բուսել են, բնակարանում ամեն ինչ կարգին է, պարտատերը չի ուզենա մի սու անգամ կորցնել: Վաղը անձրև է գալիս, նա չի կարող դուրս գալ, տիտոր է, նա այն է պատասխանում բոլոր առաջարկներին, միայն թե հարցը վերջ գտնի, իսկ մյուս առավոտը նրան անհրաժեշտ են երաշխիքներ: Ամսի վերջը՝ նա, այդ դահիճը, պահանջում է քո մահը: Պարտատերը նման է այն հանդարտ Ճնճղուկին, որի պոչի վրա երեխաներին սովորեցնում են աղ ցանել. բայց պարտատերը այդ պատկերը կիրառում է իր մուրհակների նկատմամբ, որոնց դիմաց ոչինչ չի կարող ստանալ: Գրանդեն ուսումնասիրել էր պարտատերերի կլիմայական փոփոխությունները, և իր եղբոր

պարտատերերը ենթարկվեցին նրա բոլոր հաշիվներին, ոմանք բարկացան և **բոլորովին** մերժեցին նրա առաջարկած գետեղումը:

— Լավ, սա շատ լավ է,— ասում էր Գրանդեն ձեռքերը շփելով, երբ կարդում էր այն հարցի մասին դե Գրասենի գրած նամակը:

Ուրիշները համաձայնեցին այս գետեղումին այն պայմանով, որ իրենց իրավունքները հաստատվեն, որպեսզի ստիպված չլինեն հետազայում նրանցից հրաժարվել և նույնիսկ հակառակ դեպքում պահանջել, որ նորից սնանկություն հայտարարվի: Նորից նամակագրություն, որոնցից հետո սույնուրաքանակ Գրանդեն զիշեց ընդունել բոլոր վերապահումները: Այս զիջման վոխարեն մերմ պարտատերերը կարողացան համոզել խստապահանջ պարտատերերին: Փոխանազրերը գետեղումին նոտարի մոտ՝ բայց ոչ առանց մի քանիսի դժգոհության:

— Այդ ծերուկը ասում էին նրանք դե Գրասենին,— ծաղրում է և՛ ձեզ, և՛ մեզ:

Գիյոմ Գրանդեի մահվանից քսաներեք ամիս անց, մի շարք առևտրականներ, փարիզյան գործառնությունների ընթացքից մղված, մոռացել էին Գրանդեից իրենց ունեցած պահանջի մնացորդը և այդ մասին մտածում էին՝ միայն նրա համար, որ ասեն.

— Ես սկսել եմ արդեն հաշտվել այն մտքի հետ, որ մենք քառասունյոթ տոկոսից բացի, այլևս ոչինչ չենք ստանա:

Տակառագործը հույսը դրել էր ժամանակի ուժի վրա, որին անվանում էր՝ բարի սատանա: Երրորդ տարվա վերջը՝ դե Գրասենը գրեց Գրանդեին, որ Գրանդե առևտրատան պարտքի մնացորդը եղող երկու միլիոն չորս հարյուր հազար ֆրանկ գումարին տասը տոկոս վճարելով՝ նրան հաջողվել էր պարտատերերի մուրհակները վերցնել: Գրանդեն պատասխանեց, ասելով, որ նոտարը, տարապայման բորսային միջնորդը, որոնց ահավոր սնանկությունը պատճառ էր եղել իր եղոր մահվան, այժմ ապրում են և գուցե լավ դրության մեջ են, հետևաբար պետք էր նրանց սեղմել, որպեսզի նրանցից ել մի բան պոկվի և դեֆիցիտը պակասի: Չորրորդ տարվա վերջը, վճարում բացը պատշաճորեն և օրինական ձևով որոշվեց մեկ միլիոն երկու հարյուր հազար ֆրանկ:

Լուծարքողների և պարտատերերի, լուծարքողների և Գրանդեի միջև բանակցություններ տեղի ունեցան, որոնք վեց ամիս տևեցին: Կարճ ասած, հարցը շտապ ձևով կարգավորելիս, հարկադրված՝ սույնուրաքանակ Գրանդեն, գրեթե նույն տարվա իններորդ ամսին, պատասխանեց երկու լուծարքողներին, թե իր եղորդորդին, որ հաստատվել էր Հնդկաստանում և կարողություն՝ ձեռք բերել, իր հոր պարտքն ամբողջությամբ վճարելու դիտավորություն էր հայտնել, և որ ինքը՝ առանց նրա համաձայնության, չէր կարող անօրինական ձևով վճարել պարտքերի մնացորդը, հետևաբար և սպասում էր պատասխանի: Հինգերորդ տարվա կեսի մոտ պարտատերերը դեռ որևէ բան չին ձեռնարկում, շնորհիվ **ամբողջությամբ** բառի, որ վեհ տակառագործը, իր մորուքի մեջ ծիծառելով, արտասանում էր ժամանակ առ ժամանակ, և որ երբեք չէր ասում՝ այդ **փարիզեցիները**, առանց նրբամիտ ժպիտի կամ հայիոյանքի:

Սակայն, պարտատերերին վերապահված էր առևտրական հիշատակարաններում չլսված մի բախտ: Նրանք վերստին կզտնվեն այն դրության մեջ, ուր նրանց պահել էր Գրանդեն այն մումենտին, երբ այս պատմության իրադարձությունները կստիպեն նրանց նորից մեջտեղ գալ: Երբ ունտայի պարտատումսերն արժեցին հարյուր տասնհինգ ֆրանկ, Գրանդեն դրանք վաճառեց Փարիզում և ստացավ մոտավորապես շուրջ երկու միլիոն չորս հարյուր հազար ֆրանկ, որոնք իր տակառիկների մեջ, գումարվեցին նրա երկմտային պարտատումսերից գոյացած բաղադրյալ տոկոս ունեցող վեցիարյուր հազար ֆրանկի վրա:

Դե Գրասենք մնում էր Փարիզում, ահա թե ինչու. նախ՝ նա ընտրվեց դեպուտատ, հետո, թեև արդեն ընտանիքի հայր, բայց ձանձրացած Սոմյուրի տաղտկալի կյանքից, սիրահարվեց Տիկնոց թատրոնի գեղեցիկ արտիստուհիներից մեկին՝ Ֆլորինին և երիտասարդական հաճոյալից կյանք սկսեց վարել: Ավելորդ է հոսել նրա վարքի մասին. Սոմյուրում նրա կենցաղը դատապարտվեց որպես խիստ անբարոյական: Բարեբախտաբար նրա ունեցածն առանձնացված էր եղել իր կնոջ հարստությունից, և վերջինս բավական խելոք եղավ՝ կառավարելու համար Սոմյուրի նրանց բանկային տունը, որի գործառնությունները շարունակվեցին նրա անվամբ, որպեսզի հնարավոր լիներ պարոն դե Գրասենի գժություններից առաջացած վնասը փակել: Կրյուշոյականներն այնքան շատ էին վատթարացնում գրեթե այրի կնոջ անհաճո կացությունը, որ նա իր աղջկան շատ անհաջող ամուսնացրեց և ստիպված եղավ՝ իր տղային Էժենիի հետ ամուսնացնելու գաղափարից հրաժարվել: Աղոլֆը գնաց Փարիզ դե Գրասենի մոտ և ասում են, անպետք մարդ դուրս եկավ: Կրյուշոնները հաղթեցին:

— Ձեր ամուսնուն պակասում է ողջամտությունը,— ասում էր Գրանդեն, տիկին դե Գրասենին մի քիչ դրամ փող տալով, որոշ ապահովություն ստանալուց հետո:— Ձեզ շատ եմ ցավակցում, դուք լավ կին եք:

— Ա՛հ, պարոն,— պատասխանեց խեղակինը, — ո՞վ կարող էր հավատալ, թե այն օրը, որ նա ձեր տնից մեկնեց Փարիզ գնալով, դեպի իր կործանումն էր գնում:

— Երկինքն ինձ վկա, տիկին, որ մինչև վերջին րոպեն ամեն ինչ արեցի, որպեսզի նա չգնար Փարիզ: Պարոն նախազահն ուզում էր ամեն կերպ նրան փոխարինել, և եթե նա անպատճառ ուզեց մեկնել, մենք այժմ հասկանում ենք, թե ինչու:

Այսպես Գրանդեն ոչ մի պարտավորություն չուներ դե Գրասենների նկատմամբ:

Բոլոր դեպքերում՝ կանայք տղամարդկանցից ավելի տառապելու պատճառներ ունեն և իրոք տառապում են ավելի: Տղամարդն ունի իր ուժը և նրա գործադրությունը. նա գործում է, գնում՝ զալիս, զբաղվում է և մտածում, փարվում ապագային և այդ բոլորի մեջ միայնական գործում: Այդպես էր անում և Շառլ: Բայց կինը մնում է իր վշտին դեմ առ դեմ և նա ոչ մի բանով չի կարող միփրարվել. նա իշնում է մինչև հատակը անդունդի, որ ինքն է բացել, չափում է նրա խորությունը և հաճախ այն լեցնում իր իդական արցունքներով: Այդպես էր անում Էժենին: Նա համակերպում էր իր ճակատագրին: Զգալ, սիրել, տառապել, նվիրվել, — միշտ էլ սրանք կլինեն կնոջ գոյության եղությունը: Էժենին վիճակված էր ամբողջովին կին լինել, միայն չունենալով այն, ինչ նրան սփոփում է: Նրա երջանկությունը՝ հավաքված այն գամերի նման, որ ըստ Բոյուեի<sup>13</sup> հիանալի արտահայտության, ցանված են պատի վրա, չպիտի կարողանար մի օր նրա ավին իսկ լցնել: Վշտերը չեն ուշանում երբեք, բայց Էժենիի համար նրանք ավելի շուտափույթ հասան: Շառլի մեկնումի հաջորդ օրն իսկ՝ Գրանդեի տունը իր տպորական կերպարանքն ընդունեց բոլորի համար, բացի Էժենից, որ հանկարծ բոլորովին բափուր գտավ այն: Հորից անտեղյակ, նա ուզեց, որՇառլի սենյակը մնա նրա թողած վիճակում: Տիկին Գրանդեն և Նանոնը կամովին նրա հետ մեղսակից եղան այդ statu quo՝ պահելու համար:

— Ո՞վ է իմանում, թե նա ավելի շուտ չի վերադառնա, քան մենք ենթադրում ենք,— ասաց Էժենին:

— Ա՛հ, ես կուզենայի նրան տեսնել այստեղ,— պատասխանեց Նանոնը:— Ես վարժվում էի նրան: Նա շատ հեղաքարո, շատ կիրք երիտասարդ էր, սիրուն աղջիկների պես զանգուր մազերով:

\* Գոյություն ունեցող կացություն:

Էժենին նայեց Նանոնին:

— Սուրբ աստվածածին, օրիորդ, դուք ունեք հոգին կորցրածների հայացքը: Մարդկանց մի՝ նայեք այդպես:

Այդ օրից սկսած՝ օրիորդ Գրանդեի գեղեցկությունը նոր արտահայտություն ստացավ: Միրո ծանրակշիռ մտածումները, որոնցով նրա հոգին դանդաղորեն համակվել էր, սիրված կնոջ վեհանձնությունը, նրա դեմքի գծերին տվին այնպիսի մի փայլ, որին նկարիչները ներկայացնում են լուսապսակով: Հորեղբորորդու գնալոց առաջ Էժենին կարելի էր համեմատել սուրբ Կույսի հետ՝ նրա հդացումից առաջ, եթե Շառլ մեկնեց, նա նմանվեց մայր աստվածածին: Նա հղի էր սիրով:

Այս երկու Մարիամները, որ այնքան տարբեր են իրարից և այնքան լավ են ներկայացված իսպանական մի քանի նկարիչների կողմից, կազմում են մեկն այն գեղեցիկ դեմքերից, որոնցով առատ է քրիստոնեությունը: Պատարագից վերադառնալով, որին նա ներկա էր գտնվել Շառլի մեկնումի հաջորդ օրը, և ուր նա ուխտել էր ամեն օր ներկա գտնվել, նա քաղաքի գրավածառանցում գնեց երկրագնդի մի քարտեզ և ամրացրեց հայելու մոտ, որպեսզի նրա վրա հետևի իր հորեղբորորդուն՝ Հնդկաստան տանող ճանապարհին, որպեսզի առավոտ և երեկո կարողանա մի քիչ փոխադրվել այն նավը, որը նրան տանում էր, տեսնի նրան, հազարավոր հարցեր տա, ասի:

— Լա՞վ ես, չե՞ս տանջվում որևէ քանից, մտածո՞ւմ ես իմ մասին, եթե նայում ես այն աստղին, որի գեղեցկությունն ու նշանակությունը դու ինձ սովորեցրիր:

Հետո, առավոտյան մտածկոտ նստում էր ընկուգենու ստվերի տակ, որդերից կրծված և գորշ մամուռով ծածկված նստարանի վրա, ուր նրանք միմյանց ասել էին այնքան քաղցր խոսքեր, ոչինչ քաներ, որտեղ միասին իրենց գեղեցիկ կենակցության օդային դրյակներն էին կառուցել: Նա մտածում է ապագայի մասին՝ պատերի նեղ արանքից երկինքը դիտելով, ապա նայելով այն պատի կտորին և տանիքին, որի ներքև գտնվում էր Շառլի սենյակը: Վերջապես նա ճանաչեց մենակյաց սերը, ճշմարիտ սերը, որ հարատևում է, որ սահում է բոլոր մտածումների մեջ և վերածվում նյութի, կամ կյանքի հյուսվածքի, ինչպես կասեին մեր հայրերը: Եթե Գրանդեի կարծեցյալ բարեկամները գալիս էին երեկոն նրանց մոտ անցկացնելու, նա ուրախ էր և կարողանում էր թաքցնել իր վիշտը, բայց առավոտից մինչև կեսօր նա իր մոր և Նանոնի հետ Շառլի մասին էր խոսում: Նանոնը հասկացել էր արդեն, որ իր երիտասարդ տիրուհու տառապանքներին կարող է մասնակից լինել, առանց թերանալու իր վաղեմի տիրոջ հանդեպ ունեցած պարտականություններից, և ասում էր Էժենին:

— Եթե ես մարդ ունենայի... ես նրան կիետնեի նույնիսկ դժոխքում: Ես կուգենայի... ի՞նչ... վերջապես ես կուգենայի հոգիս տալ նրա համար, բայց... ոչինչ չունեմ: Ես պիտի մեռնեմ առանց հասկանալու, թե ինչ է կյանքը: Հավատո՞ւմ եք օրիորդ, որ այս ծեր Կորնուայեն, որ վերջ ի վերջու լավ մարդ է, իմ շրջազգեստի շուրջն է դառնում՝ պարզապես իմ եկամուտների համար, ինչպես բոլոր նրանք, որ գալիս են այստեղ միայն պարոնի գանձը հոտոտելու՝ ձեզ սիրահետելով: Ես տեսնում եմ այդ բոլորին, որովհետև ես դեռևս նրբամիտ եմ, թեև մի աշտարակի նման հաստ. լա՞վ, օրիորդ, համենայն դեպս դա ինձ հաձույք է պատճառում, թեև դա շատ հեռու է սեր լինելուց:

Այսպիս անցավ երկու ամիս: Նրանց ընտանեկան կյանքը, որ երբեմն այնքան միօրինակ էր, այժմ կենրանացած էր, որովհետև գաղտնիքի անհուն հետաքրքրությունն ավելի մտերմորեն էր կապում այդ երեք կանանց: Նրանց համար սրահի դեղնած առաստաղի ներքև Շառլն ապրում էր, դեռևս ելումուտ էր անում: Առավոտ և երեկո Էժենին բաց էր անում արդուլարդի արկղիկը և դիտում իր զարմիկի մոր նկարը: Մի կիրակի առավոտ մայրը վրա հասավ այն բոպեին, եթե նա նկարի մեջ

Շառի դիմագծերն էր փնտրում: Այդ ժամանակ Էժենին իր մորք իրազեկ արեց այն սոսկալի փոխանակությանը, որով Շառլ նրա գանձի փոխարեն, այդ արկղիկն էր նվիրել իրեն:

— Դու բոլո՞ք տվիր նրան,— հարցրեց սարսափահար մայրը:— Ի՞նչ ես պատասխանելու քո հորը, եթե նոր տարուն նա ուզենա քո ոսկին տեսնել:

Էժենիի հայացքը մնաց սևեռված, և երկու կանայք ամբողջ առավոտը մահվան սարսափում մնացին: Նրանք այնքան հուզված էին, որ չհասան մեծ պատարագին և ներկա եղան միայն զինվորական պատարագին: Երեք օր հետո 1819 թվականը վերջանում էր: Երեք օր հետո մի ահավոր գործողություն էր սկսվելու, բուրժուական մի ողբերգություն, առանց թույնի, առանց դանակի և արյունահեղության, բայց նկատի առնելով դերակատարներին, ավելի դժնակ, քան Ատրիդյան<sup>14</sup> հռչակավոր տոհմում տեղի ունեցած բոլոր դրամաները:

— Ի՞նչ կլինի մեզ հետ,— ասաց տիկին Գրանդեն աղջկան՝ ձեռագործը դնելով ծնկանը:

Երկու օրից ի վեր խեղճ մայրը այնպիսի մտատանջությունների էր ենթարկված, որ բրդի թեզանիքը, որ նա պետք է ձմեռված համար պատրաստեր, դեռևս չէր վերջացրել: Ընտանեկան այս դիպվածքը, ըստ երևույթին շատ չնշին, նրա համար տիսուր հետևանքներ ունեցավ: Զրկված թեզանիքից, Իր ամուսնու զարհութելի բարկությունից քրտնաթոր, մի բովելում ցուրտը ազդեց նրա վրա շատ վտանգավոր կերպով:

— Մտածում էի, իմ դժբախտ զավակս, որ եթե դու ժամանակին ինձ ասած լինեիր քո գաղտնիքը, մենք ժամանակ կունենայինք զրելու, Փարիզ, պարոն Գրասենին: Նա կարող էր մեզ ուղարկել ոսկե դրամներ՝ նման քո ունեցածներին ու թեև Գրանդեն լավ էր ճանաչել դրանք, բայց գուցե...

— Խսկ ո՞րտեղից կարող էինք այդքան դրամ գտնել:

— Ես կարող էի հատկացնել իմ անձնական դրամը: Հետո, պարոն դե Գրասենը կուգենար...

— Այլևս ժամանակ չկա, — պատասխանեց Էժենին խուլ և դողդոջուն ձայնով ընդհատելով մորը:— Չէ՞ որ վաղին առավոտ գնալու ենք նրա նոր տարին շնորհավորելու իր սենյակում:

— Բայց, աղջիկս, ինչո՞ւ չգնամ խորհուրդ հարցնելու Կրյուշոներին:

— Ո՛չ, ո՛չ, այդ նշանակում է նրանց հանձնվել և կախում ունենալ նրանցից: Մանավանդ, որ ես արդեն որոշել եմ անելիքս: Ես լավ եմ արել և բոլորովին չեմ զջում: Աստված կպաշտպանի ինձ: Թող նրա սուրբ կամքը կատարվի: Օ՛, եթե դուք կարդացած լինեիք նրա նամակը, միայն նրա մասին կմտածեիք, մա՛յր:

Հաջորդ առավոտ, 1820 թվականի հունվարի մեկին, բացահայտ սարսափը, որին ենթարկված էին մայր ու աղջիկ, նրանց թելադրեց չքմեղանքներից ամենից բնականը — հանդիսավոր կերպով չներկայանալ Գրանդենին իր սենյակում: 1819—1820 թվականների ձմեռը բոլոր թվականներից ամենասաստիկն եղավ: Զյունը ծածկել էր տանիքները:

Տիկին Գրանդեն երբ իմացավ, որ իր ամուսինն արդեն ոտքի վրա է, ասաց նրան.

— Գրանդեն՝, ասա Նանոնին, որ ինձ մոտ կրակ վարի, ցուրտն այնքան սաստիկ է, որ ես սառչում եմ իմ վերմակի տակ: Ես հասել եմ այն տարիքին, երբ պետք է հոգ տանեմ ինձ: Բացի դրանից, Էժենին էլ գալու է ինձ մոտ հագնվելու, շարունակեց նա մի փոքր դադարից հետո:— Խեղճ աղջիկը կարող է

հիվանդանալ՝ այս ցուրտ եղանակին արդուզարդը անելով իր սենյակում: Հետո մենք կգանք քեզ մոտ մեր նոր տարվա բարեմարթություններն անելու սրահում, կրակի մոտ:

— Տա՛, տա՛, տա՛, խոսելով ի՞նչ ձև: Այդ ի՞նչպես ես սկսում նոր տարին, տիկին Գրանդե: Երբեք դու այդքան չես խոսել: Չինի՞ զինով թրջված հաց ես կերել:

Մի բոպե լոռություն տիրեց:

— Լավ,— շարունակեց ծերուկը, որ անպայման զոհ էր մնացել իր կնոջ առաջարկից,— ձեր ուզածը կկատարեմ, տիկին Գրանդե: Դու իսկապես լավ կին ես, և ես չեմ ուզում, որ երբ դու այլս երիտասարդ չես, քեզ որևէ դժբախտություն պատահի, թեն ճիշտ է, որ լա Բերթելիերները ամուր կոճրից են շինված: Հը՛, ճիշտ չէ՛,— Ճաց նա մի բոպե հետո:— Վերջապես մենք նրանցից ժառանգություն ենք ստացել ես ներում եմ նրանց:

Եվ նա հազար:

— Այս առավոտ դուք ուրախ եք, պարոն,— ասաց լրջությամբ իւեղձ կինը:

— Ես միշտ ուրախ եմ...

Զվարթ, զվարթ տակառագործ,

Նորոգում է տաշտակն անգործ.

ավելացրեց նա, մտնելով իր կնոջ սենյակը բոլորովին հագնված:— Այո, իրավ որ շատ ցուրտ է: Մի լա՛վ նախաճաշենք: Դե Գրասեն ինձ ուղարկել է գետնասունկով պատրաստված յուղու լյարդի պաշտետ: Ես պիտի զնամ այն վերցնելու հանրակառքից: Նա անպայման մի զույգ նապոլեոն էլ միացրած կինի դրան Էժենիի համար,— ասաց նրա ականջին տակառագործը:— Ես այլս ոչ մի ոսկի չունեմ, տիկին: Ունեի մի քանի ոսկյա հին դրամներ, բայց ստիպված եղա, այդ ես կարող եմ ձեզ ասել, նրանցից բաժանվել իմ գործերի կապակցությամբ:

Եվ նոր տարին նշանավորելու համար իր կնոջ ճակատը համբուրեց:

— Էժենի,— բացազնչեց պարզամիտ մայրը,— չգիտեմ որ կողմից է նա վեր կացել, բայց այս առավոտ բարի է: Բա՛հ, մենք դուրս կպրծնենք:

— Ի՞նչ է պատահել մեր տիրոջը,— ասաց Նանոնը իր տիրուհու սենյակը մտնելով՝ կրակ վառելու համար:— Նա ինձ ասաց. «Բարի լուս, բարի տարի, խոշոր անասուն, զնա կնոցս սենյակի վառարանը վառիր, նա մրսում է»: Ուրդակի գժիկեցի, երբ նա ինձ տվեց բոլորովին նոր մի վեց ֆրանկանց: Վերցրեք և նայեցք, տիկին: Օ՛, ազնիվ մարդ: Նա համենայն դեպս արժանավոր մարդ է: Մարդիկ կան, որ քանի ծերանում են՝ խստանում են, բայց նա քաղցրանում է, ճիշտ ձեր հաղարջօղու նման, և լավանում: Նա կատարյալ, շատ բարի մարդ է:

Գրանդեի այդ ուրախության գաղտնիքը նրա սպեկույացիայի լիակատար հաջողության մեջ էր: Պարոն դր Գրասենը հանելով այն գումարը, որ տակառագործը նրան պարտ էր՝ հարյուր հիսուն հազար ֆրանկի հոլանդական պարտամուրիակների գեղչի հաշվին, և այն հարյուր հազար ֆրանկը, որ նա լրացուցիչ տվել էր Գրանդեին՝ պետական ռենտայի արժեթղթեր զնելու համար, փոստակառքով նրան էր ուղարկվել երեսուն հազար ֆրանկ՝ արծաթյա էլյուներով՝ ծերունուն հասնող վեցամյա տուկոսների մնացորդը և հայտնել էր նրան պետական պարտատոմսերի կուրսի բարձրացման մասին: Այժմ նրանք արժեին ուրատնինը, երբ հունվարի վերջերին ամենահայտնի

կապիտալիստները պիտի դնեին իննառևերկուառվ: Երկու ամսից ի վեր, Գրանդեն իր ընդհանուր դրամագլխից տասներկու տոկոս էր շահում, նա մաքրել էր իր հաշիվները և այսուհետև 6 ամիսը մեկ ստանալու էր հիսուն հազար ֆրանկ՝ առանց ստիպված լինելու վճարել որևէ տուրք կամ հատուցում: Վերջապէս նա հասկանում էր, թե ինչ ասել է եկամտային ներդրում, որի նկատմամբ պրովինցիայի մարդիկ անդիմադրելի խորշանք ունեն: Նա տեսնում էր, որ դեռևս հինգ տարի շանցած՝ ինքը կլինի վեց միլիոնի տեր, որ կուտակվելու էին առանց մեծ շարշարանքի, և որ միանալով նրա կալվածների արժեքին, կազմելու էր մի հսկայական հարստություն: Վեց ֆրանկանոցը, որ նա տվել էր Նանոնին, հավանաբար վարձն էր այն մեծ ծառայության, որ աղախինը անգիտակցաբար մատուցել էր իր տիրոջը:

— Օ՛հ, օ՛հ, այսպէս կրակի նման ո՞ւր է գնում հայր Գրանդեն, այսքան վաղ առավոտյան, — միմյանց ասում էին խանութպանները՝ իրենց կրպակները բաց անելիս:

Հետո, երբ նրանք տեսան նրան, որ զալիս էր գետափից՝ ետևից էլ փոստակայանի բեռնակիրներից մեկը, որը մի սայլ լիքը տոպրակներ էր փոխադրում:

— Զուրը միշտ դեպի գետը կվազի. ծերուկն իր փողի ետևից էր գնացել, — ասում էր մեկը:

— Նա փող ստանում է Փարիզից, Ֆրուաֆոնից, Հոլանդիայից, — ասում էր մի ուրիշը:

— Նա վերջ ի վերջո գնելու է ամբողջ Սոմյուրը, — գոշում էր մի երրորդը:

— Նա արհամարհում է ցուրտը և միշտ իր գործի ետևից է, — ասում էր մի կին իր ամուսնուն:

— Է՛հ, է՛հ, պարոն Գրանդե, — եթե դա ձեզ նեղում է, — ասում էր մահուդի մի վաճառական, նրա ամենամոտիկ հարևանը, — ես կազատեմ ձեզ որոշնից:

— Ո՛հ, դրանք սուեր են, — պատասխանեց խաղողագործը:

— Արծաթից, — ասաց բեռնակիրը ցած ձայնով:

— Եթե ուզում ես, որ ես քո մասին հոգ տանեմ, լեզվի սանձ դիր, — ասաց ծերուկը բեռնակիրին՝ իր դուռը բաց անելով:

«Բահ, ծեր աղվես, ես նրան խուլ էի կարծում, — մտածեց բեռնակիրը, — երևում է, որ երբ ցուրտ է լինում, նա լսում է»:

— Սիա քան սու, իբրև կաղանդչեք, միայն թե պապանձում: Ցանվի՛ր, — ասաց նրան Գրանդեն: — Նանոնը քեզ կվերադառնի քո ձեռնասայլը: Նանոն, մեր ցանցառները գնացել են պատարագի՝

— Այո, պարոն:

— Դե՛, շուտ գործի անցի՛ր, — գոռաց նա՝ նրա ուսին տոպրակներ դնելով:

Մի բոպեում դրամը փոխադրվեց նրա սենյակը, ուր նա փակվեց:

— Երբ նախաճաշը պատրաստ լինի, զարկ պատը: Ետ տար փոստակայանի ձեռնասայլը:

Ըստանեկան նախաճաշը ժամը տասին միայն տեղի ունեցավ:

— Այստեղ քո հայրը շպետք է ուզի քո ոսկին տեսնել, — ասաց տիկին Գրանդեն իր աղջկան՝ պատարագից վերադառնալիս: — Դու այնպես ձևացրու, որպես թե շատ ես մրտում: Հետո մենք ժամանակ կունենանք նորից լրացնելու քո գանձը՝ քո ծննդյան օրվա տարեդարձին:

Գրանդեն ցած իջավ սանդուղից՝ մտածելով իր փարիզյան Էլյուներն իսկոյն մաքուր ոսկով փոխարինելու և պետական պարտատոմսերի հիանալի սպեկուլյացիայի մասին: Նա որոշել էր այդ ձևով գետեղել իր հասույթները, մինչև ունտան հարյուր ֆրանկի համար: Էժենի համար շարագուշակ մի մտադրություն: Երբ նա ներս մտավ, երկու կանայք անմիջապես նոր տարվա մաղթանքներ արեցին, աղջիկը նրա գիրկը նետվելով ու փայփայելով նրան, տիկին Գրանդեն լրջությամբ և վեհանձնությամբ:

— Ա՛հ, զավա՝ կս, — ասաց նա իր աղջկա այտերը համբուրելով, — ես քեզ համար եմ աշխատում, տեսն՝ մմ ես... Ես քո երջանկությունն եմ ցանկանում: Երջանիկ լինելու համար դրամ է պետք: Առանց փողի՝ փո՛ մի: Ա՛ռ, ահա քեզ մի նապոլեոն, բոլորովին նոր, ես սա բերել եմ տվել Փարիզից: Այստեղ, երդվում եմ, ոչ մի հատ ոսկի չկա: Դու միայն ունես ոսկի: Ցույց տուր ինձ քո ոսկին, աղջիկս:

— Բա՛հ, շատ ցուրտ է, նախաճաշենք, — պատասխանեց նրան Էժենին:

— Լավ, հետո՝, չէ՞: Դա մեզ կօգնի՝ մարսելու: Այդ ծերուկ դեկ Գրասենք, ի միջի այլոց ուղարկել է սա, — շարունակեց նա: — Այդպես, կերեք զավակներս, դա մեզ ոչինչ չարժի: Դե Գրասենք լավն է, ես գոն եմ նրանից: Այդ չորացած ձուկը ծառայություն է մասուցում Շառլին և այն էլ ձրիաբար: Նա շատ լավ է կարգադրում հանգուցալ խեղճ Գրանդեի գործերը: Ո՛ւհ, ո՛ւհ, — ասաց նա՝ բերանը լիքը, մի փոքր դադարից հետո, — լավն է: Կերեք սրանից, կնիկ, դա կշտացնում է ամենաքիչը երկու օրով:

— Քաղցած չեմ: Ես բոլորովին վատառողջ եմ, դու լավ գիտես:

— Դե լավ, կարող ես լցնել քո կճուճը՝ առանց պայթեցնելուվախի: Դու Բերթելիերներից ես. մի շատ տուկուն կին: Մի քիչ դեղնորակ ես, բայց ես սիրում եմ դեղինը:

Թերևս ամոթալի և հրապարակային մահվան սպասումը դատապարտվածի համար նվազ զարիուրելի էր, քան տիկին Գրանդեի և իր աղջկա համար սպասումն այն դեպքերին, որոնցով պետք էր վերջանար ընտանեկան այս նախաճաշը: Որքան ավելի ուրախ էր խոսում և ուտում ծեր խաղողագործը, այնքան ավելի էր երկու կանանց սիրտը սեղմվում: Աղջիկը գեթ իր սիրո մեջ գորություն էր գտնում:

«Նրա համար, — մտածում էր նա, — ես հազար մահ կտանեմ»:

Այդպես մտածելով՝ նա իր մորն էր ուղղում արիությամբ բոցավառ հայացքներ:

— Տա՛ թայս բոլորը, — ասաց Գրանդեն Նանոնին, երբ ժամը տասնմեկին մոտ նախաճաշը վերջացավ: — Բայց թող մեզ սեղանը: Մենք այսպես ավելի հանգստությամբ կարող ենք դիտել քո փոքրիկ գանձը, — ասաց նա՝ նայելով Էժենիին: — Փոքրի՝ կ եմ ասում. դու ունես, իբրև իրական արժեք, հինգ հազար ինը հարյուր հիսունինը ֆրանկ և առավոտվա քառասուն ֆրանկը՝ կանի վեց հազար ֆրանկ՝ առանց մի ֆրանկի: Լավ, ես կարող եմ քեզ տալ այդ ֆրանկը՝ գումարն ամբողջացնելու համար, որովհետև, տեսնում եմ, աղջիկս... Բայց ինչո՞ւ լսում ես մեզ, դե՛, կրնակդ ցույց տուր, Նանոն, գնա քո գործին, — ասաց ծերուկը:

Նանոնը չըվեց:

— Լսիր, Էժենի, պետք է որ ինձ տաս քո ոսկին: Դու այդ չես կարող մերժել քո հորը, չէ՞ , պստի՛կ աղջիկս:

Կանայք լուս էին:

— Ես այլսս ոչ մի ոսկի չունեմ: Ունեի, բայց այժմ չունեմ: Ես քեզ կտամ վեց հազար լիվր և դու այն կգետեղես այնպես, ինչպես ես քեզ կասեմ: Այլսս չպետք է մտածել դուզենի մասին: Երբ քեզ ամուսնացնեմ, մի բան, որ շուտով պիտի կատարվի, ես քեզ համար կգտնեմ մի ամուսին, որը քեզ կնվիրի ամենազեղեցիկ դուզենը, որ երբևէ տեսնված լինի պրովինցիայում: Լսի՛ր, աղջիկս: Մի շատլավ առիթ է ներկայանում, դու կարող ես գետեղել քո վեց հազար ֆրանկը պետության մոտ և ամեն վեց ամիսը մեկ՝ դու մոտավորապես երկու հարյուր ֆրանկ շահ կստանաս, առանց հարկի, առանց հասուցման, առանց կարկուտի, առանց սառնամանիքի, առանց հորդումի և այն ամենի, որոնք անհանգստություն են պատճառում եկամուտներին: Թերևս դու չես ուզում բաժանվել քո ոսկուց, հր՝, աղջիկս: Բայց և այնպես , բե՛ր տեսնեմ: Ես քեզ համար կհավաքեմ ոսկե դրամներ՝ հոլանդական, փորբուզալական, Մոգոյի բուպիներ, ձենովական, ավելացնելով դրանց և այն, որ ես քեզ տալու եմ քո տոներին. Երեք տարի հետո, քո ոսկու զանձը կիսով չափ կավելանա: Ի՞նչ ես ասում, աղջիկս: Բարձրացրու զլուխտ: Շտապի՛ր, գնա՛ բեր, գողտրի՛կս: Դու պարտավոր էիր իմ աշքերը համբուրել, որ այսպես քեզ բացատրում եմ փողերի սեփական կյանքի և մահկան խորհրդավորություններն ու գաղտնիքները: Իրոք, որ փողերը մարդկանց նման խլրտում են և ապրում. գնում են, գալիս, քրտնում, արտադրում:

Էժենին ոտքի կանգնեց, բայց դեպի դուռը մի քանի քայլ անելուց հետո, հանկարծ շուր եկավ, շեշտակի նայեց հորը և ասաց.

— Ես այլսս չունեմ իմ ոսկին:

— Դու չունե՞ս այլսս քո ոսկին,— գոռաց հայրը՝ ծառս լինելով իր ոտքերի վրա այն ձիու նման, որ իրենից տասը քայլ հեռու լսում էր թնդանոթի հարվածը:

— Ω՛Σ, ես այլսս այն չունեմ:

— Սխալվում ես, Էժենի:

— Ω՛Σ:

— Երդվում եմ հորս հոտոցի դանակով...

Երբ տակառագործը երդվում էր այսպես, տախտակամածը շարժվում էր:

— Բարի սուրբ աստված, տիկինը գունատվում է,— ձչաց Նանոնը:

— Գրանդէ՝, քո բարկությունը ինձ կմահացնի,— ասաց խեղճ կինը:

— Տա՛, տա՛, տա՛, ձեր ազգում երբեք չեք մեռնի:— Էժենի, ի՞նչ ես արել քո ոսկեդրամները,— գոռաց նրա վրա հարձակվելով:

— Պարոն,— ասաց աղջիկը իր մոր ծնկներին հենված,— մայրս շատ է տառապում... տեսնում եք... մի սպաներ նրան:

Գրանդեն սարսափեց իր կնոջ դեմքի դալկությունից, որ քիչ առաջ այնքան դեղին էր:

— Նանոն, եկ օգնիր ինձ, որպեսզի պառկեմ,— ասաց մայրը տկար ձայնով:— Մեռնում եմ...

Նանոնն անմիջապես բռնեց իր տիրուհու թևից, նույնը արեց և էժենին, և առանց մեծ դժվարության չէր, որ նրանք կարողացան բարձրացնել նրան իր սենյակը, որովհետև սանդուղքի ամեն մի աստիճանի վրա նա նվազում էր: Գրանդեն մնաց մենակ: Բայց մի քանի րոպե հետո, նա յոթ-ութ աստիճան բարձրանալով գոռաց.

— Էժենի, երբ ձեր մայրը պառկի, վայր կիշնեք:

— Այո, հայր:

Նա չուշացավ վայր իշնել՝ մորը գոտեպնդելուց հետո:

— Աղջի՛կս,— ասաց Գրանդեն,— դու ինձ պիտի ասես, թե ուր է քո ոսկին:

— Հայր, եթե դուք ինձ տալիս եք նվերներ, որոնց ամբողջական տերը չեմ լինելու ես, ե՛տ վերցրեք,— սառնությամբ պատասխանեց Էժենին՝ վերցնելով վառարանի վրայից նապոլեոնը և նրան մեկնելով:

Գրանդեն փութաց խլել նապոլեոնը և սահեցրեց գրպանը:

— Ես կարծում եմ, որ այսուհետև ես քեզ ոչինչ չեմ տա: Բայց միայն այդ չէ,— ասաց նա եղունգը առջևի ատամին խփելով:— Դուք ուրեմն արհամարհո՞ւմ եք ձեր հորը, դուք ուրեմն նրա վրա վստահություն չունե՞ք: Դուք չգիտե՞ք, թե ինչ է հայրը: Եթե նա ձեզ համար ամեն ինչ չէ, ուրեմն ոչի՞նչ չէ: Ո՞ւր է ձեր ոսկին:

— Հայր, ես ձեզ սիրում եմ և հարգում, հակառակ ձեր բարկության: Բայց խոնարհաբար ձեզ նկատել կտամ, որ քաներկու տարեկան եմ: Դուք ինձ շատ հաճախ ասել եք, որ ես չափահաս եմ արդեն, որպեսզի ես այդ իմանամ: Եսիմ դրամը գործածեցի ինձ հաճելի ձևով և վստահ եղեք, որ նա լավ կերպով է զետեղված:

— Ո՞ւր:

— Դա անբռնաբարելի զաղտնիք է,— ասաց նա,— մի՞թե դուք չունեք ձեր զաղտնիքները:

— Ես մի՞թե իմ ընտանիքի մեծը չեմ. ես մի՞թե չեմ կարող ունենալ իմ գործերը:

— Դա ել իմ գործն է:

— Այդ գործը վատ գործ է, որ դուք չեք կարող ձեր հորն ասել, օրին՝ րդ Գրանդեն:

— Սքանչելի գործ է, բայց ես չեմ կարող ասել իմ հորը:

— Գոնե ասացեք, ե՞րբ եք տվել ձեր ոսկին:

Էժենին զլատվ բացասական նշան արեց:

— Ձեր տարեղարձի օրը դեռևս պահո՞ւմ էիք ձեր ոսկիները:

Էժենին, որ սիրո պատճառով այնքան խորամանկ էր դարձել, որքան հայրը ազահության, զլիս նույն նշանը կրկնեց:

— Սակայն երբեք նման համառություն չի տեսնվել, ոչ էլ նմանօրինակ գողություն,— ասաց Գրանդեն այնպիսի ձայնով, որ բարձրացավ կրեսչենդոյի և աստիճանաբար լցրեց տունը... Ինչպե՞ս,

այստեղ, իմ սեփական տանը, ինձ մոտ, մեկը կարողացել է քո ոսկին առնե՞լ, միակ ոսկին, որ կար, և ես չիմանամ թե ո՞վ: Ոսկին թանկագին բան է: Ամենից պատվավոր աղջկները կարող են հանցանքներ գործել, տալ՝ չեմ իմանում ինչ, այդ պատահում է մեծ իշխանների կամ նույնիսկ բուրժուանների մոտ: Բայց ոսկի տալ, որովհետև դուք այն տվել եք մեկին, չե՞:

Էժենին մնաց անզգա:

— Երբսէ եղե՞լ է նման մի աղջիկ: Ես ձեր հայրը չե՞մ: Եթե դուք այն զետեղել եք, անշուշտ ունեք ստացագիր:

— Ազա՞տ էի, այո կամ ոչ, անել այն, ինչ լավ էր թվում ինձ: Ի՞մն էր այդ ոսկին:

— Բայց դու երեխա ես:

— Չափահաս: Իր աղջկա տրամաբանությունից ընկճված, Գրանդեն գունատվեց, ոտքերը գետին խփեց, հայինեց. հետո վերջապես գտնելով իր խոսքերը՝ գոռաց.

— Անիջյալ օձածին աղջիկ, օ՛, վատ սերմ, դու լավ գիտես ես քեզ սիրում եմ, և այդ բանը ի չարն ես գործ դնում: Նա սպանում է իր հորը: Սատանան տանի. անկասկած դու մեր հարստությունը այդ բորբիկի առաջ դրիր, որ մարոկենի կողջիկներ էր հազնում: Հորս հոտոցի դանակով եմ երդվում, ես չեմ կարող քեզ զրկել ժառանգությունից, տակառը վկա, բայց քեզ անիծում եմ, քե՞զ, քո հորեղորդուն և քո զավակներին: Դու ոչ մի լավ բան չես տեսնի այդ բոլորից, հասկանո՞ւմ ես: Եթե Շառլին է, որ... բայց ո՛չ այդ անկարելի է: Ի՞նչ, այդ անպիտան պահանջան ինձ կողոպտած լինի՞...

Նա նայեց իր աղջկան, որ մնում էր սառն և լուր:

— Նա չի շարժվի, հոնքն էլ չի թարրի: Նա ավելի Գրանդէ է, քան ես եմ: Գոնե ոսկիդ ձրի չես տվել, չե՞մ, ասա՞:

Էժենին նայեց հորը՝ նետելով նրա վրա մի արհամարհական հայացք, որը վիրավորեց նրան:

— Էժենի, դուք ինձ մոտ եք, ձեր հոր մոտ: Այդտեղ մնալ կարողանալու համար՝ դուք պարտավոր եք ենթարկվել նրա հրամաններին: Քահանանները ձեզ հրամայում են ինձ ենթարկվել:

Էժենին կախեց գլուխը:

— Դուք ինձ վիրավորում եք այն բանում, ինչ ինձ համար ամենանվիրականն էր,— շարունակեց նա,— ես ձեզ նորից կրոգենամ տեսնել, երբ ենթարկվեք: Վերադարձեք ձեր սենյակը: Այնտեղ կմնաք, մինչև ես ձեզ թույլ տամ դուրս գալ: Նանոնք ձեզ կրերե ջուր և հաց: Լսեցի՞ք: Գնացե՞ք:

Էժենին փղձկաց և շտապեց գնալ իր մոր մոտ: Ջան մեջ, առանց զգալու ցուրտը, իր պարտիզի շրջանը մի քանի անգամ անելուց հետո, Գրանդեն ենթադրեց, որ Էժենին իր մոր մոտ է, և գոհ՝ նրան իր հրամաններին անհնազանդ վիճակում գտնելու մտքից, նա սանդուղքը բարձրացավ կատվիարագությամբ և հայտնվեց տիկին Գրանդէի սենյակում այն բոպեին, երբ նա շոյում էր վարսերը Էժենիի, որն իր դեմքը թաղել էր մոր ծոցի մեջ:

— Միմիթարվիր, խեղճ զավակս, քո հայրը կիանդարտվի:

- Նա հայր չունի այլնս,— ասաց տակառագործը:— Արդյոք ես և դո՞ւք ենք, տիկին Գրանդե, այսպիսի մի անհնազանդ աղջկա ծնունդ տվել: Գեղեցի՝ կ դաստիարակություն և մանավանդ՝ կրոնական: Ուրեմն դեռևս դուք չե՞ք փակվել ձեր սենյակում: Շուտով բա՛նտ, բա՛նտ, օրիորդ:
- Ուզում եք ինձ զրկե՞լ իմ աղջկանից, պարոն,— ասաց տիկին Գրանդեն տաքությունից կարմրած դեմքը ցույց տալով:
- Եթե դուք նրան ուզում եք պահել, տարեք ձեզ հետ, դուք երկուսդեմ կ ազատեցեք իմ սունը... Անեծք, ո՞ւ է ոսկին, ի՞նչ եղավ ոսկին:

Էժենին ոտքի կանգնեց, նետեց իր հոր վրա մի հպարտ հայացք և մտավ իր սենյակը: Ծերուկը նրա վրա փակեց դուռը:

— Նանո՞ն,— գոռաց նա,— հանգըրու սրահի կրակը:

Եվ նա վերադարձավ իր կնոջ մոտ, նստեց մի թիկնաթոռի վրա, պատի վառարանի անկյուն՝ ասելով.

— Անկասկած նա տվել է իր ոսկին այդ թշվառական, գայթակղեցնող Շառլին, որ մի փափագ ուներ միայն՝ մեր ոսկին:

Տիկին Գրանդեն իր աղջկանն սպառնացող վտանգի մեջ, նրա նկատմամբ տածած իր զգացումի մեջ բավականաշափ ուժ գտավ, որպեսզի առերևույթ մնար սառը, խուլ ու համբ:

— Ես ոչինչ չգիտեի այդ ամենի մասին,— պատասխանեց նա շուր գալով պատի կողմը՝ չենթարկվելու համար իր ամուսնու փայլատակող հայացքներին:— Ես այնքան տառապում եմ ձեր բռնությունից, որ, եթե հավատամ իմ նախազգացումներին, ապա անկողնից դուրս կգամ միայն գերեզմանցի ճանապարհը բռնելու համար: Դուք ինձ այս րոպեին խոհալու էիք, պարոն, ես, որ ձեզ երբեք վիշտ չեմպատաճել, զեթ ինչպես ես եմ կարծում: Ձեր աղջկը ձեզ սիրում է, և ես հավատացած եմ, որ նա մի նորածինի չափ անմեղ է, ուրեմն նրան ցավ մի պատճառեք, ե՛տ առեք ձեր վճիռը: Սաստիկ ցուրտ է, դուք կարող եք պատճառ դառնալ, նա ծանր հիվանդանա:

— Ես նրան չեմ ուզում տեսնել, ոչ էլ խոսել նրա հետ: Նա իր սենյակում պիտի մնա միայն հացով ու ջրով, մինչև որ գոհացում տա իր հորը: Տերը վկա, ընտանիքի մեծը պետք է, որ իմանա, թե ո՞ւ է գնում իր տան ոսկին: Նա ուներ միակ րուպիները, որ գուցե գտնվելին Ֆրանսիայում, իեսոն ձենովական, հոլանդական դուկատներ:

— Պարոն, Էժենին մեր միակ զավակն է, և եթե այդ բոլորը նույնիսկ ջուրը նետած լիներ...  
— Զո՞ւրը,— գոռաց ծերուկը,— ջո՞ւրը: Դուք գմկել եք, տիկին Գրանդե: Ինչ որ ասացի՝ ասացի. դուք այդ գիտեք: Եթե ուզում եք տանը խաղաղություն ունենալ, խոստովանեցրեք ձեր աղջկան, կորգեցեք նրանից ճշմարտությունը: Նման բաների համար կանայք իրար ավելի լավ կհասկանան, քան թե մենք՝ տղամարդիկս: Ինչ էլ արած լինի, ես նրան ուտելու չեմ: Մի՞թե վախենում է ինձնից: Եթե նա ոսկով պատած լիներ իր հորեղբորորդուն ոսից գրուի, նա ծովի վրա է գտնվում այժմ և մենք չենք կարող հասնել նրան:

— Լավ, պարոն...

Գերազրգիո՛ ջղային տագնապից, որի մեջ նա գտնվում էր, կամ իր աղջկա դժբախտությունից, որ ուժեղացնում էր նրա գուրգուրանքն ու բանականությունը՝ տիկին Գրանդեի խորամտությունը,

Ճիշտ այն րոպեին, որ պատասխանելու էր, նկատել տվեց, որ ամուսնու քթի ուռող ահավոր շարժում գործեց. և նա փոխեց իր արտահայտության միտքը, առանց փոխելու շեշտը:

— Լավ, պարոն, բայց մի՞թե ես ձեզնից ավելի ազդեցություն ունեմ նրա վրա: Նա ինձ ոչինչ չի ասել, ձեզ է քաշել:

— Սատանան տանի՝, այս առավոտ որքան երկար է քո լեզուն: Տա՛, տա՛, կարծում եմ, որ դուք ինձ արհամարհումեք: Հավանական է, որ նրա հետ համախորհուրդ եք:

Նա շեշտակի կնոջը նայեց:

— Ճշմարտությունն այն է, պարոն Գրանդե, որ եթե դուք ցանկանում եք ինձ սպանել, կարող եք շարունակել այդ ձևով: Ես ձեզ ասում եմ, պարոն, և եթե դա ինձ արժենա նույնիսկ իմ կյանքը, ես պիտի շարունակեմ ձեզ կրկնել— դուք ձեր աղջկա հանդեպ արդար չեք, նա ավելի ողջամիտ է, քան դուք: Այդ փողը նրան էր պատկանում, նա անպայման այն գործածեց մի լավ նպատակի համար, և աստված միայն իրավունք ունի իմանալու մեր բարեգործությունները: Պարոն, պաղատում եմ ձեզ, վերադարձեք ձեր բարեշնորի վերաբերմունքը Էժենին... Այդ ձևով միայն դուք կարող եք նվազեցնել ձեր բարկությամբ ինձ պատճառած վնասի հետևանքը և թերևս իմ կյանքը փրկեք: Աղջիկս, պարո՞ն, վերադարձեք ինձ իմ աղջիկը:

— Ես մեկնում եմ,— ասաց Գրանդեն:— Անկարելի է մնալ իմ տան մեջ: Մայր ու աղջիկ տրամաբանում և խոսում են, իբրև թե.. Հա՛յ-հա՛յ: Դուք ինձ նոր տարվա զարհութելի նվերներ տվիք: Էժենի,— գոռաց նա:— Այո՛, այո՛, լացեք: Ինչ որ անում եք, ձեզ խղճի խայթ է պատճառելու, հասկանո՞ւմ եք: Ի՞նչ միտք ունի ամեն երեք ամիսը վեց անգամ հաղորդվել, եթե դուք ձեր հոր ոսկին գաղտնի կերպով տալիս եք մի դատարկապորտի, որ բզկտելու է ձեր սիրտը, երբ դուք ուրիշ բան չեք ունենա նրան տալու: Դուք կտեսնեք, թե ի՞նչ արժե Շառլ իր մարոկեն կոշիկներով և անմեղունակ դեմքով: Նա ոչ սիրտ ունի և ոչ էլ հոգի, քանի որ համարձակվում է իր հետ տանել մի խեղա աղջկա գանձը՝ առանց ծնողների հավանության:

Երբ փողոցի դուռը փակվեց՝ Էժենին դուրս եկավ իր սենյակից և գնաց մոր մոտ:

— Ձեր աղջկա սիրուն դուք մեծ քաջություն ցույց տվիք,— ասաց նա մորը:

— Տեսնում ես, աղջիկս, ոչ օրինավոր բաները մեզ ո՞ւ են հասցնում ... Դու ստիպեցիր ինձ ստել:

— Ես աստծուց կիսնդրեմ, որ միայն ինձ պատժի դրա համար:

— Ճի՞շտ է,— ասաց Նաննը սարսափահար վրա հասնելով,— որ օրիորդը իր մնացած օրերի համար միայն հաց ու ջուր է ստանալու:

— Ի՞նչ մեծ բան է, Նանն,— ասաց Էժենին հանդարտությամբ:

— Ա՛հ, երբ տան օրիորդը միայն ցամաք հաց պետք է ուտի, ես չեմ որ կարկանդակ պիտի ուտեմ: Ո՛չ, ո՞չ:

— Այդ բոլորի մասին ոչ մի խոսք, Նանն,— ասաց Էժենին:

— Ես կպապանձվեմ, բայց դուք կտեսնեք:

Գրանդեն՝ առաջին անգամ քսանչորս տարվա մեջ՝ մենակ ձաշեց:

— Ահավասիկ այրի մնացիք, պարոն,— ասաց նրան Նանոնք:— Շատ տհաճ բան է այրի մնալ, եթք տանը երկու կին կա:

— Ես քեզ հետ չեմ խոսում: Լեզուդ քեզ պահիր, եթե ոչ ես քեզ կարտաքսեմ: Ի՞նչ կա քո ամանի մեջ, որ եռում է կրակի վրա:

— Ճարպ է, հալեցնում եմ:

— Այս երեկո մարդիկ են գալու այստեղ, կրա՞կ վարիր:

Կրյուշները, տիկին դե Գրասենը և որդին եկան ժամը ուրին և զարմացած մնացին՝ չտեսնելով ոչ տիկին Գրանդեին և ոչ էլ նրա աղջկան:

— Իմ կինը մի քիչ վատառողջ է, Էժենին էլ նրա մոտ է,— պատասխանեց ծեր խաղողագործը, որի դեմքը շմատնեց ոչ մի հուզում:

Մի ժամից հետո, որ անցկացրին աննշան խոսակցություններով, տիկին դե Գրասենը, որ գնացել էր տիկին Գրանդեին այցելելու՝ վերադարձավ: Բոլորը հարցրին.

— Ինչպե՞ս է տիկին Գրանդեն:

— Վատ, շա՞տ վատ,— ասաց նա:— Նրա առողջական վիճակը հիրավի ինձ անհանգստացնող է թվում: Նրա տարիքինանհրաժեշտ է ամենալուրջ զգուշությունները ձեռք առնել, հայր յր Գրանդե:

— Կտեսնենք,— պատասխանեց խաղողագործը մտազբաղ դեմքով:

Ամեն մեկը նրան բարի գիշեր մաղթեց: Երբ Կրյուշներն արդեն փողոցում էին, տիկին դե Գրասենն ասաց.

— Գրանդեների մոտ ինչ-որ նոր բան կա: Մայրը շատ հիվանդ է, առանց այդ գիտակցելու: Աղջկա աչքերը կարմրած են այնպես, ինչպես, երբ երկար լաց են լինում: Չինի՞ ուզում են հակառակ իր կամքին ամուսնացնել:

Երբ խաղողագործը անկողին մտավ, Նանոնը մաշիկներով, առանց աղմուկի, եկավ Էժենիի մոտ և նրան հրամցրեց մի փոքրիկ ամանում եփած պաշտետ:

— Առե՛ք, օրիորդ,— ասաց բարի արջիկը,— Կորնուայեն ինձ մի նապաստակ տվեց: Դուք այնքան սակավակեր եք, որ այս պաշտետը ձեզ մի շաբար բավական է, և որն իր դռնդրողի շնորհիվ չի փշանա: Գեր միայն չոր հացով չեք մնա: Մի բան, որ բոլորովին առողջարար չեք:

— Խե՛ղ Նանոն, — ասաց Էժենին նրա ձեռքը սեղմելով:

— Ես այդ պատրաստել եմ լավ և համով, շատ փափուկ. նա այդ բոլորովին չնկատեց: Իմ վեց ֆրանկից ծախսեցի ու գնեցի խոզի յուղ, դափնեվարդի տերներ: Ես իմ փողի տերն եմ:

Հետո աղախինը շտապեց հեռանալ, կարծելով, թե լսում է Գրանդեի ձայնը:

Մի բանի ամսվա ընթացքում խաղողագործը շատ հաճախ այցելեց իր կնոջը, օրվա տարբեր ժամերին, առանց իր աղջկա անունը տալու, առանց նրան տեսնելու, ոչ էլ նրա մասին ամենափոքր ակնարկությունն անելու: Տիկին Գրանդեն իր սենյակից բնավ դուրս չեկավ, և օրեցօր նրա դրությունը ծանրացավ: Ոչ մի բան չկարողացավ ծեր տակառագործին կոտրել: Նա մնում էր

անդրդվելի, դաժան և անտարբեր՝ գրանիտի զանգվածի նման: Նա շարունակեց դուրս գնալ և վերադառնալ ըստ իր նախկին սովորության, բայց այլևս չկակազեց, դարձավ սակավախոս և գործերի մեջ ավելիխիստ, քան երբնէ: Հաճախ նա սխալվում էր իր թվանշանների մեջ:

— Գրանդեներին մի բան կլինի պատահած, — ասում էին Կրյուշոներն ու Գրասենները:

— Ի՞նչ է պատահել Գրանդեների տանը, — դա եղավ ընդունված մի հարցում, որ տալիս էին իրար ընդհանրապես Սոմյուրի բոլոր երեկություններում:

Էժենին, Նանոնի առաջնորդությամբ, գնում էր ժամասացության: Եկեղեցուց դուրս գալիս, եթե տիկին դե Գրասենը խոսեր նրա հետ, նա պատասխանում էր խուսափուկ և առանց զոհացնելու նրա հետաքրքրությունը: Սակայն երկու ամիս հետո, անկարելի եղավ թաքցնել, թե՛ երեք Կրյուշոններից, թե՛ տիկին դե Գրասենից՝ Էժենիի արգելափակման զադանիքը: Հասավ մի բոպե, երբ նրա տևական բացակայությունն արդարացնելու պատրվակներ չմնացին այլևս: Հետո, առանց հայտնվելու, թե ո՞վ էր զադանիքն ասողը, ամբողջ քաղաքն իմացավ, որ նոր տարվա առաջին օրից օրիորդ Գրանդեն հոր հրամանով բանտարկված էր իր սենյակում և դատապարտված հացի և ջրի, առանց կրակի, որ Նանոնը նրա համար համեռ բաներ էր եփում և գիշերով տանում նրան: Ամեն մարդ գիտեր նաև, որ դեռատի աղջիկը միայն իր բնակարանից հոր բացակայելու ժամերին էր կարողանում մոր մոտ գնալ և նրան խնամել: Այդ ժամանակ Գրանդենի վարմունքը շատ խստությամբ դատապարտվեց: Ամբողջ քաղաքը, այսպէս ասած, նրան օրենքից դուրս հոչակեց, վերհիշեց նրա դավաճանությունները, նրա անողոքությունները և բանադրեց նրան: Երբ նա անցնում էր փողոցով, ամեն ոք փսխալով ցույց էր տալիս նրան: Երբ նրա աղջիկն էր անցնում ոլոր-մոլոր փողոցով, Նանոնի ընկերակցությամբ, պատարագի կամ եկեսցեի գնալու համար, բոլոր բնակիչները երևում էին լուսամուտներում՝ հետաքրքրությամբ զննելու համար հարուստ ժառանգուին զուսպ կեցվածքը և նրա դեմքը, որի վրա նկարված էր հրեշտակային քաղցրություն և մելամաղձութություն: Նրա արգելափակումը, հորից շնորհազուրկ լինելը ոչ մի նշանակություն չունեին նրա համար: Մի՛ թե նա չէր տեսնում աշխարհազրական քարտեզը, փոքրիկ նատարանը, պարտեզը, պատի կտորը, իր իսկ շրջունքներից վերստին չէ՛ր ճաշակում նա այն մեղքը, որ սիրո համբույրներն էին յողել այնտեղ: Մի ժամանակ նա անզիտացավ խոսակցությունները քաղաքում, որոնց առարկան էր ինքը, ինչպես որ հայրն էր անզիտանում: Աստծո առաջ քարեկրոն և մաքուր լինելով՝ նրա խիդճն ու սերը օգնում էին նրան համբերությամբ տանել հայրական զայրույթն ու վրեժինդրությունը: Բայց մի խոր տառապանք լոռության էր մատնում նրա մյուս բոլոր տառապանքները: Նրա մայրը՝ այդ քաղցր և գթոս էակը, որ գեղեցկանում էր այն լույսից, որը արձակում էր իր գերեզմանին մոտեցող նրա հոգին, օրեցօր հալվում և մաշվում էր: Հաճախ Էժենին իրեն էր կշտամբում, որ ինքն էր եղել մորը լափող անողոք և դանդաղ հիվանդության անմեղ պատճառը: Այս խոճահարությունները, թեն իր մոր կողմից հանդարտեցված, նրան ավելի ջերմորեն էին կապում իր սիրո հետ: Ամեն առավետ, իր հոր մեկնելուց անմիջապես հետո, նա իր մոր սնարի մոտ էր գալիս, և այնտեղ Նանոնը նրա համար նախաճաշ էր բերում: Բայց դժբախտ Էժենին իր մոր տառապանքներից տխուր ու վշտահար՝ լրտ շարժումով, նրա դեմքը ցույց էր տալիս Նանոնին, լալիս էր և չէր համարձակվում իր հորեղբորորդու մասին խոսել: Տիկին Գրանդեն առաջինը ստիպված էր լինում նրան ասել:

— Ո՞ւր է նա: Ինչո՞ւ համար չի գրում:

Մայր և աղջիկ բացարձակապես անտեղյակ էին հեռավորություններին:

— Մտածենք նրա մասին, մայրի՝ կ, բայց չխոսենք նրանից, — պատասխանում էր Էժենին: — Դուք հիվանդ եք, ամեն բանից առաջ՝ դուք:

Այդ ամեն բանիցը դա նա էր:

— Զավակներս,— ասում էր տիկին Գրանդեն,— ես չեմ ափսոսում կյանքը: Աստված ինձ իր պաշտպանության տակ առավ՝ թողնելով, որ ես իմ տառապանքների վերջավորությունը ուրախությամբ դիմագրավեմ:

Այդ կնոջ խոսքերը մշտապես սուրբ և քրիստոնեական էին: Երբ նախաճաշի ժամանակ ամուսինը մոտն էր զալիս և նրա սենյակում քայլում, տարվա առաջին ամիսներին նա նրան ասաց այդ բաները, կրկնելով հրեշտակային քաղցրությամբ, բայց այն կնոջ խոր համոզումով, որին մոտալուտ մահը տալիս էր այն քաջությունը, որից նա զուրկ էր եղել իր կյանքում:

— Պարոն, շնորհակալ եմ ձեզ այն շահագրգորության համար, որ դուք ցույց եք տալիս իմ առողջության նկատմամբ,— պատասխանում էր նա, երբ նրանից մի ամենահասարակ բան էր խնդրել,— բայց եթե դուք ուզում եք իմ վերջին բռպեների տառապանքը մեղմացնել և թեթևացնել իմ ցավերը, ներեցեք մեր աղջկան, ցույց տվեք ձեզ քրիստոնյա, ամուսին և հայր:

Լսելով այս բառերը՝ Գրանդեն նստում էր անկողնի մոտ և վերաբերվում այն մարդու նման, որ անմիջականորեն զգալով տեղատարափը՝ հանդարտ պաշտպանվում է դարբասի տակ. նա լուրջյամբ լսում էր իր կնոջը և ոչինչ չէր պատասխանում: Եվ երբ ամենահուզիչ, ամենաքաղցր, ամենաերկյուղած պաղատանքներն ուղղվում էին նրան, նա պատասխանում էր.

— Դու այսօր մի քիչ գունատ ես, իմ իսկ դժ կին:

Աղջկան կատարելապես մոռացության տալը կարծես դրոշմված լիներ նրա խճաքարե ճակատին և պրկված շրթունքներին: Նա նույնպես չէր հուզվում այն արտասուներից, որ իր տարտամ պատասխանները հոսեցնում էին իր կնոջ սպիտակ դեմքին:

— Թող աստված ձեզ ների, պարոն,— ասում էր նա,— ինչպես որ ես եմ ձեզ ներում: Մի օր դուք անպայման ներողամտության կարիք պիտի ունենաք:

Իր կնոջ հիվանդությունից ի վեր նա չէր համարձակվել արտասանել իր ահավոր տա՛, տա՛, տա՛-ն, սակայն նրա բռնակալությունը չէր զինաթափվել հեզության այդ հրեշտակի դիմաց, որի տգեղությունը նրա դեմքի վրա ծաղկող բարոյական հատկությունների արտացոլումից մաշված, օրեցօր անհետանում էր, խեղճ կինը ամբողջովին հոգի էր դարձել: Աղոթքների ոզին կարծես սրբացրել և մաքրագործել էր նրա դեմքի ամենակոշտ գծերը և նրանց փայլ տվել: Ո՞վ չի նկատել այլակերպման երևույթը սրբացած դեմքերի վրա, որտեղ հոգեկան ապրումները ի վերջո փոխում են ամենատգեղ դիմագծերը, նրանց տալով այն առանձնահատուկ հուզականությունը, որը հատուկ է վսել մտածումների մաքուր և ազնիվ թռիչքին: Այլակերպման այդ տեսարանը, այլակերպում, որ առաջ էին բերում այդ կնոջ գոյության մնացորդները լափող տառապանքները, ազդում էր, թեև դանդաղությամբ, ծեր տակառագործի վրա, որի բնավորությունը մնաց պղնձի պես կարծր: Եթե նրա խոսվածքը դադարեց արհամարհալից լինելուց, ապա անխռով լուրջունը, որ փրկում էր նրա՝ ընտանիքի հոր գերազանցությունը, իշխեց նրա վարքագծի վրա: Հենց որ հավատարիմ Նանոնը երևում էր շուկայում, անպայման մի քանի վաստ կատակ և դժգոհություններ էին հասնում նրա ականջին իր տիրոջ մասին. թեև հասարակական կարծիքը խստորեն դատապարտել էր Գրանդեին, բայց սպասուիին նրան պաշտպանում էր հանուն ընտանեկան արժանապատվության:

— Բայց,— ասում էր նա ծերուկին վատարանողներին,— մի՞ թե մենք բոլորս էլ քանի ծերանում ենք՝ այնքան քարասիրտ չենք դառնում, ինչո՞ւ չեք համաձայնում, որ այդ մարդն էլ մի քիչ խստաբար

դատնա: Ուրեմն վերջ տվեք ձեր բամբասանքներին: Օրիորդն ապրում է թագուհու պէս: Նա առանձին է մնում, բայց դա նրա փափազն է: Մանավանդ, որ իմ տերերն ունեն կարևոր դրդապատճառներ:

Վերջապէս մի երեկո, գարնան վերջերին, տիկին Գրանդէն, ավելի վշտից հիվանդ, քան հիվանդություններից, հակառակ իր աղոթքներին, չկարողանալով հաշտեցնել Էժենիին և հորը, Կրյուշոյին վստահեց իր գաղտնի տառապանքները:

— Քսաներեք տարեկան մի աղջկա դատապարտել հացի ու ջրի միայն... գոռաց նախազահ Բոնֆոնը,— այն էլ առանց պատճառի,— սակայն դա անվանվում է **տանջալից անարդար վարմունք**. Այս կարող է բողոքել այդ բանի համար և այնքան, որքան...

— Հապա, եղբորորդի, — ասաց նոտարը, — թողեք ձեր դատարանի անհասկանալի լեզուն: Հանդստացե՛ք տիկին, ես վաղն իսկ վերջ կտամ այդ արգելափակմանը:

Իմանալով, որ իր մասին են խոսում, Էժենին դուրս եկավ իր սենյակից:

— Պարոններ, — ասաց նա՝ հպարտությամբ առաջ գալով, — ձեզնից իննդրում եմ, որ չհետաքրքրվեք այդ բանով: Իմ հայրը տեր է իր տանը: Որքան ժամանակ, որ ես բնակվում եմ նրա տանը՝ պարտավոր եմ նրան հնազանդվել: Նրա վարմունքը չի կարող ենթարկվել ուրիշների հավանությանը կամ անհավանությանը: Նա այդ մասին միայն աստծուն է հաշվետու: Ձեր բարեկամությունից պահանջում եմ ամենախոր լրություն պահպանել այդ մասին: Մեղադրել հորս՝ դա լիներ հարվածել մեր արժանապատվության: Ես շնորհակալ եմ, պարոններ, ձեր ինձ հանդեպ ցույց տված շահագրգության համար, բայց ինձ ավելի կպարտավորեցնեք, եթե ուզենաք վերջ տալ այն վիրապորիչ բամբասանքներին, որ շրջում են քաղաքում, և ես պատահմամբ եմ իմացել:

— Աղջիկս իրավացի է, — ասաց տիկին Գրանդէն:

— Օրիորդ, լավագույն միջոցը՝ արգելելու համար, որ մարդիկ բամբասեն, ձեր կրկին ազատ լինելն է, — հարգանքով պատասխանեց ծեր նոտարը՝ ազդված այն գեղեցկությունից, որ մեկուսացումը, մելամաղձուտությունն ու սերը դրոշմել էին Էժենիի դեմքի վրա:

— Բայց, աղջիկս, թող պարոն Կրյուշոն աշխատի կարգադրել այդ հարցը, մանավանդ, որ նա վստահացնում է բանի հաջողությունը: Նա ճանաչում է քո հորը և զիտե, այդ թե ինչպես հարկավոր է վարվել նրա հետ: Եթե դու ուզում ես ինձ երջանիկ տեսնել՝ ինձ մնացած այնքան քիչ օրերի համար, անհրաժեշտ է, որ դու և քո հայրը, ինչ գնով ելլինի, հաշտվեք:

Հաջորդ օրը Գրանդէն վերսկսեց մի քանի անգամ իր փոքր պարտեզի շրջանն անել: Նա իր համար սովորություններ արել այդ բանը՝ Էժենիի արգելափակման օրից ի վեր: Նա այդ պտույտի համար ժամանակ էր որոշել այն րոպեին, երբ Էժենին սանրվում էր: Եթե ծերուկը հասնում էր ընկույզենու մոտ, պահվում էր ծառի բնի եւտեր և մի քանի վայրկյան մնում այնտեղ՝ հիխանալու համար իր աղջկա երկար ծամերի վրա, ու անկասկած տարութերվում էր այն մտքերի մեջ, որ իրեն ներշնչում էին իր խառնվածքի համառությունը և աղջկան համբուրելու ցանկությունը: Զաճախ մնում էր նա նստած փայտե մաշված նստարանի վրա, որտեղ Շառլը և Էժենին երդվել էին միշտ սիրել իրար, երբ աղջիկն էլ գաղտագորի դիտում էր իր հորը կամ տեսնում նրան իր հայելու մեջ: Եթե Գրանդէն վեր էր կենում և վերսկսում իր պտույտը, աղջիկը գրիունակությամբ նստում էր պատուհանի առաջ և սկսում դիտել մասնորմը, որից կախված էին սիրուն ծաղիկներ, որի ձեղքվածքներից բուսել էին վեներայի ծամեր, պատառուկներ և հյութալի, դեղին կամ սպիտակ մի բույս՝ sedum, որ Սովորի և Տուրի այգիներում շատ էր տարածված: Նոտար Կրյուշոն եկավ շատ վաղ և գտավ ծեր

խաղողագործին, հունիսյան այդ գեղեցիկ օրը, նստած մաշված նստարանին, մեջքը հենած միջնորմին և զբաղված իր աղջկան դիտելով:

- Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել, նոտար Կրյուշո, — ասաց նա, երբ նկատեց նոտարին:
- Եկել եմ ձեզ հետ խոսելու գործերի մասին:
- Հը, ոսկի՞ ունեք, որ փոխենք արծաթե դրամի հետ:
- Ո՛չ, ո՞չ խոսքը դրամի մասին չէ, այլ ձեր դստեր՝ Էժենիի մասին: Ամբողջ քաղաքը խոսում է ձեր և նրա մասին:
- Ինչո՞ւ են խառնվում: Ածխագործը իր բնակարանում իշխան է:
- Համաձայն եմ: Ածխագործը իշխան է նաև ինքնասպան լինելու համար, կամ ավելի վատ, իր փողը պատուհանից դուրս նետելու համար:
- Ինչպե՞ս թե:
- Օ՛, բայց ձեր կինը շատ հիվանդ է, բարեկամ: Դուք պետք է խորհրդակցեք պարոն Բերժը ենի հետ: Ձեր կինը մահվան վտանգի առաջ է: Եթե նա մահանա, զրկված լուրջ խնամքից, ես կարծում եմ, որ դուք հանգիստ չեք լինի:
- Տա՛, տա՛, տա՛, դուք ծանոթ եք իմ կնոջ հիվանդությանը: Բժիշկները հենց մի անգամ որ մուտք գործեն ձեզ մոտ, կզան օրը հինգ-վեց անդամ:
- Վերջապես, Գրանդե, դուք կանեք այնպես, ինչպես ուզում եք: Մենք վաղեմի բարեկամներ ենք: Ամբողջ Սովորում չի գտնվի մեկ ուրիշը, որ ինձնից ավելի հետաքրքրվի բոլոր այն բաներով, ինչ որ ձեզ է վերաբերում, հետևաբար ես պարտավոր եի ձեզ ասել այս բոլորը: Հիմա ինչ ուզում է լինի: Դուք խելահաս մարդ եք, զիտեք ձեր արածը, այսքանը միայն կուզեի ձեզ ասել: Եվ դրա համար չէ, որ այստեղ եմ եկել: Թերևս ձեզ համար մի այլ շատ ծանր հարցի մասին է խոսրս: Վերջ ի վերջո դուք չեք ուզենա ձեր կնոջը սպանել, նա ձեզ համար շատ օգտակար է: Մտածեցեք այն կացության մասին, որի մեջ դուք գտնվելու եք ձեր աղջկա հանդեպ, եթե հանկարծ տիկին Գրանդեն մահանա: Դուք ստիպված պիտի լինեք հաշիվ ներկայացնել ձեր աղջկան, քանի որ ձեր կնոջ ունեցվածքի բաժանակից եք: Ձեր աղջիկը օրինապես իրավունք պիտի ունենա ձեր հարստության բաժանումը պահանջել, վաճառել տալու Ֆրուաֆոնը: Մի խոսքով՝ նա միակ ժառանգուիին է իր մոր, որից դուք ոչինչ չեք կարող ժառանգել:
- Այս խոսքերը կայծակի հարված եղան ծերուկի համար, որ այնքան ուժեղ չեր օրենսգիտության մեջ, որքան առևտուրի մեջ: Նա երբեք չեր մտածել անբաժանելի մի հարստության աճուրդի հավանականության մասին:
- Այսպես, ես ձեզ խորհուրդ եմ տալիս նրա հետ քաղցրությամբ վարվել, — ասաց Կրյուշոն՝ վերջացնելով իր խոսքը:
- Բայց զիտեք, ի՞նչ է արել նա, Կրյուշո:
- Ի՞նչ— ասաց նոտարը՝ հետաքրքրված հայր Գրանդեից մի զաղտնիք կորզելու և նրանց գժտության գաղտնիքն իմանալու ցանկությամբ:
- Նա իր ոսկին է տվել:

- Լավ, մի՞թե դա իրը չէր,— հարցրեց նոտարը:
- Բոլորն էլ ինձ նույնն են ասում,— ասաց ծերուկը, եղերական մի շարժումով թևերը կախ զցելով:
- Մի՞թե մի չնշն բանի համար,— շարունակեց նոտարը,— դուք պիտի ցանկանայիք խոչընդուռ հարուցել այն համաձայնությանն ու զիշմանը, որ կիսնդրեք նրանից մոր մահվան դեպքում:
- Օ՛, միթե ձեզ հասար վեց հազար ոսկի ֆրանկը չնշն բան է:
- Ե՛, իմ վաղեմի բարեկամ, դուք գիտե՞ք, թե ինչ կարծե ձեր կնոջ ունեցվածքի ցուցադրումն ու բաժանումը: Եթե էժենին այդ պահանջի՞:
- Ի՞նչ:
- Երկու, կամ երեք, չորս հարյուր հազար ֆրանկ հավանորեն: Մի՞թե անհրաժեշտ պիտի չկանոն ամբողջ ժառանգությունը աճուրդի հանել և վաճառել՝ իմանալու համար նրա ձշմարիտ արժեքը: Մինչդեռ եթե դուք համաձայնեիք...
- Երդվում եմ իմ հոր հոտոցի դանակով,— գոռաց խաղողագործը, որ նստեց և գունատվեց,— կտեսնենք, Կրյուշո:
- Մի բոպե լոռությունից կամ հոգեվարքից հետո՝ ծերուկը նայեց նոտարի կողմը և ասաց.
- Կյանքը շատ դառն է. նա շատ ցավեր ունի, Կրյուշո՝,— շարունակեց նա հանդիսավոր շեշտով,— դուք չեք ուզում ինձ խարել: Երդվեք ձեր պատվով, որ այն, ինչ դուք ասացիք, ձշմարիտ է իրավաբանության մեջ: Ցույց տվեք ինձ օրենսգիրքը: Ես ուզում եմ տեսնել օրենսգիրքը:
- Իմ խե՞ դճ բարեկամ,— պատասխանեց նոտարը,— մի՞թե ես չեմ իմանում իմ արհեստը:
- Ուրեմն, այն ինչ դուք ասում եք, Ճի՞շտ է: Ուրեմն իմ աղջիկը գողանալո՞ւ է ինձնից, դավաճանելո՞ւ, սպանելո՞ւ, բզկտելո՞ւ է ինձ:
- Նա իր մոր ժառանգությունն է ստանալու:
- Ուրեմն ի՞նչ օգուտ երեխաներից: Ա՛հ, իմ կինը, ես նրան սիրում եմ: Բարեբախտաբար նա պինդ է, նա լավ Բերթելիերներից է:
- Նա մի ամիս իսկ չի ապրի:
- Տակառագործը խփեց իր ձակատին, քայլեց, նորից ետ դարձավ և մի սոսկալի հայացը զցելով Կրյուշոյի վրա՝ հարցրեց...
- Ինչպե՞ս անեմ:
- Պարզապես և ամբողջովին էժենին կարող է հրաժարվել իր մոր ժառանգությունից: Դուք չեք ուզում նրան ժառանգազրկել, այնպես չէ՞: Բայց նման մի զիշում ստանալու համար նրա հետ խիստ մի վարվեք: Ինչ որ ասում եմ ձեզ այս բոպեիս, բարեկամս, իմ շահերին դեմ է: Ո՞րն է իմ գործը... լուծարք, ինչքի ցուցակագրում, վաճառք, բաժանում:
- Կտեսնենք, կտեսնենք: Այլս չխոսենք այդ հարցի մասին, Կրյուշո՝: Դուք աղիքներս տակնուվրա եք անում: Նոր ոսկի ստացե՞լ եք:

— Ոչ, բայց ես մի քանի հին լուիդորներ ունեմ, մի տասնյակ ձեզ կտամ: Իմ լավ բարեկամ, հաշտվի՛ թ Էժենիի հետ: Չե՞ ս զգում, որ ամբողջ Սոմյուրը քեզ քարկոծում է:

— Զվարճասերները:

— Ունտայի պարտատոմսերն արժեն իննտունինը: Կյանքում գեթ մի անգամ զոհ եղեք:

— Իննտունի՞նը, Կրյուշո՛:

— Այո՛:

— Հո՛, հո՛, իննտունինը,— ասաց Գրանդեն՝ ծեր նոտարին մինչև փողոցի դուռը առաջնորդելով:

Եվ որովհետև սաստիկ հուզված էր այն ամենից, ինչ լսեց, և չէր կարող տանը նստել՝ նա բարձրացավ իր կնոջ մոտ և ասաց նրան.

— Լավ, մա՛յր, դու ամբողջ օրը կարող ես անցկացնել քո աղջկա հետ, ես Ֆրուաֆոն եմ գնում: Երկուսդ սիրալիիր եղեք: Այսօր մեր ամուսնության տարեդարձն է, իմ լավ կին: Առ, ահա տասը եկյու, աստծոն տան թափորի ժամանակ քո առժամյա խորանի համար: Երկար ժամանակից ի վեր դու ցանկություն ունես այդ անելու, ուրախացի՛ թ: Զվարճացե՛ք, երջանիկ եղեք, լավ զգացեք ձեզ: Կեցե՛ ուրախությունը:

Նա վեց ֆրանկանոց տասը եկյուն զցեց իր կնոջ անկողնիվրա և նրա գլուխն իր ձեռքերի մեջ առավ՝ ճակատը համբուրելու համար:

— Բարի կին, քեզ ավելի լավ ես զգում, չէ՞:

— Ինչպե՞ս դուք կարող եք ձեր տանն ընդունել աստծուն, որ ներում է, եթե ձեր աղջկան ձեր սրտից աքսորած եք պահում,— ասաց նա հուզված:

— Տա՛, տա՛, տա՛,— ասաց հայրը շոյող ձայնով,— կտեսնենք:

— Ո՛վ երկնային բարություն, Էժենի,— ճշաց մայրը ուրախությունից կարմրելով,— ե՛կ համբուրելու քո հորը, նա քեզ ներում է:

Բայց ծերուկն անհետացել էր: Նա ամենայն արագությամբ շտապում էր դեպի իր փոքրիկ ազարակները, աշխատելով դասավորել իր շփոթ մտքերը: Այդ ժամանակ Գրանդեն սկսում էր իր յորանասունվեց տարին: Մասնավորապես երկու տարուց ի վեր նրա ազահությունն աճում էր, ինչպես աճում են մարդկանց բոլոր մնայուն մոլությունները: Ըստ մի ուսումնասիրության, որ կատարվել է ազահների, փառասերների, բոլոր այն մարդկանց մասին, որոնց կյանքը տիրապետող մի մտածումի է նվիրված եղել Գրանդենի զգացումներն էլ մասնավորապես կենտրոնացվել էին նրա մոլության հատուկ խորհրդանիշի վրա: Ուսկու տեսքը, ուսկուն տիրանալը դարձել էին նրա մենամոլությունը: Նրա բոնակալական մտայնությունը մեծացել էր նրա ազահությանը զուգահեռ, և կնոջ մահից հետո, հրաժարվել իր հարստության մի մասի դեկավարությունից՝ նրան հակարնական էր թվում: Աղջկանը հայտնել իր հարստությունը, ցուցադրել իր շարժուն և անշարժ ունեցվածքը աճուրդի հանելու համա՛ր...

— Դա արդեն նշանակում է քո վիզը կտրես,— ասաց նա բարձր ձայնով, այգու մեջտեղը կանգնած, քննելով որթատունկերը:

Վերջապէս նա իր որոշումը կայացրեց: Ճաշի ժամանակ վերադարձավ Սոմյուր, որոշեց խոնարհվել Էժենիի առաջ, նրան քաղցրաբանել, փաղաքշել, որպէսզի կարողանա մեռնել արքայաբար, մինչև վերջին րոպէն ամբողջությամբ պահելովիր միլիոնների կառավարման սանձը: Այն րոպէին, երբ ծերուկը, որ պատահմամբ վերցրել էր իր ամենաբանալին, գայի քայլվածքով բարձրանում էր սանդրությով իր կնոջ մոտ գնալու համար, Էժենին մոր անկողնի վրա էր դրել գեղեցիկ արկղիկը: Երկուսն էլ Գրանդէի բացակայության ժամանակ հաճույքով դիտում էին Շառլ նկարը՝ նրա մոր նկարը քննելով:

— Ճիշտ նրա ճակատն ու բերանն է,— ասում էր Էժենին այն րոպէին, երբ խաղողագործը դուռը բացէց:

Տիկին Գրանդէն, սարսափահար, իր ամուսնու՝ ոսկու վրա զցած հայացքից՝ ճշաց.

— Աստված իմ, խղճա մեզ:

Ծերուկը նետվեց արկղիկի վրա, ինչպէս վազրն է նետվում քնած երեխայի վրա:

— Ի՞նչ բան է սա,— ասաց նա՝ վերցնելով գանձը և գնալով լուսամուտի մոտ:— Խսկական և լավ ոսկի, ոսկի՝,— գոռաց նա:— Շատ ոսկի, սա կկշռի երկու լիվը: Ա՛, Շառլ, սա է տվել քո գեղեցիկ ոսկիների փոխարեն, իր՝, ինչո՞ւ և համար չեք ասել ինձ: Սա մի լավ դործարք է, աղջիկս: Դու իմ խսկական աղջիկն ես, այդ ընդունում եմ ես: Էժենին դողդողում էր ամբողջ մարմնով— Սա Շառլին է պատկանում չէ,— շարունակեց ծերուկը:

— Այո,— հայր, դա իմը չէ: Այդ առարկան ինձ վստահված նվիրական ավանդ է:

— Տա՛, տա՛, տա՛ : Նա քո հարստությունը վերցրեց, անհրաժեշտ է քո փոքր գանձը նորից կազմել:

— Հա՛յր...

Ծերուկն ուզեց հանել իր դանակը և ոսկու մի թերթ անջատելու համար՝ ստիպված եղավ արկղիկը դնել մի աթոռի վրա, Էժենին նետվեց դեպի արկղիկը՝ վերցնելու համար, սակայն տակառագործը, որի աչքը և՝ իր աղջկա, և՝ արկղիկի վրա էր, նրան այնքան սաստկությամբ հրեց ձեռքը պարզելով, որ նա ընկավ իր մոր անկողնի վրա:

— Պարո՞ն, պարո՞ն,— ճշաց մայրը՝ ծառանալով անկողնի մեջ:

Գրանդէն բաց էր արել իր դանակը և պատրաստվում էր արկղիկի ոսկին պոկելու:

— Հա՛յր,— ճշաց Էժենին չոքելով և այդպէս քայլելով, որպէսզի ավելի մոտենա հորը, և բարձրացնելով ձեռքերը դեպի նա,— հայր, բոլոր սրբերի և սուրբ Կույսի անունով: Քրիստոսի անունով, որ մահացավ խաչի վրա, ձեր հավիտենական փրկության անունով, հա՛յր, մի՛ դիպչեք դրան: Այս արկղիկը, ո՛չ ձերն է, ոչ էլ իմը. նա պատկանում է մի դժբախտ ազգականի, որն ինձ է վստահել, և ես պարտավոր եմ անաղարտ նրան վերադարձնել:

— Ինչո՞ւ համար էիք հապա զնում, եթե նա ավանդ է: Դիտելը ավելի ծանր բան է, քան թե ձեռք տալը:

— Հայ՛ք, մի՛ քանդեք այն, հակառակ դեպքում դուք ինձ կանպատվեք: Հա՛յր, լսո՞ւմ եք:

— Պարոն, ողորմացե՛ք,— ասաց մայրը:

— Հա՛յր,— գոչեց Էժենին այնպիսի որոտուն ձայնով, որ Նանոնը սարսափահար վեր բարձրացավ:

Էժենին նետվեց մի դանակի վրա, որ նրան մոտիկ էր գտնվում և զինվեց դրանով:

— Հետո՞,— ասաց Գրանդեն՝ հանդարտությամբ և սառն ժատալով:

— Պարո՞ն, պարո՞ն, դուք ինձ սպանում եք,— ասաց մայրը:

— Հայր, եթե ձեր դանակը թեկուզ մի մասնիկ անջատե այդ ոսկուց, ես սրանով իմ կուրծքը կձեռքեմ: Դուք արդեն իմ մորք մահացու հիվանդացրիք, այժմ կսպանեք և ձեր աղջկան: Եթե ուզում եք՝ փորձեցրէ: Վերքի փոխարեն վերք:

Գրանդեն իր դանակը բռնեց արկոհիկի վրա և վարանելով նայեց աղջկան:

— Ընդունա՞կ ես նման բանի, Էժենի,— հարցրեց նա:

— Այո, պարո՞ն,— ասաց մայրը:

— Նա կանե այն, ինչ ասում է,— ճշաց Նանոնը:— Հետևաբար, պարոն, գեթ մի անգամ կյանքում ողջամիտ եղեք:

Տակառագործը մի բոպե փոխնիփոխ նայեց ոսկուն և իր աղջկան: Տիկին Գրանդեն նվազեց:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, իմ սիրելի պարոն, տիկինը մեռնում է,— ճշաց Նանոնը:

— Ա՛ռ, աղջիկս, մի արկոհիկի համար չգտտվենք: Վերցրո՞ւ,— գոչեց տակառագործը՝ արկոհիկը անկողնու վրա զցելով:— Նանոն, գնա կանչիր պ. Բերժըրեին: Դե՛ լավ, մայր,— ասաց նա համբուրելով կնոջ ձեռքը, — ոչինչ, հաշտությունք: Ճիշտ չէ՝, աղջիկս: Այլևս ոչ մի չոր հաց, դու կուտես ինչ, ուզում ես... Օ՛, նա բաց է անում իր աշքերը: Լավ, մամա, մայրիկ, մայր, դե: Ահա տես, ես համբուրում եմ Էժենիին: Նա սիրում է իր հորեղբորորդուն, նա կամուսնանա նրա հետ՝ եթե ցանկանա, նրա համար կպահի իր արկոհիկը: Բայց դու երկար ապրիր, իմ դժբախտ կին: Շարժվի՞ր, նայի՞ր, դու պիտի ունենաս Սոմյուրի ամենազեղեցիկ ժամանակավոր խորանը:

— Աստված իմ, ինչպե՞ս եք կարողանում դուք այդպես վարվել ձեր կնոջ և աղջկա հետ,— ասաց տիկին Գրանդեն տկար ձայնով:

— Այլևս չեմ անի, երբե՞ք, երբե՞ք,— գոչեց տակառագործը:— Կտեսնես, իմ խեղճ կին:

Նա գնաց իր առանձնասենյակը և վերաբարձավ մի բուռ լուիդորով և սփոռեց իր կնոջ անկողնի վրա:

— Ա՛ռ, Էժենի, ա՛ռ, կնիկ, այս բոլորը ձեզ համար է,— ասաց նա լուիդորները շոշափելով:— Դե՛, զվարթացիր, կնիկ, առողջացի՞ր, քեզ ոչինչ չի պակասելու, ոչ էլ Էժենիին: Ահավասիկ հարյուր ոսկի լուիդոր նրա համար: Սրանք դու այլևս չես տա, չէ՝, Էժենի:

Տիկին Գրանդեն և աղջիկը միմյանց էին նայում զարմացած:

— Ետ վերցրեք դրանք, հայր, մենք լոկ ձեր գորովանքին պետք ունենք:

— Լա՛վ, թող այդպես լինի,— ասաց նա՝ լուիդորները կրկին իր գրավանք դնելով,— ապրենք լավ բարեկամների նման: Բոլորս էլ իշնենք սրահ ընթրելու, ամեն երեկո երկու սուտվ լոտոն խաղալու համար: Արեք ձեր խաղերը, կատակները, հը՝, կնի՞կ:

— Ավա՞ղ, ես շատ պիտի ուզենայի, քանի որ դա ձեզ կարող է հաձելի լինել,— ասաց մահամերձը,— բայց չեմ կարող ոտքի կանգնել:

— Խե՞ դ մայր,— ասաց տակառագործը,— դու չգիտես, թե որքան եմ սիրում քեզ, և քեզ, աղջիկս:

Նա գրկեց, համբուրեց իր աղջկան:

— Եվ որքան հաձելի է գրկել իր աղջկան, երբ վերջացել է գժոտությունը, իմ փոքրիկ աղջիկ: Տեսնո՞ւմ եք, մայր, այժմ մենք մի անձ ենք կազմում: Գնա՞ փակիր դա, — ասաց նա Էժենիին՝ ցույց տալով արկղիկը: — Գնա, ոչչից մի վախենա, ես քեզ հետ այլս երբեք չեմ խոսելու այդ բանի մասին, երբեք:

Պ. Բերժը Առաջուրի ամենահայտնի բժիշկը, եկավ քիչ անց: Քննությունից հետո նա դրականապես հայտնեց Գրանդեին, որ նրա կնոջ հիվանդությունը ծանր է, բայց մտքի կատարյալ հանգստություն, մեղմ մի ռեժիմ և մանրակրկիտ խնամք կարող են նրա կյանքը երկարացնել մինչև աշուն:

— Դա թա՞նկ կնստի, — ասաց ծերուկը, — անհրաժե՞շտ են դեղորայք:

— Քիչ դեղորայք, բայց շատ խնամք, — պատասխանեց բժիշկը՝ չկարողանալով զապել իր ժայռը:

— Վերջապես, պարոն Բերժը, — պատասխանեց Գրանդեն, — դուք պատվավոր մարդ եք. Ճիշտ է, չի՞: Ես ձեզ վստահում եմ. այցելեցեք իմ կնոջը ամեն անզամ և որքան անզամ, որ անհրաժեշտ եք գտնում: Փրկեցեք իմ բարի կնոջը: Ես շատ եմ սիրում նրան, տեսնո՞ւմ եք, առանց այդ ցույց տալու, որովհետև ինձ մոտ ամեն ինչ կատարվում է իմ ներսում և փշրում իմ հոգին: Ես վիշտ ունեմ: Վիշտը մտավ իմ սիրող իմ եղբոր մահվան հետ, եղրայր, որի համար Փարիզում ես հսկայական գումարներ եմ ծախսում... Վերջապես, մի գործ, որ չի վերջանում: Գնա՞ ք բարով, պարոն: Եթե կարելի է կնոջս փրկել, փրկեցեք նրան, եթե նույնիսկ դրա համար հարկավոր է ծախսել հարյուր կամ երկու հարյուր ֆրանկ:

Հակառակ այդ եռանդրուն ցանկություններին, որ Գրանդեն անում էր իր կնոջ առողջացման համար, որի ժառանգության բացումն արդեն առանձին մի մահ էր նրա համար, հակառակ այն հաճոյակատարության, որ նա ի հայտ էր բերում ամեն առթիվ, իր զարմացած կնոջ և աղջկա նվազագույն ցանկությունների համար, հակառակ Էժենիի մատուցած բոլոր գորովալից խնամքներին՝ տիկին Գրանդեն արագությամբ դիմեց դեպի մահ: Ամեն օր նա թուլանում էր և մաշվում, ինչպես մաշվում են այդ տարիքում հիվանդացած կանանցից շատերը: Նա աշնան տերսի նման դյուրաքեկ էր դարձել: Երկնային ճառագայթները նրան դարձնում էին շողափայլ, նման այն տերևներին, որոնցից արևը թափանցում է և ուսկեզօծում: Եվ նրա մահը նրա կյանքին արժանի եղավ, մի մահ՝ համակ քրիստոնեական. մի՞ թե սա չի նշանակում մի վեհ մահ:

1822 թվականի հոկտեմբեր ամսին էր, որ առանձնահատուկ կերպով հայտնաբերվեցին նրա առաքինությունները, նրա հրեշտակային համբերությունը և նրա սերն իր աղջկա հանդեպ. նա հանգավ առանց նվազագույն տրոտունցի: Լինելով անբիծ գառնուկ՝ նա գնաց երկինք, և ափսոսում էր միայն իր սառն կյանքի ընկերություն, որին վերջին ժամերի իր հայացքները կարծես նախագուշակում էին հազարավոր վշտեր: Նա դրդողողում էր այն մտքից, որ մենակ է թողնելու այդ անփորձ, իր նման անմեղ զառնուկին՝ եսապաշտ մարդկանց մեջ, որոնք ուզում էին նրանից պոկել նրա գեղմը, նրա գանձերը:

— Զավակս,— ասաց նա մահվանից առաջ,— միայն երկնքում երջանկություն կա, դու մի օր կհասկանաս այդ:

Նրա մահվան հաջորդ օրը Էժենին գտավ նոր պատճառներ կապվելու այն տան հետ, որ ծնվել էր, ուր այնքան շատ էր տառապել ուր երեկ իր մայրն էր մահացել: Նա սրահում առանց փղձկումի չկը կարողանում նայել լուսամուտին և իր մոր հենակավոր նստարանին: Նա կարծեց, թե չկը կարողացել ճանաչել իր ծեր հոր հոգին՝ տեսնելով, որ ինքը նրա ամենազերմ գուրզուրանքի առարկան է դարձել: Գրանդեն նրա թևն էր մտնում ճաշի համար ցած իջնելիս, ժամերով նրան էր նայում՝ գրեթե բարությամբ լի աչքերով. Վերջապես նա նրան դիտում էր խանդադատանքով, ասես թե նա ոսկուց լիներ: Ծեր տակառագրիծ այնքան քիչ էր նմանում ինքն իրեն, այնքան էր դողում իր աղջկա առաջ, որ Նանոնը և կրյուշոյականները՝ նրա թուլության ականատեսները, այդ վերագրում էին նրա առաջացած տարիքին և վախենում էին նրա մտային կարողությունների տկարացումից: Բայց այն օրը, եթե ընտանիքը պաշտոնապես սուզի մտավ, ընթրիքից հետո, որին հրավիրված էր նոտար Կրյուշոն, որը միայն գիտեր իր կիհենտի զադոնիքը, ծերուկի այդ վարքագիծը բացատրվեց:

— Միրելի աղջիկս,— ասաց նա Էժենիին, եթե ճաշասեղանը վերցված էր և դուքը ինամբով փակված,— դու ահա քո մոր ժառանգուիին ես, և մենք մի փոքր հարցեր ունենք միասին կարգադրելու: Ճիշտ չէ, Կրյուշո:

— Այո:

— Մի՞ թե այդքան անհրաժեշտ է, որ այսօր այդ բանով զբաղվենք, հայր իմ:

— Այո՛, այո՛, աղջիկս: Ես չեմ կարող ապրել այն անորոշության մեջ, ուր գտնվում եմ: Ես չեմ հավատում, թե դու կամենաս ինձ ցավ պատճառել:

— Ո՛հ, հա՛յր...

— Այդ դեպքում անհրաժեշտ է կարգադրել այդ ամենը այս երեկո:

— Ի՞նչ եք կամենում, որ անեմ:

— Սակայն, աղջիկս, դա ինձ չի վերաբերում: Ասեք, նրան, Կրյուշո:

— Օրիորդ, ձեր պարոն հայրը չի ցանկանում ո՛չ բաժանել, ոչ էլ վաճառել իր ունեցած հարստությունները, ոչ հսկայական հարկեր վճարել պատրաստի դրամի համար, որ կարող է ունենալ. հետևաբար անհրաժեշտ է հրաժարվել ցուցակագրելուց այն հարստությունը, որ գտնվում է անբաժանելի կերպով ձեր և ձեր հոր միջև...

— Կրյուշո՛, վստա՞հ եք ձեր ասածին, որպեսզի երեխայի առաջ այդպես խոսեք:

— Թողեք շարունակեմ, Գրանդե՛:

— Այո, այո, բարեկամս: Ո՛չ դուք և ոչ էլ իմ աղջիկը չեն ցանկանում ինձնից իւլել իմ ունեցածը: Ճիշտ չէ, աղավնյա՞կս:

— Բայց, պարոն Կրյուշո, ես ի՞նչ պետք է անեմ,— հարցրեց Էժենին անհամբերությամբ:

— Լավ,— ասաց նոտարը,— պետք է ստորագրել այն գրությունը, որով դուք հրաժարվում եք ձեր մոր ժառանգությունից և թողնում եք ձեր հորը, ձեր միջև գտնվող բոլոր անբաժան ունեցվածքների եկամուտները: Նա էլ ձեզ կապահովի ձեր կալվածների մերկ սեփականությունը...

— Զեր ասածից ես ոչինչ չեմ հասկանում,— պատասխանեց Էժենին,— տվեք ինձ գրությունը և ցույց տվեք, թե որտեղ պետք է ստորագրեմ:

Հայր Գրանդեն փոխնիփոխ նայում էր գրությանը և իր աղջկան, իր աղջկան և գրությանը և զգում այնպիսի սաստիկ հուզում, որ իր ճակատին գոյացած մի քանի կաթիլ քրտինքը սրբեց:

— Աղջիկս,— ասաց նա,— փոխանակ այդ գրությունը ստորագրելու, որի տոմարագրումը թանկ է նստելու, եթե դու պարզապես և անպայման ձեռվ հրաժարվեիր քո հանգույցալ խեղճ, սիրելի մոր ժառանդությունից և ապագայում այդ հարցի կարգադրությունը ինձ թողնեիր, այդ ինձ ավելի հաճելի կլիներ: Այդ դեպքում ես քեզ ամեն ամիս կիատկացնեմ հարյուր ֆրանկի մի լավ եկամուտ: Տեսնո՞ւմ ես, դու քո ուզածի շափ պատարագ կարող ես վճարել բոլոր նրանց համար, ում համար փափագում ես կատարել... Հը՞, ամեն ամիս հարյուր ֆրանկ, արծաթով:

— Ես կանեմ այն ամենը, ինչ քեզ հաճելի կլինի, հայր:

— Օրիորդ,— ասաց նոտարը,— ես պարտավոր եմ ձեր ուշադրությունը գրավելու այն բանի վրա, որ դուք տալիս եք ձեր բոլոր ունեցածը...

— Է՛հ, աստված իմ,— ասաց նա,— ինձ ի՞նչ կլինի որ:

— Լոյի՛ր, Կրյուշո: Ինչ որ ասված է, ասված է,— բացագանչեց Գրանդեն իր աղջկա ձեռքը բռնելով և խփելով իրձեռքին:— Էժենի, դու չե՞ս փոխի քո ասածը, դու պատվավոր աղջիկ ես, չէ՞:

— Ո՛հ, հա՛յր իմ...

Հայրը նրան համբուրեց զեղումով, գրկեց՝ շնչահեղձ անելու շափ ուժգին:

— Հանգստացիր, զավակս, դու քո հորը կյանք ես տալիս, բայց դու նրան վերադարձնում ես այն, ինչ նա է քեզ տվել. մենք միմյանց պարտական չենք մնում: Ահա թե ինչպես են կատարվելու գործառնությունները: Կյանքը գործարք է: Ես քեզ օրինում եմ, դու առաքինի աղջիկ ես և սիրում ես հորդ: Ազատ ես այժմ անելու, ինչ կամենաս: Վաղը կտեսնվենք ուրեմն, Կրյուշո,— ասաց նա՝ նայելով զարհուրած նոտարին:— Դուք կաշխատեք լավ ձեռվ պատրաստել տալ հրաժարման գրությունը դատարանի գրասենյակում:

Հաջորդ օրը, կեսօրին մոտ, ստորագրվեց այն հայտարարությունը, որով Էժենին օրինականացնում էր ինքն իսկ իր հանդեպ կատարված կողոպուտը: Սակայն հակառակ իր խոստմանը՝ առաջին տարվա վերջին նախկին տակառագործը դեռևս ոչ մի սու չէր վճարել այնքան հանդիսավոր կերպով խոստացած ամսական հարյուր ֆրանկից: Այնպէս որ նա կարմրեց, երբ Էժենին կատակող այդ բանն ասաց հորը, որն արագությամբ բարձրանալով իր առանձնասենյակը, վերադարձավ և Էժենիին ներկայացրեց մոտ մեկ երրորդը այն զարդեղեններից, որ նա զնել էր իր եղբորորդուց:

— Ա՛ռ, փոքրիկս,— ասաց նա հեգնական շեշտով,— ուզո՞ւմ ես սրանք ունենալ հազար երկու հարյուր ֆրանկի փոխարեն:

— Ո՛հ, հայր, ձի՞շտ է, դու ի՞նձ ես տալիս այդ բոլորը...

— Մյուս տարի ես քեզ դարձյալ կտամ նույնքան,— ասաց նա զարդեղենները նրա գոզնոցի մեջ զցելով:— Այսպէս, կարծ ժամանակում դու կունենաս նրա բոլոր մանր-մունք զարդերը,— ավելացրեց նա ձեռքերը շփելով, երջանիկ, որ կարողացավ չարաշահել իր աղջկա զգացումները:

Բայց և այնպես, ծերունին, թեև դեռևս ամրակազմ, անհրաժեշտությունզբաց իր աղջկան իրազեկ դարձնել իր տնտեսության գաղտնիքներին: Հաջորդ երկու տարին ամբողջ, իր ներկայությամբ, նա թողեց, որ Էժենին կարգադրի ընտանեկան ճաշացուցակը և ընդունի հասույթները: Նա նրան դանդաղությամբ և հաջորդականորեն սովորեցրեց իր այգիների ու ազարակների անունները, տարածությունները: Երրորդ տարվա սկզբին նա այնքան լավ էր վարժեցրել Էժենին իր ազահության բոլոր ձևերին, այնպես էր դրանք նրա մեջ վերածել սովորությունների, որ առանց վախի, նրան հանձնեց մառանների բանալիները և նրան կարգեց իր բնակարանի տիրուհի:

Հինգ տարի էր անցել արդեն, և Էժենիի ու հոր միօրինակ կյանքում ոչ մի նորություն տեղի չունեցավ: Այդ ժամանակամիջոցում նոյն գործողությունները հարատևորեն կատարվեցին իին ժամացույցի քրոնոմետրիկ շարժումների կանոնավորությամբ: Օրիորդ Գրանդեի խոր մելամաղձուտությունը ոչ ոքի համար զադանիք չէր, բայց եթե ամեն մեկը նախազգում էր նրա տառապանքի դրդապատճառը, նրա կողմից արտասանված որևէ խոսք չարդարացրեց հարուստ ժառանգուին զգացումների մասին Սումյուրի բոլոր շրջանակների արած ենթադրությունները: Նրա միակ ընկերությունը կազմված էին երեք Կրյուշոներից և նրանց մի քանի բարեկամներից, որոնք անմկանելիորեն ընդունվել էին նրանց տունը: Սրանք Էժենիին սովորեցրել էին վիստ խաղալ և ամեն երեկո գալիս էին խաղալու:

1827 թվականին, նրա հայրը զգալով հիվանդագին թուլությունների ծանրությունը՝ ստիպված եղավ աղջկան ծանոթացնել իր հողային հարատության գաղտնիքներին և ասում էր նրան, որ դժվարությունների դեպքում խորհուրդ հարցնի նոտար Կրյուշոյից, որի ուղղամտությունն իրեն ծանոթ էր: Հետո, նոյն տարվա վերջում ծերուկը ութասուներկու տարեկան հասակում ենթարկվեց անդամալուծության, որն արագությամբ զարգացավ: Պարոն Բերժը նախարար էր բուժվելու: Էժենին մտածելով, որ շուտով ինքը մենակ է մնալու աշխարհում, այսպես ասած ավելի մոտեցավիր հորը և գուրգուրանքի այս վերջին օղակին ավելի փարվեց: Նրա պատկերացումով՝ ինչպես նաև բոլոր սիրող կանանց պատկերացումով՝ սերը ամբողջ աշխարհն է, իսկ Շառլ բացակա էր: Նա ուղրակի վսեմ եղավ իր ծեր հորը խնամելիս, որի մտային կարողությունները սկսում էին պակասել, բայց որի ազահությունը բնագրորեն հարատևում էր: Ահա թե ինչո՞ւ այդ մարդու մահը չհակասեց նրա կյանքին: Առավոտից սկսած՝ նրան սայլակով տանում-բերում էին իր սենյակի պատի վառարանի և անկասկած ոսկով լեցուն առանձնասենյակի դրան միշել: Այնտեղ նա մնում էր առանց շարժվելու, սակայն մտահոգությամբ նայում էր բոլոր նրանց, ովքեր այցելում էին իրեն և նայում երկարե թերթով ծածկված դրան կողմը: Նա պահանջում էր, որ իրեն բացատրեն ամենափոքր աղմուկի ինչ լինելը, և ի մեծ զարմանք նոտարի՝ նա լսում էր շան հորանջելը բակում: Նա իր առերևույթ թմրությունից զարթնում էր բոլոր այն օրերը և այն ժամին, երբ պետք էր ստանալ ազարակների վարձը, ազարակապանների հաշիվները կարգադրել կամ նրանց ստացագիր տալ: Այն ժամանակ նա առաջ էր մղում իր անիվավոր թիկնաթոռը, մինչև առանձնասենյակի դրանը հասներ: Նա Էժենիին բաց էր անել տալիս այդ դուռը և ուշադիր հետևում, որ աղջիկը դրամի տոպրակները ծածուկ իրար վրա շարի և դուրք փալիք: Հետո լրտ վերադառնում էր իր տեղը՝ հենց որ ստանար թանկագին բանալին, որը միշտ պահում էր իր բաճկոնի գրանում և մերթ-մերթ շոշափում: Նրա հին բարեկամ նոտարը, նախատեսելով որ Շառլ Գրանդեի չվերադառնալու դեպքում հարուստ ժառանգուին հարկադրված ամուսնանալու էր իր եղբորորդու՝ նախազահի հետ, ավելացրել էր իր ուշադրությունն ու խնամքը. նա ամեն օր գալիս էր և իրեն դնում Գրանդեի տրամադրության տակ, նրա կարգադրությամբ գնում ֆրուաֆոն, այցելում նրա հողերը, մարզագետինները, խաղողի այգիները, վաճառում նրա բերքը և այդ բոլորը վերածում ուկու կամ արծաթի, որոնք ծածուկ գալիս էին ավելացնելու առանձնասենյակում դիզվող տոպրակների թիվը: Վերջապես հոգևարքի օրերը հասան, որի ընթացքումքացրում ծերուկի ուժեղ կազմը կրվի մտավ

քայլայման հետ: Նա ուզեց նստած մնալ կրակի մոտ, իր առանձնասենյակի դռան դիմաց: Նա իր վրա էր քաշում բոլոր վերմակները, փաթաթվում նրանցով և ասում էր Նանոնին.

— Ծածկի՞ր, ավելի լավ ծածկիր, որ ինձ չգողանան:

Երբ նա կարողանում էր բաց անել աչքերը, որոնց մեջ նրա ամբողջ կյանքն էր ապաստանել, անմիջապես շուտ էր գալիս իր առանձնասենյակի դռան կողմը, որի ետևը նրա գանձերն էին հանգչում և ասում էր աղջկան.

— Այստե՞ղ են, այստե՞ղ են,— այնպիսի շեշտով, որի մեջ մի տեսակ խուճապային սարսափ էր հնչում:

— Այո, հայր իմ:

— Հսկի՞ր ոսկու վրա... իմ առաջ ոսկի դիր:

Էժենին սեղանի վրա, նրա առաջ, ոսկելորամներ էր փոռում, և նա ժամերով մնում էր՝ աչքերը ոսկու վրա բնեռած, այն երեխայի նման, որը երբ սկսում է տեսնել, շարունակում է անիմաստ կերպով դիտել միևնույն առարկան և այդ երեխայի նման էլ նա մի տառապալից ժպիտ ուներ:

— Այդ ինձ ջերմացնում է,— ասում էր նա, և դեմքի վրա երանության ժպիտ էր փայլում:

Երբ ծխական քահանան եկավ նրան հաղորդություն տալու, նրա աչքերը, որ մի քանի ժամից ի վեր մեռած էին թվում, նորից կենդանացան՝ տեսնելով խաչը, աշտանակները, օրինած ջրի արծաթյա սկիհը, որոնց նա նայեց շեշտակի և նրա քթի ուրով վերջին անգամ շարժվեց: Երբ քահանան նրա շուրթերին մոտեցրեց ոսկեզօծ խաչելությունը՝ Քրիստոսի պատկերը համբուրելու, նա մի սարսափելի շարժում գործեց այն խլելու համար, և այդ վերջին ճիզը արժեց նրա կյանքը: Նա կանչեց Էժենին, որին չէր տեսնում, թեև նա հոր առաջ ծնրադիր՝ իր արցունքով թրջում էր նրա արդեն սառած ձեռքը:

— Հա՛յր իմ, օրինեցե՛ք ինձ,— խնդրեց նա:

— Լա՛վ հսկիր ամեն ինչի վրա: Դու ինձ հաշիվ ես տալու այնտեղ,— ասաց նա՝ այս վերջին խոսքով ապացուցելով, որ քրիստոնեությունը պետք է ազաների կրոնը լինի:

Եվ ահա Էժենի Գրանդէն մենակ մնաց աշխարհում, այդ տանը ունենալով միայն Նանոնին, որի վրա ինքը կարող էր մի հայացք զցել և վստահ լինել, որ նա կլսի իրեն ու կհասկանա: Նանոնը միակ էակն էր, որ նրան սիրում էր միայն ի սեր նրա, և որի հետ նա կարող էր խոսել իր վշտերից: Բարձրահասակ Նանոնը նրա համար մի նախախնամություն էր: Հետևաբար նա այլևս աղախնին չէր, այլ մի հեզ բարեկամուիի:

Հոր մահից հետո Էժենին նոտար Կրյուշոյից իմացավ, որ ինքը Սոմյուրի շրջանի կալվածներից ուներ տարեկան երեք հարյուր հազար լիվր եկամուտ, վեց միլիոն գետեղված երեք տոկոսով՝ վաթսուն ֆրանկանոց պարտասովումներով, որոնք այժմ արժեին յոթանասունյոթը ֆրանկ, նաև երկու միլիոն ֆրանկ՝ ոսկով և հարյուր հազար ֆրանկ՝ արծաթյա էլյուտվ, առանց հաշվելու ստանալիք ապառքները: Նրա ամբողջ ունեցվածքի ընդհանուր արժեքը հասնում էր տասնյոթ միլիոն ֆրանկի:

«Ո՞ւր է հապա իմ հորեղբորդին»,— մտածում էր նա:

Այն օրը, երբ նոտար Կրյուշոն իր կլիենտուհուն հանձնեց մաքուր և պարտագերծ ժառանգության ցուցակը, Էժենին մենակ մնաց Նանոնի հետ, թէ՝ մեկը և թէ մյուսը նստել էին այլս դատարկ մնացած սրահի բուխարու երկու կողմերում, մի սրահ, ուր ամեն ինչ մի հիշատակի հետ էր կապված, սկսած այս հենակավոր աթոռից, որի վրա իր մայրն էր նստում, մինչև այս բաժակը, որով իր հորեղբորդին էր խմել:

- Նանոն մենք մենակ մնացինք:
- Այո, օրիորդ, և եթե ես իմանայի, թէ որտե՞ղ է նա՝ այդ անուշիկը, ոտքով կգնայի նրան գտնելու:
- Մեզ ծովն է բաժանում,— ասաց Էժենին:

Այդ պահին, երբ դժբախտ ժառանգուիին այսպես լալիս էր իր պառավ սպասուի հետ, այդ սառն և մութ իր բնակարանում, որ իր համար ամբողջ տիեզերքն էր կազմում, Նանոնց մինչև Օռլեան միայն օրիորդ Գրանդէի տասնյոթ միլիոնների մասին էին խոսում: Նրա առաջին գործերիցմենքը եղավ Նանոնին հատկացնել հազար երկուարյուր ֆրանկ կենսաթոշակ: Նանոնն արդեն ուներ վեցհարյուր ֆրանկի եկամուտ, այնպես որ, նա հարուստ հարսնացր էր: Մի ամիս չանցած նա աղջկությունից դարձավ կին՝ հովանավորության ներք Անտուան Կորնուայեի, որ օրիորդ Գրանդէի հողերի և կալվածների գլխավոր վերահսկիչ կարգվեց: Տիկին Կորնուայեն իր ժամանակակիցներից մի անհուն առավելություն ուներ. թեև նա հիսունինը տարեկան էր, բայց հազիվ քառասուն էր ցույց տալիս: Նրա խոշոր դիմագծերը դիմադրել էին ժամանակի հարվածներին: Շնորհիվ նրա վանական կյանքի ապրելակերպին, նա թաքցնում էր ծերությունը իր դեմքի կարմիր գույնով և երկարյա առողջությամբ: Հավանաբար նա երբեք այնքան լավ չէր երևացել որքան ամուսնության օրը: Նա իր տգեղության վարձատրությունն ստացավ և երևաց մեծ, գեր, հումկու, իր անվթար դեմքի վրա կրելով երջանկության արտահայտությունը, Կորնուայեի բախտը ումանց նախանձի առարկան դարձնելով:

- Նա առողջ գույն ունի,— ասում էր մահուլավաճառը:
- Նա ընդունակ է երեխաներ ունենալ,— ասաց աղավաճառը,— պահպանվել է ինչպես աղաջրում, բույլ տվեք ասել:
- Նա հարուստ է, և Կորնուայեն շահավետ գործ բռնեց,— ասում էր մի այլ հարևան:

Հինավուրց տնից դուրս գալով, Նանոնը, որ սիրված էր բոլոր դրացիներից, սիրալիր խոսքեր միայն ստացավ, երբ ոլորապտույտ փողոցով անցնում էր եկեղեցի գնալու համար: Իբրև հարսանեկան նվեր՝ Էժենին նրան երեք երկվեցյակ սպասամաններ տվեց: Կորնուայեն զարմացած նման մի առատաձեռնությունից՝ արցունքու աշքերով էր խոտում իր տիբուի մասին և պատրաստ էր նրա համար իր կյանքը տալու: Այսուհետև լինելով Էժենիի վստահելի ընկերուիին՝ տիկին Կորնուայեն իր ամուսնության հավասար մի այլ երջանկություն ունեցավ: Վերջապես նա ուներ մառանները բանալու և փակելու, առավոտը պաշարներ տալու իրավունք, ինչպես անում էր իր հանգուցյալ տերը: Հետո նա կառավարում էր երկու սպասուիների՝ խոհարարուիուն և մի կնոջ, որի պարտականությունն էր տան սպասակետները կարկատել և օրիորդի զգեստները պատրաստել: Կորնուայեն պահապանի և կառավարիչի գույզ պաշտոնները իրար հետ համադրեց: Ավելորդ է ասել, որ թէ՝ խոհարարուիին, և թէ սպասուիին, որոնց Նանոնն էր ընտրել իսկական մարզարիտներ էին: Այսպիսով, օրիորդ Գրանդէն չորս սպասավոր ունեցավ, որոնց նվիրվածությունը անսահման էր նրա հանդեպ: Աղարակապանները բնավ էլ չնկատեցին ծերուկի

մահը, նա այնքան խիստ կերպով էր հիմնավորել իր կառավարման սովորությունները և կարգուկանոնը, որ նրա գործը խնամքով շարունակեցին տեր և տիկին Կորնուայեները:

Էժենին, արդեն երեսուն տարեկան, դեռ ոչ մի երջանկություն չէր ճանաչել կյանքից: Նրա դժգույն և տիտուր մանկությունն անցել էր մոր մոտ, որի անտեսված, վիրավորված սիրտը միշտ տառապել էր: Կյանքից ուրախությամբ բաժանվելով՝ մայրը ցավում էր, որ թողնելու էր իր աղջկան մենակ, և աղջկը իր հոգու խորքում թեթև խաճի խայթեր և մշտական ափսոսանք էր զգում: Էժենիի առաջին, միակ սերն իր համար տիրության աղբյուր էր: Մի քանի օրով հազիվ էր նշմարել իր սիրահարին և Էժենին նրան տվել էր իր ամբողջ սիրտը՝ ստացված և վերադարձված երկու խուսափուկ համբուրի միջև, և այդ սիրածը մեկնել էր՝ նրա և իր միջև մի ամբողջ աշխարհ դնելով: Այդ սերը, որն անիծել էր նրա հայրը, և համարյա թէ մոր կյանքն էր արժեցել, տալիս էր նրան միայն վշտեր՝ թույլ հույսերով խառն: Այսպես, մինչև այդ օրը, նա ձգտել էր երջանկության՝ կորցնելով իր ուժերը, առանց թարմացնելու դրանք: Հոգեկան, ինչպես և ֆիզիկական կյանքում գոյություն ունեն շնչառություն և արտաշնչում. հոգին պահանջ ունի շնչելու մի այլ հոգու զգացումները, յուրացնելու դրանք և ավելի հարստացրած վերադարձնելու: Առանց մարդկային այդ գեղեցիկ երևոյթի, ոչ մի կյանք չկա սրտի մեջ, նրան այդ ժամանակ պակասում է օդը, նա տառապում ու մաշվում է: Էժենին սկսում էրտառապել: Նրա համար հարստությունը ո՛չ ուժ էր և ոչ էլ միսիթարանք, նա կարող էր ապրել միայն սիրով, կրոնով և ապագայի հավատով: Սերը նրան բացատրում էր հավիտենականությունը: Նրա սիրտն ու Ավետարանը նրա համար երկու ըղձայի աշխարհներ էին: Գիշեր-ցերեկ նա միրճվում էր երկու անհուն մտածումների խորքը, որոնք հավանաբար նրա համար մեկ մտածմունք էին: Նա ինքն իր մեջ էր ամփոփվում՝ սիրելով և հավատալով, թե սիրված էր: Յոթ տարուց ի վեր նրա սերը իշխում էր ամեն բանի վրա: Նրա զանձը այն միջինները չեին, որոնց եկամուտները կուտակվում էին, այլ Շառլի արկղիկը, իր անկողնու սնարին կախված երկու նկարները, զարդերը, որ իր հորից ետ էր գնել և հպատությամբ դասավորել բամբակի շերտի վրա ու դրել պահարանի դարակում, իր հորեղբոր կոնց մատնոցը, որ իր մայրն էլ էր գործածել և որ ամեն օր կրոնական երկյուղածությամբ նա վերցնում էր՝ իր ձեռագործն անելու համար, Պենելոպեին վայել ասեղնազոր, որն սկսել էր լոկ նրա համար, որ մատին անցկացներ հուշերով լի այդ ոսկե մատանին: Հավանական չէր թվում, որ օրինորդ Գրանդեն ցանկանար ամուսնանալ իր սուզի շրջանում: Նրա իսկական բարեպաշտությունը ամենքին ծանոթ էր: Ուստի Կրյուշո ընտանիքը, որի քաղաքականությունը խոհեմորեն ինկավարում էր աբբա Կրյուշոն, բավականացավ միայն ժառանգուին շրջապատելով ամենասիրալիք ուշադրությամբ: Ամեն երեկո նրա սրահը լցվում էր երկրի ամենաշերմեռանդ և ամենից ավելի հավատարիմ կրյուշոյականներով, որոնք աշխատում էին ամեն եղանակով գովարանել տան տիրուիուն: Նա ուներ իր մասնավոր բժիշկը, իր սեփական խոստովանահայրը, իր սենեկապետը, առաջին նաժիշտը, իր առաջին մինիստը, մանավանդ իր կանցերը, մի կանցերը, որ ամեն ինչում նրան դեկավարում էր: Եթե ժառանգուիին ցանկանար շրջազգեստի քղանցքը պահող մի տղա՝ նրան գոհացում կտային: Նա թագուիի էր և բոլոր թագուիիներից ամենից շատ փաղաքշվածը: Շողոքորթությունը մեծ հոգիներին հատուկ երբեք չի եղել, նա փոքր հոգիների բաժինն է, որոնց հաջողվումէ ավելի փոքրանալ, որպեսզի կարողանան ավելի լավ մտնել այն անձի կենսական ոլորտի մեջ, որի շուրջը պտտվում էն: Շողոքորթությունը միշտ էլ թաքցնում է որոշ շահ: Ուստի այն մարդիկ, որ ամեն երեկո զայս էին կահավորում դառնալու օրինորդ Գրանդեի սրահում, որին նրանք կոչում էին օրինորդ դը Ֆրուաֆոն, հիանալի կերպով կարողանում էին նրան ընկածել իրենց գովքերով: Էժենիի համար նոր այդ գովքերի համերգը նախ նրան կարմրացրեց, սակայն անզգայի կերպով որքան էլ հաճոյախոտությունները կոպիտ ու անհարմար լինեին, նրա լսողությունը վարժվեց իր գեղեցկության գովասանքին, և եթե մի նոր այցելու նրան տգեղ գոտներ, նման մի դիտողություն նրան այսօր ավելի վիշտ պիտի պատճառեր, քան ութը տարի առաջ: Ի վերջո նա սիրեց մեծարանքներ, որ նա զաղտնի կերպով դնում էր իր

կուռքի ոտքերի առաջ: Այսպիսով, աստիճանաբար նա վարժվեց, որ իր հետ վարվեն որպես միապետուիու, և նա իր արքունիքը ամեն երեկո տեսնի այցելուներով լի: Նախազահ դը Բոնֆոնը այս փոքր շրջանակի հերոսն էր, որտեղ նրա միտքը, նրա անձնավորությունը, նրա զարգացածությունն ու սիրալիր բնավորությունը անվերջ գովասանքի էին արժանանում: Մեկը նկատել էր տալիս, որ յոթ տարիներից ի վեր դը Բոնֆոնը ավելի էր հարստացել, նա առնվազը տասը հազար ֆրանկ եկամուտ ուներ և, ինչպես Կրյուշոների բոլոր կալվածները, շրջապատված էր ժառանգուիու հողային ընդարձակ տարածություններով:

— Գիտե՞ք, օրիորդ,— ասում էր սովորական այցելուներից մեկը,— որ Կրյուշոները մենակ քառասուն հազար լիվրի եկամուտ ունեն:

— Հապա նրանց տնտեսություննե՞ր,— շարունակ մի վաղեմի կրյուշոյական՝ օրիորդ Գրիբովստրը.— Վարդիկարնակ մի պարոն վերջերս այստեղ այցելեց և երկու հարյուր հազար ֆրանկ առաջարկեց նրա իրավաբանական գրասենյակը գնելու համար: Նա այդ կվաճառի, եթե կարողանա հաշտարար դատավոր նշանակվել:

— Նա ցանկանում է հաջորդել պարոն դը Բոնֆոնին՝ դատարանինախազահական պաշտոնում և միջոցներ է ձեռք առնում,— պատասխանեց տիկին դ'Օրսոնվալը,— որովհետև պարոն նախազահը նշանակվելու է խորհրդական, ապա ատյանի նախազահ, նա մեծ հնարավորություններ ունի և անպայման հաջողություն կունենա:

— Նա խիստ ականավոր մարդ է,— ասում էր մի ուրիշը,— մի՞թե դուք այդպես չեք գտնում, օրիո՞րդ:

Պարոն նախազահը աշխատում էր իր դերը լավ կատարել: Հակառակ իր քառասուն տարեկան հասակին, հակառակ նրան, որ նա թուլս էր և մի քիչ դաժանադիմ, թառամած, ինչպես զրեթե բոլոր դատավորները, երիտասարդի նման էր հազնվում, խաղում մի ցուպիկի հետ, օրիորդ դը Ֆրուաֆոնի մոտ չէր ծխում, նրա մոտ գալիս էր սպիտակ փողկապով և այնպիսի շապիկով, որի ծալ-ծալ օձիքը նրան տալիս էր հնդկահավերի ցեղին պատկանող անհատների նմանություն: Նա մտերմորեն էր խոսում գեղեցիկ ժառանգուիու հետ և նրան անվանում էր «Մեր սիրելի Էժենին»: Վերջապես, բացի անձնավորությունների թվից, լոտոն վիստով փոխարինելով և ջնշելով տեր և տիկին Գրանդեների դեմքերը, ապա այն տեսարանը, որով սկսվեց այս պատմությունը, զրեթե մնացել էր նույնը, ինչ եղել էր անցյալում: Ոհմակը միշտ էլ հետապնդում էր Էժենին և նրա միլիոնները, բայց ոհմակը, թվով ավելի մեծացած, ավելի լավ էր հաշում և իր զոհին հավաքականորեն շրջապատում: Եթե Շառլ Վերադառնար Հնդկաստանի խորքերից՝ կգտներ միևնույն մարդկանց և միևնույն շահերը: Տիկին դե Գրասենը, որի համար Էժենին իր շնորհով և գեղեցկությամբ կատարյալ էր, համար կերպով տանջում էր Կրյուշոներին: Բայց այժմս էլ, ինչպես անցյալում, Էժենինի կերպարանքն էր տիրապետում այդ նկարում. և ինչպես մի ժամանակ, Շառլն էր այնտեղ գերիշխողը: Բայց և այնպես կար մի հառաջադիմություն: Շաղկեփունջը, որ երբեմն նախազահը ներկայացրել էր Էժենին նրա ծննդյան տարեղարձին, դարձել էր պարբերական: Ամեն երեկո նա հարուստ ժառանգուիուն բերում էր մի մեծ և գեղեցիկ ծաղկեփունջ, որը տիկին Կորնուայեն բացորոշ կերպով դնում էր ապակե ամանի մեջն ծածուկ նետում բակը, հենց որ այցելուները մեկնում էին: Գարնան սկզբին տիկին դե Գրասենը փորձեց խանգարել Կրյուշոների երջանկությունը՝ Էժենիի հետ խոսելով մարկիզ դը Ֆրուաֆոնի մասին, որի քայլքաված տոհմը կկարողանար ոտքի կանգնել, եթե ժառանգուիին կամենար նրան վերադարձնել իր հողերը՝ ամուսնական պայմանագրով: Տիկին դը Գրասենը բարձրածայլ արտահայտվում էր նրա պերության, նրա մարկիզության մասին, և Էժենիի արհամարհական ժպիտը որպես

համաձայնություն ընդունելով՝ նա ամեն տեղ ասում էր, որ նախագահ Կրյուշոնի ամուսնությունն այնքան էլ ապահով չէր, որքան կարծվում էր:

— Թեև պարոն դը Ֆրուաֆոնը հիսուն տարեկան է, — ասում էր նա, — բայց նա պարոն Կրյուշոյից ավելի տարիքոտ չի երևում: Ճիշտ է, նա այրի է և երեխաներ ունի, բայց նա մարկիզ է և Ֆրանսիայի պեր է լինելու, և մեր ժամանակներում նման մի ամուսնություն հետո չէ: Ես վստահ եմ, որ հայր Գրանդէն իր բոլոր կալվածները միացնելով Ֆրուաֆոնի հողերին, Ֆրուաֆոնների հետ պատվաստվելու դիտավորություն ուներ: Նա ինձ հետ հաճախ է խոսել այդ մասին: Ծերուկը վարպետ էր:

— Ինչո՞վ բացատրել, Նանն, — ասաց մի երեկո Էժենին պառկելիս, — որ այս յոթ տարվա ընթացքում նա ինձ մի անգամ չգրեց...

Այն ժամանակ, երբ այս բոլորը տեղի էր ունենում Սույուրում, Շառլ հարստանում էր Հնդկաստանում: Նրա վերցրած ապրանքը շատ լավ գնով էր վաճառվել: Միանվագ նրան հաջողվել էր ունենալ վեց հազար դոլար: Այսպես կոչված հասարակածի մարտական մկրտությունը նրան մոռացնել էր տվել շատ նախապաշտումներ: Նա տեսավ, որ այրեցյալ գոտու երկրամասում, ինչպես Եվրոպայում, հարստանալու լավագույն միջոցը մարդկանց առևտուրն է: Ուստի նա մեկնեց Աֆրիկայի ծովեզերքը և սկսեց սևամորթների գերեվաճառություն, մարդկանց առևտուրին միացնելով իրեն հարմար շահավետ զանազան ապրանքների առևտուրը: Գործերի մեջ նա այնպիսի մի աշխուժություն մտցրեց, որ ոչ միազատ րոպե չէր մնում: Նրա գերիշխող նպատակն էր՝ նորից Փարիզում երևալ՝ մեծապես հարստացած, և նորից գրավել իր կորցրած դիրքից ավելի փայլուն մի դիրք: Երկար շփվելով մարդկանց հետ և շրջելով շատ երկրներ, իր այդ թափառումների ժամանակ ծանոթանալով տարբեր բարերի, նրա զաղափարները փոփոխությունների ենթարկվեցին, և նա դարձավ սկեպտիկ: Տեսնելով, որ, այն ինչ ոճիր էր համարվում մի երկրում, մի այլ երկրում նույնը առաքինություն էր, նա կորցրեց արդարի ու անարդարի իր կայուն հասկացողությունը: Շահերի մշտատև բախման մեջ նրա սիրտը սառեց, կծկվեց, քարացավ: Գրանդէների արյունը չդավաճանեց իր կոչմանը: Շառլ դարձավ խստախրտ, ազահորեն շահամոլ: Նա վաճառեց շինացիներ, սևամորթներ, ծիծեռնակի բներ, երեխաներ, դերասաններ, զրադակ լայն վաշխառությամբ: Իր ապրանքները մաքսային իրավունքից փախցնելու սովորությունը՝ նրան դարձրեց մարդկանց իրավունքների նկատմամբ նվազ փափկանկատ: Այդ մտայնությամբ նա մեկնում էր Սուրբ Թովմաս՝ գնելու ծովահենների գողացած ապրանքները և վաճառելու այն տեղերում, ուր դրանք չկային: Եթե Էժենի ազնիվ և մաքուր դեմքը ընկերացավ նրան առաջին ճամփորդության ժամանակ, ինչպես սուրբ կույսի նկարը, որ իսպանական նավաստիներն են դնում իրենց նավի վրա, և եթե նա իր առաջին հաջողությունները վերագրեց այդ քաղցրաբար աղջկա մաղթանքների և աղոթքների մոգական ազրեցությանը, ավելի հետո սևամորթ, խառնածին, սպիտակամորթ, յավացի կանայք, եզիպտացի պարուիխները, ամեն գույնի կանանց հետ ունեցած շվայտանքները և տարբեր երկրներում ունեցած արկածախնդրությունները ամբողջությամբ ջնջեցին զարմուհու, նրա տան, նստարանի, միջանցքում ստացած համբույրի հիշատակը: Նա հիշում էր միայն փոքր պարտեզը՝ շրջապատված հին պատով, որովհետև այդտեղ էր սկսել նրա վտանգավոր ճակատագիրը: Բայց նա ուրանում էր իր ընտանիքը: Հորեղբայրը մի ծեր շուն էր, որ իրենից խարեւությամբ վերցրել էր իր զարդեղնենները. Էժենին չէր գրավում ո՛չ նրա սիրտը և ոչ էլ մտածումները, նա նրա գրծերի մեջմիայն վեց հազար ֆրանկի պարտատիրոջ տեղն էր բռնում: Շառլ Գրանդէի այդ վարքագիծն ու համոզումները կրացատրեն նրա լրությունը: Հնդկաստանում, Սուրբ Թոմասում, Աֆրիկայի ափերում, Լիսարոնում և Միացյալ Նահանգներում շարատավորելու համար իր անունը՝ սպեկույանտը Սեֆերդ կեղծանունն էր կրում: Կարլ Սեֆերդը կարող էր առանց վտանգի գտնվել ամեն տեղ, լինել անխոնջ, խիզախ, ազահ, վերջապես իբրև մի

մարդ, որ որոշած լինելով հարստություն դիզել՝ quibuscumque viis\* շտապում էր վերջ դնել իր ստորոտքանը, որպեսզի մինչև կյանքի վերջը պատվավոր մարդ մնար: Այդ սիստեմով նա հարստացավ արագ և փայլուն կերպով: Հետևաբար 1827 թվականին նա վերադառնում է Բորդը գեղեցիկ «Մարի-Կարոլին» նավով, որ ոյալիստական մի առևտրական տան սեփականությունն էր: Պինդ ամրացված երեք տակառի մեջ նա ուներ մեկ միլիոն ինք հարյուր հազար ֆրանկի ոսկեփոշի, որից նա հույս ուներ յոթից-ութ տոկոս շահել, այդ ոսկին Փարիզում դրամի վերածելով: Այս երկայմ նավի վրա էր գտնվում նաև մի ազնվական՝ նորին վեհափառություն Կառլոս X թագավորի մի պալատական՝ պարոն դ'Օքրիոն, մի բարի ծերունի, որ հիմարություն էր ունեցել ամուսնանալ մի մոդայական կնոջ հետ, և որի հարստությունը Հնդկական օվկիանոսի կղզիներումն էր: Տիկին դ Օքրիոնի շոայլությունները դարմանելու համար նա գնացել էր վաճառելու իր կալվածները: Պարոն և տիկին դ'Օքրիոնները, Բյուր շի դ'Օքրիոն տնից, որի վերջին կապտալը<sup>15</sup> մեռել էր 1789 թվականին, ունեին միայն քանի հազար լիվրի մի եկամուտ և բավականին տգեղ մի աղջիկ, որին մայրն ուզում էր ամուսնացնել առանց օժիտի, քանի որ իր կարողությունն իրեն հազիվ էր բավականացնում Փարիզում ապրելու համար: Դա մի մտահղացում էր, որի հաջողությունը կասկածելի էր թուրմ աշխարհիկ բոլոր մարդկանց, չնայած այն ձարպկությանը, որ նրանք վերագրում են աշխարհիկ կանանց: Ուստի տիկին դ'Օքրիոնը գրեթե հուսահատվում էր՝ նկատելով, որ իր աղջիկը վանում է ամեն մեկին, եթե նույնիսկ այդ մեկը ազնվական ծագման համար խելքը կորցրած լիներ: Օրիորդ դ'Օքրիոնը մի երկարահասակ աղջիկ էր, միջատի նման, նիհար, բարակ, արհամարհոտ շուրթերով, որոնց վրա խոշոր ծայրերով մի երկար քիթ էր իշնում, բնական վիճակով դեղնավուն, իսկ ճաշերից հետո՝ ամբողջությամբ կարմիր, մի տեսակ բուսական երևույթ, որ ավելի անհաճո էր, տաղտկացած ու գունատ մի դեմքի կենտրոնում, քան մի ուրիշ տեղ: Վերջապես այնպես էր՝ ինչպես կցանկանար երեսունսութ տարեկան մայր, որ դեռևս գեղեցիկ լինելով՝ հավակնություններից գուրկ չէր: Բայց այդ աննպաստ հատկությունները մեղմելու համար մարկիզուի դ'Օքրիոնն իր աղջկանը տվել էր նրբածաշակ տեսք, նրան ենթարկել էր մի այնպիսի ապրելածեի, որի միջոցով նրա քիթը ժամանակավորապես մնում էր մսին հարմար գույնով, նրան սովորեցրել էր ճաշակով հազնվելու արվեստը, օժտել էր գեղեցիկ ձևերով, սովորեցրել էր նրան ունենալ այն նվազուն հայացքները, որոնք հետաքրքրում են տղամարդուն, և որին հավատացնում են, թե վերջապես նա հանդիպել է իր վաղուց փնտրած հրեշտակին: Նա սովորել էր ոտքը մանկել՝ պատեհ աղիթով առաջ տանելու և նրա փոքրությունը հիացմունքի առարկա դարձնելու համար ճիշտ այն րոպեին, երբ նրա քիթն անպատկառություն էր ունենում կարմրելու, մի խոսքով նրան հաջողվել էր իր աղջկանից ստանալ մի շատ հաջող բան: Լայն թեղանիքների, խարող կրծքականների, ուռուցիկ և խնամքով գարդարված հագուստների, վերին աստիճանի սեղմող սեղմիրանների շնորհիվ, նա ստացել էր կանացի մի այնպիսի հետաքրքրական խառնուրդ, որին նա ի հրահանգ մայրերի, կարող էր ցուցադրության դնել հատուկ թանգարաններում: Շառլ շատ մտերմորեն կապվեց տիկին դ'Օքրիոնի հետ, որն իր հերթին ուզում էր նրա հետ կապվել: Շատերը նույնիսկ հավաստիացնում են, որ ճամփորդության ընթացքում գեղեցիկ տիկին դ'Օքրիոնը ամեն միջոցի դիմեց այդքան հարուստ մի փեսացու գրավելու համար: Բորդը հասնելիս, 1827 թվականի հունիս ամսին, պարոն, տիկին, օրիորդ դ'Օքրիոնները և Շառլ իշխանեցին նույն հյուրանոցում և միասին մեկնեցին Փարիզ: Դ'Օքրիոնիստունը բազում գրավների տակ էր: Շառլ ազատելու էր այն: Մայրն արդեն խոսել էր, որ իր համար երջանկություն կիմներ իր բնակարանի առաջին հարկը հատկացնել իր փեսային և իր աղջկան: Համամիտ շինելով պարոն դ'Օքրիոնի նախապաշարմունքներին ազնվականության վերաբերյալ՝ տիկին դ'Օքրիոնը Շառլ Գրանդեին խոստացել էր բարի Կառլոս X-ից ստանալ մի թագավորական հրամանագիր, որ նրան՝ Գրանդեին թույլ տրվեր կրելու դ'Օքրիոն անունը, կրելու նրա տոհմանիշը և վերահաստատելով երեսունվեց

\* Ինչ միջոցով էլ լինի (լատ.):

հազար լիվր եկամուտ ունեցող մայորատը Օքրիոնում՝ հաջորդել Բյուշի կապտալության և դ’Օքրիոնի մարկիզության տիտղոսներին: Միացնելով իրենց հարստությունները, լավ ապրելով միասին և ձեռք բերելով սինեկուրներ, նրանք կարող էին ի մի բերել հարյուր հազար լիվրից ավելի եկամուտ դ’Օքրիոնի ապարանքում:

— Եվ երբ մեկն ունի հարյուր հազար լիվր եկամուտ, անուն, ընտանիք, որ ընդունվում է արքունիքում, որովհետև, ես ձեզ նշանակել կտամ պալատական, մարդ կարող է լինել ինչ կամենա, — ասում էր տիկին դ’Օքրիոնը Շառլին: — Այսպիսով դուք, ըստ ձեր նախընտրության, կարող եք լինել պետական խորհրդի դիմումների պետ, պրեֆեկտ, դեսպանության քարտուղար, դեսպան: Կառլոս X-ը սիրում է դ’Օքրիոնին, նրանք իրար ճանաչում են մանուկ հասակից:

Այդ կնոջ ազդեցությամբ բորբոքված փառասիրությամբ արքեցած Շառլը ամբողջ ճամփորդության ընթացքում շոյել էր բոլոր այդ հույսերը, որոնք նրան ներկայացվեցին ձարափի ձեռքերի կողմից և սրտից սիրտ վստահված գաղտնասացության ձևով: Մտածելով, որ իր հոր գործերն արդեն կարգադրած կլինի հորեղբայրը, նա կարծում էր, թե ինքն արդեն կարող է մեկ անգամից հաստատվել Սեն-Ժերմեն արվարձանում, ուր ամեն ոք այդ ժամանակ ուզում էր քնակվել, և ուր օրիորդ Մաթիլդի կապույտ քթի ստվերի տակ, նա երևալու էր որպես կոմս դ’Օքրիոն, ինչպես Դյոները մի գեղեցիկ օր հանդես եկան որպես մարկիզ Բրեզե<sup>16</sup>: Ուստավրացիայի հաջողություններից շլացած, ուստավրացիա, որը նա թողել էր երերուն, արխատովատական գաղափարների փայլով հափշտակված, նրա զինտվությունը, որ սկսել էր նավի վրա, շարունակում էր Փարիզում, ուր նա որոշել էր ամեն ինչ անել՝ հասնելու համար այն բարձր դիրքերին, որ իր անձնասեր զոքանչը նշմարել էր տվել նրան: Հետևաբար հորեղբոր աղջիկը նրա համար ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի կետ՝ այդ փայլուն հեռանկարների մեջ: Նա վերստին տեսավ Աննետին: Իբրև աշխարհիկ կին՝ Աննետը սրտանց հանձնարարեց իր նախկին սիրեկանին իրականացնել այդ ամուսնությունը և խոստացավ իր աջակցությունը՝ նրա բոլոր փառասիրական ձեռնարկումների մեջ: Աննետը շատ զոյ էր, որ մի տգեղ և ձանձրացուցիչ օրիորդ էր լինելու կինը Շառլի, որին շատ դյուրիչ էր դարձրել Հնդկաստանում ապրած լինելը: Շառլի մորթը թխացել էր, շարժումները կտրուկ էին, խիզախի, ինչպես այդ հատուկ է այն մարդկանց, որոնք վարժվել են կտրել իշխելու հաջողել: Նա Փարիզում ավելի ազատ շնչեց՝ զգալով, որ կարող է այնտեղ մի դեր խաղալ:

Դե Գրասենը լսելով նրա վերադարձը, նրա մոտակա ամուսնությունը, նրա հարստությունը, այցի եկավ նրան, բացատրելու համար, որ երեքհարյուր հազար ֆրանկով նա կարող էր իր հոր բոլոր պարտքերը վճարել: Նա գտավ Շառլին բանակցելիս մի ակնավաճառի հետ, որին նա գոհարներ էր պատվիրում օրիորդ դ’Օքրիոնի հարսանեկան ընծայի համար, իսկ ակնավաճառը նրան ցույց էր տալիս զծագրերը: Գեղեցիկ աղամանդներից բացի, որ Շառլը Հնդկաստանից էր բերել, նրանց աշխատանքի արժեքը, արծաթեղինը, նորապսակների հաստատուն և սնոտի զարդեղների զինը կազմում էր ավելի քան երկու հարյուր հազար ֆրանկ: Շառլը ընդունեց դե Գրասենին, որին չձանաչեց, այն մոդայական երիտասարդի արհամարհանքով, որ Հնդկաստանում, տարբեր մենամարտերում չորս մարդ էր սպանել: Պարոն դե Գրասենը արդեն եկել էր երեք անգամ: Շառլը լսեց նրան սառնությամբ, հետո առանց լավ հասկանալու, պատասխանեց:

— Իմ հոր գործերը ինձ չեն վերաբերում: Շնորհակալ եմ ձեզ, պարոն, այն հոգատարության համար, որ դուք ցուցաբերելեք, և որից ես օգտվելու ոչինչ չունեմ: Ես իմ ճակատի քրտինքով մոտ երկու միլիոն չեմ հավաքել, որպեսզի իմ հոր պարտատերերին շարտեմ:

— Իսկ եթե ձեր հայրը սրանից մի քանի օր հետո սնանկ հոչակվի<sup>17</sup>:

— Պարոն, սրանից մի քանի օր հետո ես կոչվելու եմ կոմս դ’Օբրիոն, հետևաբար դուք կը մը ունեք, որ այդ ինձ համար ոչ մի նշանակություն չի ունենա: Հետո, դուք լավ գիտեք, որ երբ մի մարդ, հարյուր հազար լիվրի եկամուտ ունի, երբեք նրա հայրը սնանկ չի կարող հոչակվել,— ավելացրեց նա տյար դե Գրասենին քաղաքավարի կերպով դեպի դուռը հրելով:

Նոյն տարվա օգոստոս ամսվա սկզբին Էժենին նստել էր այն փոքրիկ, փայտե նստարանի վրա, որտեղ նրա հորեղորդորդին խոստացել էր հավիտենական սեր և ուր նա զայս էր, երբ օրը գեղեցիկ էր, նախաձաշ անելու: Խեղճ աղջիկը այդ զով և ուրախ առավոտը հածույք էր զգում վերիիշելով իր սիրո փոքր և մեծ դեպքերը և այն դժբախտությունները, որ հաջորդել էին դրան: Արևը լուսավորում էր պատի ձեղքված, զբերե ավերակ կտորը, որը տարօրինակ ժառանգուին արգելել էր նորոգել, թեև Կորնուայեն հաճախ ասում էր իր կնոշը, թե նա մի օր կփլի և մեկն ու մեկին կձգմի: Այդ րոպեին նամակաբերը դուռը բախեց և մի նամակ հանձնեց՝ տիկին Կորնուայեին, որը պարտեզ վազեց՝

— Օրիո՞րդ, նամակ:

Նա նամակը հանձնեց իր տիրուհուն՝ ասելով.

— Այն է, որին սպասում էիք:

Այս խոսքերը նոյն ուժով արձագանքեցին օրիորդ Էժենիի սրտում, որքան իրականում արձագանք տվին բակի և պարտեզի պատերի մեջ:

— Փարի՞ զ... նրանի՞ ց է, վերադարձե՞ լ է:

Էժենին գունատվեց և մի րոպե նամակը առանց բանալու պահեց իր ձեռքում: Նա շատ էր հուղված և նամակը բանալու ու կարդալու համար ուժ չուներ:

Բարձրահասակ Նանոնը մնաց կանգնած, ձեռքերը հպածմեջին, ուրախությունը կարծես ծիսի նման դուրս էր ցայտում նրա թուխ դէմքի ճաքոսուքներից:

— Դե՛ կարդացեք, օրիորդ:

— Ա՛հ, Նանոն, ինչո՞ւ է Փարիզ վերադարձել, երբ Սոմյուրից էր մեկնել:

— Կարդացե՞ք, կիմանաք:

Էժենին դողալով, բացեց նամակը: Այնտեղից վայր ընկավ մի դրամական փոխադրագիր՝ ուղղված Սոմյուրի տիկին դե Գրասենին և Կորրենին: Նանոնը վերցրեց այն.

«Թանկագին զարմուհիս»...

«Ես դադարել եմ Էժենի լինելուց»,— մտածեց աղջիկը և նրա սիրտը սեղմվեց:

«Դուք...»:

«Նա ինձ ասում էր դու»:

Նա իր թևերը խաչաձև կրծքին, չհամարձակվեց շարունակել նամակի ընթերցումը, և խոշոր արցունքները ողողեցին նրա աչքերը:

— Մեռա՞ծ է,— հարցրեց Նանոն:

— Այդ ժամանակ նա չէր կարող գրել, — ասաց Էժենին: Եվ կարդաց ամբողջ նամակը, ահա այն.

«Թանկագին զարմուիս, ես հավատացած եմ, որ դուք ուրախությամբ պիտի լսեք իմ ձեռնարկությունների հաջողության մասին: Դուք ինձ բախտ բերիք, ես հարուստ վերադարձ և հետևեցի իմ հորեղբոր խորհուրդներին, որի, ինչպես և իմ հորեղբորկոչ մահը ինձ հայտնեց դե Գրասենը: Մեր ծնողների մահը բնական երևույթ է, և մենք պետք է նրանց հաջորդենք: Հույս ունեմ, որ դուք այսօր միմիթարված կլինեք, ոչինչ չի կարող դիմանալ ժամանակին. ես այդ զգում եմ: Այո, իմ հորեղբորադիկ, դժբախտաբար ինձ համար պատրանքների ժամանակն անցել է: Տարբեր երկրներում ճամփորդելով, ես մտածել եմ կյանքի մասին: Պատանի մեկնեցի և հասուն մարդ դարձած վերադարձա: Այսօր մտածում եմ այնպիսի բաների մասին, որոնց մասին չեմ մտածում անցյալում: Դուք ազատ եք, իմ զարմուիս, և ես էլ ազատ եմ դեռևս: Հաս երևութին ոչինչ արգելք չի լինի մեր երիտասարդական ծրագրերի իրականացմանը, սակայն ես բավական ուղղամիտ խառնվածք ունեմ, որպեսզի ձեզնից թաքցնեմ իմ գործերի վիճակը: Ես երբեք չեմ մոռացել, որ ես ինձ չեմ պատկանում. իմ երկար ճամփորդությունների ժամանակ միշտ հիշել եմ փայտե փոքրիկ նստարանը...»:

Էժենին վեր ցատկեց, կարծես հրաշեկ ածուխների վրա նստած լիներ, և զնաց նստելու բակի սանդուղների աստիճաններից մեկի վրա:

«...Փայտե փոքրիկ նստարանը, որի վրա մենք երդվեցինք իրար հավիտյան սիրել, միջանցքը, մոխրագույն սրահը, ձեղնահարկի իմ սենյակը և այն զիշերը, երբ դուք ձեր նուրբ բարեկարտությամբ իմ ապագայի կառուցումը ավելի հեշտացրիք: Այո, այդ հիշատակները նեցուկ դարձան իմ արիությանը և ես ինձ ասել եմ, որ դուք իմ մասին միշտ մտածում եք, ինչպես որ ես էի ձեր մասին հաճախ մտածում: Մեր պայմանավորված ժամերին, դիտո՞ւմ էք ամպերը, ժամը իննին: Այո, այնպես չէ: Ահա թե ինչու ես չեմ կարող դավաճանել ինձ համար մի նվիրական բարեկամության, ո՛չ, ես չեմ կարող ձեզ խաբել: Այս բոպեիս ես կնքելու եմ մի այնպիսի ամուսնություն, որ գոհացու կտա այդ մասին իմ կազմած համոզումներին: Մերը, ամուսնության մեջ, ցնորդ է: Այսօր իմ փորձառությունն ինձ ասում ե, որ անհրաժեշտ է հասարակական բոլոր օրենքներին ենթարկվել և ամուսնալիս իրականացնել աշխարհիկ բոլոր պատշաճությունները: Արդ՝ արդեն մեր մեջ տարիքի տարբերություն կա, որ գուցե ավելի պիտի ազդեր ձեր ապագայի վրա, թանկագին զարմուիս, քան թե իմ: Ես չեմ ուզում ձեզ հետ խոսել ո՛չ ձեր բարքերի, ո՛չ ձեր դաստիարակության, ոչ էլ ձեր սովորությունների մասին, որոնք փարիզյան կյանքի հետ ոչ մի ներդաշնակում չեն կարող ունենալ, և որոնք անկասկած չեն կարող պատշաճել իմ հետագա ծրագիրներին: Իմ ծրագիրների մեջ է ճոխ կյանք վարել, շատ մարդ ընդունել. և ես կարծում եմ, որ որքանիհիշում եմ, թե դուք հանդարտ և մեղմ կյանք եք սիրում: Ոչ, ես ուզում եմ ավելի անկեղծ լինել և ցանկանում եմ, որ դուք լինեք իմ կացության իրավարարը, դուք պետք է ծանոթանաք դրան և իրավունք ունեք այն դատել: Այսօր ես ունեմ ութսուն հազար լիվր եկամուտ: Այս հարաստությունը ինձ թույլ է տալիս կապվել դ'Օբրիոն ընտանիքի հետ, որի ժառանգություն տասնեինը տարեկան մի մանկամարդութիւն, ամուսնությամբ ինձ բերում է իր անունը, իր տիտղոսը, նորին վեհափառության պալատականի պաշտոնը և ամենափայլուն դիրքերից մեկը: Խոստովանում եմ ձեզ, թանկագին զարմուիս, որ ես օրիորդ դ'Օբրիոնին բոլորովին չեմ սիրում, բայց նրա հետ ամուսնանալով, ես իմ երեխաների համար ապահովում եմ սոցիալական մի դրություն, որի առավելությունները մի օր անհաշիվ են

լինելու, քանի որ օրեցօր միապետական գաղափարները զորանում են: Մի քանի տարի անց, իմ զավակը, որ լինելու է մարկիզ դ’Օքրիոն, տիրապետելով քառասուն հազար եկամուտ ունեցող մի մայորատի, կարող է ունենալ պետության մեջ այն պաշտոնը, որին կձգտի նա: Մենք մեր երեխաներին ենք պատկանում: Տեսն՝ մը եք, իմ հորեղբոր աղջիկ, ես ձեզ բաց եմ անում իմ սիրտը, իմ հույսերի և հարստության վիճակը: Կարող է պատահել, որ դուք էլ ձեր կողմից, յոթ տարվա բացակայությունից հետո, մոռացած լինեք մեր երեխայական արարքը, բայց ես չեմ մոռացել ո՛չ ձեր ներողամտությունը և ոչ էլ իմ խոստումները: Ես այդ բոլորը հիշում եմ, նոյնիսկ ամենից թեթևակիորեն տրվածները, որոնք մի ավելի պակաս բարեխիղձ երիտասարդ, որպիսին ես չեմ, և որի սիրտն արդեն դադարած է երիտասարդ լինելուց, չեր վերհիշի անգամ: Ձեզ իմաց տալով, որ միայն հարմար ամուսնություն եմ ուզում կնքել, որ ես հիշում եմ մեր երիտասարդ տարիների սերը, մի՞թե սա չի նշանակում, որ ես ձեր խոհականությանն եմ հանձնվում, ձեզ դարձնում եմ իմ ճակատագրի տիրուիին և ասում նաև, որ եթե անհրաժեշտ է, որ ես հրաժարվեմ իմ հասարակական փառափրություններից, ես կարող եմ կամովին գոհանալ այն մաքուրն պարզ երջանկությամբ, որի այնքան հուզիչ պատկերներ եք մատուցել...»

— Տան-տա-տա: Տան-տա-ի: Տին-տա-տա: Տուն-տա-տի... Էր երգել Շառլ Գրանդեն «Non più andrai»-ի եղանակով, երբ ստորագրել էր

«Զեր անձնվեր հորեղբորորդի»՝

ՇԱՌԼ:

«Գրո՛ դը տանի, որքա՛ ն ձևականություն», — ինքն իրեն ասել էր Շառլ:

Հետո նա վերցրել էր դրամական չեկը և ավելացրել հետևյալը .

«Հ. Գ.— Ես իմ գրությանը կցում եմ ութ հազար ֆրանկի մի փոխադրագիր ձեր անվանը, և ուկով վճարելի, ուղղված դէ Գրասենների առևտրական տան վրա, նա պարունակում է ինձ ազնվորեն տրված փոխառության փոխարժեքը և նրա տուկոսները: Բորդոյից սպասում եմ մի սնդուկ, որի մեջ կան մի քանի իրեր, որ դուք թույլ կտաք ինձ նվիրել ձեզ՝ ի նշան իմ երախտագիտության: Դուք կարող եք փոստակառքով ինձ ուղարկել իմ արկող՝ դ’Օքրիոն ապարանք՝ Իերեն-Բերտեն փողոցում»:

— Փոստակառով, — ասաց Էժենին: — Մի իր, որի համար հազար անգամ իմ կյանքը կտայի:

Սոսկալի՝ և լիակատար դժբախտություն: Նավը ընկդմվում էր, առանց թողնելու պարանի մի կտոր կամ մի տախտակ՝ հույսերի ընդարձակ օվկիանոսի մակերեսում: Որոշ կանայք իրենց լրված տեսնելով, գնում են իրենց սիրահարներին ետ խլելու իրենց մրցակցուհու գրլից, սպանում են նրան և փախչում աշխարհի մյուս ծայրը, վերջ գտնում կախաղանի վրա կամ գերեզմանում: Անպայման սա գեղեցիկ է, այդ ոճքի դրդապատճառը մի վսեմ կիրք է, որը հարգանք է ներշնչում մարդկային արդարադատությանը: Այլ կանայք կհակեն իրենց գլուխները և կարտասվեն լոռությամբ. նրանք կապրեն մահամերձ և համակերպված, արտասվաթոր և ներող, աղոթելով, և մինչև իրենց վերջին շունչը՝ հիշելով: Դա արդեն սերն է, ճշմարիտ սերը, հրեշտակների սերը, հպարտ սերը, որ ապրում է իր վշտով և իր վշտից մահանում: Այդ եղավ Էժենի զգացումը, երբ այդ զարհուրելի նամակի ընթերցումն ավարտեց: Նա իր հայացքը ուղղեց դեպի երկինք՝ մտաբերելով իր մոր վերջին խոսքերը, որը ինչպես որոշ մահամերձներ, հստակությամբ և խորաթափանց ձևով նախատեսել էր ապագան, հետո Էժենին վերհիշելով այդ մահը և այդ մարգարեական կյանքը՝ մի հայացքով չափեց

իր ամբողջ ճակատագիրը: Նրան մի բան էր մնում՝ բանալ իր թևերը, պարզել դեպի երկինք և ապրել աղոթքով մինչև իր ազատության օրը:

— Մայրս իրավացի էր,— ասաց նա արտասվելով:— Տառապել և մեռնել:

Դանդաղ քայլերով նա պարտեզից սրահ վերադարձավ: Հակառակ իր սովորության՝ նա չանցավ միջանցքով, բայց նորից գտավ իր զարմիկի հիշատակը մոխրագույն սրահում, որի բուխարու վրա միշտ էլ կար դրված մի ափսե, որը նա ամեն առավոտ գործ էր ածում նախաճաշի համար, ինչպես Սերի հին շաքարամանը:

Այդ առավոտը նրա համար վիճակված էր լինելու հանդիսավոր և իրադարձություններով հարուստ: Նանոնք նրան հայտնեց, որ ծիսական քահանան եկել էր այցելության: Այդ քահանան, Կրյուշոների ազգականը, նախագահ Բոնֆոնի շահերի կողմնակիցն էր: Ծեր արքան մի քանի օրից ի վեր համոզել էր նրան խոսել օրիորդ Գրանդեի հետ, գուտ կրոնական մտքով այն մասին, որ օրիորդը պարտավոր էր ամուսնանալ: Իր քահանային ընդունելով՝ Էժենին մտածում էր, որ նա եկել է այն հազար ֆրանկի համար, որ նա ամեն ամիս տալիս էր աղքատներին և ասաց Նանոնին, որ այդ գումարը բերվի: Բայց քահանան ժպտալով ասաց.

— Այսօր, օրիորդ, ես եկել եմ ձեզ հետ խոսելու մի խեղճ աղջկա մասին, որով ամբողջ Սոմյուրը հետաքրքրվում է, և որը իր հանդեա զլանալով ամեն բարեսրտություն, չի ապրում քրիստոնեային վայել կյանքով:

— Աստված իմ, տեր հայր, դուք ինձ գտնում եք մի այնպիսի բռպեռում, եթք ես ամբողջությամբ զբաղված եմինձնով և չեմ կարող մտածել իմ մերձավորի մասին: Ես շատ դժբախտ եմ, և իմ միակ ապաստանը եկեղեցին է. նա միայն ունի բավական լայն ծոց՝ մեր բոլորի վշտերը պարփակելու համար, և բավական արդար զգացմունքներ, որ մենք կարողանայինք ծծել, առանց վախենալու, թե կշորացնենք:

— Լավ, օրիորդ, զբաղվելով այդ աղջկանով՝ մենք ձեզնով կզբաղվենք: Լսեցե՛ք, եթե ուզում եք ձեր փրկությունը, դուք միայն երկու ուղի ունեք ձեր առաջ,— կամ հեռանալ աշխարհից, կամ ենթարկվել նրա օրենքներին. հնազանդել ձեր աշխարհային ճակատագրին, կամ ձեր երկնային ճակատագրին:

— Ահ, ձեր ձայնն ինձ խոսում է այն բռպեին, եթք ես ուզում էի մի ձայն լսել վերսից: Այո, աստված է ձեզ այստեղ ուղարկում, պարոն: Ես ուզում եմ աշխարհին հրաժեշտ տալ և լրության ու մեկուսացման մեջ ապրել միայն աստծու համար:

— Անհրաժեշտ է, աղջիկս, երկար մտածել նման մի խստապահանց որոշման մասին: Ամուսնությունը կյանք է, քողը՝ մահ:

— Ուրեմն մահ, անմիջական մահ, տեր հայր,— ասաց նա մի ահավոր աշխուժությամբ:

— Մա՞ս: Բայց, օրիորդ, դուք մեծ պարտականություններ ունեք կատարելու հասարակության հանդեա: Մի՞թե դուք չեք մայրը խեղճերի, որոնց տալիս եք զգեստներ, ձմեռը՝ փայտ, իսկ ամառը՝ աշխատանք: Ձեր մեծ հարստությունը մի փոխառություն է, որ անհրաժեշտ է վերադարձնել, և այդ բանը դուք ընդունել եք սրբորեն: Ձեզ բաղել մի վանքում՝ կլիներ եսասիրություն, իսկ չամուսնանալ և մնալ պարաված աղջիկ՝ դուք չպետք է այդ անեք: Նախ մենակ դուք մի՞թե կարող եք կառավարել ձեր անսահման հարստությունը: Դուք կարող եք այն կորցնել: Շուտով դուք կունենաք շատ դատեր և կընկնեք անբառնալի դժվարությունների մեջ: Ճակատացեք ձեր հովվին.— ամուսինը ձեզ

օգտակար կլինի, դուք պարտական եք պահել այն, ինչ աստված տվել է ձեզ: Ես ձեզ հետ խոսում եմ այնպես, ինչպես մի սիրելի զառնուկի հետ: Դուքշատ անկեղծությամբ սիրում եք ձեր աստծուն, և ձեզ կարելի է փրկվել՝ ապրելով աշխարհում, որի ամենագեղեցիկ զարդերից մեկն եք դուք, և որին սուրբ օրինակներ եք տալիս:

Այդ րոպեին եկավ տիկին դե Գրասենը: Նա եկել էր վրեժից և մի մեծ հուսահատությունից մղված:

— Օրիորդ... ասաց նա, — ա՛, այստեղ է տեր հայրը, ես լուս եմ. եկել էի խոսելու որոշ գործերի մասին, բայց նկատում եմ, որ դուք կարևոր խոսակցություն ունեք:

— Տիկին, — ասաց քահանան, — ես ձեզ եմ թողնում գործողության դաշտը:

— Ո՛, տեր հայր, — ասաց Էժենին, — մի քանի րոպե անց վերադարձեք, ձեր աջակցությունն այս պահին ինձ համար շատ անհրաժեշտ է:

— Այո, իմ խեղճ զավակ, — ասաց տիկին դե Գրասենը:

— Ի՞նչ եք ուզում ասել, — հարցրին միասին օրիորդ Գրանդեն և քահանան:

— Մի՞թե չեք լսել ձեր հորեղբորորդու վերադարձը և նրա ամուսնությունը օրիորդ դ'Օբրիոնի հետ... կնոջ աշքերից ոչինչ չի թաքնվում:

Էժենին կարմրեց և լրեց: Սակայն այդ րոպեից նա որոշեց հետազայում պահել իր հոր անտարբեր և զուսպ վերապահությունը:

— Հետո ինչ, տիկին, — պատասխանեց նա հեղնանքով, — անպայման ես կանացի վատ աշք ունեմ, ձեզ չեմ հասկանում: Խոսեցեք, խոսեցեք քահանայի առաջ: Դուք գիտեք, որ նա իմ խոստովանահայրն է:

— Ահա, օրիորդ, թե ինչ է գրում ինձ դե Գրասենը: Կարդացեք:

Էժենին կարդաց հետևյալ նամակը.

«Իմ սիրելի կին, Շառլ Գրանդեն վերադարձել է Հնդկաստանից, նա Փարիզում է մի ամսից ի վեր...»:

«Մի՛ ամիս», — ինքն իրեն ասաց Էժենին կախ զցելով ձեռքը: Մի րոպե դադարից հետո նա վերսկսեց ընթերցումը:

«...Զարկ եղավ, որ նախասենյակում սպասեմ երկու անգամ, որպեսզի ապագա այդ կոմս դ'Օբրիոնից ընդունվել կարողանամ: Թեև ամբողջ Փարիզը խոսում է նրա ամուսնության մասին և ամուսնության ծանուցումները հրատարակված են...»:

— Ուրեմն նա ինձ գրում էր հենց այն րոպեին երբ..., — մտածեց Էժենին:

Նա չվերջացրեց, չգոչելով «սրիկա», ինչպես կաներ փարիզուիին, բայց նրա չարտահայտված արհամարհանքը կատարյալ էր:

«...Այս ամուսնությունը դեռ հեռու է. մարկիզ դ’Օբրիոնը իր աղջիկը չի տա սնանկացած մի մարդու որդուն: Ես նրա մոտ եղա բացատրելու համար այն հոգատարությունը, որ նրա հորեղբայրն ու ես ունեցանք իր հոր գործերի նկատմամբ և այն ձարպիկ հնարազիտությունները, որոնց միջոցով մեզ հաջողվեց հանգիստ պահել նրա պարտատերերին մինչև այսօր: Այդ մանուկը լիրք անպատկառություն ունեցավ պատասխանելու ինձ, որ ամբողջ հինգ տարի գիշեր ու ցերեկ նվիրվել եմ իր շահերի և իր պատվի պաշտպանությանը, թե իր հոր գործերը իրեն չեն վերաբերում: Որեւէ մի դատապաշտպան իրավունք պիտի ունենար նրանից պահանջելու երեսունից քառասուն հազար ֆրանկ աշխատավարձ, պահանջների գումարի մեկ տոլկո՞ ոսկով: Բայց համբերություն, նա օրինականապես պարտական է մնում պարտատերերին մեկ միլիոն երկու հարյուր հազար ֆրանկ, և ես սնանկ եմ հոչակել տալու նրա հորը: Ես այդ գործի մեջ նետվել եմ այդ ծերուկ կոկորդիլոս Գրանդեի խնդրանքով և ես խոստումներ եմ տվել նրա ընտանիքի անունով: Եթե պարոն կոմս դ’Օբրիոնին չի հետաքրքրում իր պատիվը՝ իմը ինձ համար թանկ է: Ասի թե ինչու ես իմ կացությունն ուզում եմ հասկացնել պարտատերերին: Սակայն ես մեծ հարգանք ունեմ օրիորդ Էժենիի հանդեպ, որին մենք մտածում էինք մեզ հարս դարձնել ավելի երջանիկ ժամանակներում, և չեմ ուզում որևէ մի բան անել, առանց նրա գիտության»:

Այդտեղ Էժենին սառնությամբ վերադարձեց նամակը՝ առանց ավարտելու նրա ընթերցումը:

— Շնորհակալ եմ ձեզ,— ասաց նա տիկին դե Գրասենին,— **կտեսնենք:**

— Այս բոպեիս դուք ամբողջությամբ ձեր հանգույցալ հոր ձայնն ունեք,— ասաց տիկին դե Գրասենը:

— Տիկին, դուք մեզ պարտք եք ութ հազար հարյուր ֆրանկ ոսկով,— ասաց նրան Նանոնը:

— Այդ ճիշտ է, բարի եղեք զալ ինձ հետ, տիկին Կորնուայե:

— Տեր հայր,— ասաց Էժենին ազնվական սառնարյունությամբ, որը թելադրված էր այն մտքից, որ նա արտահայտելու էր,— մի՞ թե մեղք է համարվում ամուսնության մեջ շարունակել կույս մնալը:

— Այդ խղճի հարց է, որի լուծումն ինձ անծանոթ է: Եթե Դուք ուզում եք իմանալ, թե ինչ է մտածում մեծահամբավ Սանչեզը իր «De matrimonio»\* երկում, ես այդ ձեզ կարող եմ ասել վաղը:

Քահանան մեկնեց: Օրիորդ Գրանդեն բարձրացավ իր հոր գրասենյակը և այնտեղ մենակ անցկացրեց ամբողջ օրը, առանց ձաշի համար վայր իջնելու, չնայած Նանոնի պնդումներին: Նա երևաց երեկոյան այն ժամին, երբ եկան սովորական այցելուները: Գրանդեների սրահը երբեք այնքան լիբր չէր եղել, որքան այդ երեկո: Շառի վերադարձ, և նրա հիմար ուխտադրժությունը տարածվել էր ամբողջ քաղաքում: Բայց, հակառակ իրենց ուշադիր հետաքրքրությանը, այցելուները գոհացում չստացան: Էժենին, որ սպասում էր դրան, ոչ մի նշան ցույց չտվեց իր խաղաղ դեմքի վրա իրեն տակնուվրա անող ահավոր հուզումներից: Նրան հաջողվեց պահել իր ժպտուն դեմքը՝ պատասխանելու համար նրանց, ովքեր տխուր հայացքներով կամ խոսքերով ուզեցին իրենց կարեկցանքն արտահայտել: Վերջապես նրան հաջողվեց իր վիշտը թաքցնել քաղաքավարության քողի տակ: Ժամը իննի մոտ թղթախաղերը վերջացան. խաղացողները թողին իրենց սեղանը, իրար վճարումներ արին և վիճում էին վիստի վերջին փուլերի մասին միանալով զրուցողների ընդհանուր խմբին: Այն բոպեին, երբ հյուրերը միասին ոտքի կանգնեցին մեկնելու համար, մի անակնկալ բան պատահեց, որ արձագանք տվեց ամբողջ Սովորում, այնտեղից ամբողջ շրջանում և շրջապատի չորս պրեֆեկտուրաներում:

\* Ամուսնության մասին (լատ.):

— Մնացեք, պարոն նախագահ,— ասաց Էժենին պ. դը Բոնֆոնին, երբ սա իր ձեռնափայտն էր վերցնում:

Այս խոսքերը լսելով՝ բազմաթիվ ներկաներից չկար մեկը, որ չհուզվեր: Նախագահը գունատվեց և հարկադրված նստեց:

— Միլիոնները նախագահին են պատկանելու,— ասաց օրիորդ դը Գրիբուկուրը:

— Պարզ է, որ նախագահը ամուսնանալու է օրիորդ Գրանդէի հետ,— բացազնչեց դ'Օրսոնվալը:

— Ահա ամբողջ թոթախարի լավագույն խաղը,— ասաց աբբան:

— Սա մի գեղեցիկ շլեմ է,— ասաց նոտարը:

Ամեն մեկն իր ուզածն ասեց. ամեն մեկն իր բառախաղն ուներ, ամենքն էլ տեսնում էին ժառանգուհուն բարձրացած իր միլիոնների վրա, ինչպես պատվանդանի վրա: Ինը տարուց ի վեր սկսած դրաման մոտենում էր իր լուծման: Աբրող Սովորի ներկայությամբ ասել նախագահին, որպեսզի նա մնա, մի՞ թե այդ չէր նշանակում նրան իրեն ամուսին ընտրել: Փոքր քաղաքներում պատշաճություններն այնքան խստորեն են պահպանվում, որ նման մի օրինազնցություն խոստումների ամենից հանդիսավորն էր:

— Պարոն նախագահ,— ասաց նրան Էժենին հուզված ձայնով, երբ նրանք մենակ մնացին, ես զիտեմ, թե դուք իմ ի՞նչն եք հավանում: Երդվեցեք ինձ ազատ թողնել իմ ամբողջ կյանքում, չիշեցնել ինձ ոչ մեկը այն իրավունքներից, որ ամուսնությունը տալիս է ձեզ ինձ վրա և իմ ձեռքը ձեզ կպատկանի: Ո՞հ,— շարունակեց նա՝ տեսնելով, որ դը Բոնֆոնը իր առաջ ծունկի է զայս,— դեռ չեմ ասել ամեն ինչ: Դեսր չէ, որ ես ձեզ խարեմ, պարոն: Ես իմ պրտում կրում եմ մի անշեշ զգացում: Բարեկամությունը միակ զգացումն է, որ ես կարող եմ տալ իմ ամուսնուն: Ես չեմ ուզում ոչ նրան վիրավորել և ոչ էլ դեմ գնալ իմ սրտի օրենքներին: Բայց դուք իմ ձեռքը և իմ հարստությունը կստանաք մի անհուն ծառայության գնով միայն:

— Դուք տեսնում եք, որ ես պատրաստ եմ ամեն ինչի, — ասաց նախագահը:

— Ահա մեկ միլիոն իինգ հարյուր հազար ֆրանկ, պարոն նախագահ,— ասաց նա իր ծոցից դուրս բերելով ֆրանսիական բանկի հարյուր բաժնետոմսի ընկալագիրը,— մեկնեցեք Փարիզ, մեկնեցեք ոչ թե վաղ առավոտ, ոչ թե այս երեկո, այլ այս իսկ րոպեին: Գնացեք պարոն դե Գրասենի մոտ, աշխատեցեք իմանալ իմ հորեղբոր բոլոր պարտատերերի անունները, ժողովի կանչեցեք նրանց, վճարեցեք նրանց այն, ինչ իմ հորեղբոր ժառանգությունը թողնում է իբրև պարտ, դրամագլուխ և տուկոս՝ պարտի օրից մինչև նրա վճարման թվականը. Վերջապես հաճեցեք նրանցից ստանալ հավաքական և նոտարից օրինապես հաստատված մի ստացագիր: Դուք ինքներդ դատավոր եք և այս հարցը ձեզ եմ վատահում: Դուք մի ուղղամիտ, վեհանձն մարդ եք: Ես հավատում եմ, որ ինձ կհաջողվի կյանքի դժվարություններից անցնել անվտանգ՝ ձեր անվանը ապաստանած: Մենք միմյանց հանդեպ տևական մի ներողամտություն կունենանք: Մենք երկար ժամանակից ի վեր ճանաչում ենք միմյանց, գրեթե ազգականներ ենք. դուք չպիտի ուզեիք ինձ դժբախտացնել:

Նախագահը հարուստ ժառանգուհու ոտքերի առջևն ընկավ՝ ուրախությունից և անձկությունից տրոփուն:

— Ես ձեր գերին կլինեմ, — ասաց նա նրան:

— Երբ դուք կունենաք ստացագիրը, պարոն,— շարունակեց Էժենին, մի սառ հայացք զցելով նրան,— դուք դա, բոլոր մուրհակների հետ միասին, իմ հորեղորորդի Գրանդեին կտանեք և նրան կհանձնեք նաև այս նամակը: Չեր վերադարձին ես կհարգեմ իմ խոստումը:

Նախազահն ըմբռնեց, որ ինքը արժանանում է օրիորդ Գրանդեին՝ սիրային դառնության պատճառով: Այդ պատճառով շտապեց նրա բոլոր հրամանները կատարել մեծագույնարագությամբ, որպեսզի երկու սիրահարների միջև վերատին ոչ մի հաշտություն կարելի չլինի:

Երբ պարոն դը Բոնֆոնը դուրս եկավ, Էժենին ընկավ իր թիկնաթոռի վրա և փղձկաց: Ամեն ինչ վերջացած էր: Նախազահը նստեց հանրակառը և հաջորդ օրը երեկոյան արդեն Փարիզումն էր: Հաջորդ օրը կեսօրից առաջ, նա եկավ դէ Գրասենի մոտ: Նախազահն ընդհանուր ժողովի հրավիրեց բոլոր պարտատերերին այն նոտարի գրասենյակում, որի մոտ գտնվում էին մուրհակները: Նրանցից և ոչ մեկը չբացակայեց հրավերից: Չնայած նրան, որ նրանք պարտատերեր էին, պետք է արդար լինել ասելու, որ նրանք ճշտապահ գտնվեցին: Այդտեղ նախազահ դը Բոնֆոնը օրիորդ Գրանդեի անունից նրանց վճարեց իրենց պահանջը և օրինական տոկոսները: Տոկոսների վճարումը փարիզյան շուկայի համար այդ շրջանի ամենազարմանալի եղելություններից մեկը եղավ: Երբ ստացագրերն արձանագրվեցին, և դը Գրասենը իր կատարած աշխատանքի համար ստացավ հիսուն հազար ֆրանկ, որ նրան էր հատկացրել Էժենին, նախազահը շտապեց զնալ դ’Օբրիոնի ապարանքը և այնտեղ գտավ Շառլին, երբ սա իր աներոջ հետ ունեցած բացատրությունից ընկճած, իր առանձնասենյակն էր քաշվել: Ծերունի մարկիզը նրան ասել էր, թե որքան ժամանակ, որ Գիյոմ Գրանդեի պարտատերերը կմնան անվճար, իր աղջկան չի կարող նրան կնության տալ:

Նախ նախազահը նրան հանձնեց հետևյալ նամակը:

«Հորեղորորդիս, պարոն նախազահ դը Բոնֆոնը ստանձնել է ձեզ հանձնել իմ հորեղորոր բոլոր պարտքերի կարգադրման ստացագիրը, նաև այն ստացագիրը, որով ես ճանաչում եմ, թե այդ գումարները ձեզնից ստացել եմ ես: Ինձ լուրեր հասան այն մասին, որ պատրաստվում են սնանկություն հայտարարել: Ես մտածեցի, որ սնանկացածի զավակը թերևս չկարողանա ամուսնանալ դ’Օբրիոնի աղջկա հետ: Այո՛, հորեղորորդի, դուք լավ եք դատում իմ մտայնության ու սվորությունների մասին, անշուշտ ես բարձր աշխարհից ոչինչ չեմ ճանաչում, ծանոթ չեմ ոչ նրա հաշիվներին և ոչ էլ բարքերին

և չեմ կարողանա ձեզ տալ այն հաճույքները, որ դուք ցանկանում եք գտնել այնտեղ: Եղեք երջանիկ ըստ սոցիալական այն պայմանականությունների, որոնց դուք զոհեցիք մեր առաջին սերը: Հետևաբար ձեր երջանկությունն ավելի կատարյալ անելու համար՝ ես միայն ձեր հոր պատիվը կարող էի ձեզ նվիրել: Մնա՞ք բարով: Դուք միշտ վստահ կարող եք լինել հավատարիմ բարեկամությանը ձեր հորեղորադշկա՝

### Էժենիի»:

Երբ այդ փառամոլը ստացավ իր հոր հաշիվների կարգադրման ակտի բնագիրը, չկարողացավ զայել իր բացազանչությունը, որը ժպիտ պատճառեց նախազահին:

— Մենք միմյանց փոխադարձաբար կհայտնենք մեր ամուսնությունները, — ասաց նա Շառլին:

- Օ՛, դուք ամուսնան՝ Ամ եք Էժենիի հետ: Լավ, ես շատ գոհ եմ, նա բարի աղջիկ է: Բայց,— շարունակեց նա՝ հանկարծ լուսավոր մի մտքից տարված,— ուրեմն նա հարո՞ւստ է:
- Նա ուներ,— պատասխանեց նախազահը մի հեզնակատակ շեշտով,— մի չորս օր առաջ շուրջ տասնսինը միլիոն. այսօր նա միայն տասնյոթ միլիոն ունի:
- Շառլը ապշած նայեց նախազահին.
- Տասնյոթ... միլ...
- Տասնյոթ միլիոն, այո՛, պարոն: Ես և օրիորդ Գրանդէն ամուսնանալով՝ ունենում ենք յոթհարյուր հիսուն հազար լիվր տարեկան եկամուտը:
- Բայց սիրելի զարմիկ,— ասաց Շառլը մի քիչ հանգատացած,— մենք կարող ենք իրար օգնել:
- Համաձայն եմ,— ասաց նախազահը,— ահա նաև մի փոքրիկ արկղիկ, որ ինձ հանձնարարված է միայն ձեզ տալ, ասաց նա՝ սեղանի վրա դնելով մի փոքրիկ արկղիկ, որի մեջ արդուզարդի տուփն էր գտնվում:
- Իմ սիրելի բարեկամ,— ասաց մարկիզուիի դ'Օբրիոնը ներս մտնելով և առանց ուշադրություն դարձնելու Կրյուշոյին,— մի մտատանջվեք այդ խեղճ դ'Օբրիոնի ասածներով, որին խելքահան է արել դքսուիի դը Շոլիոն: Ես կրկնում եմ ձեզ, ձեր ամուսնությանը ոչ մի արգելք չի լինի...
- Ոչինչ, տիկին,— պատասխանեց Շառլը,— իմ հոր հին ժամանակների երեք միլիոն պարտքը երեկ վճարված է:

- Դրամո՞վ,— ասաց նա:
- Ամբողջությամբ, և՛ դրամագլուխ, և՛ տոկոս: Ես վերականգնել կտամ իմ հոր պատիվը:
- Ի՞նչ հիմարություն,— գոչեց գոքանչը:— Ո՞վ է այս պարոնը,— հարցրեց նա փեսայի ականջին՝ նկատելով Կրյուշոյին:
- Իմ հավատարմատարը,— պատասխանեց նա ցած ձայնով:

Մարկիզուիին արհամարհանքով բարեկաց պարոն դը Բոնֆոնին և դուրս եկավ:

- Մենք արդեն իրար օգնում ենք,— ասաց նախազահը՝ զիսարկը վերցնելով:— Մնաք բարով, իմ զարմիկ:

«Նա ինձ ծաղրում է, Սոմյուրի այդ թութակը: Ես ցանկություն ունեմ նրա փորը միսրածել վեց մատնաշափ երկար»:

Նախազահը մեկնեց: Երեք օր հետո պարոն դը Բոնֆոնը Սոմյուր վերադառնալով, ծանուցեց իր ամուսնությունը Էժենիի հետ: Վեց ամիս հետո նա Անժերի արքայական ատյանի խորհրդական նշանակվեց: Նախան Սոմյուրից հեռանալը՝ Էժենին իր սրտին երկար ժամանակ սիրելի դարձած զարդեղենների ոսկին հալել տվեց և իր հորեղորորդու ութհազար ֆրանկի հետ հատկացրեց շինել տալու մի սկիհ, որը նվիրեց իր ծխական եկեղեցուն, ուր նա այնքան աղոթել էր նրա համար: Արդեն նա իր ժամանակն անց էր կացնում Սոմյուրի և Անժերի միջև: Նրա ամուսինը, որ քաղաքական մի հանգամանքում նվիրվածություն ցույց տվեց, կոչվեց պալատի նախազահ և վերջապես մի քանի

տարի հետո, առաջին նախագահ: Նա անհամբեր սպասեց ընդհանուր ընտրություններին՝ դեպուտատ դառնալու համար: Նա արդեն ձգտում էր պերության, երբ...

— Այդ ժամանակ թագավորը նրա զարմի<sup>\*</sup> կն է լինելու, — ասում էր Նանոնք, խոշոր Նանոնք, տիկին Կորնուայեն, Սովորի քաղքենուիին, որին նրա տիրուիին հայտնում էր իր ապագա բարձրացումները:

Այնուամենայնիվ պարոն նախագահ դը Բոնֆոնը (նա վերջապես ջնջել էր իր հայրական Կրյուշունունը) չկարողացավ իր փառասիրական նպատակներից և ոչ մեկը իրականացնել: Սովորի դեպուտատ դառնալուց ութ օր հետո նա մահացավ: Աստված, որ տեսնում է ամեն ինչ և երբեք սխալ չի հարվածում, անկասկած նրան պատժում էր իր հաշիվների և իրավագիտական ճարպկության համար, որով նա *accurante Cruchot'*, խմբագրել էր իր ամուսնական պայմանագիրը, ըստ որի ապագա երկու ամուսինները իրար տալիս էին «այն դեպքում, եթե գավակ չին ունենա, իրենց բովանդակ հարստությունը՝ շարժական կամ անշարժ ունեցվածքը, առանց այդ ամրողից որևէ բան դուրս հանելու կամ վերապահելու, իբրև մի ամրողական սեփականություն, նույնիսկ առանց ձևական ցուցակագրման, առանց որ այդ ցուցակի բացակայությունը կարելի լինի հակադրել ժառանգներին կամ շահախնդիրներին, նկատելով, որ հիշյալ պարզեատրությունը և այլն»: Այս հորվածը բացատրում է այն խոր հարգանքը, որ նախագահն ունեցել էր միշտ տիկին դը Բոնֆոնի կամքի և մենակեցության հանդեպ: Կանայք պարոն նախագահին գտնում էին իբրև ամենանրբազզաց մարդկանցից մեկը, ցավում էին նրան և երբեմն համարձակվում ամբաստանել Էժենիի ցավն ու սերը, ինչպես նրանք գիտեն որևէ կնոջ ամբաստանել ամենաանխիղճ զգուշությամբ:

— Անպայման տիկին նախագահ դը Բոնֆոնը շատ է տկար, որ իր ամուսնուն այսպես մենակ է թռողել: Խե՞ դա կին: Կավանա՝ շուտով: Ի՞նչ ցավ ունի արդյոք, քաղցկե՞ն, գաստրի՞տ, ինչո՞ւ նա չի գնում բժիշկների մոտ: Որոշ ժամանակից ի վեր նա դեղնում է: Նա պետք է, որ գնա Փարիզ՝ քննվելու նշանավոր բժիշկների մոտ: Ինչո՞ւ նա չի ցանկանում երեխա ունենալ: Նա շատ է սիրում իր ամուսնուն, ասում են, ինչո՞ւ նրան մի ժառանգ չտա, նրան՝ իր այդ դիրքում: Հասկանո՞ւմ եք, որ այդ մի ահավոր բան է, եթե դա քմահաճույքի արդյունք է, արդեն խիստ դատապարտելի է... Խե՞ դա նախագահ: Օժտված այն նուրբ դատողությամբ, որը զարգանում է մենակյացի մոտ իր տևական խորհրդածություններով և այն հստակ տեսողությամբ, որի շնորհիվ նա ըմբռնում էր իր շրջապատում կատարվող բոլոր իրադարձությունները, Էժենին իր դժբախտության և իր վերջին փորձությունների պատճառով վարժված ամեն ինչ գուշակելու, գիտեր, որ նախագահը ցանկանում է նրա մահը, տիրանալու համար այդ անհուն հարստությանը, որն արդեն մեծացել էր նրա նոտար հորեղբոր և աբբա հորեղբոր ժառանգություններով, որոնց իր մոտ կանչելու քմահաճույքն էր ունեցել աստված: Դժբախտ մենուիին խղճում էր նախագահին: Նախախնամությունը նրա վրեժն առավ ամուսնուց, նրա հաշիվների ու վատ անտարբերության համար, մի ամուսին, որ իբրև ամենաուժեղ երաշխիք՝ հարգում էր այն անհուս սերը, որով ապրում էր Էժենին: Մի գավակ ունենալը չէ՞ր նշանակում մեռցնել առաջին նախագահի կողմից փայփայված եսապաշտական հույսերը, փառասիրության ուրախությունները: Հետևաբար աստված ուկու կույտեր տվեց իր բանտարկյալուի Էժենիին, որը ձգտում էր երկնային կյանքի՝ մոտ անտարբեր ուկու հանդեա, ապրում իբրև հավատացյալ ու բարի, և սուրբ մտքերի մեջ, գաղտնի կերպով անընդհատ օգնության հասնելով բոլոր դժբախտներին: Երեսուներեք տարեկան հասակում տիկին դը Բոնֆոնը այրի մսաց, հարուստ՝ տարեկան ութը հարյուր հազար լիվր եկամուտով, դեռևս գեղեցիկ, բայց քառասուն

\* Կրյուշոյի օգնությամբ:

տարեկան կնոջ գեղեցկությամբ: Նրա դեմքը սպիտակ է և խաղաղ: Նրա ձայնը քաղցր է և խոկուն ձևերը՝ պարզ: Նա իր վրա կրում է վշտի ամբողջ վեհությունը, սրբությունը մի էակի, որի հոգին չի խաթարվել աշխարհի հպումից, բայց նաև չամուսնացած տարիքուտ աղջկա չորությունը և պրովինցիալ կյանքի ճղճիմ սովորությունները: Չնայած ուժիարյուր հազար լիվր եկամուտին՝ նա ապրում է այնպես, ինչպես ապրել էր իսեղծ Էժենի Գրանդեն, սենյակի վառարանը վառում է այն օրերին միայն, երբ մի ժամանակ նույն օրերին հայրն էր թույլատրում վառել սրահի բուհարին և հանգջնում ըստ իր երիտասարդ տարիներիսովորության: Նա միշտ հագնվում է այնպես, ինչպես իր մայրն էր հազնվում: Սովորի տունը՝ անարև, առանց ջերմության, միշտ ստվերված ու տիտուր այդ տունը նրա կյանքի պատկերն է: Նա խնամքով կուտակում է իր եկամուտները և հավանորեն նմանվեր մի խնայամոլի, եթե նման մի զրպարտություն չիերքեր իր հարստության ազնիվ գործածությամբ: Հոգլորական և բարեգործական հիմնարկություններ, ծերերի համար ապաստարան և երեխաների համար քրիստոնեական վարժարաններ, հանրային հարուստ զրադարան ամեն տարի վկայում են այն ազահության դեմ, որի մեջ որոշ մարդիկ մեղադրում են նրան: Նա գեղեցկացրել էր Սովորի եկեղեցիները: Տիկին դը Բոնֆոնը, որին հեզնանքով կոչում են օրիորդ, ընդհանրապես ներշնչում է բարեպաշտական հարզանք: Այս ազնիվ սիրտը, որ միայն մարդասիրական զգացումների համար էր բարախում անխուսափելիորեն ենթարկվելու էր մարդկային շահամոլության հաշիվներին:

Փողը պետք էր իր սառը գույնը հաղորդեր այդ երկնային կյանքին, զգացմունքների նկատմամբ անվաստահություն ներշնչեր մի կնոջ, որն ամբողջապես զգացում էր:

— Դու ես միայն ինձ սիրում, — ասում էր նա Նանոնին:

Այդ կնոջ ձեռքը դարմանում է բոլոր ընտանիքների թարուն վերքերը: Էժենին գնում է դեպի երկինք՝ բարեգործությունների մի թափորի ուղեկցությամբ: Նրա հոգու մեծությունը մեղմացնում է նրա փանարի դաստիարակության և սկզբնական կյանքից մնացած սովորությունները: Այս է պատմությունը այն կնոջ, որ աշխարհում լինելով՝ աշխարհից չէ, ատեղծված լինելով կին և մայր լինելու վեհությամբ, բայց չունի ո՛չ ամուսին, ո՛չ զավակներ և ոչ էլ ընտանիք: Մի քանի օրից իվեր խոսվում է նրա մի նոր ամուսնության մասին: Սովորի բնակիչներն զբաղվում են նրանով և մարկիզ Ֆրուաֆոնով, որի ընտանիքը, ինչպես երբեմն Կրյուշները, սկսում են շրջապատել հարուստ այրի կնոջը: Ասում են, որ Նանոնը և Կորնուայեն մարկիզի շահերի պաշտպանն են, բայց դա բացարձակ սխալ է: Ոչ բարձրահասակ Նանոնը, ոչ էլ Կորնուայեն չունեին բավական խելք՝ այս աշխարհի ապականություններն ըմբռնելու համար: